In order to prevent the spread of babesiosis in dogs, it is recommended to treat dogs with anti-tick drugs in time, and in case ticks are found on the animal, perform a peripheral blood test to detect babesiosis. Provide pet owners with detailed information on the disease and its prevention. If possible, treat dog walking areas with anti-tick agents.

Key words: *babesiosis, dog, protozoan, tick, erythrocyte.*

РАСПРОСТРАНЕНИЕ БАБЕЗИОЗА У СОБАК В АДМИНИСТРАТИВНЫХ РАЙОНАХ ЕРЕВАНА

ГРИГОРЯН ЛИАНА
Кандидат ветеринарных наук, доцент
Директор научно-исследовательского, ветеринарной и ветеринарно-санитарного центра
электронная почта: lianagrigoryan7878@mail.ru
АГАДЖАНЯН АННА
Кандидат ветеринарных наук, доцент
Преподаватель АНАУ
электронная почта: anna-aghajanyan66@mail.ru
КАЗАРЯН АРМИНЕ
Кандидат ветеринарных наук
Преподаватель АНАУ
электронная почта: ghazaryan.armine2018@gmail.com

ПЕТРОСЯН ГАЯНЕ
Кандидат биологических наук, доцент
Преподаватель АНАУ
электронная почта: gayanemartinovna@gmail.com
ГРИГОРЯН ВАЛЕРИЙ
Кандидат биологических наук, доцент
Преподаватель ГГУ и АНАУ
электронная почта: grigoryanvgv@mail.ru

В последние годы в связи со значительным сокращением ветеринарных мероприятий серьезной проблемой стала борьба с протозойными болезнями собак, в том числе с бабезиозом.

Цель работы - изучить распространённость собачьей инвазии в административных районах г. Еревана.

Исследования проводились в 2020-2021 годах в лаборатории кафедры эпизоотологии и паразитологии Национального аграрного университета Армении, в ветеринарной клинике "Амирян Вет".

В эритроцитах 39 мазков, изготовленных из периферической крови 50 клинически больных животных из 10 административных районов Еревана, были обнаружены круглые, одиночные и парные грушевидные бабезии.

В результате исследования было установлено, что инвазия собак встречается во всех административных районах Еревана. Самые высокие показатели заражения зарегистрированы в районах Малатия-Себастия и Шенгавит.

Заболевание имеет ярко выраженную сезонность, которая наиболее выражена в весенние и летние месяцы. По результатам исследований заражаются собаки всех пород, возрастов и полов.

В целях предупреждения распространения бабезиоза у собак рекомендуется своевременно проводить лечение собак противоклещевыми препаратами, а в случае обнаружения на животном клещей проводить исследование периферической крови для выявления бабезиоза. Предоставить владельцам домашних животных подробную информацию о заболевании и его профилактике. По возможности обработать места выгула собак противоклещевыми средствами.

Ключевые слова: *бабезиоз, собака, простейшие, клещ, эритроцит.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 28.08.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԹԽՎԱԾՔԱԲԼԻԹԻ ՆՈՐ ԲԱՂԱԴՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ՇԱՔԱՐԻ ԲՆԱԿԱՆ ՓՈԽԱՐԻՆԻՉՈՎ

ՀՏԴ 664.1
DOI: 10.56246/18294480-2023.14-03

ԽԱՆԱՄԻՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան, կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ
էլփոստ՝ kristinekhanamiryan@gmail.com
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ narinehovhannisyan1984@mail.ru
ԱՊԵՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան, լաբորանտ
էլփոստ՝ aperyangayane79@gmail.com

Հրուշակեղենի տեսականու ընդլայնման խնդիրների իրագործման ուղիներից մեկը կենսաբանորեն ակտիվ նյութերի պարունակությունը բարձրացնող բնական բաղադրիչների օգտագործումն է, որոնց պակասը դժվարացնում է սննդային նուտրիենտների լիարժեք օգտագործումը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հետազոտության հիմնական նպատակ է հանդիսացել մշակել ֆունկցիոնալ նշանակության թխվածքաբլիթի նոր տեխնոլոգիա, որը չի պահանջի շաքար և կիրառելի կլինի նաև շաքարային դիաբետով հիվանդ մարդկանց կողմից: Շաքարի փոխարինիչները միմյանցից տարբերվում են իրենց քիմիական կազմով, օրգանիզմի նյութափոխանակության վրա ազդեցությամբ և յուրացվելիությամբ: Տարբերում են շաքարի փոխարինիչների երկու տեսակ՝ բնական և արհեստական: Որպես շաքարի բնական փոխարինիչ՝ օգտագործվել է մեր կողմից ստացված մատուպակի էքստրակտը (լուծամզուկ):

Մշակված նոր բաղադրագրով ստացված թխվածքաբլիթը կարող է ընդգրկվել ինչպես դիաբետով հիվանդների, այնպես էլ առողջ ապրելակերպով ապրող մարդկանց սննդակարգում, քանի որ այն ունի ֆունկցիոնալ նշանակություն, և դրա մեջ պարունակվող շաքարային նյութերը չեն պարու-

նակում գյուկոզա: Մշակված արտադրական բաղադրագիրը հանդիսանում է հայրենական արտադրության ֆունկցիոնալ նշանակության եզակի արտադրատեսակ և հեշտությամբ կարող է ներդրվել արտադրության մեջ, քանի որ հավելյալ ծախսերի և ռեսուրսների անհրաժեշտություն չկա: Այն կնպաստի նաև հայրենական արտադրության հրուշակագործության զարգացմանը:

Բանալի բառեր՝ *թխվածքաբլիթ մատուտակի էքստրակտով, մատուտակի էքստրակտ, ֆունկցիոնալ սննդամթերք, ֆունկցիոնալ թխվածքաբլիթ, շաքարի բնական փոխարինիչ:*

Նախաբան

Սննդամթերքի արտադրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ֆունկցիոնալ նշանակության մթերքների տեխնոլոգիայի մշակումը: Առողջ ապրելակերպի «գաղափարախոսությունը» նոր թափ է հավաքում: Խոշոր արդյունաբերություն ունեցող երկրները մեծ նշանակություն են տալիս այն ամենին, ինչը մարդկանց դարձնում է առողջ: Սննդի արդյունաբերությունը սկսում է նորից կենտրոնանալ առողջության բարելավման, նոր որակյալ մթերքներ արտադրելու ուղղությամբ:

Բազմաթիվ ուսումնասիրություններ հաստատում են սննդի և սրտանոթային հիվանդությունների, շաքարախտի, գիրության և աթերոսկլերոզի միջև անմիջական կապը [1,5]:

Հայաստանի Հանրապետությունում ֆունկցիոնալ նշանակություն ունեցող ալրային հրուշակեղենի մշակումը կարևորվում է երկու նկատառումներից ելնելով՝ բնակչության առողջության ապահովման և երկրի տնտեսական ու արդյունաբերական զարգացման միտումներով: Մշակելով երկրորդական վերամշակման հումքը՝ օգուտ կլինի գյուղատնտեսությանը, ինչպես նաև հնարավոր կլինի նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը:

Վերջին տարիներին շաքարային դիաբետով հիվանդների թիվն աճել է: Սա հանգեցրել է սախարոզայի փոխարեն բնական և արհեստական քաղցրացուցիչների օգտագործման ծավալների ավելացմանը: Չնայած շաքարի փոխարինիչների երկու տեսակներն էլ ունեն նույն քաղցրության ինդեքսը և կարող են հաջողությամբ օգտագործվել նաև դիաբետիկների համար սննդամթերքի արտադրության մեջ, այնուամենայնիվ արհեստական շաքարի փոխարինիչների կիրառության դեպքում մեծ է հավանականությունը, որ

այն հաճախակի կիրառելու պարագայում կարող է վատ անդրադառնալ մարդու առողջության վրա:

Գլիցիրիզինաթթուն հաղորդում է մատուտակի արմատին միաժամանակ բուրավետիչ և քաղցր հիմք, որը կիրառելի է գարեջրի, լիկյորների, գազավորված ըմպելիքների, կվասի և այլ ալկոհոլային խմիչքների արտադրությունում: Մատուտակի արմատների առավելությունն այն է, որ գլիցիրիզինը, գլիցիրիզինաթթուն և դրա աղերը, որոնք մտնում են արմատի քիմիական բաղադրակազմի մեջ, 50-100 անգամ ավելի քաղցր են, քան շաքարավազը[3]:

Մատուտակի արմատը պարունակում է գլիցիրիզին, գլիցիրիզինաթթու և դրա աղերը, ֆլավոնային գլիկոզիդներ (լիկվիրիտին, լիկվիրիտիգենին, լիկիրիտոզիդ), իզոֆլավոնոիդներ (ֆորմոնոնետին, գլաբրեն, գլաբրիդին, գլաբրոլ, 3-հիդրօքսիգլիցերարրոլ, գլիկիրիտին), ստերոիդներ, եթերային յուղեր (փոքր քանակությամբ) և այլն [3]:

Սովորաբար մատուտակի արմատը բուժիչ նպատակներով օգտագործվում է այլ բուժիչ բույսերի հետ համակցելով: Մատուտակի գլիկեմիկ ինդեքսը (արյան շաքարի բարձրացման աստիճանը արտադրանքն ուտելուց հետո) ընդամենը 20 է, մինչդեռ սովորական շաքարավազինը 89 է [3]:

Նյութը և մեթոդները

Հետազոտության նյութ է հանդիսացել ալրային հրուշակեղենի արտադրատեսակ հանդիսացող թխվածքաբլիթը և մատուտակի արմատից ստացված էքստրակտը: Մատուտակի արմատների նմուշառումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության երկու տարածաշրջաններից՝ Շիրակի մարզի Մարալիկի տարածաշրջանից և Տավուշի մարզից: Էքստրակցիայի ընթացքում պարզ դարձավ, որ, կախված տարածաշրջանից, նկատելի են բույսի արմատների զգալի տարբերություն՝ ըստ համային և կառուցվածքային առանձնահատկությունների: Արդյունքում հետազոտությունները շարունակվել են Շիրակի մարզի Մարալիկի տարածաշրջանից նմուշառված արմատներից ստացված էքստրակտի կիրառմամբ:

Սահմանված է, որ մեկ տոննա մատուտակի արմատից կարելի է ստանալ 160-200կգ շաքարի փոխարինիչ, 10-12 կգ ֆլավոնոիդային ֆրակցիա (հակաօքսիդանտ), 20-40 կգ լիպիդային ֆրակցիա, 500-800 կգ կերային մնացորդ [2]:

Հետազոտությունները կատարվել են գործող տեխնիկական կանոնակարգ՝ ՄՄ ՏԿ 021/2011 նորմատիվ փաստաթղթի պահանջներին համապատասխան: Տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը և բաղադրագրի հաշվարկը կատարվել է ըստ տեխնոլոգիական հրահանգների և ցուցումների: Հետազոտությունն իրականացվել է ՀԱԱՀ-ի «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ-ի բուսական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիա» բաժնում, ինչպես նաև «ԷՖ-ԴԻ-ԷՅ լաբորատորիա» ՍՊԸ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում:

Շաքարային նյութերի պարունակությունը որոշվել է In house method-ով, HPLC-refeactive index detector column-nucleosil carbohydrate սարքի կիրառմամբ EC250/4 phasa ACN:H20 83:17 ֆազայում: Քանի որ նման արտադրատեսակների համար կոնկրետ մեթոդ դեռևս մշակված չէ, հետազոտության մեթոդը մշակվել և նույնականացվել է տվյալ արտադրատեսակի համար:

Տվյալ հետազոտական աշխատանքները իրականացվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամի (ICARE) կողմից իրականացվող «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար» (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագրի աջակցությամբ:

Բովանդակությունը միմիայն հեղինակ/ներինն է, և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: Հետազոտության նպատակն է եղել մշակել նոր տեսակի ֆունկցիոնալ նշանակության արտադրատեսակի բաղադրագիր՝ օգտագործելով շաքարի այլընտրանքային բնական փոխարինիչ:

Հետազոտության առաջնային խնդիրներն են հանդիսացել՝

- գիտականորեն հիմնավորել մատուտակի արմատներից ստացված էքստրակտի ֆունկցիոնալ հատկությունը՝ որպես շաքարի բնական փոխարինիչ,
- մշակել թխվածքաբլիթի նոր բաղադրագիր՝ օգտագործելով էքստրակտի օպտիմալ չափաբաժին,
- սահմանել պատրաստի արտադրատեսակում սախարոզայի, գլյուկոզայի և ֆրուկտոզայի փաստացի պարունակությունները,
- որոշել արտադրատեսակի էներգետիկ արժեքը:

Գիտական նորույթ է ֆունկցիոնալ նշանակության արտադրատեսակի բաղադրագրի մշակումը՝ օգտագործելով տեղական հումքից ստացվող էքստրակտը՝ որպես շաքարի բնական փոխարինիչ:

Արդյունքները և վերլուծությունը

Հետազոտություններն իրականացվել են ստուգիչ և փորձարարական նմուշների ուսումնասիրության հիմնա վրա:


Օգտագործվող էքստրակտի օպտիմալ քանակությունը սահմանվել է փորձնական եղանակով: Տեխնոլոգիան մշակելիս շաքարավազի ամբողջ քանակությունը փոխարինվել է էքստրակտի որոշակի չափաբաժիններով ըստ գրամների: Ընտրվել են էքստրակտի հետևյալ չափաբաժիններ՝ 50, 100, 150գ ըստ 1 կգ պատրաստի արտադրանքի: Փորձարկումների ընթացքում պարզվել է, որ էքստրակտի փոքր քանակության օգտագործման դեպքում քաղցրության համ չի զգացվում, սակայն 150գ-ից ավելի օգտագործման դեպքում պատրաստի արտադրանքի համը վերածվում է ոչ այնքան հաճելի դառնահամի, երբեմն նույնիսկ զգացվում է վառող համ: Զգայաբանական ուսումնասիրության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Սրուգիչ նմուշի և մատուտակի էքսրակտով սրացվող փորձարարական նմուշների զգայաբանական ցուցանիշների գնահատականը:

Ցուցանիշի անվանումը	Ստուգիչ նմուշ	Հետազոտվող տարբերակներ (շաքարավազի փոխարինվող քանակի վերահաշվարկն ըստ 1 կգ արտադրանքի)		
		50	100	150
Արտաքին տեսքը	Համապատասխան տվյալ արտադրատեսակին			
Միջուկի կառուցվածքը	Միջին ծակոտկենությամբ	Հավասարաչափ ծակոտկեն, մեծ ծակոտիների առկայությամբ		Մանր ծակոտկենությամբ
Գույնը	Դեղնավուն	Վառ արտահայտված դեղնավուն		Մուգ դեղնավուն
Համը	Համապատասխան տվյալ արտադրատեսակին	Ոչ քաղցրահամ	Արտահայտված հաճելի քաղցրահամ	Շատ քաղցրահամ, դառնահամի նշաններով
Հոտը	Համապատասխան տվյալ արտադրատեսակին			

Ըստ նախնական զգայաբանական բալային գնահատականի (1-5 բալային սահման)՝ եթե միջին ցուցանիշով հաշվարկենք, ստացվում է գրաֆիկ 1-ում ներկայացված պատկերը՝



Վերլուծելով գրաֆիկ 1-ում ստացված տվյալները՝ պարզ է դառնում, որ նկատվել է զգայաբանական ցուցանիշների անկում 100 գրամից ավել մատուտակի էքստրակտի օգտագործման ժամանակ: 50 գրամ մատուտակի էքստրակտի օգտագործման ժամանակ արտադրանքում շատ թույլ է արտահայտված քաղցրությունը և ունի թխվածքաբլիթին ոչ բնորոշ երանգ, ինչի արդյունքում ստացել է ցածր բալային միավորներ՝ 2,5: Մինչդեռ ստուգիչ նմուշին համարժեք միավոր է գրանցվել 100գ մատուտակի էքստրակտի կիրառման դեպքում՝ 4,8 միավոր

Աղյուսակ 2-ում ներակայցված է թխվածքաբլիթի նոր արտադրատեսակի պատրաստման բաղադրագիրը՝ հաշվարկված 1կգ պատրաստի արտադրանքի համար:

Աղյուսակ 2.

Թխվածքաբլիթի սրուգիչ նմուշի և նոր արտադրատեսակի բաղադրագրերի համեմատական աղյուսակ:

N	Հումքի անվանումը	Ստուգիչ նմուշ (1տ. պատրաստի արտադրանքի հաշվարկով), կգ	Փորձարարական նմուշ (1կգ. պատրաստի արտադրանքի վերահաշվարկով), գ
1	Ցորենի ալյուր բարձր տեսակի	553,09	553, 09
2	Սերուցքային կարագ	122,78	122,78
3	Հավի ձու	60,84	60,84
	Մատուտակի արմատի էքստարակտ	-	100
4	Կերակրի աղ	2,99	2,99
5	Երկածխաթթվային նատրիում	3,65	3,65
6	Վանիլին	1,0	1,0
7	Շաքարավազ	183,62	-
8	Ջուր	180,0	150,0
	Ընդամենը	1107,97	994,35

Հարիչ մեքենայի մեջ լցնում են ձուն, կարագը, մատուտակի էքստրակտը և հարում 15 րոպե: Այնուհետև, ըստ բաղադրագրի, ավելացվում են մասմաս նախապես խառնված չոր զանգվածը (ալյուր, երկածխաթթվային նատրիում, կերակրի աղ, վանիլին), որպեսզի ստացվի համասեռ զանգված: Խմորը խառնում են այնքան, մինչև ստացվի համասեռ զանգված, ապա ավելացնում են ալյուրը և հարում այնքան, որպեսզի ստացվի պինդ զանգված: Փորձարարական նմուշի մեջ շաքարի ամբողջ քանակությունն ամբողջությամբ փոխարինվել է մատուտակի էքստրակտով: Համեմատած դասական տեխնոլոգիայի հետ՝ թխումը կատարվում էր 150-170°C ջերմաստիճանում 50 րոպե, քանի որ ավելի բարձր ջերմաստիճանում տեղի է ունենում գլիկոզիդների քայքայում, որը գործնականորեն նպատակահարմար չէ, քանի որ սկսվում են արտադրվել թունավոր նյութեր: Այդ իսկ պատճառով թխման ջերմաստիճանը սահմանվել է հնարավորինս ցածր, իսկ թխման տևողությունը՝ ավելի երկար:

Փորձանմուշում որոշվել է սպիտակուցի, ճարպերի, ածխաջրերի, սախարոզայի, գլյուկոզայի և ֆրուկտոզայի քանակը, ինչպես նաև արտադրանքի էներգետիկ արժեքը: Ստորև բերված աղյուսակ 3-ում ներկայացված են լաբորատոր հետազոտությունների արդյունքները:

Աղյուսակ 3.

Նոր արտադրատեսակի քիմիական ցուցանիշների և էներգետիկ արժեքի ցուցանիշների գնահատումը:

Ցուցանիշի անվանում	ՆՓ փաստաթղթի անվանումն ըստ փորձարկման	Չափման միավոր	Ստուգիչ նմուշ	Արդյունքներ
Սպիտակուց, գ	-	%	8,15	11,344
Ճարպ, գ	-	%	14,63	28,93
Ածխաջրեր, գ	-	%	53,53	2,025
Գլյուկոզա	ԻՀՄ	%	12,0	<0,5
Ֆրուկտոզա	ԻՀՄ	%	11,2	<0,5
Սախարոզա	ԻՀՄ	%	19,3	<0,5
Էներգետիկ արժեք	ТР ТС 022-2011	կկալ/ 100գ.	417	313,85

Ինչպես ցույց են տվել լաբորատոր հետազոտության արդյունքները՝ <0,5%-ը վկայում է այն մասին, որ փորձարարական նմուշում բացակայում է շաքարի քանակություն, ինչով և հիմնավորվում է էքստրակտի նպատակահարմարությունը՝ որպես ֆունկցիոնալ նշանակության նոր արտադրատեսակ նաև դիաբետիկների սննդակարգում: Բացի շաքարային նյութերի ցուցանիշների բացակայությունից՝ անալիզի արդյունքներում նկատելի է նաև, որ մթերքում նվազել են ածխաջրերի քանակությունը և էներգետիկ արժեքը, ինչը ևս դրական միտում է նոր տեսականու համար: Հարկավոր է ուշադրություն դարձնել, որ նմուշում ավելացել է սպիտակուցի պարունակությունը, որի պատճառը հետագա ուսումնասիրության առարկա կարող է հանդիսանալ:

Եզրակացություն

Կատարված գիտափորձարարական հետազոտությունների հիման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

1. Փորձարարական ուսումնասիրությունների հիման վրա մշակվել են ֆունկցիոնալ նշանակության թխվածքաբլիթի արտադրության գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաներ՝ օգտագործելով մատուտակի արմատների էքստրակտը:

2. Հետազոտությունը ցույց է տվել, որ փորձարարական նմուշում մատուտակի էքստրակտն օգտագործելիս շաքարավազ, մասնավորապես գլյուկոզա չի հայտնաբերվել, ինչը հիմնավորում է այն փաստը, որ նոր տեսականին կարող է օգտագործվել նաև դիաբետիկների սննդակարգում:

3. Ապացուցվել է, որ մատուտակի արմատներից ստացվող էքստրակտը հնարավոր է օգտագործել սննդամթերքի արտադրության մեջ՝ որպես բնական շաքարի փոխարինիչ:

4. Նվազել են նաև ածխաջրերի քանակը և արտադրանքի էներգետիկ արժեքը, ավելացել է սպիտակուցների քանակը: Մթերքների այս ցուցանիշները շատ կարևոր են մարդկանց որոշակի խմբերի, մասնավորապես դիաբետով հիվանդների առողջության պահպանման համար:

Տեխնոլոգիան հարմարեցված է գործող արտադրություններին և լրացուցիչ ներդրումների կարիք չի զգացվում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Батурин А. К., Питание и здоровье: проблемы XXI века / А. К. Батурин, Г.И. Мендельсон // Пищ. пром-сть, 2005, № 5, с. 105–107.

2. Мартиросян А., Энциклопедия лекарственных растений и секреты фитотерапии, Ереван, 2010, 400 с.

3. Матвеева Т. В., Корячкина С. Я., Физиологически функциональные пищевые ингредиенты для хлебобулочных и кондитерских изделий, Орел 2012, 950 с.

4. Нечаев А. П., Траубенберг С. Е., Кочеткова А. А., Пищевая химия, под ред. А. П. Нечаева, 6-ое изд., стер., СПб., ГИОРД, 2015, 672 с.

5. https://www.who.int/ru/news/item/09-12-2020-who-reveals-leading-causes-of-death-and-disability-worldwide-2000-2019

DEVELOPMENT OF A NEW RECIPE OF COOKIES WITH A NATURAL SWEETENER

KHANAMIRYAN KRISTINE
Junior Researcher, PhD student
National Agrarian University of Armenia
e-mail: kristinekhanamiryan@gmail.com
OGANESYAN NARINE
PhD in Biology, Associate Professor
National Agrarian University of Armenia
e-mail: narinehovhannisyan1984@mail.ru
APERYAN GAYANE
Laboratory Assistant,
Armenian National Agrarian University
e-mail: aperyangayane79@gmail.com

One of the ways to solve the problems of the confectionery assortment is to use natural ingredients that increase the content of biologically active substances, the lack of which makes it difficult to fully utilize nutrients. Given this fact, the main goal of the study was to develop a new technology of functional cookies that do not contain sugar and is also applicable to people with diabetes. Sugar substitutes differ from each other in their chemical composition, influence metabolism and absorption in the body. There are two types of sugar substitutes: natural and artificial.

Licorice extract obtained by us was used as a natural sugar substitute. The processed production recipe is a unique domestic production, a functional value that can be easily implemented in production, as it does not require additional costs and resources. It contributes to the development of domestic confectionery production. The method of obtaining the new recipe of the developed cookie can be included in the diet of diabetic patients, as well as by the people living a healthy lifestyle, because it has a functional value and the sugar substances contained in it do not contain glucose.

Key words*: cookies with licorice extract, licorice extract, functional food, functional cookies, natural sweetener.*

РАЗРАБОТКА НОВОЙ РЕЦЕПТУРЫ ПЕЧЕНЬЯ С НАТУРАЛЬНЫМ САХАРОЗАМЕНИТЕЛЕМ

ХАНАМИРЯН КРИСТИНЕ
Младший научный сотрудник, аспирант
Национальный аграрный университет Армении
электронная почта: kristinekhanamiryan@gmail.com
ОГАНЕСЯН НАРИНЕ
Кандидат биологических наук, доцент
Национальный аграрный университет Армении
электронная почта: narinehovhannisyan1984@mail.ru
АПЕРЯН ГАЯНЕ
Лаборантка,
Национальный аграрный университет Армении
электронная почта: aperyangayane79@gmail.com

Одним из способов решения проблем ассортимента кондитерских изделий заключается в использовании натуральных ингредиентов, повышающих содержание биологически активных веществ, недостаток которых затрудняет полноценное использование питательных веществ. Учитывая этот факт, основной целью исследования стала разработка новой технологии функционального печенья, не содержащего сахар, и применимого также для людей с сахарным диабетом. Заменители сахара отличаются друг от друга своим химическим составом, влиянием на обмен веществ в организме и усвояемостью. Различают два вида заменителей сахара: натуральные и искусственные.

В качестве натурального заменителя сахара был использован полученный нами экстракт солодки.

Новая разработанная рецептура печенья с натуральным заменителем сахара может быть включен в рацион как больных сахарным диабетом, а также людьми, ведущими здоровый образ жизни, поскольку оно имеет функциональную ценность и содержащиеся в нем сахаросодержащие вещества не содержат глюкозы. Обработанная производственная рецептура является уникальным отечественным производством, функционального значения, которое можно легко внедрить в производстве, так как не требует дополнительных затрат и ресурсов. Оно способствует развитию отечественного кондитерского производства.

Ключевые слова: *печенье с экстрактом солодки, экстракт солодки, функциональная пища, функциональное печенье, натуральный сахарозаменитель.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.08.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՀՏԴ 504
DOI: 10.56246/18294480-2023.14-14

ՄԿՐՏՉՅԱՆ ԼԱԼԱ
Գավառի պետական համալսարանի դասախոս
էլփոստ՝ l.mkrtchyan@gsu.am

Պատմաճարտարապետական հուշարձանները բացառիկ կամ տիպիկ, գիտական և պատմամշակութային հատուկ արժեք ներկայացնող օբյեկտներ են:

Հայաստանի ողջ տարածքում սփռված են պատմաճարտարապետական և բնական բազմաթիվ հուշարձաններ:

Սակայն Հայաստանի բնության հուշարձանների զգալի մասը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում, որը պայմանավորված է հանքարդյունաբերության, ճանապարհաշինության, հաղորդակցուղիների կառուցման և հողօգտագործման աշխատանքների ընթացքում թույլ տրված խախտումներով: Դրան նպաստում են նաև սեփականության տարբեր սուբյեկտների հաճախ անվերահսկելի գործունեությունը[1]:

Վիճակն ավելի բարդ է պատմաճարտարապետական հուշարձանների առումով: Բազմաթիվ պատմաճարտարապետական արժեքավոր հուշարձաններ ներկայումս ոչ միայն գտնվում են անմխիթար վիճակում, չեն վերանորոգվում, այլև որոշ տարածքներում շարունակվում է դրանց քայքայման, քանդման պրոցեսը նաև բնական ճանապարհով:

Կան տարածքներ, որտեղ եղած հազարամյա պատմություն ունեցող խաչքարերը մարդիկ տեղափոխում են այլ վայրեր, կամ պարզապես դրանք անուշադրության են մատնվում:

[1] ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ:

Այս երևույթն ավելի սուր է դրսևորվում սահմանամերձ համայնքներում, որտեղ հայկական հեռքերի պահպանումն ու ցուցադրումը կարևորագույն խնդիր է ներկայիս պայմաններում:

Պատմամշակութային հուշարձանների մեծ մասը գտնվում է նաև տարբեր աղետների ազդեցության գոտում, որը վտանգում է դրանց գոյությունը:

Բանալի բառեր՝ *պատմամշակութային հուշարձան, բնական աղետ, խոշորացված համայնք, Թթուջուր, Կարմիր Եղցի, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ:*

Աշխատանքի արդիականությունը: Աշխատանքն արդիական է, քանի որ այստեղ ներկայացված են Ճամբարակ խոշորացված համայնքի տարածքի պատմամշակութային հուշարձանները, և բնական աղետների ազդեցությունն այդ հուշարձանների վրա:

Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների մասին տեղեկատվությունն այնքան էլ շատ չէ: Վիճակն ավելի բարդ է սահմանամերձ համայնքների պայմաններում: Աշխատանքի կարևորությունը կայանում է նրանում, որ բացահայտել, ուսումնասիրել և ներկայացրել ենք Ճամբարակի տարածաշրջանի գրեթե բոլոր պատմամշակութային հուշարձանները, որոնք մեծ արժեք են ներկայացնում և պահպանման ու վերականգնման կարիք ունեն: Վերլուծությունները կատարվել են նաև աղետների ռիսկի տեսանկյունից: Ներկայացվել են առաջարկություններ:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Պատմաճարտարապետական հուշարձանների բացահայտման ու նկարահանման աշխատանքներն իրականացվել են դաշտային ուսումնասիրությունների միջոցով:

Ուսումնասիրություններից ստացված քարտեզագրական նյութերը, «անանուն» պատմաճարտարապետական հուշարձանների որոշված անվանումները քննարկվել և համաձայնեցվել են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ–ի՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի տարածքային պատասխանատուի հետ:

Հուշարձանների պահպանության կայունության քայլերը մշակվել են համայնքային պատասխանատուների, «Պատմամշակութային արգելոց-

թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ –ի՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի տարածքային պատասխանատուի և շահագրգիռ անձանց հետ:

Ճամբարակ խոշորացված համայնքը Գեղարքունիքի մարզի 5 համայնքներից մեկն է: Համայնքը խոշորացվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 09.06.2017թ. ՀՕ-93-Ն կատարված փոփոխության արդյունքում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքային, Վահան, Թթուջուր, Գետիկ, Մարտունի, Այգուտ, Դպրաբակ, Ձորավանք, Կալավան, Անտառամեջ գյուղական համայնքների և Արծվաշեն բնակավայրի միավորումից: Համայնքի կենտրոնը Ճամբարակ քաղաքն է: Արծվաշենը Ղարաբաղյան պատերազմից հետո գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Ճամբարակ համայնքը զբաղեցնում է 37860.68 կմ^2 տարածք: Բնակչությունը՝ 12416 մարդ /2015թ.-ի տվյալներով/:

Ճամբարակ քաղաքը ձևավորվել է երեք բնակավայրերի միացումից, դրանք են Կրասնոսելսկը, Վերին Ճամբարակն ու Ներքին Ճամբարակը: Կրասնոսելսկի նախկին անվանումներն են եղել՝ Միխայլովկա, Կարմիր և Կրասնոսելսկ: Միխայլովկա գյուղը հիմնադրվել է 1740-1785 թվականներին Ռուսաստանի՝ Սամարայի և Սարատովի նահանգներից վերաբնակեցված մոլոկանների կողմից: Մինչև 1988-1989 թվականները բնակչության հիմնական մասը կազմել են հայերը, որոնք բնակվել են հիմնականում Վերին և Ներքին Ճամբարակ գյուղերում, որոնք իրենց հերթին կազմավորվել են Տավուշի մարզի Ներքին Կարմիր գյուղի անասնապահների կողմից: Համայնքում հայերից բացի բնակվել են նաև մոլոկաններ, ադրբեջանցիներ, քրդեր, մորդովացիներ: Շրջանում բնակվող ադրբեջանցիների և մոլոկանների հեռանալուց հետո համայնքը վերաբնակեցվեց Արծվաշենից, Բաքվից, Կիրովաբադից, Սումգայիթից, Շամխորից և Ադրբեջանի այլ շրջաններից տեղահանված փախստական հայերով:

Ներկայումս Ճամբարակի ազգաբնակչությունը միատարր է: Հիմնականում հայեր են:

Հայկական հետքերը բնակավայրի սահմաններում հանդիպում են ամենուրեք: Ճամբարակ քաղաքի Վերին Ճամբարակի թաղամասի հյուսիսային եզրին է գտնվում Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Այն հաշվառված է Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում:



Անմշակ քարերով շարված և եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին կիսավեր ու վթարային վիճակում է, մասնակի կանգուն են արևելյան խորանն ու գմբեթարդը, զույգ ավանդասենյակները, արևմտյան և հյուսիսային պատերը: Միակ մուտքը հարավային կողմից է եղել, որից գրեթե ոչինչ չի պահպանվել:

Եկեղեցին բազմիցս նորոգվել ու վերաշարվել է: Այդ մասին վկայում են որմերի տարբեր հատվածներում օգտագործված, ժամանակագրորեն 10-13-րդ դարերին բնորոշ մեկ տասնյակից ավելի խաչքարերը, որոնք 17-18-րդ դարերում դիտվել են իբրև շինաքարեր՝ առանց կարևորելու խաչքարի՝ սրբազան կոթողի նշանակությունը:

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում եկեղեցին սխալմամբ թվագրված է 1029 թվականով, որի համար հիմք է հանդիսացել եկեղեցու հարավային կողմում կանգնեցված Պողոս Երեցի խաչքարի թվականը, որը վիմագրագետ Աբրահամ Շահինյանը տասնամյակներ առաջ ՆՀԸ, այսինքն՝ 1029 է կարդացել:

Սակայն ինչպես փաստեցին և՛ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տարածաշրջանային համակարգող Տիգրան Բադեյանը, և՛ Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Հայկ Պողոսյանը, եկեղեցին ավելի վաղ ժամանակաշրջանի կառույց է և կարող է թվագրվել 9-րդ դարի:



1993 թվականին մի խումբ տեղացիների աջակցությամբ եկեղեցին մաքրվել է հողալիցքից: Եկեղեցու հարավային պատի մոտ՝ արտաքին կողմում, գետնին կանգնեց-

ված է խաչքար, որի արձանագրության համաձայն՝ եկեղեցին կանգնեցրել է Պողոս Երեցը:

Եղեղեցին և հարակից գերեզմանոցը հաճախակի են ենթարկվում ուժեղ քամիների, ձյան հալոցքային, անձրևաջրերի և սելավային հոսքերի ներգործությանը: Դրանց արդյունքում արագ է տեղի ունենում տարածքի տեղատարման, իսկ ցածրադիր մասերում՝ հողով ծածկվելու պրոցեսը: Ակտիվ է նաև կենսաբանական հողմահարումը:

Վերին Ճամբարակի ճանապարհի աջ մասում կան մի քանի խաչքարեր, որոնք յուրահատուկ սրբատեղի են դարձել բնակչության համար:

Խաչքարերը գտնվում են սելավային հոսքերի, ձյան հալոցքային և անձրևաջրերի, քարաթափվածքների և քամիների ներգործության տակ, որոնց պատճառով կարող է վտանգվել խաչքարերի կանգուն մնալը: Քանի որ խաչքարերն անմիջապես ճանապարհաեզրին են, կարող են վնասվել նաև ճանապարհատրանսպորտային պատահարների կամ ձնամաքրման աշխատանքների հետևանքով:

Թթուջուր գյուղը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանում՝ Գետիկ գետի աջ ափին, ծովի մակարդակից 1850-1950 մ բարձրության վրա: Բնակավայրը բնակեցվել է մինչև 1920 թվականը: Թթուջուրը գտնվում է հանրապետական նշանակության Ճամբարակ-Բերդ-Իջևան-Դիլիջան ավտոճանապարհների խաչմերուկում: Բնակավայրի կենտրոնում կա հանքային ջրի ելք, որտեղից է ծագել է գյուղի անունը: Հանքային ջուրն օգտագործվում է խմելու համար և ունի առողջական նշանակություն:

Հանքային աղբյուրի մոտ կանգնեցվել է Անհայտ զինվորի հիշատակին նվիրված արձան: Սակայն հանքային ջրի ելքի և Անհայտ զինվորի հուշարձանի անմիջապես թիկունքում կա սողանք, որն ավելի ակտիվացել է ջրագծի անցկացման հետ կապված: Սողանքը կարող է վտանգել ոչ միայն այս հուշարձանների գոյությունը, այլև փակել գետի ճանապարհը, որն հոսում է հարակից տարածքով:



Հուշարձանի դիմաց, ճանապարհի աջ կողմում գտնվում է

Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը բացվել և օծվել է 2017 թ.-ին:

Թթուջրի Սուրբ Աստվածածինը Ճամբարակի տարածաշրջանում թվով երրորդ գործող եկեղեցին է: Թեև եկեղեցին նորակառույց է, սակայն այն նույնպես կարող է վնասվել սողանքից:

Թթուջուրը գտնվում է նաև տեկտոնական կոտրվածքի վրա, որի պատճառով այստեղ կարող են լինել ուժեղ երկրաշարժեր, որոնց հետևանքով կվնասվեն նաև վերոնշյալ հուշարձանները:

Գետիկ բնակավայրը հիմնադրվել է 1923 թվականին: Բնակիչները, ընդամենը 20-30 ընտանիք, եկել են Արծվաշեն գյուղից և հիմնադրել Գետիկ գյուղը: Մինչև 1947թ. եղել է Դիլիջանի գավառի, 1937-1995թթ. Կրասնոսելսկի շրջանի, 1995թ. Գեղարքունիքի մարզի վարչական տարածքում: Գյուղը գտնվում է Միափորի և Արեգունի լեռների միջև՝ Գետիկ գետի հովտում՝ ծովի մակարդակից 1820 մ բարձրության վրա:



Գետիկ-Մարտունի ճանապարհի աջ կողմում գտնվում է նորակառույց Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցին, որը կառուցվել է 2015 թվականին:

Եկեղեցին գտնվում է թեք լանջի վրա, որի պատճառով հաճախակի են քարաթափվածքները, որոնք կարող են վնասել եկեղեցուն: Եկեղեցին կարող է վնասվել նաև երկրաշարժից:

Մարտունի գյուղը հիմնադրվել է 1921 թվականի գարնանը՝ Ալեքսան Տեր-Նիկողոսյանի գլխավորությամբ Մեծ Եղեռնից մազապուրծ 12 գաղթական ընտանիքների՝ թվով 40 մարդ, Կրասնոսելսկ ավանից ոչ հեռու՝ Գետիկ գետի աջ ափին հիմնադրվելով:

1921-23 թթ. գյուղը համալրվում է նոր գաղթական ընտանիքներով:

Մարտունի գյուղում է գտնվում Հին Գետկավանքի ավերակները (Կարմիր Եղցի), որտեղ իր բանական կյանքն է անց կացրել Մխիթար Գոշը: Երկրաշարժի հետևանքով վանքը ավերվել է, ինչից հետո Մխիթար Գոշը դիմել է Զաքարե և Իվանե իշխաններին՝ խնդրելով նոր տեղ՝ վանքի կառուցման

համար, քանի որ հինը վերականգնելն անհնար էր: Զաքարյան իշխանները հատկացրել են Տանձուտի ձորը, ուր կառուցվել է Նոր Գետիկը:

Վանական համալիրը եղել է Փառիսոսի թագավորության Միափոր գավառի նշանավոր վանքերից: Այն պատմական աղբյուրներից առավել հայտնի է Խամշի անունով և IX–XI դդ. հանդիսացել է Աղվանից կաթողիկոսության կենտրոն:

Հուշարձանախումբը, որը վարդագույն քարից կառուցված լինելու պատճառով հայտնի է եղել Կարմիր Եղցի անունով, բաղկացած է եկեղեցիներից, ժամատնից, միաբանության շենքերից և այլ կառույցներից: Համալիրում հնագույն շինությունը խաչաձև հատակագծով, չորս ավանդատներով, կոպտատաշ քարով շարված գրեթե կանգուն եկեղեցին է (9--10-րդ դդ.): 12-րդ դարում կառուցված գլխավոր եկեղեցին երկաստիճան գետնախարիսխի վրա հաստատված, չորս անկյուններում կրկնահատակ ավանդատներով գմբեթասրահ է՝ երեսպատված բազմագույն սրբատաշ քարերով: Արտակարգ շքեղությամբ առավել ուշագրավ է եկեղեցու արևմտյան մուտքը, Եկեղեցուն արևմուտքից կից է կոպտատաշ քարից մի շինություն, հավանաբար՝ ժամատուն: Հայտնաբերվել են եկեղեցու արտաքին և ներքին հարդարանքի բազմաթիվ բեկորներ, շինարարական և նվիրատվական արձանագրությունների մասեր, 9--13-րդ դարերի գեղաքանդակ խաչքարեր: Եկեղեցու մի քանի քարերի վրա փորագրված է քարագործ վարպետի անվան Խ սկզբնատառը: Հին Գետիկի ճարտարապետն է Հովասափը:

Եկեղեցին հայտնաբերվել է 1980-ական թվականների կեսերին, որից հետո հնագետները մաքրել ու պեղումներ են իրականացրել եկեղեցու տարածքում:



Պեղումների ընթացքում հայտնաբերվել են միջնադարին բնորոշ խեցեմանի բեկորներ, որոնք հավաքվել և անձնագրավորվել են:

Եկեղեցին և հարակից տարածքներում գտնվող բազմաթիվ կառույցները ձյան հալոցքային ջրերից, նույնիսկ մարդկանց անզգույշ քայլերից կարող են փլուզվել՝ կորցնելով իրենց նշանակությունն ու տեսքը:

Հուշարձանախումբ տանող արահետի ձախ կողմում կա հուշաղբյուր, որի ջուրն անխնա հոսում է՝ ձմռանն առաջացնելով սառցի հաստ շերտ, ամռանը՝ ջրափոս՝ դժվարացնելով հուշարձանախումբ բարձրացողների ճանապարհը:

Այսպիսով, Ճամբարակի տարածաշրջանում կան բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնց մի մասը գտնվում է կիսավեր վիճակում: Հուշարձանների պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, քանի որ դրանք խոցելի են նաև բնական աղետների տեսանկյունից: Ճամբարակ խոշորացված համայնքը, լինելով նաև սահմանամերձ, հայկական հուշարձանների պահպանության տեսանկյունից պետք է ունենա առավելություն, քանի որ ներկա պայմաններում հայկական հետքերի պահպանումն ու հանրայնացումը դարձել է անհրաժեշտություն:

Առաջարկություն: Եկեղեցիների մասին տեղեկատվություն տարածել ազգաբնակչության, հատկապես դպրոցահասակ երեխաների և երիտասարդների շրջանում, հաճախակի մաքրել տարածքը նաև բույսերից, պատնեշապատել կամ ծառատնկումներ իրականացնել՝ սելավներից և քամուց պաշտպանելու համար:

Անհրաժեշտ է խաչքարերի հատվածը ցանցավանդակով առանձնացնել, որը կարող է օգնել ոչ միայն ջրային և սելավային հոսքերի ժամանակ, այլև ճանապարհային աշխատանքների և ճանապարհատրանսպորտային պատահարների արդյունքում վնասվելուց զերծ մնալուն:

Սողանքից պաշտպանվելու համար նախ և առաջ պետք է թույլ չտալ դրա ակտիվացումը: Անրաժեշտ է հեռացնել ավելորդ խոնավությունը, խորը արմատներով ծառեր տնկել, նորմավորել ոռոգումը՝ կիրառելով կաթիլային և առաջատար եղանակներն ու տեխնոլոգիաները:

Երկրաշարժից պաշտպանվելու համար հարկավոր է շինություններն ամրացնել ըստ սեյսմավտանգավորության աստիճանի:

Չնայած այն բանին, որ եկեղեցու տարածքը պարսպապատ է, այնուամենայնիվ քարաթափվածքները հասնում են եկեղեցու տարածք:

Չնայած Կարմիր Եղցի հուշարձանախումբը պահպանվում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից, այնուամենայնիվ այն բավականին խոցելի է մարդկային գործոնի ազդեցության տեսանկյունից: Անհրաժեշտ է տարածքում սահմանափակել զբոսաշրջային հոսքերը, նաև ցուցանակներ

տեղադրել շինություններին հարակից տարածքներում՝ անզգույշ շարժումների և ծանրաբեռնվածության հետևանքով փլուզումներից խուսափելու համար:

Կենսաբանական հողմահարումից պաշտպանելու համար անհրաժեշտ է տարին մի քանի անգամ մաքրել հուշարձանախմբի տարածքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն:
2. ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանազատման և քարտեզագրման աշխատանքներ:
3. www.chambarak.am

HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS OF CHAMBARAK REGION AND MAIN PROBLEMS OF THEIR PRESERVATION FROM THE PERSPECTIVE OF DISASTER RISK

MKRTCHYAN LALA
Lecturer of Gavar State University
e-mail: l.mkrtchyan@gsu.am

Historical and architectural monuments are objects of exceptional or typical significance with special historical and cultural value.

Armenia is considered an open-air museum, because many historical, architectural and natural monuments are scattered on its territory.

However, most of the natural monuments in Armenia are currently in a deplorable state, which is associated with violations committed in the extraction of minerals, road construction, construction of communication channels and land use. This is also often facilitated by the uncontrolled activities of various subjects.

The situation is especially complicated when it comes to historical and architectural monuments. Many valuable monuments of history and architecture are currently not only in a deplorable state, not being repaired, but in some areas the process of dilapidation and demolition continues in a natural way.

There are areas where thousand-year-old khachkars have been transported by people to other places or simply abandoned.

This phenomenon is more acute in the border communities, where the preservation and demonstration of the Armenian traces is an important issue in the current conditions.

Most historical and cultural monuments are also in the zone of influence of various natural disasters, which threatens their existence.

Key words: *Historical and cultural monument, natural disaster, extended community, Ttujur, Karmir Yeghtsi, "Historical-cultural reserve-museums and historical environment protection service" NOC.*

ИСТОРИЧЕСКИЕ АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ ЧАМБАРАКСКОГО РАЙОНА И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ИХ СОХРАНЕНИЯ С ПОЗИЦИИ РИСКА БЕДСТВИЙ

МКРТЧЯН ЛАЛА

Преподаватель Гаварского государственного университета,

электронная почта: l.mkrtchyan@gsu.am

Историко-архитектурные памятники являются исключительными или типичными объектами, представляющими особую научную и историко-культурную ценность.

Армения считается музеем под открытым небом, ведь на ее территории разбросано множество историко-архитектурных памятников и памятников природы. Однако значительная часть памятников природы Армении в настоящее время находится в плачевном состоянии, что обусловлено нарушениями, допущенными в ходе работ по добыче полезных ископаемых, дорожному строительству, строительству коммуникаций и землепользованию. Этому также способствует зачастую неконтролируемая деятельность различных субъектов.

Сложнее обстоит дело с историко-архитектурными памятниками. Многие ценные памятники истории и архитектуры в настоящее время не только находятся в плачевном состоянии, не ремонтируются, но и на отдельных участках продолжается процесс их разрушения и разложения также и естественным путём.

Есть районы, где тысячелетние хачкары перевезены людьми в другие места или просто заброшены.

Это явление более остро проявляется в приграничных общинах, где сохранение и демонстрация армянских следов является важным вопросом в нынешних условиях.

Большинство памятников истории и культуры также находятся в зоне влияния различных стихийных бедствий, что угрожает их существованию.

Ключевые слова: *историко-культурный памятник, стихийное бедствие, расширенная община, Ттуджур, Кармир Ехци, НОЦ «Историко-культурный заповедник-музей и служба охраны исторической среды».*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.10.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 09.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

2.	ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHYSICAL, MATHEMATICAL AND TECHNICAL SCIENCES ФИЗИКО-МАТЕМАТИЧЕСКИЕ И ТЕХНИЧЕСКИЕ НАУКИ

ДИНАМИКА РОСТА ГРАДИН ПО МЕХАНИЗМУ ГЕТЕРОКОАГУЛЯЦИИ

УДК 551.510
DOI: 10.56246/18294480-2023.14-04

АЙВАЗЯН ГРИГОРИЙ
Кандидат химических наук, доцент ГГУ
Гаварский государственый университет
электронная почта: grikorgjan@gmail.com
АКОПЯН АЙАСТАН
Кандидат технических наук, доцент НАУА
Национальный аграрный университет Армении
электронная почта: hayastan.akobyan.53@gmail.com

Градобития наносят значительный ущерб сельскому хозяйству. Успехи борьбы с градом в настоящее время невелики. Видимо, это определяется недостаточностью теоретических исследований процессов градообразования, хотя в этой области достигнуты значительные успехи. В настоящей работе предлагается математическая модель роста градин по одному из основных механизмов роста – гетерокоагуляции. Физический механизм этого последнего явления очень сложен и до сих пор еще не ясен. Целью настоящей работы отнюдь не является обсуждение превалирования того или иного механизма роста градин. Работа является попыткой представления кинетической схемы гетерокоагуляции микрокапелек воды в облаке на поверхности естественно зародившейся или искусственно созданной твердой фазы (зародышей града).

В настоящей работе, на основе предлагаемой математической модели, показано,что на начальных стадиях гетерокоагуляции, в отсутствие агломерации зародышей для вероятностей числа осевших на зародыше микрокапель воды имеет место распределение Пуассона. На более поздних стадиях роста градин кинетические закономерности осаждения

микрокапель воды на поверхности частиц зародышей града иные, поскольку по мере заполнения поверхности зародышей скорость процесса будет снижаться, т.к. уменьшается доля свободной поверхности.

Ключевые слова: *град, зародыши градин, динамика роста.*

Градобития на сегодняшний день приносят огромные убытки сельскому хозяйству во всем мире, несмотря на разработанные и активно применяемые самые различные противоградовые мероприятия [1]. Одной из причин пока еще недостаточной эффективности борьбы с градом является недостаточность фундаментальных представлений о процессах зарождения и роста градин и это несмотря на то, что теоретические разработки в области, например, коагуляционных процессов в облаках, разрабатывались еще Смолуховским в начале прошлого века [2].

В настоящее время можно считать установленным, что решающим фактором образования осадков (в том числе града) является наличие твердых частиц в облаке [3]. Эти твердые частицы могут быть как естественного, так и искусственного происхождения [4]. Именно на них происходит рост градин. Согласно общепринятым представлениям [5], этот рост происходит по следующим трем механизмам:

1. Из окружающей среды (объема облака) на поверхности твердой частицы происходит адсорбция молекул воды, имеет место непосредственный переход “пар-лед”, т.н. сублимация водяного пара, не исключается также переход “пар-жидкость-лед”

2. Твердая частица вызывает появление ледяной фазы путем кристаллизации переохлажденной капли, внутри которой она находится.

3. Рост градины является результатом столкновения твердой частицы с переохлажденной микрокаплей воды, т.е. происходит контактная нуклеация (в терминах коллоидной химии – гетерокоагуляция, гетероадагуляция). После гетерокоагуляции микрокапелек воды имеет место их кристаллизация. Этим и обусловлено наличие т.н. “рыхлых” слоев градин плотностью 0.4 – 0.86 г/см^3[5].

Физический механизм этого последнего явления очень сложен и до сих пор еще не ясен. Однако, факт, что, например, некоторые твердые частицы

(глины [5]) при контакте вызывают кристаллизацию при более высокой температуре, чем при остальных двух механизмах роста градин.

Целью настоящей работы отнюдь не является обсуждение превалирования того или иного механизма роста градин. Работа является попыткой представления кинетической схемы гетерокоагуляции микрокапелек воды в облаке на поверхности естественно зародившейся или искусственно созданной твердой фазы (зародышей града).

Итак, мы рассматриваем гетерокоагуляцию (контактную нуклеацию) микрокапель переохлажденной воды на поверхности частиц твердой фазы (зародышей) вне зависимости от природы последних и вне зависимости от процессов кристаллизации в переохлажденных каплях, коагулированных на зародышах града, – априори их скорость существенно выше скорости коагуляционных процессов.

Введем обозначения:

Q – число микрокапель в единице объема,

k_1 – константа взаимодействия микрокапли с зародышем (назовем ее константой нуклеации),

τ - время,

N_i – число зародышей, на поверхности которых содержится i микрокапель, в единице объема.

На начальной стадии процесса доля “покрытой” поверхности частиц зародышей коагуляции относительно невелика. Если при этом агрегация самих зародышей несущественна, то кинетика взаимодействий «микрокапли воды – зародыши» может быть описана системой дифференциальных уравнений:

$$\frac{dQ}{d\tau} = -k_1 Q \sum_i N_i \qquad (1)$$

$$\frac{dN_0}{d\tau} = -k_1 Q N_0 \qquad (2)$$

$$\frac{dN_1}{d\tau} = -k_1 Q N_0 - k_1 Q N_1 \qquad (3)$$

.....

$$\frac{dN_i}{d\tau} = -k_1 Q N_{i-1} - k_1 Q N_i \qquad (4)$$

Так как число столкновений микрокапель с зародышами пропорционально произведению численных концентраций этих частиц.

Если интегрировать уравнение (1) при начальном условии

$$Q_{(\tau=0)} = Q_{in} \qquad (5)$$

и с учетом того, что $\sum_i^n N_i = N_{in}$, то получается зависимость:

$$Q = Q_{in} \exp(-k_1 N_{in} \tau) \qquad (6)$$

Где Q_{in} и N_{in} – начальное число микрокапель и зародышей в единице объема соответственно.

Среднее число микрокапель, коагулированных к моменту времени τ на одной частице

$$\overline{Q}_k = (Q_{in} - Q) / N_{in} \qquad (7)$$

Интегрированием уравнения (2) после подстановки в него (6) при начальном условии

$$N_{0\,(\tau=0)} = N_{in} \qquad (8)$$

и с учетом (8) можно получить выражение:

$$N_0 = N_{in} \exp(-\overline{Q}_k) \qquad (9)$$

Интегрированием цепи дифференциальных уравнений (2) – (4) при начальном условии:

$$N_{i(N_0=N_{in})} = 0, \qquad i \geq 1 \qquad (10)$$

получена зависимость:

$$N_i = (N_0 / i!)\,[\ln (N_{in}/N_0)]^{\,i} \qquad (11)$$

Из (11) с учетом (9)

$$N_i = N_{in} \exp((-\overline{Q}_k)\overline{Q}_k^i)i! \qquad (12)$$

Для отдельных значений дискретной случайной величины, - числа коагулированных на частице микрокапель i, - вероятность может быть описана выражением:

$$P(i, \overline{Q}_k) = N_i / N_{in}, \qquad i = 0,1,2,\ldots$$

откуда, с учетом (12), следует:

$$P(i, \bar{Q}_k) = \exp(-\bar{Q}_k)\,\bar{Q}_k^{i}/i! \qquad (13)$$

Выражение (13) соответствует распределению Пуассона [6].

Таким образом, на начальных стадиях гетерокоагуляции, в отсутствие агломерации зародышей для вероятностей числа осевших на зародыше микрокапель воды, имеет место распределение Пуассона.

На более поздних стадиях роста градин кинетические закономерности осаждения микрокапель воды на поверхности частиц зародышей града иные, поскольку по мере заполнения поверхности зародышей скорость процесса будет снижаться, т.к. уменьшается доля свободной поверхности.

Список использованной литературы

1. **Качурин Л. Г.**, Физические основы воздействия на атмосферные процессы // Л., Гидрометеоиздат., 1990, 465 с.

2. **Волощук В. М.**, Кинетическая теория коагуляции // Л., Гидрометеоиздат., 1984,2 83 с.

3. **Матвеев Л. Т.**, Курс общей метеорологии. Физика атмосферы, Л., Гидрометеоиздат, 1984, 752 с.

4. **Хргиан А. Х.**, Физика атмосферы // Л., Гидрометеоиздат,1969, 648 с.

5. **Хоргуани В. Г.**, Микрофизика зарождения и роста града // М., Гидрометеоиздат., 1984, 188с.

6. **Вентцель Е. С., Овчаров Л. А.**, Теория вероятностей и ее инженерные приложения // М., 2000, 135 с.

ԿԱՐԿՈՒՏԻ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՀԵՏԵՐՈԿՈԱԳՈՒԼՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ

ԱՅՎԱԶՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
Գավառի պետական համալսարան,
քիմիական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
էլփոստ՝ grikorgjan@gmail.com
ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀԱԱՀ դոցենտ
էլփոստ՝ hayastan.hakobyan53@gmail.com

Կարկտահարությունները զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Կարկտի դեմ պայքարում հաջողությունները ներկայումս քիչ են: Ըստ երևույթին, դա պայմանավորված է կարկտագոյացման գործընթացների տեսական ուսումնասիրությունների անբավարարությամբ, թեև այս ոլորտում զգալի առաջընթաց է գրանցվել: Այս հոդվածում մենք առաջարկում ենք կարկտաքարերի աճի մաթեմատիկական մոդել, որը հիմնված է աճի հիմնական մեխանիզմներից մեկի՝ հետերոկոագուլյացիայի վրա: Այս վերջին երևույթի ֆիզիկական մեխանիզմը շատ բարդ է և դեռևս բացահայտված չէ: Ուսումնասիրության նպատակը կարկտահարության այս կամ այն մեխանիզմի տարածվածությունը քննարկելը չէ: Փորձ է արվում ներկայացնելու ջրի միկրոկաթիլների հետերոկոագուլյացիայի կինետիկ սխեման ամպի մեջ բնականորեն առաջացած կամ արհեստականորեն ստեղծված պինդ փուլի (կարկուտի մանրէներ) մակերեսի վրա:

Առաջարկվող մաթեմատիկական մոդելի միջոցով ցույց է տրված, որ հետերոկոագուլյացիայի սկզբնական փուլերում միջուկների ագլոմերացիայի բացակայության դեպքում Պուասոնի բաշխումը տեղի է ունենում սաղմի վրա ջրի միկրոկաթիլների քանակի նստեցման հավանականությունների համար:

Կարկտահատիկի աճի հետագա փուլերում կարկուտի միջուկների մասնիկների մակերեսին ջրի միկրոկաթիլների նստեցման կինետիկ օրինաչափությունները տարբեր են, քանի որ միջուկների մակերեսի լցվածության գործընթացի արագությունը կնվազի այնպես, ինչպես ազատ մակերեսի համամասնությունն է նվազում:

Բանալի բառեր՝ *կարկուտ, կարկուտի միջուկներ, աճի դինամիկա:*

DYNAMICS OF HAILSTONE GROWTH ACCORDING TO THE MECHANISM OF HETEROCOAGULATION

AIVAZYAN GRIGORY
PhD in Chemical Sciences,
Associate Professor of GSU
e-mail: grikorgjan@gmail.com
HAKOBYAN HAYASTAN
PhD in Technical Sciences,
Associate Professor of ANAU.
e-mail: hayastan.akobyan.53@gmail.com

Hailstorms cause significant damage to agriculture. Success in the fight against hail are currently small. Apparently, this is determined by the insufficiency of theoretical studies of the processes in city formation, although significant progress has been achieved in this area.

In this paper, we propose a mathematical model for the growth of hailstones according to one of the main growth mechanisms, heterocoagulation. The physical mechanism of the latter phenomenon is very complex and still not clear. The purpose of this work is by no means to discuss the prevalence of one or another hailstone growth mechanism. The work is an attempt to present a kinetic scheme of heterocoagulation of water microdroplets in a cloud on the surface of a naturally generated or artificially created solid phase (hail germs).

In this work, based on the proposed mathematical model, it is shown that at the initial stages of heterocoagulation, in the absence of agglomeration of nuclei, the Poisson distribution takes place for the probabilities of the number of water microdroplets deposited on the embryo. At the later stages of hailstone growth, the kinetic regularities of the deposition of water microdroplets on the surface of particles of hail nuclei are different, since as the surface of the nuclei is filled, the rate of the process will decrease, because the proportion of free surface decreases.

***Key words**: hail, hailstone nuclei, growth dynamics.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.12.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 18.12.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

РОСТ ГРАДИН С УЧЕТОМ СТЕПЕНИ ПОКРЫТИЯ ПОВЕРХНОСТИ КОАГУЛЯЦИИ

УДК 551.510
DOI: 10.56246/18294480-2023.14-05

АЙВАЗЯН ГРИГОРИЙ
Кандидат химических наук, доцент ГГУ
Гаварский государственый университет
электронная почта: grikorgjan@gmail.com
АКОПЯН АЙАСТАН
Кандидат технических наук, доцент НАУА
Национальный аграрный университет Армении
электронная почта: hayastan.akobyan.53@gmail.com

Успехи борьбы с градом в настоящее время невелики. Видимо, это определяется недостаточностью теоретических исследований процессов градообразования,хотя в этой области достигнуты значительные успехи. В настоящей работе предлагается математическая модель роста градин по одному из основных механизмов роста – гетерокоагуляции.

В нашем первом сообщении было показано, что в процессе роста градин на начальных стадиях коагуляции микрокапелек воды на поверхности частиц зародышей градообразования, в отсутствие агломерации этих зародышей для вероятностей числа оседающих микрокапель воды имеет место распределение Пуассона.

На более поздних стадиях роста градин кинетические закономерности осаждения микрокапель воды на поверхности частиц зародышей града иные, поскольку по мере заполнения поверхности зародышей скорость процесса будет снижаться, т.к. уменьшается доля свободной поверхности.

Այս տեսարանից հետո հասկացա, թե ի՞նչ է ամեն մի հայի համար, նույնիսկ կոմունիստական Հայաստանում, մեր Արարատը, որը փաճիկներին են նվիրել խաբեբա միջոցներով»[23]*:*

Գուրգեն Յանիկյանը դրեց հայկական պահանջատիրության նոր փուլի սկիզբը և դարձավ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի հոգևոր հիմնադիրը: Յանիկյանի գործողությունից երկու տարի անց 1975 թվականին ծնվեց մի կազմակերպություն՝ «Արգելափակեալ հերոս Գուրգէն Եանիգեանի հեղափոխական խմբակ» անունով, որը կարճ ժամանակ անց վերանվանվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ և սկսեց իր գործունեությունն ամբողջ աշխարհում՝ թիրախավորելով թուրք դիվանագետներին:

Ո՞վ էր տաղանդաշատ ճարտարագետ, գրող ու հրապարակախոս, շինարար ու գյուտարար, հայկական նորագույն զինյալ ազատագրական պայքարի հերոս Գուրգեն Յանիկյանը: Ծնվել է 1895 թվականի դեկտեմբերի 24-ին Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) քաղաքում: Քանի որ նա լույս աշխարհ եկավ համիդյան ջարդերի ժամանակ, կրեց «Ջարդի տղա» անունը[24]:

---

[22] ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 24, թ. 1:

[23] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 49-50: Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 273:

[24] Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 4, 9, 78:

Հայրը լավ հարաբերություններ ուներ Կարինում պարսկական հյուպատոսի հետ, որի օգնությամբ Յանիկյանների քսանութ հոգուց բաղկացած գերդաստանը ապաստանում է պարսկական հյուպատոսարանում և փրկվում կոտորածներից[25], այնուհետև անցնում Կարս:

Քաղաքական նպատակով դարձել է պարսկահպատակ, սովորել Նոր Նախիջևանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել Մոսկվայի պետական և Ժնևի համալսարանները, ստացել ճարտարագետի վկայական: Մասնակցել է Մոսկվայի և Թիֆլիսի հայտնի դերասանական խմբերի, նաև Վահրամ Փափազյանի խմբերի ներկայացումներին:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918) ժամանակ հայկական կամավորական 2-րդ գնդի կազմում մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի մարտերին, հայտնաբերել և պայթեցրել թուրքական ռազմամթերքի մեծ պահեստ, իր 50 ընկերների հետ խումբ կազմած՝ Դրոյի գնդում պարտականություն է ստանձնել վերաշինել քանդված կամուրջները, ռուսական բանակի անցումը և հայ գաղթականների փոխադրությունը դյուրացնելու համար կառուցել նոր ճանապարհներ, կատարել հետախուզական աշխատանք թշնամու թիկունքում[26]: Այդ պաշտոնում ծառայել է վեց ամիս, ռուսական բանակի հետ հասել Վան, Էրզրում, Կարս: Այս ընթացքում նա սարսափելի տեսարանների է ականատես դառնում և ուխտում պայքարել հայության արդարացի իրավունքների վերականգնման համար:

Ապագա կնոջը՝ բժշկուհի Շուշանիկ Քյոմուրճյանին[27], հանդիպել է Խարկովում, որը ամուսնությունից (1924թ.) մինչև իր մահը (1974թ.) հավատարմորեն աջակցել է ամուսնուն:

1929-1930թթ. Գուրգեն Յանիկյանը սովից փրկել է Կովկասից մինչև Դոն գետը տարածվող շրջանի 40 մլն բնակչությանը՝ 45 օրում սերմացուն հասցնելով գյուղացիներին[28]: Հյուսիսային Կովկասում հօգուտ սովյալների

---

[25] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 11: Տե՛ս նաև՝ Թևեքելյան Ա., ԱՍԱԼԱ-Ի (ՀԱՀԳԲ) նախահայրը. Գուրգեն Յանիկյան (1895-1984), 24.12.2018, http://www.genocide-museum.am/arm/24.12.2018-Yanikyan.php?fbclid=IwAR3qymrDdpRekI0TpdnhUW2Q31SH_RYCN-4BIiIb6CgBbhNsWUV1wGGtfnso

[26] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 13:

[27] Շուշանիկ Քյոմուրճյանը նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, պատմագիտական երկերի հեղինակ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի (1637-1695) տոհմի շառավիղն էր: Գուրգեն Յանիկյանը երեխաներ չի ունեցել:

[28] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 15-16:

կատարած աշխատանքի համար պարգևատրվել է խորհրդային կառավարության կողմից և ստացել իր տիկնոջ հետ Իրան մեկնելու արտոնություն՝ վավերացված Ստալինի ստորագրությամբ[29]:

1930 թվականին տիկնոջ հետ մեկնել է Իրան՝ Թավրիզ, որտեղ հիմնել է իր գրասենյակը (ավելի քան 300 աշխատողներով), երկրի առաջին մետաղաձուլարանը, արժանացել Պատվո նշանի (1930թ.), կառավարության պատվերով պատրաստել Իրանի նշանավոր անձանց ու թագավորների մետաղե արձանները, կառուցել երկրի առաջին ստորգետնյա զինագործարանը, երկաթուղագծեր, ճանապարհներ, կամուրջներ, կարգավորել Թեհրանի էլեկտրական լուսավորության գործը[30]: Իրանում հիմնել է «ՌԱՀՍԱԶ» (ճանապարհներ շինող) ընկերությունը, որը գործել է միայն կառավարական պատվերներով[31]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945թթ.) ընթացքում Պարսից ծոցից մինչև խորհրդային սահման ցամաքային ճանապարհը մեկ տարվա փոխարեն կառուցել է 6,5 ամսում: Ճանապարհի շնորհիվ ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից դեպի Խորհրդային Միություն եկող զինամթերքն այլևս ծովով չէր գալիս, խուսափելով գերմանական սուզանավերի հարձակումներից, այլ փոխադրումները սկսեցին իրականացվել ցամաքային ճանապարհով՝ Իրանի տարածքով:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ-ին մատուցած ծառայությունների համար Գուրգեն Յանիկյանը ստացել է ԱՄՆ-ի քաղաքացիություն, 1946 թվականին հաստատվել է ԱՄՆ-ում և շարունակել արդյունաբերողի ու գյուտարարի իր գործունեությունը:

ԱՄՆ-ում ճանաչման է հասել որպես անգլալեզու գրող, 1950 թվականին ընտրվել է «Մարկ Տվեն» միջազգային հեղինակավոր կազմակերպության պատվո ցմահ անդամ[32]: 1950-1951թթ. Կալիֆոռնիայի «Ո՞վ է, ո՞վ» 1200 աչքի ընկնող գործիչների ցանկում ներառվել է նաև Գուրգեն Յանիկյանը[33]: Եղել է նաև ամերիկյան «Կապույտ գրքի», Նյու Յորքի գրականության և գի-

---

[29] Նույն տեղում, էջ 16:

[30] Նույն տեղում: Армянский вопрос. Энциклопедия/Ред. Кол.: К.С.Худавердян (отв. ред.) и др., Ер., 1991, с. 348.

[31] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 15: Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 133-134:

[32] ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 40, թթ. 12, 23:

[33] Նույն տեղում, թ. 12:

տության հայտնի հաստատությունների պատվո անդամ[34]: Արժանացել է արվեստի և գրականության շվեյցարական հայտնի գրական և գիտական հաստատության ցմահ պատվո անդամի կոչման, որի 1800 անդամներից 785-ը ԱՄՆ-ից էին, նրանցից միայն երկուսն էին հայ՝ Վիլյամ Սարոյանը և Գուրգեն Յանիկյանը[35]:

Տիրապետել է 6 լեզվի: Գրական-իմաստասիրական մի շարք երկերի հեղինակ է՝ «Հուդայի հաղթանակը», «Հարեմի խաչը», «Համբարձված Հիսուսը», «Մի ամերիկացու ձայնը», «Անհատը», «Կյանքի սիմֆոնիան», «Մեր մեսիան», «Դրախտը», որոնք թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն: «Նեգրուգ» ստորագրությամբ եվրոպական թերթերում գրել է քաղաքական, աստվածաբանական մի շարք հոդվածներ, որոնց ծանոթ էր նաև թուրքական կառավարությունը[36]:

ԱՄՆ-ում հաստատվելուց հետո Յանիկյանը փորձել է Հայոց ցեղասպանության փաստն ու Հայկական հարցը ներկայացնել օտարներին: Այդ նպատակով իր նյութական միջոցներով ձեռնարկել է Հայոց ցեղասպանության մասին ֆիլմի նկարահանման աշխատանքները և «Դրախտ» փաստական գիրքը վերածել է թուրքական բարբարոսությունները ներկայացնող 20 ժամ տևողությամբ շարժապատկերի[37]: Խոսելով ֆիլմի մասին՝ Յանիկյանը նշում է. *«...Ես ուզում էի մի այնպիսի աղմուկ բարձրացնել, որ ոչ միայն Ամերիկան, այլ ամբողջ մարդկությունը չկարողանար այլեւս անուշադիր թողնել մեր ցեղի արդար պահանջները: Ուզում էի սրտեղծել մի իրավիճակ, որի արդյունքը լինելու էր Հայկական Նյուրնբերգը: Ես ուզում էի այդ անել՝ որպես իմ կյանքի վերջնական նպատակ, եւ կատարել պարտականությունս դեպի իմ անձնական զոհերը, դեպի իմ ցեղի զոհերը եւ սթափեցնել Ամերիկան... Համոզված եմ, որ եթե հայկական ցեղասպանության հարցը չսրանա իր արժանի լուծումը, մարդկությունը պիտի անհետանա այս երկրագնդի երե-*

[34] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 176:

[35] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: Լեւոն Երկաթ, Գ.Եանիկեանի կենսագրութիւնը, Նոր սերունդ, փետրուար, 1977, էջ 6:

[36] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 18:

[37] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 18: Լեւոն Երկաթ, Գ.Եանիկեանի կենսագրութիւնը, Նոր սերունդ, փետրուար, 1977, էջ 6: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 175-176:

սից»[38]*:* Սակայն հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված ֆիլմը կիսատ է մնում գումար չլինելու[39], ԱՄՆ-Թուրքիա ընդհանուր շահերի և ԱՄՆ-ի խոչընդոտելու պատճառով:

Գուրգեն Յանիկյանը երկու անգամ եղել է Դեր Զորում և Բաղդադում, այցելել 1915թ. հայկական կոտորածների վայրերը: 1951 թվականին հիմնել է «Էն էպրիլ սոնկ» թատրոնը[40]: Ստեղծել է ընդերքը 1400 մ խորությամբ դիտարկող «Յանիկսքօֆ» սարքը[41]: Իր գյուտի համար ամերիկյան կառավարությունից ստացել է շնորհակալագիր և նյութական նվեր: Նյութական նվերը վերադարձնելով կառավարությանը՝ խնդրել է սարքը գործածել միայն բարի նպատակների համար: Հետագայում Յանիկյանն այդ սարքի միջոցով ցանկանում է հետազոտել Դեր Զորի անապատները, հավաքել հայերի կմախքներն ու հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կանգնեցնել, սակայն սարքի օգտագործման թույլտվությունը ստանալու նրա դիմումը ամերիկյան կառավարությունը մերժում է[42]:

Այս ամենին հետևում է 1973 թվականի հունվարի 27-ի գործողությունը: ***«Ես իմ ամբողջ գրությունների մեջ միշտ պաշտպանել եմ այն միտքը, որ բռնությունը պետք է ոչնչանա մեր կյանքում: Բայց երբ այս բոլորը կատարվեցին, եւ մարդկությունն ու համայն աշխարհը լուռ մնացին Հայկական հարցի նկատմամբ, այն ժամանակ որոշեցի, թե ինչպես կարող եմ մարդկության եւ պետությունների ուշադրությունը կենտրոնացնել Հայ դատի վրա»***[43]***:***

---

[38] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 26:

[39] Ֆիլմի վրա Յանիկյանն իր անձնական միջոցներից ծախսել է ավելի քան 2 մլն ԱՄՆ դոլար, նկարահանումները կատարել է Արևելքի այն վայրերում, որտեղ կատարվել էին հայերի ջարդերը: Իրանում իր կառուցած երկաթուղագծի համար իրանական կողմից պետք է ստանար 2 մլն ԱՄՆ դոլար, սակայն իրանական կառավարությունն այդպես էլ նրան չի վճարում այդ գումարը (Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 175):

[40] ՀԱԱ, ֆ. 440, g. 1, գ. 43, թթ. 1-55:

[41] ՀԱԱ, ֆ. 440, g. 1, գ. 40, թ. 8, 12: Նույն տեղում, գ. 42, թթ. 1-15: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 176: Յանիկյան Գ., Նպատակ և ճշմարտություն, էջ 18, 149:

[42] ՀԱԱ, ֆ. 440, g. 2, գ. 18, թ. 1: Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 18-19: Լեւոն Երկաթ, Գ.Եանիկեանի կենսագրութիւնը, Նոր սերունդ, փետրուար, 1977, էջ 6: The Armenian Secret Army for the Liberation of Armenia(ASALA), p. 176:

[43] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 176:

Բանտից ուղարկված ձայնագրության մեջ նա բացատրում էր, թե ինչու է դիմել նման քայլի. *«Հայկական դատը ինձ համար մի հասկացողություն ունի՝ մեզանից գողացված ու թուրքին նվիրած մեր հայրենական հողերը հետ ստանալ: Մեր դատը գերեզման էր դրված ու պատրաստվում էին ծածկել մոռացության քողով: Որպես մի հայ անհատ ես չէի կարող ընդունել այդ: Պապերիցս սրացած արդարության ոգին իմ ներսում հրաբուխ դարձած դուրս ժայթքեց ու այրեց թաղումը կատարողների դեմքերը: Ու ես, փասնյակ տարիների մոռացության փոշուց մաքրելով Հայկական դատը, դրի մարդկության առաջ»*[44]*:*

Յանիկյանի արարքն ու ԱՄՆ դատարանի կողմից նրա դատապարտումը հայ երիտասարդության մի մասին բերեցին այն վերջնական համոզման, որ հայրենիքի ազատագրության միակ միջոցը զինյալ պայքարն է:

Հաջորդ տարիների ընթացքում ստեղծվում են այնպիսի խմբավորումներ, ինչպիսիք են ԱՍԱԼԱ-ն (սկզբում կրում էր «Արգելափակեալ հերոս Գուրգէն Եանիգեանի հեղափոխական խմբակ» անունը), ՀՅԴ-ի կողմից ստեղծված «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» կազմակերպությունը: Նրանք հարձակումներ էին իրականացնում աշխարհում թուրքական իշխանության ներկայացուցիչների հանդեպ ու երկար ժամանակ սարսափի մթնոլորտում էին պահում թուրք հասարակությանը՝ ծանրակշիռ ներդրում ունենալով հայոց նոր ժամանակների զինյալ ազատագրական պայքարի մեջ:

Միայն 1973-1997թթ. ԱՍԱԼԱ-ն ունեցել է 256 թիրախ և 45 մահ, որից 36-ը եղել են թուրքեր[45]: ԱՍԱԼԱ-ի առաջին[46] և վերջին[47] գործողությունները Գուրգեն Յանիկյանի անունով են:

Յանիկյանը գրում է. *«Ես անհատս ստեղծեցի 27 Յունուարը երեք պատճառով. 1. Իմ ցեղիս համար, որովհետեւ ես Հայ եմ, 2. Իմ երկրիս համար,*

---

[44] Գուրգեն Յանիկյան՝ Հայկական Նեմեսիս, 13 ապրիլ, 2021, http://www.aniarc.am/2021/04/13/-gurgen-yanikyan-armenian-text-new-york-times/:

[45] Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ), Վաւերագրութիւն զինեալ եւ հրատարակչական գործունէութեան, էջ 8:

[46] Առաջին գործողությունը տեղի է ունեցել 1975թ. հունվարի 20-ին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բեյրութի գրասենյակի ռմբահարումով:

[47] Վերջին գործողությունը տեղի է ունեցել 1997թ. հունիսի 21-ին Բրյուսելում Թուրքիայի դեսպանատան դեմ (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ), Վաւերագրութիւն զինեալ եւ հրատարակչական գործունէութեան, էջ 55):

որովհետեւ ես ամերիկացի եմ, 3. Մարդկութեան համար, որովհետեւ ես Մարդ եմ»[48]:

Տարիներ անց մեծ հայի աճյունն իր վերջնական հանգրվանը գտավ Մայր հայրենիքում: 2019 թվականի մայիսի 5-ին հերոսի մասունքներն ամփոփվեցին Եռաբլուրում՝ ԱՍԱԼԱ-ի նահատակների համար առանձնացված գերեզմանատանը՝ Մայր Աթոռի երիցագույն միաբան Ոսկան արքեպիսկոպոս Գալփակյանի խնկարկման ներքո[49]: Հաշվի առնելով ժամանակի միջազգային քաղաքական իրավիճակը՝ Յանիկյանի փաստաբան Հարի Յումենի այրին՝ Մարիա Յումենը, հերոսի աճյունատուփը 35 տարի պահել էր, որպեսզի հարմար պահի այն անվտանգ փոխադրվեր Հայաստան: Թուրքիայի ԱԳՆ-ն բողոքեց Յանիկյանի մասունքները Եռաբլուրում ամփոփելու դեմ և հանդես եկավ դատապարտող հայտարարությամբ[50]:

Գուրգեն Յանիկյանի գործողության 50-ամյակին ընդառաջ «Հայաստանի ժողովրդական շարժում» կազմակերպությունը 2022 թվականին հայտարարել է Յանիկյանական և նախաձեռնել «Նպատակ և ճշմարտություն» խորագրով միջոցառումների շարք[51]: Միջոցառումների մեկնարկը տրվեց 2022 թվականի մարտի 4-ին կայացած «Գուրգեն Յանիկյան և ԱՍԱԼԱ» խորագրով գիտաժողովի շրջանակներում և որը շարունակվելու է մինչև 2023 թվականի սկիզբը:

Ամփոփելով նշենք, որ Գուրգեն Յանիկյանը սկզբնավորեց հայկական նորագույն ազատագրական պայքարի զինյալ փուլը, որը հետագայում ընդգրկեց երիտասարդության լայն շրջանակներ, աշխարհի ուշադրությունը սևեռեց հայոց պահանջատիրության վրա և ամրագրեց այն համոզմունքը,

---

[48] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 13, թ. 49:

[49] Եռաբլուրում ամփոփվեցին Գուրգեն Յանիկյանի մասունքները (տեսանյութ), 5 մայիսի, 2019թ., https://a1plus.am/hy/article/339422: ԱՍԱԼԱ-ի հոգեհայր Գուրգեն Յանիկյանի մասունքները բերվել են Երևան, 01 մայիս 2019, https://www.irazek.am/hy/news/10022: Գուրգէն Եանիքեանի մասունքները բերուած են Երեւան, 05/02/2019, https://massispost.com/am/2019/05/02/-գուրգէն-եանիքեանի-մասունքները-բերու/:

[50] Թուրքիան դատապարտել է Գուրգեն Յանիկյանի մասունքների ամփոփումը Եռաբլուր պանթեոնում, 07/05/2019, https://azat.tv/turkian-datapartel-e-asalayi-hogevor-himnadir-gurgen-yanikyani-masunqneri-ampopumy-erablur-panteonum/

[51] Բացառիկ հայը՝ Գուրգեն Յանիկյան, 13 փամփուշտ՝ հանուն հայի արթնության եւ ընդդեմ աշխարհի անտարբերության, մարտի 5, 2022, https://hhpress.am/socium/2022/9377/: Յանիկյանական տարի՝ «Նպատակ եւ ճշմարտություն», 25/03/2022, https://azg.am/news/յանիկյանական-տարի՝-նպատակ-եւ-ճշմարտ/:

որ Հայ դատի լուծման համար անհրաժեշտ են բոլորովին նոր մեթոդներ ու ուղղություններ:

Գուրգեն Յանիկյանը համոզված էր, որ եթե հայոց ցեղասպանության հարցը գնահատական չստանա, ապա մարդկությունը իսպառ չքանալու է այս երկրագնդի վրայից, քանզի քանի դեռ աշխարհում մի հայ կա, նրա զավակները չեն մոռանալու ու ներելու թուրքերին իրենց կատարածի համար և պահանջելու են արդարություն և հատուցում[52]:

Յանիկյանը մշակեց հայության նորագույն պայքարի գաղափարախոսությունն ու մարտավարությունը՝ հերթական անգամ հավաստելով, որ միայն ուժով, հայության համախմբվածության և միասնականության շնորհիվ է հնարավոր հասնել համազգային հարցերի լուծմանը:

Գուրգեն Յանիկյանը

1901




1913



1908









[52] Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 255:

Հավելված 1

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ ՄԱՏԱՂ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Դուք, որ չարչարեալ ազգի արգանդից ծնունդ էք առել, հեռու մայր երկրից եւ այն դեւերից, որոնք դարերով արիւն են քամել ձեզ ծնող ցեղից, օրինակ վերցրէք ձեր նախնիքներից…

Ձեր բաղդն է եղել պարզ երկրակամար, կեանքերդ չեն մարուել սպառած վէրքերից եւ չեն բաժանել ձեզ ձեր հարազատներից:

Ձեզ հետ միասին ծնկաչոք ընկած կը փառաբանեմ դրօշը աստղերով, որ հեռու է պահել ձեզ այդ բոլորից իւր ծածանումով:

Աչքերդ բացած մանուկ հասակից, դուք ամբողջ թափով օգտուել էք կեանքից եւ Արարչութեան բոլոր բարիքներից…

Այդպէս է եղել եւ այդպէս էլ կայ…

Բայց… Թող ազատութեան հարբեցնող գինին չդառնայ դագաղը անցած օրերին եւ խեղդելով միտքն ու հոգին՝ շեղէ ուղին մատաղ կեանքի արեան ձայնի…

Ինչո՞ւ քայլէք աչքով խաւար, որ չտեսնէք լոյսը փայլող, ձեր պապերի գովքը անող ներկուած դաշտը Աւարայր:

Ինչո՞ւ մոռնաք, գնչու դառնաք, անցած օրերը ձեր ազգի եւ չձգտէք անխախտ կամքով հասնել նորից մեր հին տաճարը փառքի:

Քանիցս անգամ մեր պատմութեան մէջ Արտաւազդների ոգիներն անմահ՝ ծնունդ են առել նոր անուններով…

Քանիցս անգամ պայծառ ճակատները դաժան թշնամու առաջն են կանգնել եւ ազգիդ վերայ թափուող նետերը իրանց կուրծքերին հաւաքել…

Արիւնով ներկուած դաշտերը չորացած, ձեզ են սպասում, հայ զաւակներին, որ միակ կամքով ընդմիշտ ձուլուած, նոր շունչ ներշնչէր վարդերին թառամած:

Քանդուած գիւղերի փլատակների վերայ նոր կեանք պիտ կառուցէք ժայռի կարծրութեամբ, որ ամէն յորձանք գալիք օրերի փրփուր դառնալով նրանից փախչի:

Երբ կարօտահար սրտերը բիւրերի ախն են քաշում իրանց եղբայրների, լեցուէ՛ք հաւատքով, որ մեր լեռների գագաթներից դէպ վեր դրօշը ազգութեան պիտի ծածանուի…

Թող այն ժամանակ խիղճը մարդկութեան զարթնի իւր քնից, տեսնի աչքերով մի ազգ իւր մարմնով, որ ամբողջ հոգիով դարերից ի վեր միշտ մաքառել է ընդդէմ սպրկութեան…

Գուրգէն Եանիգեան

«Մշակ» շբթ. (Ֆրեզնօ, Ա.Մ.Ն.), 21 Դեկտ. 1951

Հավելված 2

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՄՆ-ՈՒՄ 300 ՀԱՅԵՐԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՆԱՄԱԿԸ ԱՆՀԱՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԴԵՄ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ…

Այս նամակը ընդունէք որպէս մի կարեւոր նամակ, որովհետեւ կապուած է մի հարցի հետ, որը ահա աւելի քան 50 տարի տանջում է ամեն մի իսկական Հայի միտքն ու հոգին: Կասկած չունեմ, որ քո նախնիկներից էլ ոմանք զոհ են գնացել բարբարոս գազաններին, որոնց դժբաղդաբար մարդկութիւնը ԹՈՒՐՔ ցեղ ու ՏԱՃԻԿ կառաւարութիւն է անուանում:

Նրանք նախօրոք կազմած ծրագրով ոչ միայն մոտ երկու միլիոն մեր ցեղակիցներին ոչնչացրին, այլ եւ գրաւեցին նրանց հողերը ու ունեցւացքը վեց միլիարդ դոլար արժողութեամբ:

Նրանց հաջողուեց այս ոճրագործութիւնը, որովհետեւ կային ազգեր, որոնք օգնում էին նրանց:

Կային եւ ազգեր, որոնք ծածկելով իրանց ագայ ու եսասեր դեմքերը բարեկամական դիմակով մարդկութեան անունից համբերութիւն էին քարոզում եւ մինչեւ այսօր էլ անում են նոյնը:

Ազնւութիւն, արդարութիւն ու պատիւ-մեր ներկայ կեանքում, շատ ազգերի համար արդէն դառել են անիմաստ բառեր:

Բոսֆորի ափի ոճրագործ գազանների կառաւարութիւնը –շատ երկրների լրագրներում եւ նախագահների ճառերում գնահատւում է որպէս մի արժանի ցեղ ու կառաւարութիւն, որ քայլում է մարդկային եղբայրութեան շարքերում, որը արժանի է օգնութեան…

Փառաբանւում են ոչ միայն նրանց ներկան, այլ եւ նրանց անցեալը եւ աշխատում են մոռացութեան քողով ծածկել նրանց անցած արիւնով լի ներկած ուղին:

Երբ մեր ներկայ կեանքը ցույց է տալիս որ միայն ուժն արժէք ունի մեր այս աշխարհում, դէ այն ժամանակ ինչ իրաւունք ունենք մենք ՀԱՅ ԱՆՀԱՏ-

ՆԵՐՍ-որպէս ԴՕՆ ԿԻՇՈՏՆԵՐ սաւառնել երկնքում արդարութիւն ու իրաւունք աղերսելով:

ՀԱՅԿԱԿԱՆ կոչւած հարց ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ... Դա ցնորք է եւ ինքնախափեթութիւն... Գոյութիւն ունի ՀԱՅ ԱՆՀԱՏԻ հարցը, որովհետեւ քո եւ իմ նախնիկներին են թալանել ու սպանել...Մեր մայրերին են բռնաբարել ու վաճառել...

ՀԱՅ ԱՆՀԱՏՆ է որ վերջապէս զարթնելով երկար քնից պետք է անհապաղ ներկայացնէ իր պահանջները փաճիկ գազաններին մի այնպիսի լեզւով որ նրանց հասկանալի լինի:

ՈՉ ԱՋԳ, ՈՉ ԵՐԿԻՐ, ՈՉ ԵԿԵՂԵՑԻ, ՈՉ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ ինչ անւան տակ էլ գոյութիւն ունեն, կապ ունենալու չեն այս նոր ձեւի պատերազմում, որը ՀԱՅ ԱՆՀԱՏԸ հայտարարել է փաճիկ գազաններին եւ նրայ կառաւարիչներին...եւ շարունակելու է մինչ վերջնական հաղթանակը:

Նեմեսիս դարձած հայ ԱՆՀԱՏՆԵՐԻՆ հարկաւոր չեն պատերազմի դաշտեր, ատոմային ռումբեր... նրանց բաւական է իրանց կամքը ու ցանկութիւնը որ իրանց իրաւունքները պահանջեն ու սրտանան:

ՀԱՅ ԱՆՀԱՏԸ սրեղծելու է մի դրութիւն, որ վայրի փաճիկ ազգը չունենայ ոչ մի հնարաւորութիւն հարաբերելու ուրիշ ազգերի հետ ամբողջ երկրագնդում:

Տաճիկ կոչւող կառաւարութեան ներկայացուցիչները ոչնչացւելու են ամեն մի տեղ ամեն մի երկրում անխտիր ինչ անւան տակ էլ հրապարակ գան:

Աշխարհումս ապրող թուրք ցեղին պատկանողների հետ մենք գործ չունենք –մենք ատում ենք նրանց, բայց Հայ անհատը չի ընտրել նրանց... ՄԵՐ գործը ՏԱՃԻԿ կոչւող կառաւարութեան ներկայացուցիչների հետ է լինելու ամենուրէք որտեղ նրանք հրապարակ գան:

Երբ այս նամակը կը կարդաք - արդէն ես, որ հեղինակն է այս նոր ձեւի պատերազմին ու տարիների ընթացքում փայփայել է այս գաղափարը-արդէն անցել է նրա իրագործման...

Ես լինելու եմ եւ առաջինը եւ լինելու եմ օրինակ շատշատերին...

Կասկած չունեմ որ ինձ նման մտածողների ցանկը կարճ լինելու չէ...

Կասկած չունեմ որ շատերն են գնալու այս նոր ձեւի պատերազմի ճանապարհով...

Կասկած չունեմ որ ամեն մի Հայ անհատ պիտ աշխատի տարածել այս նոր ձեւի պատերազմի գաղափարը եւ պետք եղած դեպքում ՀԱՅ ԱՆՀԱՏԸ-ՕԳՆԵԼՈՒ Է ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ:

Կասկած չունեմ, որ ներփակած աւելորդ օրինակները կը տարածեք ուրիշ վայրեր:

ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆ, Նեմեսիս դարցած մի ՀԱՅ ԱՆՀԱՏ որը հեղինակն է այս նոր ձեւի պատերազմին, որը միակ միջոցն է անհատի համար - սպանալ իրանից գողացածը:

Գուրգէն Եանիկեան, 1972թ.
ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 31, թ. 2: Պատճեն: Մեքենագիր:

Հավելված 3

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ԲԱՆՏՈՒՄ՝ ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԽՑՈՒՄ

Սիրելի՛ հայրենակիցներ...

Ես խօսում եմ Ձեզ հետ իմ բանտի խուցից, որից դուք կը լսեք իմ խօսքերը:

Կարող են մարդիկ լեռներ խորտակել, իրենց բազկին ուժով գետերի ընթացքը փոխել, բայց կարելի՞ է արդեօք, հնարավո՞ր է ազատութեան ու արդարութեան տենչը խեղդել մարդ կոչուած էակի մէջ: Կարելի՞ է արդեօք սպիակել որ մի անհատ, որը գիտէ թէ ինչ ազգի զաւակ է եւ թէ ինչպիսի նախորդներ է ունեցել, մոռանա այս բոլորը ու հպատակւի չարին ու անարդարութեան մեր այս աշխարհում: Թող աշխարհը գիտէնա որ մարդկութիւնը հայ ազգին պարտք ունի վճարելիք:

Տասնեակ դարեր առաջ մեր ազգը պատմութիւն է ունեցել:Հայ ժողովուրդը յուր գնահատելի լուման է մտցրել մարդկութեան յառաջադիմութեան գործում, երբ այսօրուա մեծ ազգերը որ իրենց զարգացած են համարում՝ մերկ, կիսավայրենիի պէս ապրում էին Եվրոպայի անտառներում ու լեռներում: Այսօրուա զարգացած ազգերի հիմքը ազգերի աշխատանքների արդիւնքն է, որոնց թվում մեր ցեղը վերջին տեղը չի գրավում:

Հպա՛րտ եմ, որ հայ եմ: Հպա՛րտ եմ, որ հա՛յ եմ ծնվել: Հպա՛րտ եղեք և դո՛ւք՝ իմ սիրելի հեռաւոր ցեղակիցներ, որ պատկանում եք մի ազգի, որքանիցս անգամ ապացուցել է աշխարհին, որ կարող է տալ յուր թանկագին զաւակների արիւնը ազատութեան ու արդարութեան համար: Նոյնիսկ այսօր՝

ցրուած հայութեան բեկորները հեռաւոր Լիբանանում փաստեցին մի անգամ եւս, որ ազգի զաւակների կուրծքերը կարող են պատնեշներ կազմել երբ վտանգը սպառնում է ազգին:

Լիբանանի նահատակները 20րդ դարում մեր սուրբերն են որ իրենց մատաղ, երիտասարդ կեանքերը զոհելով եղան նահատակ ազատութեան Բագինի առաջ: Նրանք անջինջ տառերով գրեցին իրենց անունները այն գրքում, որտեղ դարերի ընթացքում գրվել են մեր հերոսների անունները, մեր ֆիդայիների անունները, որոնք սիրոյ փոխարէն մահն էին գրկել, հայկական լեռներում պաշտպանում էին ցեղի անունը ու պատիւը: Փա՛ռք այդ նահատակներին, փա՛ռք անցեալի զոհերին, փա՛ռք մեր ժամանակվա, իրենց կեանքը ազգին նուիրող մեր մատաղ սերնդին, որ ազգի նորագոյն պատմութիւնը գրեցին:

Ամէն մի ազգի ապագան իր մատաղ սերունդի ձեռքն է: Դո՛ւք՝ իմ սիրելի երիտասարդ ցեղակիցներ, որ ցրուած եք աշխարհի չորս կողմը, պիտի ապացուցէք աշխարհին, որ արժանի հետեւողներն եք ձեր մեծերի: Ա՛յն մեծերին, որոնք դէն շպրտելով ամէն ինչ, ու զոհելով իրենց կեանքերը բարձրացրին ազատութեան դրօշը ուաւեւտեցին աշխարհին ու մարդկութեանը, որ հատուցման ժամը հասել է: Ցնցեցին հի՛մքը մարդկութեան ու յայտնեցին, որ չ՛ուզէն այլեւս լինել խաղալիք ուրիշներու համար, այլ կ՛ուզէն որ իրենց տեղն էլ գրավեն, իր արժանի տեղը, ու ոխերիմ թշնամին՝ մարդկային դեմքով գազան թուրքը տա պատասխան իր գործած ոճրագործութիւնների համար:

Տարիներ առաջ, որպէս կամաւոր ես տեսել եմ մեր հայրենի գետերը արիւնով ներկված, տեսել եմ թէ ինչպէս մեր գետերի ալիքները տանում էին իրենց հետ մեր հարազատների անշունչ դիակները, անշունչ կտրված գլուխները, կացնահար արած հայու բալիկները, արիւնաքամ եղած մեր մայրերը ու բռնաբարված մեր քոյրերը: Տեսել եմ այս բոլորը ու սարսափել, թե ո՞ւր է մարդկութեան խիղճը, որտե՞ղ է պահվել արդարութեան աստվածը.... Պիտի սպասե՛նք, որպէս ապացոյց մեր ազգի արժէքին, թող մարդկութիւնը նայէ մեր փոքրիկ հայրենիքին, որ այսօր մենք ունենք, որը զարմացնում է աշխարհը յուր գործերով: Մեր իսկական հայրենիքը՝ Հայաստանը, ունի 140.000 քառակուսի կմ տարածութիւն: Այսօրուա մեր փոքրիկ հայրենիքը ունի միայն 14.000 քառակուսի կմ, որի վերայ հայ ժողովուրդը ցոյց է տալիս յուր արժէքը: Մյուս մասը մեծ ազգերը իրենց անձնական շահերու համար նվեր են տվել տաճիկ կոչած, Սիբերիայի տափաստաններից եկած, մոնգոլյան ցեղին պատկանող արիւնարբու գազաններին՝ թուրք կոչուող ազգին:

Մինչեւ ե՞րբ սպասենք...

Սիրելի՛ հայրենակիցներ, կարծեմ կարիք չկա որ հիշեցնեմ ձեզ, որ ես խոսում եմ բանտից, ցմահ դատապարտուած, դրա համար էլ հասկանալի է, որ ես իմ արտայայտութիւնների մէջ զգոյշ եմ լինելու: Բանտարկութեան պատճառը ձեզ յայտնի է: Ես անարդարութեան զո՛հն եմ: Մեր Հայկական դատը, որը ինձ համար մի հասկացողութիւն ունի, մեզանից գողացած ու թուրքին նուիրած մեր հայրենական հողերը հետ ստանալ մեր ազգի համար եւ ստանալ թուրքից մեր ազգին հասցրած վնասների վճարումը: Ինչինչ պատճառներով նրանք, որոնք վերցրել էին իրենց վերայ պաշտպանելու և հետապնդելու մեր Հայկական դատը՝ հետ էին մնացել կեանքի օրվա թելադրանքներից եւ զբաղուած էին ուրիշ հարցերով, որոնք հաճախ կապուած էին իրենց անձնական շահերու հետ:

Դրութեան արդիւնքը եղաւ այն որ մեր Հայկական դատը գերեզման էր դրուած ու պատրաստվում էին ծածկել մոռացութեան քողով որ հարցը վերջնական փակուի: Որպէս մի հայ անհատ ես չէի կարող ընդունել այդ: Պապերիցս ստացած արդարութեան ոգին իմ ներսում հրաբուխ դարձած դուրս ժայթքեց ու այրեց թաղումը կատարողների դեմքերը ու ես մաքրելով փասնեակ տարիների մոռացութեան փոշուց մեր դատը, Հայկական դատը դրի մարդկութեան առաջ: Այս ոչ միայն արթնացրեց հայ ժողովուրդը, այլեւ փաստեց նրան որ մինչ այդ Հայ դատի հարցով զբաղուողները աշխատել էին նրան քնացնել ու կերակրել խոստումներով, որովհետեւ իրենք սնանկացել էին իրենց գործերով ու զբաղուած էին միայն նիւթականով ու իրենց գրաւած բազկաթոռներով:

Ես զգում էի, որ մենակ մնալու չեմ, ես գիտէի, որ իմ երիտասարդ ցեղակիցները ո՛չ միայն վերցնելու էին իմ պարզած ազատութեան ու արդարութեան դրօշները, այլեւ ավելի բարձր էին բարձրացնելու ու տանելու էին ու հասնելու մինչեւ Արարատի գագաթը եւ պարզելու էին այնտեղ, որ աշխարհում ցրուած հայուզաւակները տեսնեն ու լսեն նրա կոչը, որ հասել է ժամանակը մեզանից գողացածին տե՛ր կանգնելու ու փլատակների վերածուած մեր աւանները սկսեն կառուցվել որ զարմացնեն աշխարհին հայու ոգո՛ւ, ուժի՛, կամքի անմահութիւնը փաստելով:

Ես գիտէի, որ անհատս մենակ մնալու չէր: Հազարաւոր ինձ նմանների կուրծքերում նոյն հրաբուխն էրկեանք առնելու, ու մեր վայրագ թշնամի թուրքից պատասխան պահանջելու: Քով քովի գալով, մի նպատակի ծառայելով հայ անհատները միացան ու աւերեցին աշխարհին, որ ծնունդ է առել Հայ

Ազատութեան Գաղտնի Բանակը, որի արմատներն են ամէն տեղ որտեղ հա՛յն է ապրում որպէս թափառական ազգ: Օրհնութեան ուհաջողութեան համբոյր եմ դրոշմում այդ բանակի բոլոր անդամներու հպարտ դեմքերին, նրանց ծնունդը լուսավորեց խուցս մեր ազգի գալիք ապագան: Նրանք մէկ թշնամի ունեն՝ գազան թուրքը եւ մի նպատակ՝ հետ սրանալ մեր պապական հողերը:

Կա՞ արդեօք աշխարհումս մեկ հայ, որի երակներում հոսում է Նաիրեան արիւնը, որ չսիրէնրանց, որ չգուրգուրէ նրանց վերայ, չհպարտանա նրանցով ու չցանկանա ինքն էլ լինել անդամը այդ ազատութեան բանակին, որոնք խօսքերի հեղեղի փոխարէն գործ են ցոյց տալիս: Պատմութիւնը մեզ փաստում է որ խօսքերը քամին է տանում, խօսքումները մոռացվում են, արդարութիւնուազատութիւն բառերը կորցնում են իրենց իմաստը եթէ նրանք չեն պաշտպանվում անհատներից կազմուած ուժեղ բռունցքով: Թո՛ղ իմ սիրելի երիտասարդ մատաղ սերունդը գիտէնա, որ դեռ մարդկութեան ամբողջ պատմութեան ընթացքին ոչ մի անգամ չի պատահել, որ մի ցեղի ազատութիւնը տրուի նրան ոսկե պնակի վերայ: Ո՛ւժն է թելադրում մարդկանց գործերը և ո՛չ թե փառաբանած սերն ու գթութիւնը: Հայ Ազատութեան Գաղտնի Բանակը այն բռունցքն է որհայ անհատները կազմեցին, այդ կենդանի բռունցքն է որ պիտի ծնկի բերէ մեր ոխերիմ թշնամի թուրքը և դնէմարդկութեան առաջ մեր իրավացի պահանջները ու առաջարկէ որ վերջապես մեղաւորները ընդունեն իրենց սխալները ու ուղղէն:

Հեռաւոր, բայց սիրելի՛ հայրենակիցներ,այս ուղերձը ձեզ երբ տրնում եք հպարտութեամբ ձեր գործունէութեան 41ամեակը, թող լինի իմ կտակը ձեզ, մանաւանդ երիտասարդ սերունդի համար, որոնք կերտելու են մեր ապագան: Համոզուած եմ, որ իմ ցոյց տրված ճանապարհով է քայլելու մեր երիտասարդ սերունդը որ ուրախութեան ու հրճուանքի ժպիտ է բերելու մեծերի դեմքին ու հաւատք նրանց սրտերում որ մոտ է ապագան, մոտ է հաշուեպահանջի ժամը: Երկաթապատ իմ խուցումսդա կլինի ամենաթանկագին նվերը ինձ՝ ալեզարդ ծերունուս որ զոհաբերեց իր կեանքը իր ժողովրդին:

Բավական չէ՞ արդեօք, որքան սպասեցինք...

Յուսութիւնեւյաջողութիւն ձեզ իմ հեռաւոր հայրենակիցներ, որոնց կ՛ուզեմ անխտիր սեղմել իմ բաբախող սրտին ու դրոշմել հայրական համբոյրը հպարտ ճակատներին:

Խօսքով ոսկե պնակի վերայ ոչ ոքի ազատութիւն, երկիր չի տրուիր: Բայց ի՞նչ կարող եմ անել ես: Միայն կարող եմ ուրախանալ, երբ լրագիրնե-

րում կարդում եմ, որ ստեղծուել է մի բռունցք, որը կոչվում է Հայ Ազատութեան Բանակ: Այդ բռունցքն է որ պիտի գործէ այսօր: Իմ միակ հույսը դրա վերայ է: Ո՛չ կուսակցութեան, ո՛չ ճառեր, ո՛չ դպրոցներ շինելով, փախստականներով, բողոքագիր գրելով.... դրանք բոլորը աւելորդ խօսքեր են: Միայն ուժն է թելադրում, այդ է հարկաւոր: Եվ այսօր հրապարակ են եկել երիտասարդներ որոնք գնում են հենց այն ճանապարհով որ ես ցոյց տվեցի:

Ես հպա՛րտ եմ, հպա՛րտ եմ, որ նրանք գնում են այդ ճանապարհով որ շարունակէն իմ ստեղծած գործը: Ես շնորհակալ եմ, նոյնիսկ նրանք իրենց կոչում են Եանիկեանի զաւակներ: Ես կընդունեմ նրանց գրկաբաց այդ զաւակներին:

Գուրգեն Եանիկեան, 1979թ.
https://www.youtube.com/watch?v=RaLQaZf7F2U
https://www.facebook.com/watch/?v=1187704991367991

GOURGEN YANIKIAN, THE FIGHTER AND IDEOLOGIST OF THE NEW ARMENIAN ARMED LIBERATION STRUGGLE

PETROSYAN KNARIK
PhD in Historical Sciences
GSU lecturer
Head of Department of Research Works
and International Relations of the National Archives of Armenia
e.mail: k_narik@mail.ru

Gourgen Yanikian (1895-1984), a talented engineer, writer, public speaker, builder and inventor, the spiritual father of the Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), is considered the fighter and ideologist of the new Armenian armed liberation struggle. Convinced that only with the use of force it is possible to focus the attention of the international community on the fair trial of the Armenian people, 78-year-old Gourgen Yanikian, an eyewitness and survivor of the Armenian Genocide, most of whose family members were victims of the massacres, on January 27, 1973, killed the Turkish consul and his assistant at the Baltimore Hotel in Santa Barbara, California, starting the new Armenian national liberation armed struggle. On July 2, 1973, Yanikian was sentenced to life imprisonment, and

after spending 10 years in prison at the request of the authorities on February 10, 1984, he was transferred from the prison to the hospital, where he died 17 days later. And only years later, on May 5, 2019, the remains of the great Armenian found their final resting place in the Motherland. The remains were buried in the "Yerablur" military pantheon in the cemetery dedicated to ASALA martyrs.

Before the Operation dating to January 27, 1973; on December 26, 1972, Yanikian sent open letters to the US President, the Senate, the Congress, the editors of American and Armenian newspapers and 300 Armenians about his political plan, announcing the "war of the Armenian individual against the Turk", calling on the sons of the Armenian nation to turn into "Nemesis" and hit the enemy everywhere.

The bullets fired by the hero Gourgen Yanikian were not only solving the issue of revenge but also were clarifying the political way to pursue the Armenian issue. In 1975, two years after the Operation, the new stage of the Armenian claims began. The Armenian Secret Army for the Liberation of Armenia came to the scene and began a worldwide armed struggle against Turkey, which seized Armenian land; and all those accomplices who helped the Turks continue to violate the fair rights of the Armenian people.

Even today, in the conditions of geopolitical developments and regional transformations, the message of the hero Gourgen Yanikian to the generations is more relevant than ever: to fight an individual war against the enemy for the sake of the protection and salvation of the Armenian people and the peaceful coexistence of the mankind.

Key words: *Gourgen Yanikian, the Armenian Genocide, the Armenian National Committee, the Armenian Issue, the Armenian Nuremberg, Operation Nemesis, Armenian Secret Army for the Liberation of Armenia, Armenian Genocide Justice Fighters, Yerablur.*

ГУРГЕН ЯНИКЯН - БОРЕЦ И ИДЕОЛОГ НОВОЙ АРМЯНСКОЙ ВООРУЖЕННОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ

ПЕТРОСЯН КНАРИК
Кандидат исторических наук
Преподаватель ГГУ
Глава отдела научно-исследовательских работ
и международных связей Национального архива Армении
электронная почта: k_narik@mail.ru

Гурген Яникян (1895-1984), талантливый инженер, писатель и публицист, строитель и изобретатель, духовный основатель Армянской секретной армии освобождения Армении (АСАЛА), считается борцом и идеологом нового армянского вооруженной и освободительной борьбы. Убежденный, что только силовым путем можно привлечь внимание международной общественности к справедливому суду армянского народа, 78-летний Гурген Яникян, очевидец и переживший Геноцид армян, большинство членов семьи которого стали жертвами Геноцида, 27 января 1973 года убил турецкого консула и его помощника в отеле «Балтимор» в Санта-Барбаре, штат Калифорния, начав новую армянскую национально-освободительную вооруженную борьбу. 2 июля 1973 года Яникян был приговорен к пожизненному заключению и проведя в заключении 10 лет, по требованию властей 10 февраля 1984 года был переведен из тюрьмы в больницу, где через 17 дней скончался. И только спустя годы, 5 мая 2019 года, прах великого армянина обрел последнее пристанище на Родине. Останки были захоронены в воинском пантеоне «Ераблур» на кладбище, посвященном мученикам АСАЛА.

Перед Операцией 27 января 1973 года, 26 декабря 1972 году Яникян направил президенту США, Сенату, Конгрессу, редакторам американских и армянских газет и 300 армянам открытые письма о своем политическом плане, объявляя «войну армянской личности против турков», призывая сыновей армянского народа превратиться в «Немезиду» и поразить врага повсюду.

Пули, выпущенные героем Гургеном Яникяном прояснили политический путь решения Армянского вопроса. В 1975 году, через два года после Операции, начался новый этап армянских требований. Армянская секретная армия освобождения Армении начала всемирную вооруженную борьбу против Турции, захватившей армянские земли, и всех тех пособников, которые

помогали туркам и продолжают нарушать справедливые права армянского народа.

Даже сегодня, в условиях геополитических событий и региональных трансформаций, как никогда актуален посыл героя Гургена Яникяна поколениям: вести индивидуальную войну против врага ради защиты и спасения армянского народа и для мирного сосуществования человечества.

Ключевые слова: *Гурген Яникян, Геноцид армян, Армянский Национальный Комитет, Армянский вопрос, Армянский Нюрнберг, Операция «Немезис», Армянская секретная армия освобождения Армении, Борцы за справедливость Геноцида армян, Ераблур.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.07.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ. ՍԵՆԵՔԵՐԻՄ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՏԴ 929
DOI: 10.56246/18294480-2023.14-09

ՔԵՇԻՇՅԱՆ ՄԵՐԻ
Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտաշխատող, պատմաբան
էլփոստ՝ marykeshishian@mail.ru

Մեր մենակեացները իրենց միտքն ու հոգին եզերել էին վանքերի պարիսպներով ու կամարներով: Ս. Տէր-Յակոբեանը, սակայն, մենակեաց էր լայն, անպարագիծ աշխարհում, առանց վանքի ու կամարների, ինքն իր խոր հոգու եւ մտքի դարբասներով շրջանակուած: Ո՛վ գիտէ, գուցէ մարդկային կեանքի անմեկնելի, բարդ ողբերգութիւններից մէկն էլ այն է, թէ ինչո՞ւ բնութիւնը օժտում է մարդուն ստեղծագործելու, մնայուն գործեր երկնելու բոլոր տուեալներով եւ, սակայն այդ երկունքն ու ստեղծագործութիւնը թագնուած են մնում ցարդ մտքի եւ հոգու խորը, բազմադիմի հնադարաններում: Ինչո՞ւ...
Ս. ԳՈՒՐԵԱՆ

Ականավոր հայագետ Սենեքերիմ Տեր-Հակոբյանը հայագիտության ոլորտում ճանաչված ու վաստակաշատ գիտնականներից է, որը թեև շատ կարճ ապրեց, բայց իր վարած համեստ կյանքի և գիտական գործունեության ընթացքում կորստից փրկեց հայ մշակույթի դարավոր գանձերը: Անգնահատելի է նրա գիտական գործունեությունը այդ բնագավառում:

Տարբեր տարիների նա դասավանդել է Երևանի, Բաքվի, Նախիջևանի, Շուշիի, Թավրիզի և Ալեքսանդրապոլի հայկական դպրոցներում: 1916 թվականին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (որպես հայոց պատմության դասախոս): Կրթարանի բարձր դասարաններում դասավանդել է հայոց լեզու և հայ մատենագրության պատմություն: Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով նշանակվել է «Արարատ» ամսագրի խմբագրական կազմի անդամ (1916թ.), օգտակար եղել դրա հրատարակման աշխատանքներին մինչև փակվելը: 1917 թվականին նշանակվել է Մայր Աթոռ Ս.

Էջմիածնի թանգարանի տնօրենի օգնական, այնուհետև հին ձեռագրերի պահոցի վարիչ:

Հատկապես 1915թ. հայոց ցեղասպանությունից հետո՝ Հայաստանի տարածքում կատարած նրա գիտարշավների ընթացքում, մեծ թվով ազգագրական նյութեր են հավաքվել, որոնք ներկայումս ցուցադրվում են Հայաստանի պատմության թանգարանում: Անգնահատելի է նրա գործունեությունը հայ միջնադարյան ձեռագիր մատյանների հավաքման ասպարեզում: Լինելով Մատենադարանի առաջին տնօրենը՝ նա ձեռագրական հավաքածուները համալրել է ընդհանուր հաշվով 1000-ից ավելի միավորով:

1920 թվականի վերջին Ս. Տեր-Հակոբյանը նշանակվել է Էջմիածնի Մատենադարանի վարիչ: Ստալինյան բռնաճնշումների տարիներին ձերբակալվել է: Վախճանվել է բանտում 1938 թվականին: Ս. Տեր-Հակոբյանի բազմաթիվ անավարտ աշխատություններ անհետացել և հափշտակվել են նրա ձերբակալությունից հետո: Արդարացվել է հետմահու՝ 1956 թվականին:

Հոդվածում ներկայացված է նրա կյանքի և գիտական գործունեության մանրամասներ, որոշ նյութեր հրապարակվում են առաջին անգամ (խոսքը արվեստաբան Սերիկ Դավթյանի չտպագրված հուշերի մասին է, որոնք վերաբերում են Սենեքերիմ Տեր-Հակոբյանին):

Բանալի բառեր՝ *Սենեքերիմ Տեր-Հակոբյան, Մատենադարան, Սերիկ Դավթյան, Մելիք-Օհանջանյան, Էջմիածին, ձեռագիր, մատյան, Գյումուշխանե, տարազ, ցեղասպանություն, բռնադատված, Մաշտոց, մշակույթ:*

Խիստ սակավ նյութեր և հիշատակություններ են պահպանվել անվանի հայագետ, Մաշտոցի անվան Մատենադարանի առաջին, նահատակ տնօրեն Սենեքերիմ Խաչատուրի (Չելեբի) Տեր-Հակոբյանի մասին: Նրա կյանքը նվիրում էր հայագիտությանը, անմնացորդ նվիրում, որ իր ժամանակակիցների և ընկերների կողմից արժանացել է «գիտության հավատարիմ Ցերբեր» մականվանը:

Հայագիտության անխոնջ նվիրյալը, ում մտերիները և հարազատները Սեն կամ Սենո են անվանել, ծնվել է 1881 թվականին Տրապիզոնի նահանգի Գյումուշխանե (Ծանախ) գյուղաքաղաքում: Մանկությունն անցել է ծննդավայրում: Ավարտել է տեղի նախակրթական հայկական դպրոցը, 1896-1903թթ. ուսումը շարունակում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ աշակերտում է Մ. Աբեղյանին, Հր. Աճառյանին, Հ. Մանանդյանին, Ստ. Կա-

նայանցին, Ս. Հարությունյանին, Ս. Տիգրանյանին, Կ. Տեր-Մկրտչյանին և այլ նշանավոր հայագետների: Ավարտականին պաշտպանում է «ԺԶ դարու Հայոց եկեղեցական պատմությունը» ավարտական շարադրանքը, որն արժանանում է «հույժ գովելի գնահատականի»[1]:

Ավարտելով ճեմարանի դասարանական ու լսարանական դասընթացները՝ մի կարճ ժամանակաշրջան հաստատվում է Թավրիզում. 1903-05թթ. դասավանդում տեղի Լիլավա թաղամասի Հայկազյան հայկական դպրոցում: Այստեղ ծանոթանում ու մտերիմ կապ է հաստատում Թավրիզի հայկական դպրոցների տեսուչ, հոգաբարձու Կարապետ Պիոնյանի հետ, ավելի մտերմանում Գևորգեան ճեմարանի իր դասախոսի՝ անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանի և նրա տիկնոջ՝ Արուսյակի հետ, որոնց հետ ապրում է նույն հարկի տակ[2]:

Այդ տարիներին շատ հայորդիներ էին իրենց ուսումը ստանում արտասահմանում, հատկապես Գերմանիայում և Ֆրանսիայում: Նրանցից էր նաև Ս. Տեր-Հակոբյանը, որն ուսման և գիտության նկատմամբ մեծ ծարավ ու հետաքրքրություն ուներ: Ճեմարանի ուսուցչական խորհրդի որոշմամբ և Խրիմյան Հայրիկի օրհնությամբ 1905 թվականին մեկնում է Գերմանիա, ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ (փայլուն առաջադիմությամբ ավարտում է 1910թ.)[3]: Հմտանում է բանասիրության, պատմության, ժողովրդական ստեղծագործությունների նյութերը ուսումնասիրելու և մեթոդական տվյալներին ծանոթանալու մեջ:

[1] ՀՀ Ազգայի արխիվ, ֆոնդ 312, ց. 2, գ. 1545, թ. 4:

[2] Աճառյան Հր. Հ., Կյանքիս հուշերից, Ե., 1969, էջ 291:

[3] Տէր-Վարդանեան Գ., Սենեքերիմ Տէր-Յակոբեան՝ պետականացուած մատենադարանի առաջին տնօրենը, «Բանբեր Մատենադարանի», Ե., 2020, N29, էջ 8:



Սենեքերիմ Տեր-Հակոբյանը բեռլինյան ուսումնառության տարիներին

Հայրենիքին, հայագիտությանը ծառայելու մեծ փափագն ու նվիրումը Ս. Տեր-Հակոբյանին պարտավորեցնում է ժամանակ չկորցնել. վերադառնում է Կովկաս: Տարբեր ժամանակներ դասավանդում է Երևանի, Բաքվի, Նախիջևանի, Թիֆլիսի, Շուշիի և Ալեքսանդրապոլի հայկական դպրոցներում:

1916 թվականին դասախոսական աշխատանքի է անցնում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում որպես հայոց պատմության դասախոս: Հոգևոր կրթարանի բարձր դասարաններում ավանդում է հայոց լեզու և մատենագրության պատմություն: Նրա ժամանակակիցները վկայում են, որ այդ զույգ առարկաների հետ կապված ուսումնասիրական, քննական ամեն ինչ սերտել էր, գիտենալով նյութերի շուրջ այնպիսի մանրամասնություններ (թվեր, դեպքեր, պատմություններ, դրվագներ), որ նրա հետ շփում ունեցողն ուղղակի ապշում էր հայագետի ունեցած անբավ գիտական պաշարի վրա[4]:

Այդ տարիներից մնացած մի եզակի մասունք է պահպանվում Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Ս. Տեր-Հակոբյանի անձնական

[4] **Գուրեան Ս.**, Սենեքերիմ Տէր-Յակոբեան (Մեր անփոխարինելի կորուստները), «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1953, թիւ 53, էջ 110:

արխիվում: Խոսքը Հայոց պատմության և աշխարհագրության նրա դասախոսությունների սղագրության մի անթվակիր տետրի մասին է, որը գրի է առել ճեմարանի նրա աշակերտ ոմն Սուքիասյանը[5]:

Արտասահմանյան կյանքն ու շփումները ոչինչ չեն փոխում նրա վարք ու բարքում. «Միեւնոյն զգոյշ, քաղաքավարի, ինքն իր մէջ ամփոփուած համեստ մարդն էր: Ընթերցանութիւնը կարծէք գալիս էր փոխարինելու կեանքի բազմազան այլ մարզերից եկող տպաւորութիւններն ու ակնկալութիւնները: Գիրքն ու գրքերի աշխարհն էր, ինչպէս առաջ, նրան ներքնապէս կերակրողն ու յենարան հանդիսացողը: Գրքերից յետոյ նրա միակ հոգեպարար աշխարհը բնութիւնն էր եւ պատմական անցեալի ու փառքի կոթողները, աւերակները, որոնց հետ կապուած էր իր նուրբ ու ազնուական հոգու բոլոր թելերով: Խորապէս սիրում էր շրջիլ, թափառիլ, մանաւանդ այցի գնալ պատմական աւերակներին ու կոթողներին: Գիտեր զարմանալի մանրամասնութեամբ այդ վայրերի հետ կապուած իրադարձութիւնները, անձերը, նրանց հերոսական գործերը ու ժամանակագրական բոլոր թւերը»[6]:

1916 թվականին Գևորգ Ե կաթողիկոսի բարձր կարգադրությամբ նշանակվում է «Արարատ» ամսագրի խմբագրական կազմի անդամ՝ ամենայն ջանասիրությամբ օգտակար լինելով դրա հրատարակման աշխատանքներին մինչև փակվելը:

1917 թվականին կաթողիկոսական սրբատառ կոնդակով նշանակվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանի տնօրենի օգնական, այնուհետև ձեռագրապահոցի վարիչ: Նույն տարվա դեկտեմբերին՝ ճեմարանի փակվելուց հետո՝ մինչև 1920 թվականի վերջերը, դասավանդում է Երևանի տարբեր դպրոցներում:

1918 թվականին, Հայաստանի Առաջին Հանրապետության Ներքին գործերի նախարարի հրամանով, նշանակվում է Քանաքեռի որբանոցների ընդհանուր կառավարիչ, ինչպես նաև Հայաստանի օգնության կոմիտեին կից որբանոցներում որպես վարիչ[7]: 1919 թվականին ընտանիք է կազմում՝ ամուսնանալով Արաքս Դիանիսիոսի Մուշեղյանի հետ:

---

[5] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 72, վավ. 17:

[6] **Գուրեան Ս.**, Սենեքերիմ Տէր-Յակոբեան, էջ 112:

[7] **Ութոջյան Ա.**, Սենեքերիմ Տեր-Հակոբյան. Նշանավոր ճեմարանականներ, Ս. Էջմիածին, 2008, պրակ Բ, էջ 437-438: ***Նույնի՝*** Տէր-Յակոբեան Սենեքերիմ, «Քրիստոնեայ Հայաստան», լրագիր, Ս. Էջմիածին, 2008, յուլիս Բ, N 14, էջ 3-5:

1915-17թթ. Կովկասյան մարդասիրական ընկերության կողմից Ս. Տեր-Հակոբյանը մասնակցում է այն գիտարշավներին, որոնց ընթացքում հավաքում և նկարագրում էին Առաջին աշխարհամարտի տարիներին հատկապես հայ գաղթականության մեջ ցիրուցան եղած ազգագրական նյութերը: Արդյունքում հավաքվում և փրկվում է հայկական տարազի և զարդեղենի, արվեստի տարատեսակ նմուշներ, որոնք այսօր իրավամբ համարվում են Հայաստանի պատմության և ազգագրության թանգարանների անկրկնելի ցուցադրանմուշները: Հավաքչական աշխատանքը շարունակում է նաև հետագա տարիներին:

Հետաքրքիր հիշողություն է պահպանվել անվանի արվեստագետ, ազգագրագետ Սերիկ Դավթյանի հարցազրույցներից մեկում, որում հիշել է. «1921 թվականին Էջմիածնում էին ապրում և ստեղծագործում նշանավոր դեմքեր, այդ թվում Կարո Մելիք-Օհանջանյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը: Մի օր գնացի Սենեքերիմենց: Նստել էր անվանի ազգագրագետը ավանդական թախտին, փոքրիկ սեղանի առաջ և հոնգուր-հոնգուր լաց էր լինում: Սեղանին թափված էին կանացի ասեղնագործ հագուստներ: Հարցրի լացի պատճառը: Ձեռքը մեղմությամբ դրեց հագուստների վրա և ասաց.

- Սրանք՝ այս ազգագրական մասունքները, արվեստի այս գործերը ինձ են հասել ոչ սրանց տերերի միջոցով: Այս հագուստների տերերին սպանել է թուրքի յաթաղանը: Ինչե՞ր կորցրինք, տեր աստված…

Նստեցի, վերցրի, նայեցի հագուստները: Վարպետը մանրանկարչական գործ էր կատարել՝ այնքան նուրբ ու գունագեղ էին զարդերը: Նայում, ցավում ու հիանում էի և հիշում Գարեգին Հովսեփյանին, նրա նվիրած գրքերը, որոնք պիտի նաև առարկայացածը հասկանալու ճաշակ, հմտություն և բանալի տային ինձ: Այդ զգեստները հիմա զարդարում են մեր պետական պատմական թանգարանը»[8]:

Պահպանվել է նաև Ս. Դավթյանի անտիպ հուշագրությունը, որում գրում է. «Սենեքերիմը մատենադարանի վարիչն էր: Նա ինձ ցույց էր տալիս ձեռագրերի հեքիաթային մանրանկարները: Այդ նույն շենքում էր նրա տնօրինության տակ գտնվող ազգագրական նյութը, հագուստի ասեղնագործած մասեր և այլ իրեր: Անվերջ դիտում էի… Թե ձեռագրերը, թե ազգագրական նմուշները այն վայրերից էին, ուր եղեռնը հնձել էր հայերին, ոչնչացրել տաս-

[8] **Նարյան Մ.**, Ժանյակահյուս կյանք.- Կուլտուր-լուսավորական կյանք, ամսագիր, Ե., 1974, N5, էջ 16:

նյակ հազարավոր տաղանդավոր ստեղծագործողների, մայր մանուկին, ավերել եկեղեցիները, տները, այգիները, թալանել, կողոպտել գազանային վայրագությամբ: Այդ ամենը խոր վշտի հետ իմ մեջ ծնեցնում էր մի հպարտ գիտակցություն, որ հայ կինը, հայ տղամարդը օժտված են եղել գեղեցիկը զգալու, գեղեցիկը արտահայտելու, ստեղծելու աննման տաղանդով, վարպետ ունակություններով»[9]:

1920 թվականի դեկտեմբերի 20-ին Ս. Տեր-Հակոբյանը նշանակվում է Էջմիածնի Մատենադարանի վարիչ[10], իսկ 1921 թվականի փետրվարի 1-ից՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական խորհրդի անդամ[11]: 1923 թվականի հունիսի 25-ից նշանակվում է նույն ինստիտուտի թանգարանի վարիչ: 1922 թվականից մինչև չարաբաստիկ 1937 թվականի փետրվար ամիսը եղել է Մատենադարանի վարիչը, որը վարել է 16 տարուց ավելի, ապա կեղծ մեղադրանքների հիման վրա ձերբակալվել է և հեռացվել[12]:



Ս. Տեր-Հակոբյանը Էջմիածնի մատենադարանի պաշտոնավարման ժամանակ:

---

[9] **Դավթյան Ս. Ս.**, Հուշեր (անտիպ): *Ծանոթագրություն՝* Պահվում է անձնական արխիվում:

[10] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, ց. 4, գ. 6, թ. 10:

[11] **Ադամյան Ա. Հ.**, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվը, «Լրաբեր հասարակական գիտություններ», 1971, N12, էջ 87: ***Տե՛ս՝*** ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 108:

[12] **Եգանյան Օ.**, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի (Կազմեցին՝ Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ., խմբագրությամբ՝ Խաչիկյան Լ., Մնացականյան Ա.), Ե., 1965, էջ 214:

Էջմիածնի մատենադարանում նրա պաշտոնավարության տարիներին՝ 1921-22թթ., լույս է տեսնում «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» խորագրով Ա և Բ հատորներով միացյալ գիրքը: Սա արժեքավոր մի աշխատություն է, որում ամփոփված են նաև Ս. Տեր-Հակոբյանի «Երիզայի հունարէն արձանագրութիւններից», «Նորայր Բուզանդացի» և «Լևոն Լիսիցյան» խորագրերով արժեքավոր հոդվածները: 1921 թվականին Ս. Տեր-Հակոբյանը Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական նստաշրջանում զեկուցում է կարդում՝ «Ղզլթամուրի Ուրարտական բերդի մնացորդները» թեմայով:

Դեռևս 1903 թվականին «Արարատ» ամսագրում տպագրվում է նրա «Վարդանայ վարդապետի Բաղիշեցւոյ ցուցակգրոց Անմրդոլու վանուց» խորագրով ուսումնասիրությունը (նշյալ աշխատանքով նա սկսում է իր գիտական գործունեությունը և իրեն դրսևորում որպես շնորհալի ուսումնասիրող): Այդ տարիներից մանկավարժական աշխատանքին զուգընթաց Ս. Տեր-Հակոբյանը զբաղվում է բանասիրությամբ և ազգագրությամբ: Եղել է նաև հմուտ գրաբարագետ, քրդագետ և թուրքագետ: Հմտորեն է տիրապետել մի շարք եվրոպական և արևելյան հին ու նոր լեզուների: Զարմանալի չէ, որ բացի մայրենիից՝ նա իր մասնագիտական բնագավառում խոսել և կարդացել է գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն, հունարեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և քրդերեն լեզուներով:

1935 թվականին Ս. Տեր-Հակոբյանը մասնակցում է Սանկտ-Պետերբուրգում կայացած «Իրանական արվեստի եւ հնությունների» իրանագիտական միջազգային կոնգրեսին, որը ղեկավարում էր անվանի հնագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Իրանի մշակույթը և արվեստը ներկայացնող բացառիկ այդ միջոցառմանը մասնակցել են աշխարհի քսանից ավել երկրների արևելագետ-գիտնականներ, հնագետներ ու արվեստաբաններ[13]:

1935-36թթ. Անդրկովկասյան գիտությունների ակադեմիա ստեղծելու ընթացքում ընտրվում է թղթակից անդամ:

Ազգային դիմագիծ ունեցող մտավորական հայ է եղել Ս. Տեր-Հակոբյանը: Հայոց ցեղասպանությունից հետո, ջանք չխնայելով, մեծ համբերատարությամբ փնտրում և հավաքում է արևմտահայոց արվեստի դարավոր ու արդեն ցրված մասունք-նշխարները: Դրանք կորստից ու անհայտությունից

[13] **Арзуманян А. М.**, Братья Орбели, Е., 1976, с. 166-167. ***Տե՛ս նաև***՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ս. Տեր-Հակոբյանի թողոն, թղթ. 76, վավ. 125:

փրկելու գիտակցմամբ և մեծ նվիրումով 1920 թվականից կրկին շարունակում է հայագետ, հոգևորական Գարեգին Հովսեփյանի հետ երկար ժամեր և օրեր շրջել Հայաստանի արևմտահայ գաղթականներով բնակեցված շրջաններում ու հավաքել հարուստ ազգագրական նյութերը: Միաժամանակ Մատենադարանի հավաքածուն հարստացնում է նոր ձեռագրերով: Ս. Տեր-Հակոբյանը գիտակցել է, որ գալու է ժամանակ, երբ մեր կորսված պատմական հայրենիքից փրկված յուրաքանչյուր մասունք ավելի արժեքավոր և նվիրական է դառնալու: Մի առիթով հնահավաք, բանասեր Հարություն Քյուրտյանի հետ Խորհրդային Հայաստանում ունեցած հանդիպման ժամանակ Ս. Տեր-Հակոբյանը նշում է. «Ես բոլոր հոգիովս այս ձեռագիրներուն պահպանութեան նուիրուած եմ: Մահուընէ զատ ոչինչ զիս պիտի կարենայ բաժնել ասոնց պահպանութենէն: Եւ լաւ գիտցիր, որ եթէ ես չըլլամ, սա քու ալ այնքան սիրած այս ձեռագիրները կը ցրուին, կը փճանան: Ես կեանքս իսկ աչքս առած եմ եւ պիտի մնամ պաշտօնիս գլուխը: Արդ՝ քեզմէ մեծ բան մը կը ակնկալեմ, որ կը յուսամ՝ գլուխ կը հանես: Երբ Թաւրիզ հասնիս, դիմէ Մելիք-Թանգեան Սրբազանին ու միայն անոր եւ ուսուցիչ-տնօրէն Պիոնեանին ըսէ, որ աշխատին ինծի համար պարսկական անցագիր մը հանել եւ օր առաջ իմ ձեռքս հասցնել, որուն շնորհիւ ես պիտի կարենամ անձս անմիջական վտանգէ փրկել եւ մինչեւ վերջ ձեռագրաց փրկութեան աշխատիլ»[14]:

Հայ մշակույթի անգին գանձերին խնամք ու հոգատարություն հատկացնելուց բացի՝ հնարավորինս փորձել է մշակել և պահպանության համար պայմաններ ստեղծել:

Իր կյանքի վերջին մոտ 15 տարին Ս. Տեր-Հակոբյանը սկսում է Մատենադարանի ձեռագիր հուշարձանների գիտական ցուցակագրությունը, արդյունավետ աշխատելու համար մշակում է հատուկ համակարգ (կատալոգի ձև), հմտորեն որոշել է ձեռագրերի ստեղծման, նկարազարդման մոտավոր ժամանակը:

Ս. Տեր-Հակոբյանի վաստակը մեծ է ոչ միայն գիտավարչական աշխատանքների բնագավառում, այլև այն, որ նա զգալի գործ է կատարել՝ ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի պատվերով հավաքելով մատենադարանի հազարավոր ձեռագրերում առկա պատմական-աշխարհագրական

[14] **Քյուրտեան Յ.**, Սենեքերիմ Տէր-Յակոբեան, «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1953, դեկտեմբեր, թիւ ԺԲ, էջ 94-99:

հատվածներն ու պատառիկները, որոնք մինչ այդ անհայտ են եղել հայագիտությանը:

Վերջին տարիների ընթացքում Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնից ստացված տվյալների արդյունքում բացահայտվում են մեծաքանակ խնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում և շարունակելու են հանդիսանալ ՀՀ զբոսաշրջության զարգացման միտումների վրա, եթե դրանք լուծում չստանան: Սույն հոդվածում անդրադառնալու ենք դրանցից մի քանիսին, որոնք նշվում կամ սահմանվում են որպես դիտարկումներ: Եվ այսպես, Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի 2021 թվականի տարեկան հաշվետվության մեջ արձանագրված մեծաքանակ դիտարկումների շարքից ներկայացնում ենք ութերորդ դիտարկումը, որի համաձայն զբոսաշրջիկների մեծ մասը Հայաստան է ժամանում՝ որոշ չափով տեղեկացված լինելով նրա պատմամշակութային ժառանգությանը: Ինչպես 2018-2019թթ., այնպես էլ 2021 թվականի ընթացքում կատարված դիտարկումներից պարզվել է, որ երիտասարդ զբոսաշրջիկների մեծ մասը շարունակում են մնալ լեհերն ու չեխերը: Զբոսաշրջիկների մի մասը տարածաշրջան է ժամանում 21-օրյա փաթեթներով, այն է՝ ինչպես իրենք են փորձում պլանավորել՝ 7-ական օր Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում (հիմնականում սկզբնական ժամանման երկիրը՝ Վրաստան): Զբոսաշրջիկները հիմնականում ցանկանում են նաև երկրորդ անգամ այցելել մեր երկիր՝ առանձնացնելով մարդկային հարաբերությունների յուրահատկությունը, շփումը տեղի հյուրընկալ բնակիչների հետ, ազատությունն ու անսահման ապահովվածության զգացումը: Կենտրոն դիմած զբոսաշրջիկների 54%-ից ավելին էլ Հայաստան է ժամանել 7 օր և ավելի կտրվածքով: Ըստ դիտարկման՝ ներգնա զբոսաշրջիկների մեջ երիտասարդ տարիքը ձևավորում են Լեհաստանի և Չեխիայի զբոսաշրջիկները: Չնայած այն հանգամանքին, որ իրենք տարբեր երկրներից ժամանած ազգությունների մեջ համարվում են թեյավճար թողնողներ, այսինքն՝ զբոսաշրջիկներ, որոնց ավելի շահավետ է ընդունել, և մրցակցային առումով իրենք ավելի նախընտրելի են հյուրընկալող կողմի համար, այնուամենայնիվ պետք է աշխատանքներ տանել նաև այլ ազգությունների երիտասարդ շրջանակի ուղղությամբ՝ փորձելով ճիշտ, գրավիչ և, որ ամենակարևորն է, նաև ժամանակակից պահանջմունքները բավարարող մեր ռեսուրսները ներկայացնելու: Այստեղ իրենց ավանդը կարող են ունենալ

այն ուսանողները, որոնք ՀՀ-ից արտասհմանյան բուհեր են տեղափոխվել՝ շարունակելու իրենց հետագա ուսումը, և այն միջավայրում, որտեղ իրենք ուսուցանում են, հենց լավագույն վայրն է, որտեղ պետք է գովազդել և ներկայացնել մեր հյուրընկալ երկիրը: Այս կերպ հնարավոր կլինի իրականացնել թիրախավորված գովազդ և հետագայում քաղել դրա պտուղները:

Հաջորդ դիտարկումից պարզվում է, որ կարճաժամկետ տևողություններով այցելությունները (մինչև 3 օր) բնորոշ են Վրաստանից եկած ազգությամբ վրացի զբոսաշրջիկներին, որոնք սակայն մեծաքանակ չեն: Այստեղ էլ է անհրաժեշտ աշխատանք տանել, որպեսզի առաջիկա տարիներին ոչ մեծաքանակ լինելն ավելացվի մինչև ցանկալի բավարար քանակության: Հետևապես գործ ունենք դասական գովազդի բացակայության հետ, որն էլ պետք է իրականացնել գրեթե ամենուր և շեշտադրել, որ ՀՀ այցելություն կազմակերպելը հնարավոր է նաև կաճաժամկետ, ինչպես որ ի սկզբանե իրենք են նախընտրում:

Տասներորդ դիտարկումից պարզվում է, որ զբոսաշրջային ակտիվ սեզոնի ընթացքում կարճաժամկետ այցելություններով են աչքի ընկնում նաև ֆիլիպինցիները, որոնք արտերկրում աշխատելու ընթացքում ունենում են սահմանային հատման խնդիր և ժամանակահատված, ինչի արդյունքում էլ փորձում են այցելել նոր զարգացող զբոսաշրջային Հայաստան: Չնայած սեզոնային կարճաժամկետ այցելություններին՝ փաստում են, որ ձմռանն իրենք անհամեմատ ավելի շատ են այցելում Հայաստան՝ արդեն մինչև մեկ շաբաթ: Այստեղ մենք ունենք հստակ անելիք. Ֆիլիպիններում իրականացնել գովազդային արշավ ՀՀ վերաբերյալ ընդհանուր գծերով, սակայն շեշտադրել, որ իրենց այցելությունները դեպի այլ երկիր հնարավոր է դառնում, եթե մինչ այդ կարճաժամկետ ձևով այցելեն իրենց համար նոր նաև մեկ այլ երկիր, որի անունն է հյուրընկալ Հայասատան:

Հաջորդիվ անդրադառնանք տասնմեկերորդ դիտարկմանը, ըստ որի՝ կարճաժամկետ այցելությունների թիվն այս տարի համալրվել է նաև Ղազախստանից ժամանած զբոսաշրջիկների միջոցով, որոնք Հայաստանի Հանրապետություն են ժամանում հիմնականում ավտոմեքենա գնելու մտադրությամբ՝ հաշվի առնելով, որ ՀՀ-ում ավելի էժան գներ են գործում օգտագործված ավտոմեքենաների շուկայում, քան Ղազախստանում: Թեև իրենց այցելության հիմնական նպատակը բիզնեսն է, սակայն միևնույն ժամանակ փաստում են, որ ՀՀ-ն համարվում է բավականաչափ զարգացած սերվիսով զբոսաշրջային շուկա, որտեղ կարելի է բավարարել ամենաքմա-

հաճ զբոսաշրջային հաճույքները: Փաստում են նաև, որ ՀՀ-ում գործող գները հաճելի զարմացնում են զբոսաշրջիկներին, միաժամանակ հետխորհրդային երկրների շարքում ՀՀ-ն առաջատար դիրք է գրավում իր հյուրընկալության շնորհիվ: Փաստում են հետևյալը, որ ՀՀ գովազդն իրենց երկրում բացակայում է, և միայն բիզնես այցելության շնորհիվ է, որ իրենք ականատես են լինում մեր երկրի զբոսաշրջային իրավիճակին: Հայտնում են այն կարծիքը, որ հայերն ավելի շատ իրենց կենցաղով նման են եվրոպացիներին, քան թե ասիացիներին, և այստեղ գտնվելով՝ իրենք իրենց զգում են ինչպես եվրոպական քաղաքներում: Մասնավորապես մայրաքաղաքն զգալի նմանություն ունի զարգացած եվրոպական քաղաքների հետ:

Իրենց իսկ խոսքերով այստեղ ձանձրանալ հնարավոր չէ: (Здесь невозможно заскучать). Դիտարկումը ցույց է տալիս, որ ղազախ զբոսաշրջիկների համար ամեն ինչ հիանալի է, գներն առավել քան բավարարում են իրենց սպասելիքները, երկիրն էլ իր հյուրընակալությամբ հաճելի զարմացնում է: Ստացվում է, որ բիզնես զբոսաշրջությամբ զբաղվողների շրջանում ՀՀ-ն շատ հարմավարավետ դիրքավորված երկրների շարքին է դասվում, որտեղ հնարավոր է կարճաժամկետ այց կատարել ու շահավետ գործարք կնքել, հետագայում նաև այդ հաջողված բիզնես գործարքի շրջանակներում բավականաչափ գումար վաստակել: Սակայն այստեղ ևս հիմնական խնդիրը Ղազախստանի Հանրապետությունում մեր երկրի մասին տեղեկատվության պակասն է կամ ամբողջական բացակայությունը: Հաշվի առնելով մեզ արդեն հայտնի զբոսաշրջության տեսակը՝ անհրաժեշտություն է առաջացել Ղազախստանում գովազդելու ՀՀ-ն՝ որպես հնագույն երկիր, որտեղ բնակչությունը զարգացած է ու մարդամոտ, իր բարքերով ավելի մոտ է եվրոպացիներին և, վերջապես, որտեղ երաշխավորված լավ հանգիստից բացի՝ հնարավոր է նաև գումար աշխատել՝ կատարելով նախապես պլանավորած բիզնես այցելություններ:

Վերջին և ամենաճավալուն դիտարկումը մտածելու և խորհելու տեղիք է տալիս առհասարակ արդեն իսկ հայկական զբոսաշրջային պատկերացումների և հետագա աշխատանքների մասով:

Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկները փաստում են, որ ՀՀ-ն շատ թույլ է ներկայացված ՌԴ մարզերում /բազմաթիվ քաղաքներում ընդհանրապես տեղեկացված չեն, չնայած որ այդ քաղաքներում կա գործող հայ համայնք, հայկական բիզնեսը որոշակիորեն ներկայացված է/, և եթե այս տարի չլիներ Թուրքիա գնալու անհարինությունը, ապա իրենք դեռ երկար ժա-

մանակ չէին բացահայտի այս գողտրիկ, լեռնային երկրի զբոսաշրջային լայն հնարավորությունները: Փաստում են, որ գնային սեգմենտում ՀՀ-ն հաճելիորեն զարմացրել է. շատերը փորձում են համեմատել Ղրիմի զբոսաշրջային հնարավորությունների հետ: Նշում են, որ պատրաստ են **չափավոր** գովազդել իրենց մտերիմների շրջանակում, սակայն միայն այն անցուղիները, զբոսաշրջային վայրերը, ռեստորանները, հյուրանոցները և այլ զբոսաշրջային ենթակառուցվածքները, որոնց հետ իրենք **անմիջական** կապ են ունեցել ողջ շրջագայության ընթացքում: Նշում են, որ այստեղ կարելի է նաև զբաղմունք գտնել իրենց երիտասարդների համար, որոնք նախընտրում են իրենց ժամանցն անցկացնել շատ թանկ համարվող Սոչիում, Թայվանում, Եգիպտոսում, իսկ առավել ապահովվածները՝ նաև Եվրոպայում: Արձանագրում են մեկ կարևոր փաստ, որ հայկական խոհանոցի համային տեսականին ամբողջովին բավարարում է իրենց սպասելիքներն ու հաճելի է իրենց քիմքին. սա կարևոր բաղադրիչ է իրենց համար որևէ նոր երկիր ուղևորվելու համար: Առաջարկում են արձանագրել, որ ռուսները սիրում են համով ուտել, իսկ սրա վրա կարելի է կառուցել հենց զբոսաշրջային հոսքի ճիշտ ուղղորդումը դեպի մեր երկիր: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ գրեթե 3,5 միլիոն հայկական սփյուռք ունեցող Ռուսաստանում ավելի քիչ են տեղեկացված կամ գրեթե տեղեկացված չեն, որ ՀՀ-ն քրիստոնյա երկիր է համարվում, կամ որն աշխարհում առաջինն է ընդունել քրիստոնեությունը: Խորհրդային Միության փլուզումից հետո ՌԴ-ում Հայաստանի մասին տեղեկատվական սով է առաջացել: Կա ձևավորված ընդհանուր կարծիք, որ ՀՀ-ն հազիվ գոյատևող պետություն է, որի բնակչության մեծ մասն էլ հիմնական կամ սեզոնային իր ապրուստի գումարն աշխատում է ՌԴ-ում: Շեշտում են, որ նման չափի ահռելի համայնք ունենալով ՌԴ-ում՝ ՀՀ-ի մասին տեղեկատվությունը գոնե պետք է բավարար լիներ, այլ ոչ թե սակավ: Գտնում են, որ կամ համայնքը չի ներառվում ՀՀ-ն գովազդելու գործընթացում, կամ էլ համայնքը ոչ ճիշտ տեղերում է իրականացնում իր գովազդային արշավը: Որոշակիորեն լուծված է համարվում այս խնդիրը մայրաքաղաքի տարածքում, սակայն փաստում են, որ ՌԴ-ն միայն Մոսկվան չէ, ինչպես որ Գերմանիան էլ միայն Բեռլինը չէ, հետևաբար զբոսաշրջային գովազդով զբաղվողները պետք է հաշվի առնեն, որ զբոսաշրջիկները միայն մայրաքաղաքից չէ, որ այցելում են ՀՀ: Եվ ուրեմն ստացվում է, որ հայկական հյուրընկալությունն առաջ է ընկնում հայկական գովազդից, և միայն այսպիսի փորձնական ու հաջողված այցելություններից հետո արդեն ռուս զբոսա-

շրջիկների՝ ՌԴ-ում արտահայտած կարծիքի հիման վրա են հետագայում ունենում նոր այցելուներ դեպի Հայաստան:

Դիտարկումից որոշակի վերլուծություններ կատարելով՝ կարելի է նախանշել մի շարք անհրաժեշտ միջոցառումներ ՌԴ-ում: Նախ՝ պետք է առաջնային ուղղություն հանդիսացող պատմա-մշակութային ճյուղին զուգահեռ հավասարապես ներկայացնել նաև գաստրոտուրիզմը: Սա հնարավորություն կընձեռի ներգրավելու նաև այն զբոսաշրջիկներին, որոնք իրենց համար առաջնային են համարում այս ձևն ու տարբեր երկրների խոհանոցների բացահայտումը: Այնուհետև կարիք կա շեշտադրելու նաև, որ այցելությունն իրենցից մեծաքանակ գումարներ չի պահանջելու, քանի որ գները բարձր չեն, այսինքն՝ գովազդի մեկ ուղղությունն էլ իր մեջ պետք է ներառի որակյալ և մատչելի ծառայությունների գոյության փաստը: Երիտասարդների համար էլ կան բոլոր անհրաժեշտ պայմանները՝ իրենց հանգիստը կազմակերպելու համար, և այդ ամենի համար վճարելու ավելի քիչ, քան իրենք էին նախատեսել ծախսելու այլ համարժեք ծառայություններ տրամադրող պետության կողմից: Գովազդն իր բովանդակությամբ պետք է ցույց տա, որ ողջ ընթացքում իրենց առաջարկված կերակուրները բավական հաճելի են լինելու և չեն ստեղծելու ֆորսմաժորային իրավիճակ, հակառակը՝ այն ամբողջովին բավարարելու է իրենց սպասելիքները: Եվ վերջում, անշուշտ, պետք է ի ցույց դրվի այն հագամանքը, որ ՀՀ-ն քրիստոնյա ազգաբնակչությամբ պետություն է: Այստեղ մեծ անելիք ունի հենց հայկական առաքելական եկեղեցին, որի աշխատանքային ուղղությունը պետք է ներառի ՌԴ տարածքում տարբեր մշակութային հաղորդումներում մասնակցությունը, երկրի և եկեղեցու պատմության ներկայացումը, եկեղեցական տոների ժամանակ համամարդկային ռեսուրսի ներգրավումը, առաքելական և ուղղափառ եկեղեցիների ուղղությունների նույնության և կամ տարբերության մասին ներկայացումը, հայկական եկեղեցիների մասին ռուսերեն լեզվով բուկլետների ստեղծումն ու բաժանումը կրթական օջախներում և այլն:

Այսպիսով, Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի տարբեր տարիների ընթացքում կատարած դիտարկումների, զբոսաշրջիկներից ստացված առաջարկների, դիտարկումների, մեր երկրի զբոսաշրջային հնարավորությունների թույլ և ուժեղ կողմերի վերլուծություններից ակնհայտ է դառնում, որ այլ երկրների տարածքում իրապես գոյություն ունեն որոշակի խնդիրներ, որոնք, սակայն, միանշանակ լուծելի են և ունեն հրատապ նշանակություն Հայաստանի Հանրապետության համար, որպեսզի հնարավոր

լինի ապագա զբոսաշրջային հոսքերը ճիշտ ուղղորդել, ներկայացնել երկրի գրավչության այն տարրերը, որի համար իրենք նախընտրում են մեր երկիր այցելություն կազմակերպելը կարճաժամկետից մինչև երկարաժամկետ տևողությամբ, բիզնես տուրիզմից մինչև շատ հայտնի պատմամշակութայինը, գաստրոտուրիզմն ու տարանցիկ զբոսաշրջային երկրի առավելությունները: Բայց առաջին քայլը հետևություններ անելն է, հետո՝ այդ հետևությունների հիման վրա նոր լուրջ և գործնական քայլերի կատարումը, այնուհետ արդեն դրա պտուղների քաղելը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, Երևան, 10. 12. 2003:
2. ՀՀ ԱՎԾ տեղեկագրքեր, http://www.armstat.am:
3. Պողոսյան Շ., Զբոսաշրջային շուկայի վերլուծությունը ՀՀ-ում, Հյուսիսային համալսարանի գիտաժողովի նյութեր, Երևան, 2015:
4. Հայաստան միջազգային այցելուների հետազոտության 2007թվ. հաշվետվություն, USAID:
5. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք, http://www.mineconomy.am:
6. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2015 թվականի տարեկան հաշվետվություն:
7. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2016 թվականի տարեկան հաշվետվություն:
8. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2017 թվականի տարեկան հաշվետվություն:
9. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2018 թվականի տարեկան հաշվետվություն:
10. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2019 թվականի տարեկան հաշվետվություն:
11. Սևանի զբոսաշրջային շարժական գրասենյակի 2021 թվականի տարեկան հաշվետվություն:
12. Гуляев В. Г., Туризм: экономика и социальное развитие, 2003.

SUBMISSION OF REFORMS BASED ON TOURIST RECOMMENDATIONS AND OBSERVATIONS

TOROSYAN DAVIT
Manager of the Tourism Center of Sevan
GSU Lecturer
e-mail: david_levonich@mail.ru

This article contains tourist statistical data which are obtained thanks to the annual multifaceted work carried out by one of the most tourist places of the Republic of Armenia, located in the territory of the Sevan Peninsula - by "Sevan Tourist" mobile information center. Apart from the classic services offered by the information center, which means presenting information about a specific country, province, city, village, hotel, motel, restaurant, sanatorium, guest house, etc., the main function of the center is to provide information about other host facilities, to provide local service of a tour guide or escort, both on a paid and free basis, if necessary, make reservations at selected accommodation facilities, in restaurants, theaters, and in other places of entertainment, also to try to collect extremely important information about our country to determine positive and negative perceptions, weaknesses and strengths, to collect tourists' comments and recommendations, complaints and wishes and summarizing them to make analyses, which will be compared with the results of work done in previous years. As a result of all this, the completed work will be brought together, as well as the urgent proposals will be resubmitted to the appropriate authority for prompt resolution.

***Key words**: tourism, tourist, tourism statistics, tourist information center.*

РЕПРЕЗЕНТАЦИЯ ПРЕДЛОЖЕНИЯ ПО УЛУЧШЕНИЮ НА ОСНОВЕ РЕКОМЕНДАЦИЙ И НАБЛЮДЕНИЙ ТУРИСТОВ

ТОРОСЯН ДАВИД
Руководитель туристического центра г. Севан
Преподователь ГГУ
электронная почта: david_levonich@mail.ru

Эта статья содержит статистические данные по туризму, полученные благодаря ежегодной многосторонней работе, осуществляемой Севанским мобильным туристским информационным центром, расположенным на территории Севанского полуострова, в одном из самых туристических мест Республики Армения.

Основной функцией центра является, помимо классических услуг предлагаемых информационным центром, то есть, помимо предоставления информации о конкретной стране, регионе, городе, поселке, гостинице, мотеле, ресторане, здравнице, гостевом доме и других объектах, предоставлять услуги местного экскурсовода или сопровождающего, на платной и бесплатной основе при необходимости резервировать места в выбранных заведениях, ресторанах, театрах, развлекательных и других местах, а также собрать замечания и предложения, жалобы и пожелания туристов и подытожить их, провести анализ и сравнить с результатами работы, проделанной в предыдущие годы.

В результате всего этого проделанная работа будет сведена воедино, а предложения требующие срочности, будут вновь переданы в соответствующий компетентный орган для скорейшего получения решений.

***Ключевые слова**: туризм, туристы, туристическая статистика, туристический информационный центр.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 22.06.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.06.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԱԳՐՈԶԲՈՍԱՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՏԴ 338.48
DOI: 10.56246/18294480-2023.14-16

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
«Սեդրակյան», բարեգործական հիմնադրամի գլխավոր տնօրեն, տնտեսագիտության թեկնածու
էլփոստ՝ armanhar@list.ru
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐԻ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու
էլփոստ՝ marry.marrgarryan@gmail.com

Հոդվածի նպատակն է Հայաստանի համար բացահայտել զբոսաշրջային բիզնեսի զարգացման հիմնախնդիրները, մատնանշել դրա զարգացման առավել արդյունավետ ուղղությունները: Դրա համար հեղինակները նախ ներկայացնում են զբոսաշրջության անցած շուրջ 20 տարվա փոփոխությունները և արդի վիճակը՝ նշելով որ համաշխարհային զբոսաշրջության շուկայում գործող բոլոր 7 ձևերը (մշակութային, բնության, գործարար, ժամանցային, առողջարանային, արկածային և բժշկական) գործում են ՀՀ-ում:

Մասնագիտական գրականության նյութերի վերլուծությամբ հեղինակները հանգում են այն եզրակացության, որ Հայաստանում համեմատաբար առավել կիրառելի է համարվում ագրոզբոսաշրջությունը, քանի որ այն ունի հարուստ կենսաբազմազանություն, լանդշաֆտներ, գյուղական բնակավայրում բնակարանային ֆոնդեր՝ գյուղական տուրիստներին պատշաճ մակարդակով ընդունելու և սպասարկելու համար:

Այնուհետև նշվում են այն հիմնական խոչընդոտները և դժվարությունները, որոնք թույլ չեն տալիս առավել բարձր տեմպերով զարգացնել զբոսաշրջությունը Հայաստանում՝ հանդես գալով կոնկրետ առաջարկություններով, մատնանշելով նաև առկա չօգտագործվող ռեսուրսները:

Այդ ամենի հետ միասին հարկ է նշել, որ թեև Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր զբոսաշրջության և մասնավորապես ագրոզբոսա-

շրջության համար ունի բավարար ռեսուրսներ, այնուհանդերձ առկա են մի շարք խոչընդոտներ, այն է՝

- ***անհամաչափ են բաշխված թույլատրված ոլորտի ենթակառուցվածքները (հյուրանոցային տնտեսություններ, ճանապարհներ, հուշանվերներ խանութներ, սպասարկման ծառայություններ և այլն),***
- ***ցածր է գովազդային- տեղեկատվական և գիդերի ծառայությունների մատուցման մակարդակը,***
- ***չկա զբոսաշրջության զարգացման հայեցակարգ,***
- ***անմիխիթար վիճակում են մարզային և միջհամայնքային ճանապարհները և այլն:***

Զբոսաշրջության հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

- ✓ ***գույքագրել ու գնահատել զբոսաշրջային ռեսուրսները,***
- ✓ ***մշակել և կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներով գովազդային մեթոդներ,***
- ✓ ***մարզպետարանների կողմից մշակել զբոսաշրջության զարգացման ծրագրեր, իսկ մարզերի վարչական տարածաշրջաններում ստեղծել զբոսաշրջային գրասենյակներ,***
- ✓ ***իրականացնել գիդերի վերապատրաստում, իսկ ագրոզբոսաշրջության զարգացման նպատակով կազմակերպել միջազգային փորձի արմատավորման դասընթացներ և այլն:***

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, ձեռներեցություն (բիզնես), ագրոզբոսաշրջություն, գյուղական կյանք, տուրիստական ենթակառուցվածքներ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը համաշխարհային մասշտաբով արագ տեմպերով զարգացող ինդուստրիա է, որի աճի տեմպերը գերազանցում են ամբողջական տնտեսական աճի տեմպերին: Այսպես, եթե 1995-2000թթ. աշխարհում տնտեսական աճի միջին տեմպը կազմել է 3%, ապա զբոսաշրջությանը՝ 4,5%:

2019 թվականին զբոսաշրջության և ճամփորդության մասնաբաժինը համաշխարհային տնտեսությունում գնահատվել է 8.8 տրիլիոն ԱՄՆ դոլար: 2019թ. տվյալներով՝ զբոսաշրջությանը բաժին է ընկնում 10 աշխատողից մեկը (319 միլիոն մարդ), և ապահովում է համաշխարհային համախառն արդյունքի (ՀՆԱ) 10,4%-ը (2019թ.): Նույն ժամանակահատվածում համաշ-

խարհային տնտեսության 3,2–ի համեմատ համաշխարհային զբոսաշրջությունը գրանցել է 3,9% աճ: Այս շուկայում այցելուների ծախսն իրենց ճամփորդության վրա գնահատվում է 5.7 տրիլիոն դոլար, որը ներառում է ինչպես ժամանցային, այնպես էլ գործարար ծախսերը և արտացոլում է թե ներգնա և թե ներքին ճամփորդությունները [1]:

Համաշխարհային զբոսաշրջային շուկայում հիմնականում զարգանում են 7 տարբեր զբոսաշրջային ձևեր: Դրանք են՝ մշակութային, բնության, գործարար, ժամանցային, առողջարանային, արկածային և բժշկական: Մենք փորձում ենք այս հոդվածի շրջանակներում բացահայտել այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս ավելի բարձր տեմպերով զարգացնել զբոսաշրջությունը Հայաստանում, հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրման միջոցով ներկայացնել առաջարկություններ, որոնք չեն արվել նախկինում այլոց կողմից:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ուսումնասիրվող թեմայի առանձնահատկությունից հոդվածի շրջանակներում իրականացված վերլուծությունների ժամանակ կիրառվել է ֆունկցիոնալ կախվածության մեթոդը, համաձայն որի՝ տնտեսական կյանքում առանձին զարգացումները կամ փոփոխությունները ողղակիորեն կախված են այլ գործոններից: Դա նշանակում է, որ զբոսաշրջության զարգացումն ուղղակիորեն կախված է մարդկանց ֆինանսական կարողություններից և ազատ շարժվելու իրավունքից, հետևաբար զբոսաշրջության մարկարդակն ամբողջ աշխարհում կրճատվել է կորոնավիրուսի, իսկ ՀՀ-ում՝ նաև արցախյան պատերազմի պատճառով:

Պոզիտիվային և նորմատիվային հետազոտության մեթոդների կիրառմամբ ֆիքսվել է փաստը (ինչ ունենք)՝ առանց գնահատական տալու դրա լավ կամ վատ լինելուն, ապա պատասխան է տրվել, թե ինչպես վերաբերվել հարցին, հանդես գալ առաջարկություններով, որպեսզի բարելավվի իրավիճակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանում 2001 թվականից զբոսաշրջությունը հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Աստիճանաբար զարգանում են ոլորտի ենթակառուցվածքները՝ հյուրանոցային տնտեսությունները, ճանապարհները,

սննդի և զվարճանքի մատուցման ծառայությունները և միջազգային չափանիշներին համապատասխան «Զվարթնոց» օդանավակայանը: Միայն 2001-2010 թվականներին հանրապետությունում ներգնա զբոսաշրջիկների թվի միջին տարեկան աճը կազմել է 24,3% [2]: Վերջին վեց տարիների ընթացքում (2013-2019թթ.) զբոսաշրջիկների ժամանումների աճը 1100 հազարից հասել է 1600 հազարի, ավելացել է շուրջ 500 հազ. չափով[1], որը զգալի ազդեցություն է թողել երկրի տնտեսության վրա: 2019թ. երկրի ՀՆԱ-ում անուղղակի ներդրումները կազմել են 14,1%՝ ընդհանուր առմամբ հասնելով 1.8 միլիարդ ԱՄՆ դոլարի, որն ապահովել է 36900 մարդու մշտական և 137 հազ. ընդհանուր զբաղվածությունը, ինչը կազմում է երկրի զբաղվածության 12,5%:

Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին զբոսաշրջային այցելուները կազմել է 1894377*, աճը 2019 թվականին 1651782 համեմատ աճը կազմել է 14,7 տոկոս [3]:

Կորոնավիրուսի համավարակի հետ կապված՝ զգալիորեն կրճատվել է արտաքին զբոսաշրջությունը, սակայն դա նպաստել է ներքին զբոսաշրջության ծավալների ավելացմանը, քանի որ մեր հայրենակիցների մի մասը, որը նախկինում զբոսաշրջում էր արտասահմանում, ներկայումս «ստիպված է» իր հանգիստն անցկացնել Հայաստանում (Հեռուստատեսային լուրեր Հ1, 11.12.2021):

Դեպի Հայաստան զբոսաշրջիկների զգալի մասը ժամանում են Ռուսաստանից, ԱՄՆ-ից և Իրանից: Անշուշտ, զբոսաշրջիկների մեջ մեծ տեսակարար կշիռ ունի սփյուռքահայերի բաժինը, որոնք հիմնականում մշակութասեր զբոսաշրջիկներ են և ձգտում են վերագտնել ու վերականգնել իրենց ընտանեկան ժառանգությունը: Նրանց Հայաստան է բերում հայրենիքի կարոտը և հավատքը առաջին քրիստոնեական երկրի հանդեպ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2019 թվականին կատարած հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ սփյուռքի մաս չկազ-

[1] UMWTO, 2019:

* 2020 և 2021 թվականներին զբոսաշրջության վերաբերյալ վիճակագրական տվյալները չենք ընդգրկել վերլուծության մեջ՝ նկատի ունենալով, որ այդ ընթացքում համավարակը և Արցախյան պատերազմը մեծ բացասական ազդեցություն են թողել ՀՀ զբոսաշրջանային բիզնեսի վրա: Ուղղակի նշենք, որ 2020 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ներքին զբոսաշրջության քանակը կազմել է 934981, իսկ 2021-ին՝ 1435111 մարդ:

մող օտարերկրացի զբոսաշրջիկները կազմում են ընդհանուրի 69 %, ինչը փաստում է, որ ոչ հայազգի արտասահմանցիների համար Հայաստանն ունի մեծ գրավչություն: Ի տարբերություն սփյուռքահայ զբոսաշրջիկների՝ օտարերկրացիները հանգրվանում են տարբեր կացարաններում՝ 3-4 աստղանի հյուրանոցներում (37%), հարազատների տներում (19%), հոսթելներում (14%), հյուրընկալվում են տեղացիների տներում (12%): Նրանց ավելի շատ գոհացնում են տեղացիների վերաբերմունքը, ջերմությունը և բարությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս մատուցում է համաշխարհային զբոսաշրջության բոլոր 7 ենթաոլորտների (ձևերի) ծառայություններ: Դրանցում ամենամեծ ծավալը բաժին է հասնում մշակութային զբոսաշրջանառությունը, որը շատ տրամաբանական է՝ ելնելով Հայաստանի պատմության, մշակույթի, քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին երկրի և բազմաթիվ այլ արժանիքների ու հարուստ ժառանգությունների պատճառով:

Երկրորդ տեղը զբաղեցնում է բնության զբոսաշրջությունը, որի հիմնական շարժառիթը երկրի հարուստ կենսաբազմազանությունն է և լանդշաֆտները:

Հայաստանը բնության զբոսաշրջության այցելուներին առաջարկում է երկրի լադշաֆտներին ծանոթանալու բազմաթիվ տարբերակներ՝ մշակութային և պատմական հնավայրեր այցելելուց հետո: Բնությունը նախընտրող զբոսաշրջիկներն իրենց ավելի լավ են զգում հանրապետության գյուղական բնակավայրերում՝ հաճախ ձգտում են ձեռք բերել նոր հմտություններ, հյուրընկալվել և ստանալ տեղական մշակույթում ներգրավվելու հնարավորություններ: Բնության զբոսաշրջության շրջանակներում առանցքային ձև է համարվում ագրոզբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը և մասամբ էլ բնության գրկում ժամանցի անցկացումը:

Հայաստանում գտնվելու ժամանակ զբոսաշրջիկները հաճախ նախընտրում են տարբեր ժամանցի ձևեր (ձկնորսություն, սննդի, գինու, կոնյակի համտեսում, մասնակցություն փառատոների, ազգային ծեսերի և այլն):

Թեև մշակութային զբոսաշրջությունը այցելության հիմնական նպատակն է լինում, այդուհանդերձ բնության և ժամանցային զբոսաշրջությունները երկրորդային զբոսաշրջության հիմնական ուղղություններն են, ինչն էլ համալիր ձևով փոխլրացնում են իրար և ավելի պատկերավոր ձևով ներկայացնում Հայաստանը՝ զբոսաշրջությունը դարձնելով դիվերսիֆիկացված:

Զբոսաշրջությունը Հայաստանում զգալի հաջողությունների է հասնում նաև առանց վիզային ռեժիմի հասանելիությունն ընդլայնելու շնորհիվ:

Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության 2017 թվականի վիզային պահանջների վարկանիշում ՀՀ-ն աշխարհի 136 երկրների շարքում զբաղեցրել է 54-րդ տեղը՝ ամենաբարձրը տարածաշրջանում: Հայաստանն առանց վիզայի ազատ մուտքի հնարավորություն տվեց 63 երկրի, որոնք գրավիչ են Եվրոպայի և ԱՄՆ-ի զբոսաշրջային շուկաների համար [4]:

Ներկայումս աշխարհում ավանդական զբոսաշրջությանը զուգահեռ լայն տարածում է ստանում գյուղական տուրիզմը, էքստրիմալ տուրիզմը և ագրոզբոսաշրջությունը: Վերջինս մեծ հետաքրքրություն է առաջացնում զբոսաշրջիկների մոտ, քանի որ նրանք հնարավորություն են ունենում շփվելու գյուղական կյանքի հետ, ծանոթանալու գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացին: Արդյունքում ագրոզբոսաշրջությունը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների շուկայի ընդլայնմանը, որն էլ իր հերթին նպաստում է գյուղական բնակավայրերում գործազրկության կրճատմանը:

Ագրոզբոսաշրջության բնագավառում ինը երկիր համարվում են ամենահետաքրքիրները, որոնց թվում է նաև Հայաստանը: Դրանք են Շրի Լանկան (Ցեյլոն կղզին), Լեհաստանը, Կիպրոսը, ԱՄՆ-ը, Իտալիան, Չեխիան, Ուկրաինան և Խորվաթիան2:

Հարկ է նշել, որ խորհրդային տարիներին ագրոզբոսաշրջության (ընտանեկան հանգստի) կազմակերպման լավ ավանդույթներ կային Հայաստանում, ինչը իրականացվում էր հանգստյան տների միջոցով, որում ընտանիքներն առանձին-առանձին տեղավորվում էին քոթեջներում և բնության գրկում վայելում հանգիստը: Դրանք տարբերվում էին առողջարաններից (Արզնի, Ջերմուկ, Հանքավան, Բժնի, Արզական, Տաթև և այլն), որտեղ առաջին պլանում դրված էր ոչ թե հանգիստը, այլ բուժման պրոցեդուրաները՝ հիմնականում տաք ջրի և ցեխի վանաների ընդունումը: Այդ ժամանակ, որպես ընտանեկան հանգստի կազմակերպման վայրեր, առանձնանում էին Սևանի ավազանի հանգստյան տները, Բյուրականը, Կարմրաքարը, Ծաղկաձորը, Դիլիջանի կոմպոզիտորների միությունը, Սևանի գրողների միություն, հանրապետության խոշոր ձեռնարկությունների կողմից ստեղծված սեփական հանգստյան տները: Շուկայական հարաբերություններին անց-

[2] Globus 77. World press.com (ագրոտուրիզմ):

ման և պետական գույքի մասնավորեցման հետևանքով հանգստի այդ ձևն էլ վերացավ: Այսօր դրանք չկան, բայց փորձ է կատարվել փոխարինել ագրոզբոսաշրջության զարգացմամբ ինչպես գյուղական համայնքներում, այնպես էլ նախկին լքված հանգստյան տների վերագործարկման ճանապարհով:

Ագրոզբոսաշրջությունը մեծ հետաքրքրություն է առաջացնում տուրիստների շրջանում, որն էլ խթանում է գյուղատնտեսության զարգացմանը, իսկ դա իր հերթին՝ ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով երկրի ընդհանուր տնտեսության զարգացմանը: Ագրոզբոսաշրջությունը ենթադրում է ակտիվ հանգստի նպատակով ժամանակավոր այցելություն գյուղական վայրեր: Այն հաճելի հանգստի ձև է նրանց համար, ովքեր բնակվում են խոշոր քաղաքներում՝ ծանոթանալ գյուղական ապրելակերպի, ավանդույթների և ծեսերի հետ: Հայկական խոհանոցի յուրահատկությունները, ավանդական հյուրասիրությունը, նոր ծանոթներ ունենալը էական գործոններ են հանդիսանում ներքին և արտաքին զբոսաշրջության և հատկապես ագրոզբոսաշրջության զարգացման գործում: Զբոսաշրջության այդ տեսակի պահանջվածությունն ուղղակիորեն կապվում է ուրբանիզացիոն գործընթացների հետ՝ քաղաքային բնակչության ավելացում ի հաշիվ գյուղական բնակչության կրճատման:

Ագրոզբոսաշրջությունը հատկապես հեռանկարային է լեռնային ռելիեֆով երկրների համար, որոնց շարքում իր տեղը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետությունը: Այն ունի մի շարք առանձնահատկություններ [5]:

Ագրոզբոսաշրջությունը մատչելի է բնակչության գրեթե բոլոր խավերի համար, քանի որ համեմատաբար քիչ ծախսատար է: Օրինակ՝ ներկայիս պայմաններում հանրապետության գյուղական բնակավայրերում մեկ մարդ/օրվա հաշվով հանգիստը կազմում է 5-7 հազ դրամ, մինչդեռ սովորական հանգստյան տներում ագրոզբոսաշրջիկի ծախսերը ցածր են 35-40 տոկոսով:

Ագրոզբոսաշրջությունն ընտանեկան զվարճանք է, ինչը հնարավորություն է տալիս հատկապես երեխաների համար, կազմակերպել բարոյահոգեբանական և աշխատանքային գործունեություն: Դա գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղական կենցաղին ինտեգրվելու լավագույն միջոցառումներից է:

Ագրոզբոսաշրջության կազմակերպումը մեծ ներդրումներ չի պահանջում, որպես հիմնական իրականացնող՝ հանդես է գալիս գյուղական բնակչության միջին և ունևոր խավը, որն առաջին հերթին ապահովված է կենցաղային բավարար պայմաններով: Բացի դրանից՝ գյուղական զբոսաշրջությունը նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը, քանի որ նրանք լրացուցիչ պահանջարկ են ներկայացնում գյուղմթերքների նկատմամբ:

Ագրոզբոսաշրջությունը նպաստում է գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում մշակույթի և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, ունի մեծ սոցիալական էֆեկտ՝ հնարավորություն է տալիս գյուղական համայնքներում բարձրացնել կյանքի որակը, բարելավելու բնակչության հիգիենիկ վիճակը, բարեկամական հարաբերություններ հաստատել զբոսաշրջիկների և գյուղացիների միջև՝ թուլացնելու լարված սոցիալական հարաբերությունները, նվազացնելու զարգացման տարբերությունները տարածաշրջանների միջև [6]:

Հայաստանն առաջին հայացքից ունի բոլոր պայմանները զբոսաշրջության զարգացման հարցում՝ նպաստավոր բնակլիմայական ռելիեֆ, բնական ու պատմամշակութային հուշարձաններ, հարուստ ֆլորա և ֆաունա, զբոսաշրջության այլ ռեսուրսներ, որոնց օգտագործումով կարելի է խթանել ինչպես ավանդական, այնպես էլ գյուղական և էքստրիմալ ագրոզբոսաշրջությունը:

Հարկ է նշել, որ տնտեսվարման արդի պայմաններում հանրապետությունում համայնքի բյուջեների ֆինանսական սղության և ներդրումային ծրագրերի բացակայության դեպքում, տարածաշրջանային զարգացման հնարավորությունները չի կարելի գնահատել բավարար: Այստեղ անհրաժեշտ է պետական միջամտություն. կառավարությունը պետք է նպաստի զբոսաշրջության զարգացմանը մարզերում և համայնքներում: Ոլորտի զարգացմանը պետական աջակցությանն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար պայման: Միաժամանակ պետք է ներգրավել մասնավոր հատվածին, որի պահանջվածությունը զբոսաշրջության զարգացման գործում բացատրվում է նրանով, որ գրեթե բոլոր հյուրանոցները, խանութները, կրպակները, հասարակական սննդի սուբյեկտները, սպասարկման մյուս ծառայությունները պատկանում են վերջիններիս: Ոլորտի զարգացման հարցում կարևորվում է նաև հուշանվերների վաճառքը, ազգային ավանդական ուտեստների մատուցումը և ծառայությունների զարգացումը, ինչն էլ իր հերթին կխթանի հա-

մապատասխան արտադրությունների և ծառայությունների մատուցման զարգացմանը:

Վերջին տարիներին Հայաստանում զարգանում են զբոսաշրջության գրեթե բոլոր տեսակները, սակայն ագրոզբոսաշրջությունն ավելի է մեծանում, որին նպաստում է զբոսաշրջային նոր ենթակառուցվածքների (ճոպանուղիներ, հարմարավետ տրանսպորտային միջոցներ, սննդի արագ մատուցման ծառայություններ և այլն) հիմնումը, որոնք լրացուցիչ նախադրյալներ են ստեղծում զբոսաշրջության հետագա զարգացման համար և Հայաստանը որպես զբոսաշրջային երկիր ճանաչելու տեսանկյունից:

Նշենք, որ զբոսաշրջային գործակալություններն ակտիվորեն «տուրփաթեթներ» են մշակում դեպի այն վայրերը, որոնք խոստանում են զբոսաշրջիկների մեծ հոսք: Ագրոզբոսաշրջությունը զբոսաշրջային այն առաջատար ճյուղերից է, որի զարգացումը կնպաստի լուծելու տարածաշրջանային մի քանի խնդիրներ.

- համայնքների համաչափ զարգացում,
- զբաղվածության ավելացում,
- գյուղատնտեսության զարգացում,
- գյուղական բնակավայրերի սոցիալական հարցերի մեղմացում,
- բնակչության արտագաղթի նվազում և այլն:

Ամփոփելով վերլուծության արդյունքերը՝ հավելենք, որ միանշանակ չի կարելի շեշտը դնել զբոսաշրջության զարգացման մեկ տեսակի վրա, այլ անհրաժեշտ է համակցել դրա բոլոր ձևերը և ստեղծել համալիր զբոսաշրջային ծառայություններ: Այդ առումով հանրապետությունում առկա է հստակ ձևավորված զբոսաշրջային միջավայր, քանի որ պատմամշակութային հուշարձաններն ու կոթողները տեղաբաշխված են ամբողջ երկրի տարածքում, որն ավելի է մեծացնում Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած զբոսաշրջության զարգացմանը և դրա դրական տնտեսական ազդեցությանը՝ ՀՀ-ն համաշխարհային զբոսաշրջության քարտեզի վրա կայուն տեղ չունի: 2013-2019 թթ ընթացքում զբոսաշրջության ծավալներն ավելացել են տարեկան շուրջ 9 տոկոսով, բայց երկրի հիմնական զբոսաշրջային շուկաներում եղել են կառուցվածքային սահմանափակ տեղաշարժեր Ռու-

սաստանի, Իրանի և Վրաստանի հետ, որոնք ապահովում են հանրապետության զբոսաշրջիկների ներհոսքի հիմնական բաժինը:

Թեև Հայաստանի մշակութային ժառանգությունը և հարուստ պատմական ու ժամանակակից ճարտարապետական կառույցները փաստագրված են, սակայն բավարար չեն ճանաչելիություն ապահովելու այցելուների պոտենցիալ քանակի համար: Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանը պատշաճ մակարդակով չի ներկայացվում որպես զբոսաշրջային ուղղության արժեքային առաջարկ: Հայաստան ժամանած զբոսաշրջիկների 66 %-ը տեղեկություն են ստանում ոչ թե պաշտոնական խողովակներով, այլ ընկերներից կամ հարազատներից:

Այդ ամենի հետ միասին հարկ է նշել, որ թեև Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր զբոսաշրջության և մասնավորապես, ագրոզբոսաշրջության համար ունի բավարար ռեսուրսներ, այդուհանդերձ առկա են մի շարք խոչընդոտներ՝

- անհամաչափ են բաշխված թույլատրված ոլորտի ենթակառուցվածքները (հյուրանոցային տնտեսություններ, ճանապարհներ, հուշանվերներ խանութներ, սպասարկման ծառայություններ և այլն),
- ցածր է գովազդային- տեղեկատվական և գիդերի ծառայությունների մատուցման մակարդակը,
- չկա զբոսաշրջության զարգացման հայեցակարգ,
- անմիխիթար վիճակում են մարզային և միջհամայնքային ճանապարհները և այլն:

Զբոսաշրջության հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

✓ գույքագրել ու գնահատել զբոսաշրջային ռեսուրսները,

✓ մշակել և կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներով գովազդային մեթոդներ,

✓ մարզպետարանների կողմից մշակել զբոսաշրջության զարգացման ծրագրեր, իսկ մարզերի վարչական տարածաշրջաններում ստեղծել զբոսաշրջային գրասենյակներ,

✓ իրականացնել գիդերի վերապատրաստում, իսկ ագրոզբոսաշրջության զարգացման նպատակով կազմակերպել միջազգային փորձի արմատավորման դասընթացներ և այլն:

Ագրոզբոսաշրջությունը խթանում է գյուղմթերքի հանդեպ պահանջարկը, գյուղական կյանքի ակտիվացմանը, գյուղերում սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, ապահովում է սոցիալական տեսանելի

էֆեկտ՝ բարձրացնում է կյանքի որակը (բարելավվում է բնակչության հիգիենան, ստեղծում է աշխատատեղեր, թուլացնում է լարված սոցիալական հարաբերությունները և այլն): Դրա համար անհրաժեշտ է նաև տեղական գյուղատնտեսական հումքի բազայի վրա կազմակերպել այնպիսի արտադրանքների թողարկում և տոնավաճառներ, ծեսեր, որոնք կկգրավեն զբոսաշրջիկների ուշադրությունը, կնպաստեն նրանց հոսքի ավելացմանը:

Այսպիսվ, հանգում ենք այն կարծիքին, որ Հայաստանում զբոսաշրջության զարգացումը կարող է «մուլտիպլիկատորի դեր կատարել ընդհանուր սոցիալ-տնտեսական հարցում»:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ զբոսաշրջության զարգացման ռազմավարության նախնական վերլուծություն: Հավելված 3, ՀՀ կառավարության 2020 որոշում:
2. ՀՀ զբոսաշրջության բնագավառի վերլուծություն 2010թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Եր. 2011, էջ 2:
3. www.mineconomy.am
4. https://www.mfa.am
5. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., 2010, «Լիմուշ», էջ 128;
6. Հարությունյան Ա., Եղիազարյան Կ., Ագրոզբոսաշրջության զարգացումը որպես ՀՀ գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղի//Տնտեսության և կառավարման հիմնախնդիրներ/ Գիտական աշխատանքների զարգացման ժողովածու/, էջ 83-98, Գիրք 7, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, Երևան, ՕՐ-ԴԱՐ, 2014:

THE NECESSITY AND OPPORTUNITIES OF AGROBUSINESS DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

HAYRAPETYAN ARMEN
PhD in Economics
General Director of the «Sedrakyan» Charity Foundation
e-mail: armanhar@list.ru
MARGARYAN MARY
PhD in Economics
Assistant Professor at the Chair of Agribusiness Management and Politics
at the Armenian National Agrarian University
e-mail: marry.marrgarryan@gmail.com

The purpose of the article is to discover the problems of the tourism business development for Armenia and indicate the most effective direction of its development. First, the authors present the past 20 years of tourism changes and the current state, indicating that all 7 types of tourism markets (cultural, eco, business, leisure, wellness, adventure and health) operate in Armenia.

By analyzing the materials of professional literature, the authors come to the conclusion, that in Armenia agrotourism is considered to be relatively suitable as it has rich biodiversity, landscapes and housing funds in rural areas to accept and serve rural tourists at a proper level.

Then they mention the main obstacles and difficulties that prevent the development of tourism in Armenia at a higher rate, making specific recommendations, also pointing out the existing unused resources. Along with all above mentioned, it should be noted that although the Republic of Armenia has sufficient resources for the development of tourism in general and agrotourism in particular, there are still a number of obstacles:

- Permitted sector infrastructures are disproportionately distributed.
- The level of providing advertising-informational and guide services is low,
- There is no tourism development concept,
- Regional and intercommunity roads are in poor condition etc.

For the further development of tourism, it is necessary to take an inventory and evaluate tourism resources:

- ✓ develop and apply advertising methods using modern technologies,
- ✓ work out tourism development programs by regional administrations,
- ✓ create tourism offices in the administrative regions,

✓ carry out training of guides,

✓ organize international experience rooting courses for the development of agritourism.

Key words: *tourism, entrepreneurial activity, agrotourism, rural life, tourist infrastructure.*

НЕОБХОДИМОСТЬ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ АГРОБИЗНЕСА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АЙРАПЕТЯН АРМЕН
Кандидат экономических наук
Генеральный директор благотворительного фонда «Седракян»
электронная почта: armanhar@list.ru
МАРГАРЯН МЭРИ
Кандидат экономических наук
электронная почта: marry.marrgarryan@gmail.com

Цель статьи - выявить проблемы развития туристического бизнеса в Армении, указать на самое эффективное направление его развития. Во-первых, авторы представляют изменения в туризме за последние 20 лет и текущее состояние, указывая, что в Армении действуют все 7 видов туристических рынков (культурный, эко, деловой, развлекательный, лечебный, оздоровительный, приключенческий).

По анализу материалов профессиональной литературы, авторы приходят к выводу, что в Армении агротуризм считается сравнительно применимым, так как имеет богатое биоразнообразие, ландшафты, жилищные фонды в сельской местности для принятия и обслуживания сельских туристов на должном уровне.

Вместе с тем следует отметить, что хотя Республика Армения располагает достаточными ресурсами для туризма в целом и агротуризма в частности, все же существует ряд препятствий:

- инфраструктуры разрешенного сектора распределены непропорционально (гостиничные хозяйства, дороги, сувенирные магазины, сервисные службы и т. д.),
- низкий уровень оказания рекламно-информационных и экскурсионных услуг,
- отсутствует концепция развития туризма,

- региональные и межобщинные дороги в плачевном состоянии и т.д.

Для дальнейшего развития туризма необходимо:

✓ провести инвентаризацию и оценку туристических ресурсов,

✓ разработать и применить методы рекламы с использованием современных технологий,

✓ разработать программы развития туризма областными администрациями,

✓ создать туристические офисы в административных районах, проводить обучение гидов,

✓ организовывать курсы по внедрению международного опыта для развития агротуризма.

Ключевые слова: *туризм, предпринимательская деятельность, агротуризм, сельская жизнь, туристическая инфраструктура.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 18.11.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.11.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

5.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ԼԵԶՎԻ ՀԱՐՑԵՐԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ «ԵՒՐՈՊԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

ՀՏԴ 80
DOI: 10.56246/18294480-2023.14-17

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ asoyan.60@mail.ru

Մխիթարյանների գործունեությունը արդյունավետ է եղել նաև լրագրության ոլորտում: Պարբերական սկսեցին հրատարակել 19-րդ դարի սկզբին: Լույս են ընծայում երկու պարբերական, սակայն հայ լրագրության պատմության մեջ վենետիկցիների մեծ ներդրումը կապվում է «Բազմավէպ» հանդեսի հրատարակման հետ: Վիեննայի Մխիթարյանների՝ լրագիր հրատարակելու առաջին փորձն ավարտվում է անհաջողությամբ, սակայն 1847թ.-ից սկսում է հրատարակվել «Եւրոպա» պարբերականը: Հոդվածի նպատակը «Եւրոպա» պարբերականում արծարծված այն հարցերի քննությունն է, որոնք առնչվում են լեզվական խնդիրների: Նշվում է, որ «Եւրոպա»-ն այդպիսի հարցերի անդրադարձել է առաջին շրջանում, իսկ երկրորդում նման նյութեր չեն հանդիպում:

«Եւրոպա»-ում հրապարակված նյութերը վերաբերում են տարբեր հարցերի: Ազգային լեզվին վերաբերող դիտարկումները հաճախ ներկայացվում են հայոց պատմականորեն ձևավորված վիճակի, դաստիարակության, ուսուցման, լեզվի նշանակության, պահպանման և զարգացման, գիտության խնդիրներին զուգահեռ: Գնահատվում են քերականական աշխատությունները, նորատիպ մատյանները, հին ձեռագրերը, սեպագիր արձանագրությունները, հայ մատենագրությունը և այլն: Իրենց հրապարակումներում Մխիթարյանները ցուցաբերում են հավասարակշռված դիրքորոշում՝ հաշվի առնելով

քննարկվող նյութի առանձնահատկությունը, բնույթը, հասարակական հնչեղությունը:

Բանալի բառեր՝ *«Եւրոպա», Վիեննայի Մխիթարյաններ, «Բազմավէպ», լեզվական խնդիրներ, կրթություն, ուսուցում, հայ մատենագրություն:*

Ներածություն:Մխիթարյանների գործունեությունը արդյունավետ է եղել նաև լրագրության ոլորտում: Պարբերական ստեղծելու առաջին փորձը վերաբերում է 19-րդ դարի սկզբին, երբ Վենետիկի Մխիթարյանները հրատարակեցին «Տարեգրութիւն»-ը, որը հայ պարբերական մամուլի պատմության մեջ երկրորդն է «Ազդարար»-ից հետո: Սակայն «Տարեգրութիւն»-ը երկար կյանք չունեցավ: 1803-20թթ. նրանք լույս են ընծայում «Եղանակ Բիւզանդեան» պարբերականը, սակայն հայ լրագրության պատմության մեջ վենետիկցիների մեծ ներդրումը կապվում է «Բազմավէպ» հանդեսի հրատարակման հետ: Վիեննայի Մխիթարյանների՝ պարբերական հրատարակելու առաջին փորձն ավարտվում է անհաջողությամբ. 1819թ.-ին փորձում են հրատարակել թերթ՝ «Ծանօթութիւնք վաճառագիտութեան» վերնագրով, «սակայն թերթը, չգտնելով քաջալերութիւն, դադրեցաւ առաջին թուով իսկ»[1]: 1847թ. «յորդորմամբ եւ քաջալերութեամբ Վսեմ. Յակոբ Չէլէպիի Տիւզեանց, կը ձեռնարկուի շաբաթաթերթի մը՝ Եւրոպա անուն», որը այլևայլ նյութերի հետ պիտի հրատարակեր նաև գիտական-բանասիրական հոդվածներ: Առաջին շրջանում «Եւրոպա»-ն 1847-53թթ. լույս է տեսել «Շաբաթական լուրեր», իսկ 1854-57թթ.՝ «Լրագիր շաբաթական» ենթախորագրերով՝ առանց ուղղվածությունը փոխելու, այնուհետև՝ երկրորդ շրջանում՝ 1858-63թթ., կոչվել է «Օրագիր ընտանեկան»՝ վերածվելով երկշաբաթաթերթի, ավելի շատ տնտեսագիտական-ընտանեկան բնույթի նյութեր հրապարակելով, քան քաղաքական-բանասիրական՝ փորձելով այդպես գոհացնել «ընթերցողներու մեծագոյն թիւը»: Բայց, ըստ երևույթին, դա էլ չի օգնել: Ն. Ակինյանը գրում է. «Բայց տածուած յոյսն ի դերեւ ելաւ, եւ միաբանութիւնը ստիպուեցաւ առ ժամանակ մը դադրեցնել թերթը»[2]: Լրագիր ունենալու՝ Մխիթարյանների ձգտումը, ի վերջո, իրականանում է 1887թ., երբ ամսական պարբերականու-

[1] Ակինյան Ն., Ակնարկ մը....., Վիեննա, 1912, էջ 55:

[2] Նույն տեղում:

թյամբ սկսում է հրատարակվել «Հանդէս ամսօրեայ»-ն՝ ամենաերկարակյաց պարբերականներից մեկը հայ մամուլի պատմության մեջ:

Մեր նպատակը «Եւրոպա» պարբերականում արծարծված այն հարցերի քննությունն է, որոնք առնչվում են լեզվական խնդիրների: Նշենք, որ «Եւրոպա»-ն այդպիսի հարցերի անդրադարձել է առաջին շրջանում, իսկ երկրորդում նման նյութեր չեն հանդիպում:

«Եւրոպա»-յում հրապարակված նյութերը վերաբերում են տարբեր հարցերի: Ազգային լեզվին վերաբերող դիտարկումները հաճախ ներկայացվում են հայոց պատմականորեն ձևավորված վիճակի, դաստիարակության, ուսուցման, լեզվի նշանակության, պահպանման և զարգացման, գիտության խնդիրներին զուգահեռ: Ներկայացվում, գնահատվում են քերականական աշխատությունները, նորատիպ մատյանները, հին ձեռագրերը, սեպագիր արձանագրությունները, հայ մատենագրությունը և այլն: Իրենց հրապարակումներում Մխիթարյանները ցուցաբերում են հավասարակշռված դիրքորոշում՝ հաշվի առնելով քննարկվող նյութի առանձնահատկությունը, բնույթը, հասարակական ինչեղությունը:

Նյութի վերլուծությունը: Պարբերականի 1848թ. 14-րդ համարում «Ազգային տեղեկութիւն» ընդհանուր խորագրի տակ հրապարակվել է մի հոդված՝ «Հայերէն քերականութիւնները եւ առանձինն Չալըխեան Հ. Վրթանէս վարդապետին քերականութեան չորրորդ տպագրութիւնը» վերնագրով: Հոդվածը միայն Չալըխյանի քերականության կարևորության գնահատմանը չի վերաբերում: Այն կարելի է համարել հակիրճ տեսություն ընդհանրապես լեզուների, հայերենի զարգացման ու մշակման, հայերեն քերականությունների ստեղծման և նրանց անհրաժեշտության մասին: 19-րդ դարը համարվել է ազգային լեզուների մշակման և լեզվաբանության զարգացման դար: Բոլոր մեծ ու փոքր ազգերը զբաղված են իրենց լեզուների մշակման և «ծաղկեցընելու» գործով: Այս գործընթացում նշվում է երկու կարևոր հանգամանք. նախ՝ «Ամէն աս ազգերը ազգային ժողովքներուն մէջ իրենց մայրենի լեզուն խօսելու, գրուածներու մէջ մայրենի լեզունին գործածելու, լեզուներնուն մէջ մտած օտար բառերն ու ոճերը դուրս հանելու համար մեծ նախանձաւորութիւն մը կը ցուցընեն», և ապա՝ «Թագաւորներն ու իշխանները գրագէտներուն ձեռք կը բռնեն. Լեզուին յառաջադիմութեան օգնողներուն առատ վարձք ու պարգեւ կու տան»[3]: Մեջբերումները փաստում են մայրենի լեզվի

[3] «Եւրոպա», թ. 14, 1848:

նկատմամբ ազգերի ցուցաբերած ընդգծված ուշադրության մասին, որը կարելի է բացատրել նրանց մոտ ազգային ինքնագիտակցության, ինքնապահպանման և միասնականության գաղափարների հասունացմամբ, որն արտահայտվում էր նաև լեզվի արդի վիճակի և ապագա զարգացման ուղիների վերաբերյալ խնդիրների արծարծմամբ[4]: Շատ կարևոր է այն վկայությունը, որ լեզվամշակման գործընթացը, ըստ էության, համազգային միասնական շարժում էր. «գրագետները» մաքրում, կանոնարկում էին լեզուն, իսկ «թագավորներն ու իշխանները» նպաստում էին դրան՝ «յառաջադիմութեան օգնողներուն առատ վարձք ու պարգեւ» տալով:

Հոդվածագիրը այնուհետև անդրադառնում է հայոց լեզվի խնդիրներին՝ նշելով, որ «մեր ազգն ալ հիմա ամէն ժամանակներէն աւելի իր լեզուն մշակելու, կատարելագործելու մեծ փոյթ կը տանի» այնպես, որ այլ ազգերը նույնիսկ «չէ թէ միայն կը զարմանան, հապա կնախանձին ալ»: Պետք է ասել, որ, իսկապես, 19-րդ դարի կեսերին լեզվի հարցերը ամենաշատ քննարկվողներն էին հայ մտավորականության շրջանում, իսկ հարցերի շրջանակը լայն էր՝ «հին» ու «նոր» լեզուների գիտական ուսումնասիրությունից մինչև լեզվով պայմանավորված ազգային տարատեսակ խնդիրներ: Հենց այս մթնոլորտում ծնվեց «գրապայքար» կոչված բանավեճը, որի ժամանակ բավականին ակտիվ էր հրապարակագրությունը, պարբերական մամուլում հաճախ էին լույս տեսնում հայոց ազգային լեզվի պահպանման և ուսուցման մասին՝ լեզուն դիտելով ազգային գոյության հիմնասյուներից ամենակարևորը[5]:

Դրական է համարվում գրաբարի հետ նաև աշխարհաբարի «յառաջացումը»(=զարգացումը), որի արդյունքում «գիտնականներուն ջանքովը շատ ուսումնական գաղափարներու բառեր որոշուեցան, ու ետեւէ ետեւ ալ որոշուելու ու գտնուելու վրայ են»[6]: Ասել է թե հընթացս լուծվում էին բառապաշարի, մասնավորապես տերմինաբանության հարցերը: Լեզվի մշակման, զարգացման գործընթացի արդյունավետությալն ցուցիչը քերականությունների շատանալն է, որոնց մասին ուզում է խոսել հեղինակը, սակայն ավելի համոզիչ լինելու համար փորձում է գնահատել «մինչեւ հիմա հրատարակուած

[4] Տե՛ս Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971, էջ 110:

[5] Պարբերական մամուլում ազգային լեզվի խնդիրներին վերաբերող հրապարակումների ուսումնասիրությունն ու վերլուծությունը մի առանձին նյութ է: Այստեղ ուղղակի նշենք, որ այդ շրջանում լույս տեսնող բոլոր թերթերում հաճախակի էին նման հրապարակումները:

[6] «Եւրոպա», թ. 14, 1848:

հայերէն լեզուի քերականութիւնները», որոնք լեզուն սովորելու գլխավոր միջոցներն են: Նշելով հին ու նոր մի շարք քերականների՝ հների քերականությունները համարում է «յոյն» քերականի /Թրակացու/ մեկնություններ, իսկ նորերինը «կարգաւորեալ ու հիմնական բան մը չէր»: Առաջին «հայերէն կարգաւորել քերականութիւն շինողը» համարված է Մխիթար Սեբաստացին, որը 1730թ. հրատարակում է գրաբարի քերականությունը: Այնուամենայնիվ, հոդվածագիրը փաստում է նաև մի կարևոր հանգամանք՝ այս անգամ կապված գրաբարի քերականական համակարգի հետ: 18-րդ դարում խնդիրներ կային ոչ միայն լեզվի բառապաշարի, այլև քերականական համակարգի հետ կապված: Վերջինիս վրա նկատելիորեն մեծ էր լատիներենի ազդեցությունը: Առաջիններից մեկը Սեբաստացին էր, որ թեև զգուշորեն, բայց արտահայտվեց գրաբարը լատինաբանություններից մաքրելու անհրաժեշտության մասին: Զգուշավորությունը Սեբաստացու բնավորության կարևոր հատկանիշներից էր. Ժամանակը ազատ գործելու հնարավորություն չէր տալիս՝ հակառակորդները շատ էին, և նրանց չգրգռելու համար քերականության մեջ «իր ժամանակին խանգարմունքներէն քանի մը բան չփոխեց»: Դրանով հանդերձ շատ կարևոր էր, որ Սեբաստացին իր քերականությամբ ոչ միայն լեզուն մաքրելու, մշակելու և կանոնակարգելու օրինակ ցույց տվեց, այլև նպաստեց լատինաբանությունների հետագա մուտքը բացառելուն[7]: Այս տեսակետից որոշակի դեր է խաղացել նաև Պ. Դպիրի քերականությունը (1736), սակայն, ըստ հոդվածագրի, լեզուն վերջին «երկու երեք դարերուն մէջ կրած ապականութեներէն» մաքրելու առաջնությունը վերապահված էր Մխիթարյաններին, մասնավորապես Միքայել Չամչյանին, որի քերականությունն (1779) արդեն զերծ էր լատինաբանություններից: Գնահատվում են նաև Գ.Ավետիքյանի, Մեսրոպ քահանա Հարությունյանի, Միք. Սալլանթյանի քերականությունները: Սրանց դեպքում արվում է մի կարևոր դիտարկում. դրանք չէին կարող գործածվել վարժարաններում լեզու ուսուցանելու նպատակով: Այս բացը լրացնում է Վրթանես Չալըխյանն իր նոր քերականությամբ, որը թե՛ ծավալով, թե՛ բովանդակությամբ բավարարում էր կրթական չափանիշներին, ուստի դարձավ փնտրված դասագիրք դպրոցների համար և վերահրատարակվեց մի քանի անգամ:

Անդրադարձ է կատարվում նաև օտար լեզուների քերականություններին:

[7] Նույն տեղում:

Եթե բովանդակային ընդհանրացումներ կատարենք, ապա Վրթանես Չալըխյանի քերականության ներկայացմանը զուգընթաց քննվում են լեզվի վիճակին, նրա մաքրման ու մշակման, ուսուցման խնդիրներին վերաբերող հարցեր, որոնք առավել կամ պակաս խորությամբ բավականին ակտիվորեն արծարծվում էին ժամանակի պարբերական մամուլում:

1849թ. մի քանի համարներում տպագրվել է մի հոդված՝ «Ազգային լեզուն ազգային յառաջադիմութեան գլխավոր միջոցն է» վերնագրով: Լեզու-ազգ հարաբերության հարցերը խիստ արդիական հնչեղություն ունեին 19-րդ դարում, և միայն «Եւրոպա»-յում չէ, որ արծարծվում էին նմանատիպ հարցեր: Ազգահավաքության, ազգապահպանության, ազգային մշակույթի զարգացման խնդիրները շատ հաճախ իրավացիորեն սերտորեն կապվում էին լեզվական իրավիճակի հետ, և առավել ցայտունորեն երևան էին եկել 19-րդ դարի առաջին կեսին:

Ազգային լեզուն սովորելը յուրաքանչյուրի **«բնական պարտքն է»,** ընդ որում դա չպետք է պայմանավորված լինի ազգի վիճակով: Արվում է սովորական մի հարցադրում, որին տրվում է միանգամայն սթափ ու սպասելի պատասխան: Մեջբերենք. «...մտածենք որ ազգի մը գոյութիւնը պահողն ի՞նչ է: - Մի միայն իր լեզուն»[8]: Չնայած պատմության ընթացքում շատ բաներ են փոխվել՝ կրոն, սովորույթներ, ավանդույթներ, որոնք փոխարինվել են նորերով, սակայն մեր ազգայնությունը պահել ենք և չենք ձուլվել այլ ազգերի, որովհետև «Կրօնը, կրօնական ձեւերն ու կարգերը, սովորութիւնները, ախորժակները փոխուելէն ետքն ալ ազգայնութիւնը դեռ կրնայ մնալ, բաւական որ լեզուն մնայ. բայց լեզուն կորսուելէն վերջը՝ ազգին բանը լմընցաւ, ջնջուեցաւ, անյիշատակ եղաւ»[9]: Ազգերն այլ ազգերի ազդեցություններից պաշտպանող և տարբերող գլխավոր հատկանիշը լեզուն է, ընդ որում նշանակություն չունի ազգի մեծ ու փոքր լինելը, որովհետև նախնիների ավանդած «ազգայնությունը» լեզվի միջոցով պահելը **պարտք է, ազնվացնելը՝ փառք**: Այնուամենայնիվ, ասվածն ինչքան տրամաբանական, այնքան էլ մնում է իբրև վերացական դատողություն: Հասարակական միջավայրն իրականում ազգային խնդիրների, լեզվի դերի ու նշանակության վերաբերյալ բավարար գիտակցական վերաբերմունք չէր ցուցաբերում: **Տեսականորեն** ընդունելով լեզուն սովորելու, զարգացնելու գաղափարը՝ **գործնականում**

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

դա համարում են ժամանակի կորուստ: Դրա փոխարեն կարելի է որևէ շահաբեր բան սովորել: Ահա, իրավիճակից ելնելով՝ հոդվածագիրը փորձում է ցույց տալ, որ լեզուն սովորելը ազգի վիճակը բարելավելու համար և՛ պետք է, և՛ օգտակար, որովհետև «Ազգային ու ազգովին (ազգայնութիւնը պահելով ու բոլոր ազգաւ) յառաջադիմութիւն ընել կուզենք նէ, առանց մեր հայերէն ազգային լեզուին չենք կրնար գլուխ հանել»[10]:

Ազգային «յառաջադիմությունը» (զարգացումը) պայմանավորված չէ նյութական արժեքներով, դրանք կարող են տարատեսակ դիպվածներից ուղղակի ոչնչանալ, այլ մտավոր հաստությամբ՝ գիտությամբ ու կրթությամբ, այդ դեպքում միայն իրապես կարող են ստեղծվել ազգային անկապտելի հոգևոր արժեքներ, որոնք նյութական հարստությունների անսպառ աղբյուր կարող են հանդիսանալ: Գիտության զարգացումը համակարգված և շարունակական բնույթ պետք է կրի՝ ազգային զարգացումն ապահովելու նպատակով: Գիտությունների յուրացումը հոդվածում արդարացիորեն կապվում է «կարգաւորեալ լեզու» ունենալու հետ: Անկատար լեզուն չի կարող լինել գիտությունների, գաղափարների լիարժեք արտահայտիչ: Պետք է ասել, որ այս տեսակետը 19-րդ դարի առաջին կեսին շատ էր շրջանառվում և աշխարհաբար լուրջ հրապարակումների բացակայությունը մտավորականությունը բացատրում էր հենց աշխարհաբարի անկատարությամբ (օտարաբանություններով լեցուն բառապաշար, չկանոնարկված քերականական համակարգ): Առաջարկվում է հետևյալ լուծումը. «Սորվիլ ուզող մարդը գիտութեան վրայ տիրելէն յառաջ լեզուին վրայ տիրած ըլլալու է»: Այնուամենայնիվ, պարզվում է, որ լեզուն «աղեկ հասկընալը» դեռևս բավարար պայման չէ, մարդը մանկուց պետք է նույն՝ ընտանեկան լեզվի մեջ մեծացած ու կրթություն ստացած լինի, և դա կլինի նաև մարդու «մտքի լեզուն»: Օտար լեզվի թեկուզև գերազանց իմացությունը իր արդյունավետությամբ չի կարող հավասարվել մայրենի լեզվին: Փաստորեն դրվում է լեզվամտածողության խնդիրը, ուստի բնական է, որ հայոց համար միմիայն հայերենը կարող է լինել կրթության լեզու, քանի որ նախ՝ բոլոր գավառներում այն տարածված է հայոց մեջ և ապա՝ հայերենը բավարար կատարելություն ունի՝ կրթական գործը կազմակերպելու համար: Այլ լեզուների դեպքում նշված հանգամանքներից որևէ մեկի բացակայության հետևանքով ազգային լուսավորական առաջադիմությունը «չի յաջողիր»:

[10] Նույն տեղում;

Մյուս խնդիրը, որ շոշափվում է հոդվածում, թուրքերենի (տաճկերենի) հարցն է: Թուրքերենի հիմնավոր իմացությունը պարտադիր է թեկուզև այն պարզ պատճառով, որ Տաճկաստանը արևմտահայության հայրենիքն է և օսմանյան կայսրության բարի կամեցողությամբ է, որ թույլ է տրվել ազգային դպրոցներ ունենալ և ազատորեն ուսուցանել հայոց լեզուն: Ըստ երևույթին այս դիտարկումը ժամանակին հարմար զգուշավոր քաղաքականության դրսևորում է: Բոլոր դեպքերում ինչպես այլ լեզուների, այնպես էլ տաճկերեն սովորելու հիմքը պետք է հայերենը լինի հայ մարդու համար, հակառակը չի կարող լինել: Լեզուների իմացության հանգամանքը քննվում է լայն ըմբռնումով: Օտար լեզուների տիրապետող անհատների պակաս հայոց մեջ չի զգացվել, սակայն եթե գիտությունը, լուսավորությունը, կրթությունը լինեն միայն մի քանի անհատների սեփականությունը, իսկ ազգի ընդհանրությունը՝ զերծ դրանից, ապա ազգը «գիտնական ազգ չըսուիր»: Զարգացման պահանջը կարող է ենթադրել այլոց լեզուներին և սովորություններին դիմելու անհրաժեշտություն, սակայն դրան մշտապես ապավինելը կարող է կործանարար լինել, տանել ուծացման, մի բան, որ հենց մեր պատմության դառը փորձն է հուշում: Եզրակացությունը մեկն է. առաջադիմությունը միայն ազգային լեզվով է հնարավոր իրականացնել: Ազգային լեզուն բանալի է, որով կարելի է հասնել հաջողության:

Լեզուն սովորելն ինքնանպատակ չպետք է լինի: Նախևառաջ գիտունները պետք է ապահովեն գիտական և մշակութային արժեքների գրային տարբերակների գոյությունը, ապա գրել-կարդալ իմացողների շատանալը կարող է նաև տնտեսական որոշակի շահ ապահովել (նույնիսկ հաշվարկ է արվում թերթերի գների հետ կապված), ազգային լեզվի տարածումը դրական ազդեցություն կարող է ունենալ տպագրության, կազմարարության, թղթագործության, գրավաճառության ոլորտների վրա, և վերջին հաշվով լեզվի գործածությունը հենց լեզվի զարգացմանը կնպաստի, իսկ յուրաքանչյուր անհատ իր մասնակցությունը կբերի լեզվի հաստացմանը, հղկմանը, իսկ դա էլ իր հերթին նշանակալիորեն կմեծացնի լիարժեք գրավոր ու բանավոր խոսքի և հաղորդակցման հնարավորությունները: Ազգային լեզվի միասնական ու ընդհանուր համակարգի գոյությունը կարող է համախմբել «բովանդակ ազգին»: Ներկայացնելով հայերենի վիճակը տարբեր տարածաշրջաններում (Լեհաստան, Մաճառստան, Ռուսաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Կ.Պոլիս)՝ կարծիք է հայտնվում, որ միասնական լեզվի բացակայությունը կարող է խորթություն մտցնել հայոց տարբեր հատվածների

միջև: Իբրև օրինակ է բերվում սլավոնական ժողովուրդների ազգային և լեզվական վիճակը: Ազգային լեզուն նաև ազգային ոգու սնուցիչն է, իսկ դա կարող է մարդուն մղել ազգօգուտ գործունեության: Ազգային լեզուն յուրացնելը, նրա կատարյալ իմացությունը կարող են բացել ազգային հանճարը, ձիրքերն ու կարողությունները:

Այսպիսով, հոդվածագրի մտահոգությունը կապված է հայերենի ուսուցման խնդիրների հետ: Դժվարությունների հաղթահարումը, տարբեր րկրներում հաստատված հայերի համար միասնական հայերենի ուսուցումը ոչ միայն կհամախմբի հայությանը, այլև կնպաստի գիտությունների զարգացմանը: Սակայն դրան հասնելու համար պետք էր ջանք չխնայել և պայմաններ ստեղծել կրթական գործի կազմակերպման համար:

Լեզվի մասին շատ հարցեր են քննվում նաև պարբերականի 1852թ. 6-րդ համարում տպագրված «Խորհրդածութիւնք ազգային լեզուի վրայ» հոդվածում: Լեզվի կանոնավորումը նշանակում է կարգավորել մտածողությունը, որովհետև լեզուն «մտքի յստակ հայելին է», ապահովել ազգի զարգացման առաջընթացը և դառնալ գիտությունների ծավալման հիմք: Առավել օգտակար ու կատարյալ գործառույթներ կարող է իրականացնել լեզուն, եթե մշակվի և իր «բնական շէնքին վրայ արուեստական օգնութիւններն ալ հետզհետէ գան միանան»: Թերևս խիստ արդիական է այն դիտարկումը, որ մեծ ու փոքր շատ ազգեր լեզվի զարգացմամբ են պայմանավորել իրենց ներկան ու ապագան, և դա ոչ թե «ընդունայն ազգասիրութենէ կամ ազգապարծութենէ յառաջ եկած բան էր», այլ բանական մտքի արտահայտություն: Մի շարք ազգերի օրինակով (ճապոնացիներ, պարսիկներ, հույներ, եգիպտացիներ) ցույց է տրվում, թե ինչքան եռանդ է գործադրվել, ինչքան շատ վարժարաններ են բացվել լեզուն մշակելու և զարգացնելու ուղղությամբ, ինչքան ջանքեր են ներդրվել «լեզուին միութեան, հարստութեան ու զարդարանքին համար»: Եվրոպական նոր ազգերն այդ առումով ավելի մեծ հաջողությունների են հասել՝ ավելի շատ միջոցներ կիրառելով: Արվում է ևս մի շատ կարևոր դիտարկում Ֆրանսիայի (Գաղղիա) օրինակով, որը ազգային լեզվի մշակման ուղղությամբ մեծ աշխատանքներ է տարել: Բանն այն է, որ լեզվի մշակման ու զարգացման խնդիրները գտնվել են պետության և ամբողջ հասարակության ուշադրության կենտրոնում, և ինչպես գրում է հոդվածագիրը, «Իր թագաւորները, իշխաններն ու բոլոր ազգը շատ մեծ փոյթ

տարին իենց լեզուին՝ ո՛չ ծախքի, ո՛չ ալ աշխատանքի խնայելով»[11], այնպես, որ այլ երկրներում դարձավ պալատական, դեսպանական ու ազնվականության լեզու իր կանոնավոր բնույթի, հարուստ բառապաշարի շնորհիվ: Նույն ճանապարհին անցնում են նաև մաճառները(հունգարները), որոնք նույնիսկ վճարել են յուրաքանչյուր հաջողված նորաստեղծ բառի համար:

Այլ ժողովուրդների՝ լեզվի նկատմամբ դրսևորած վերաբերմունքի փոքրիկ տեսությունից հետո անցում է կատարվում հայոց լեզվին՝ փորձելով ներկայացնել լեզվական խնդիրների լուծման ուղղությամբ կատարված աշխատանքները «ի սկզբանէ մինչեւ հիմակ»: Չնայած փաստերը քիչ են, սակայն բավարար են որոշակի գաղափար կազմելու համար: Առաջին լուսավոր կետն այդ առումով Պատմահոր հիշատակած Հայկյան Արամն է, նրա իսկապես ազգանպաստ գործունեությունը, որ «երկրին բնակիչներուն կը հրամայէ, որ հայերէն լեզու սորվին ու խօսին», ասել է թե հայերեն պիտի սովորեին և խոսեին ոչ միայն հայերը, այլև այլազգիները: Սա հոդվածագրի կողմից որակվում է որպես պետական-կառավարական մոտեցում, հայերենն էլ բնականաբար կարող էր «Կառավարութեան լեզու ըլլալ»: Ստրաբոնի վկայությունն է հիշվում, թե Հայքը միալեզու էր՝ բազմազգ լինելով հանդերձ: Հայոց լեզուն բարձր զարգացման է հասել քրիստոնեության, մասնավորապես սուրբ թարգմանիչների ժամանակաշրջանում, երբ հոգևորները և աշխարհիկ իշխանները միասնաբար ջանացին դպրոցներ բացել, գրքեր թարգմանել, գրքեր գրել ու առաջարկել, սակայն այդ «ոսկեղէն ժամանակը» կարճատև էր, իսկ հետագայում այդպիսի իրավիճակները դիպվածային դարձան: Պատճառները հայոց քաղաքական վիճակն էր և այլոց գերիշխանությունը ինչպես ընդհանրապես ազգի, այնպես լեզվի վրա, ընդ որում «ամենէն կոշտ ու նշանաւոր այլակերպութիւնը…լատին լեզուի կաղապարին վրայ բռնի ձուլել ու ձեւել» ցանկանալն էր: Անցյալում լեզվի անմխիթար վիճակի վերաբերյալ մտահոգություններն ունեին իրական հիմքեր. հայերենի անկազմակերպ վիճակը, տաճկերենի գերիշխող դիրքը, լեզվի իմացությունը միայն եկեղեցականներին վերագրելը և այլն: Պատմական փաստերի վկայակոչմամբ քննվում են պետության ներսում լեզուների փոխհարաբերությունների հարցերը՝ նկատի ունենալով «տիրող ու կառաւարող ցեղին լեզուի» և «հպատակեալ ազգին լեզուի» հնարավորություններն ըստ պատմական տարբեր իրավիճակների: Այնուամենայնիվ ժամանակի ընթացքում

[11] «Եւրոպա», 6, 1852:

շատ բան է փոխվել, և «հիմակուան (խոսքը 19-րդ դարի մասին է - Ա. Թ.) օսմանեան ազնուացեալ կառավարութիւնն ալ... դպրոցներու հաստատութիւնն ու ազգային լեզուի ուսումն ալ տէրութեան մէջ ամէն տեղ բոլորովին ազատ թող տրուեցաւ»: Իհարկե, ասվածը համապատասխանում է իրականությանը, սակայն կարծում ենք, որ օսմանյան կառավարության նման «ազնվական» վարքագիծը պայմանավորված էր ոչ թե կայսրությունում ապրող ազգային փոքրամասնությունների նկատմամբ բարի կամեցողությամբ, այլ առկա պայթյունավտանգ իրավիճակով, հասարակական – քաղաքական շարժումների զարգացմամբ:

Ըստ հոդվածագրի՝ լեզվի նկատմամբ հասարակության մի նշանակալի հատվածի վերաբերմունքը որոշվում էր շահաբեր լինել-չլինելու տրամաբանությամբ, մինչդեռ «իրենց ազգային լեզուն անշահաբեր կարծողները պէտք է անտարակոյս շահելու բարձրագոյն կերպը չգիտցող մարդիկ համարիլ»[12]: Միտքը շարժման մեջ դնելու լավագույն միջոցը «հասկնալով կարդալն է», մինչդեռ նրանք, ովքեր տարբեր հնարքների ու խաբեությունների գործադրությամբ շահելու մեջ հաջողակ են, բայց հաղորդակից չեն ազգային լեզվին, միևնույն է, տգետ են, իսկ գրավոր լեզվին տիրապետողները կրկնակի հաջողությունների կարող են հասնել:

Ազգային լեզուն չիմանալու մյուս պատճառը դպրատների վիճակն է, հասարակական շատ շերտերի համար անհասանելի էր ծախսերի պատճառով, որի հետևանքով շատերն իրենց որդիներին տալիս են արհեստի: Վարժարանն ավարտողն իր ազգային լեզվին տիրապետել չի կարող, եթե միայն առանց հասկանալու կարդալ գիտի և առանց շարադրելու գրել գիտի:

Ազգային լեզուն չսովորելու երրորդ պատճառը իբր հայերենի կոշտ հնչողությունն է կամ «դրսեցիներու» լեզու կարծելը, որը «աւելի ռամկական ըմբռնումներէ յառաջ եկած» է և լեզուն չսովորելուց ու չգիտենալուց: Իհարկե, ընդհանրապես լեզուն նման չափանիշներով գնահատելը տգիտության ցուցիչ է. լեզվի արժանիքը ականջահաճո հնչելը չէ, այլ «մտքի գաղափարներուն յայտարար ու հաղորդիչ» լինելը: Ինչ վերաբերում է լեզվի հնչողությանը, ապա այն չեն կարող միանման բարեհունչ լինել, եթե կան տարածական և հասարակական զանազան տարբերակներ, գրագետ ու անուս մարդիկ: Բնական է, որ վերջիններս չեն կարող լեզվի հարցերում ճիշտ կողմնորոշվել, մասնավորապես գերադասում, են տաճկերենը գործածել, քան

[12] «Եւրոպա», 22, 1852:

հայերենը, նույնիսկ գերադասում են մեր եկեղեցական ծեսերը թուրքերենով կատարել: Այս Երևույթը բավականին տարածված էր արևմտահայոց մեջ: Նշենք, որ դեռևս 18-րդ դարի սկզբին այս վիճակը մտահոգել էր Մ. Սեբաստացուն, որը կազմում և հրատարակում է արևմտահայերենի մի փոքրիկ ձեռնարկ («Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց», Վենետիկ, 1727, հայերեն ընդարձակ տարբերակը մնացել է անտիպ) արևմտահայերի համար, բայց մտահոգիչն այն էր, որ ձեռնարկը գրված էր հայատառ թուրքերենով: Այս փաստը վկայում է, որ արևմտահայությունն ավելի լավ էր տիրապետում թուրքերենին, քան հայերենին[13]: Այս փաստը վկայակոչում է նաև Հր. Աճառյանը, որը, նշելով թուրքերենի ահռելի ազդեցությունը հայերենի վրա բոլոր գաղթօջախներում, գրում է, որ հայերը, կորցրած իրենց մայրենի լեզուն, ամենուր խոսում են թուրքերեն, «Եկեղեցում անգամ, ուր արարողությունը կատարվում էր գրաբար, քարոզ և ծանուցում կատարվում են թուրքերեն լեզվով»[14]: Թուրքերենի արմատակալումը հայերենում խիստ նկատելի էր նույնիսկ 19-րդ դարի առաջին կեսին: Ահա այս փաստն է արձանագրում նաև հոդվածի հեղինակը: Քամահրանքը ազգային լեզվի նկատմամբ մեծ չափերի էր հասել, մի բան, որ այլ լեզուների պարագայում (ֆրանսերեն, հունարեն) պարզապես բացառվում էր: Արհամարհանքը սեփական լեզվի նկատմամբ ոչ միայն չէր նպաստում նրա զարգացմանը, այլև դառնում էր խոչընդոտ՝ «խափանիչ»: Լեզուն ժամանակի մեջ փոխվելու, զարգանալու, մաքրվելու հակում ունի, որին պետք է նպաստել այն գործածելով, խնամքով վերաբերվելով, և այդ դեպքում այն կդառնա գեղեցիկ ու բարեհունչ:

Հոդվածում մայրենի լեզուն արհամահելու թվարկվող երեք պատճառներին (սովորելու պատշաճությունը և բարոյական օգուտները չտեսնելը, նյութապես շահաբեր չլիները, արտաքին արտասանական անհարմարությունները) ավելացվում է նաև չորրորդ դժվարությունը՝ լեզվի ներքին կառուցվածքի մշակվածության աստիճանը, մտքեր արտահայտելու սահմանափակ հնարավորությունները, գրքերի քանակը, հանգամանք, որը վանում է մայրենի լեզուն սովորելու ցանկությունը: Համեմատությունը այլ լեզուների հետ բացահայտում է հայերենի առավելությունները մի շարք լեզուների նկատ-

[13] Մանրամասն տե՛ս Թ.Ասոյան, Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:

[14] Հր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հտ. 2, Երևան, 1951, էջ 261:

մամբ, բայց նաև շատ են պակասությունները, որոնք չընդունելը «գրեթէ արեւուն գոյութիւնն ուրանալու պէս բան մըն է»: Հոդվածագիրը փորձում է ցույց տալ, որ եվրոպական լեզուները 3-4 դար առաջ անկերպարան վիճակում էին, աղքատ ու անզարդ, «ընդհանրապես մերկ, չոր ու անհամ ոճ»-ով, բայց դա չի խանգարել, որ լեզվակիրները չմշակեն, չհաստացնեն իրենց լեզուն, հոգ չտանեն նրա մաքրության մասին, մինչդեռ հայերենի պարագայում հայերի մոտեցումն այլ է: Եթե եվրոպական լեզուները օգտվեցին լատիներենից, հունարենից, այլ օտար լեզուներից վերցրին բառեր, ոճեր ու ձևեր, «ընտանի ըսուածքներ», որոնք հեղինակն անվանում է «պատահական կատարելություններ», ապա հայերենը «ոչ երբեք այնպիսի խեղճութեան եւ անշքութեան մէջ է, ոչ երբեք այնչափ շինծու օգնութիւններու եւ այնչափ օտար լեզուաց խառնուրդներու հարկաւորութիւն ունի»: Գրաբարի, մեծ մասամբ նաև աշխարհաբարի հնարավորությունները թույլ են տալիս արտահայտելու ցանկացած միտք ու գաղափար: Նշենք, որ գրաբարին դիմելու պատճառը հաճախ բացատրվում էր աշխարհաբարի անկազմակերպ վիճակով, սակայն 19-րդ դարի կեսերին աշխարհաբարն արդեն բավականին կանոնավորված էր և գնալով ընդարձակում էր իր կիրառության ոլորտները, սակայն դեռևս բառապաշարի թարմացման և ուսումնական գրականության ստեղծման անհրաժեշտություն էր զգացվում: Ըստ հոդվածագրի՝ լեզվի վիճակը կարելի է բարելավել, եթե վարժարաններում լեզվի դասերը կարգավորված և գործնական լինեն, ներդրումներ արվեն, լեզուն ուսումնասիրվի, ուսուցման լեզուն հայերենը լինի և այլն: Նշված միջոցները պետք է ավելի զարգացնեին լեզուն: Պետք է ասել, որ աշխարհաբարը 19-րդ դարի կեսերին բավականին հղկված և հարստացած վիճակում էր գտնվում: Այս փաստն է հաստատում նաև հոդվածի հեղինակը:

Այս հոդվածը գրված է մեր ազգային լեզվի, գիտությունների զարգացման, դպրոցներում ուսուցման գործընթացի կարգավորման մտահոգությամբ: Փորձ է արվում եվրոպական լեզուների համեմատությամբ գնահատել հայերենի վիճակը, ժողովրդի մեջ արմատավորել սեր, հոգատարություն և ուշադրություն մայրենի լեզվի ու կրթության նկատմամբ: Միաժամանակ որոշ տեղեկություններ են տրվում հայերենի անցյալ ու ներկա վիճակների, կրթության նկատմամբ մարդկանց դրսևորած վերաբերմունքի մասին:

Ազգի կրթական վիճակն ու լեզուն սերտորեն կապված են նրա պատմության հետ. կա՛մ բարձրանում ու պայծառանում է, կա՛մ իջնում ու կործանվում՝ կապված պատմական կոնկրետ իրավիճակների հետ: Այս տեսակետն

է արտահայտված «ԺԴ-ԺԸ դարու հայերենի վիճակը» հոդվածում: Գրաբարը, որ դասական լեզուների շարքը կարող էր դասվել, ժամանակի ընթացքում «օր օրուան վրայ աւրուեցաւ» և կորցրեց ոսկեդարյան շքեղությունը: Ըստ հոդվածագրի՝ լեզուների այդ «խանգարումները» երկու կերպ կարող են լինել՝ բնական և արվեստական (=արհեստական): Հոդվածում քննվում են նախ «արուեստական խանգարումները», որոնք կապվում են արտալեզվական միջամտությունների հետ: հայտնի է, որ 14-րդ դարից ստեղծված գրականությունը լեզվական առումով այնքան էր այլակերպվել, որ «ոչ մէկ լեզու մը ան աստիճանի ապականութիւն ու աւեր կրած է»: Եվ դա կապվում է կաթոլիկ միսիոներների գործունեության հետ: Լատին-հայ միաբանությունը, մտածելով, թե հայերենը անկատար է լատիներենի համեմատությամբ, փորձեցին հայերենի «անկատարություններն ու պակասությունները» վերացնել՝ լատիներենի հետ նույնացնելով: Լատինաբանությունները հայերենում հաստատվեցին համապատասխան քերականական կանոններով, դրա հետևանքով, ինչպես գրում է հեղինակը, ձևավորվեց «լատին-հայ լեզու մը, որ թէպէտ ըստ արտաքին թկերպարանացը հայերէն, բայց լատիներէնի կաղապարով ձուլեալ զանգուած մըն էր»: Այս հայերենն էր, որ տարածվեց ամենուր՝ դպրոցներ, գրականություն, գրվեցին քերականություններ: Հոդվածում բերվում են հայերենի վրա լատիներենի «պատվաստման» մի շարք օրինակներ՝ նշելով, «որ չէ թէ հին հայերէնի շխնուածքին վրայ օտար ճարտարապետութիւն մը բանեցուեր է, այլ լեզուին աւերակներուն վրայ օտար զարդերով նոր ճարտարապետութեամբ շէնքեր կառուցուեր են»[15]: Այս դիտարկման մեջ ուղղակի ակնարկ կա նաև ոսկեդարյան գրաբարի փոխակերպվելու վերաբերյալ, այս հանգամանքին խիստ բացասաբար է վերաբերվում հոդվածագիրը: «Նոր հայերենը» հեղինակն անվանում է խուժուդուժ ու խժալուր: Հիշվում է նաև հունարենի ազդեցության մասին:

«Բնական խանգարումը» հեղինակը կապում է լեզվի զարգացման ընթացքի հետ՝ նշելով գրքեր, որոնք գրված են «աշխարհաբառ ոճով» և զերծ լատինաբանություններից, բայց այդպիսի գրքերի քանակը շատ քիչ է: Լեզվի՝ գրաբարից հեռանալը համարվում է աղավաղում: Հեղինակը 14-18-րդ դարերում հայերենի կրած այդ երկու «խանգարումները» շտկելու գործընթացը իրավացիորեն կապում է Մ. Սեբաստացու և նրա աշակերտների գործունեության հետ:

[15] «Եւրոպա», 4, 1849:

«Եւրոպա» պարբերականում հրապարակվել են նյութեր՝ նվիրված հայագիտության տարբեր հարցերի՝ հայոց մատենագրության պատմություն, վիմագիր արձանագրություններ, նորատիպ մատյաններ, լեզվական առանձին իրողություններ և այլն:

Եզրակացություն: «Եւրոպա» պարբերականում քննվում են այնպիսի հարցեր՝ կապված մեր ազգային լեզվի հետ, որոնք 19-րդ դարում մեծ նշանակություն և հասարակական ինչեղություն ունեին: Դրանք վերաբերում են հայոց լեզվի պատմությանը, նրա մաքրման, մշակման, հարստացման և կանոնարկման խնդիրներին, ուսուցման գործընթացին, ազգային լեզվի նկատմամբ հասարակության կողմից դրսևորած անտարբերությանը՝ մեծ մասամբ դա պայմանավորելով նաև հայ ժողովրդի ցրվածությամբ և այլոց քաղաքական գերիշխանության տակ գտնվելու հանգամանքով: Շատ դեպքերում դիտարկումները կատարվում և անհրաժեշտաբար հիմնավորվում են համեմատական վերլուծությունների միջոցով: Արվում են ողջամիտ և իրատեսական առաջարկություններ՝ ազգային լեզուն սովորելու, գիտությունները զարգացնելու, գրքեր ստեղծելու, դպրոցներ բացելու և այդպես մայրենի լեզվի հարգը բարձրացնելու նպատակով:

LANGUAGE ISSUES IN "EUROPA" PERIODICAL OF THE MEKHITARISTS OF VIENNA

ASOYAN TATUL
PhD in Philological Sciences, Associate Professor,
Dean of the Faculty of Philology, GSU
e-mail: asoyan.60@mail.ru

The Mekhitarists' activities were also effective in the field of journalism. The first attempt to create a periodical dates back to the beginning of the 19th century. Two periodicals were established, but the great contribution of the Venetians to the history of Armenian journalism is connected with the publication of the journal "Bazmavep". The first attempt of the Mekhitarists of Vienna to publish a newspaper ended in failure, but in 1847, the publication of "Europa" periodical was launched. The purpose of the article is to examine those issues raised in the "Europa" periodical, which are related to language problems. It is noted that in the first period "Europa" referred to such issues, which were not found in the second period.

The materials published in "Europa" refer to various issues. Observations related to the national language are often presented in parallel with the problems of the historically formed state of the Armenians, education, teaching, language and science significance, preservation and development. Grammatical works, new books, old manuscripts, cuneiform inscriptions, Armenian bibliography, etc., are evaluated. In their publications, the Mekhitarists show a balanced position, taking into account the particularity, the nature, and public resonance of the discussed material.

Key words: *"Europa", the Mekhitarists of Vienna, "Bazmavep", language problems, education, teaching, Armenian bibliography.*

ВОПРОСЫ ЯЗЫКА В ВЕНСКОМ ИЗДАНИИ МХИТАРИСТОВ «ЕВРОПА»

АСОЯН ТАТУЛ
Кандидат филологических наук, доцент
Декан филологического факультета ГГУ
электронная почта: asoyan.60@mail.ru

Деятельность Мхитаристов была эффективной и в сфере журналистики.

Первая попытка создания периодики относится к началу 19 века. Выходят в свет два издания, однако большой вклад венецианцев в историю армянской журналистики связан с публикацией журнала «Базмавеп».

Завершается неудачей первая попытка Венских Мхитаристов издать газету, однако с 1847 года начинает издаваться «Европа».

Цель статьи - рассмотрение затронутых в издании «Европа» вопросов, связанных с языковыми проблемами. Отмечается, что «Европа» коснулась таких вопросов в первом периоде, а во втором не встречается такого материала.

Материалы, опубликованные в «Европе», касаются различных вопросов.

Наблюдения, касающиеся национального языка, часто представляются параллельно с проблемами исторически сложившейся судьбы армян,их воспитания и обучения, а также с проблемами сохранения и развития языка.

Оцениваются грамматические труды, книги нового типа, древние рукописи, клинописи, армянская библиография и т.д.

В своих публикациях Мхитаристы демонстрируют благоразумную позицию, учитывая специфику, характер, общественный резонанс обсуждаемого материала.

Ключевые слова: *«Европа», Венские Мхитаристы, «Базмавеп», проблеми языка, обучения, армянская библиография.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 30.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ՀԻՆ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄՇԱԿՈՒՅԹԸ[1]

ՀՏԴ 82.091
DOI: 10.56246/18294480-2023.14-18

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱ
ԵՊՀ և ԳՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
էլփոստ՝ arakelara1@gmail.com
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
էլփոստ՝ vachik_grigoryan@mail.ru
ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ
ԳՊՀ դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ isnaira123456@gmail.com
ՔՈՍՅԱՆ ԱՆՈՒՇ
ԵՊՀ մագիստրոս
էլփոստ՝ kosyananush97@mail.ru

Կելտերից հետո Եվրոպայում քաղաքական և մշակութային կյանքի նախաձեռնությունը անցնում է հիմնականում գերմանական ժողովուրդներին: Որոշակի ընդհանրություններ ունենալով կելտերի հետ (դարեր շարունակ ապրելով կողք-կողքի՝ նրանք ստեղծում են ռազմական, տնտեսական և մշակութային ներթափանցումներով հարուստ պատմություն, ավելին՝ երկար ժամանակ անտիկ հեղինակները նրանց նույնացրել են)՝ քաղաքական ճակատագրով, սակայն, գերմանացիները միանգամայն տարբերվում են կելտերից: Հռոմեական կայսրության հետ բախումները նոր հազարամյակի 3-4-րդ դդ. ճակատագրական են դառնում երկու ժողովուրդների համար: Եվ եթե այդ բախումների հետևանքով կելտերը թուլանալով աստիճանաբար թողնում են մեծ պատմության ասպարեզը, ապա գերմանական ժողովուրդները ոչ միայն ավելի հզորանում են և վճռական ազդեցություն ունենում կայսրու-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-6B038 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

թյան կործանման գործում, այլև դնում են Եվրոպայի նոր պատմության հիմքերը: «Գերմանական ոգին նոր աշխարհի ոգին է»,- գրում է Հեգելը[2]:

Բանալի բառեր *- գերմաններ, ժողովուրդների մեծ գաղթ, սոցիալական երեք գործառույթների տեսություն, վախճանաբանություն, համաշխարհային ծառ, ռունական գրեր:*

Գերմանական ժողովուրդների պատմության և մշակույթի վերաբերյալ աղբյուրները, ինչպես որ կելտերի դեպքում է, հիմնականում երեքն են՝ **հնագիտական տվյալներ, անտիկ հեղինակների գրավոր վկայություններ և գերմանական ժողովուրդների բանահյուսություն:** Խոսելով կելտական և գերմանական ժողովուրդների կրոնների վերաբերյալ տեղեկությունների շուրջ՝ Մ. Էլիադեն հետաքրքիր դիտողություն է անում. «Գերմանական կրոնն ուսումնասիրողների տեղեկություններն ավելի շատ են,- գրում է նա,- բայց նրանք նույնպես բողոքում են դժվարություններից»[3]: Անշուշտ, խոսքը առկա հարուստ նյութերի ուսումնասիրության և համակարգման դժվարությունների մասին է: Արդարև, չնայած ձեռքի տակ եղած բազմատեսակ և բազմալեզու նյութերին՝ այսօր էլ առհասարակ գերմանագիտության մեջ (և ոչ միայն միֆոլոգիայի և կրոնի ուսումնասիրության ոլորտում) առկա են չլուծված խնդիրներ:

Դրանցից մեկը **գերմանների ծագման** առեղծվածն է: Ինչպես հայտնի է, ժողովուրդների ծագումնաբանության պրոբլեմների մեջ կարևորագույն նշանակություն են ձեռք բերում հենց հնագիտական տվյալները: Բայց գերմանացիների դեպքում այսօր շրջանառվում են շուրջ յոթ վարկած, որը դժվարացնում է խնդրի լուծումը: Այդ վարկածների համաձայն՝ գերմանական ժողովուրդների ձևավորման ժամանակը տատանվում է մ.թ.ա. 10000 թվականից մինչև մ.թ. առաջին հազարամյակի սկիզբ: Ընդսմին դրանց մեջ դիտարկվում են ինչպես հնդեվրոպական ծագման կամ եկվորության, այնպես էլ տեղական ծագման տարբերակները[4]: Բոլոր դեպքերում հնագիտական տվյալները հնարավորություն են տալիս խոսելու Եվրոպայում գերմա-

---

[2] Гегель, Сочинения, т. 8, Философия история, М.,-Л., 1935, с. 323.

[3] Элиаде М., История веры и религиозных идей, т. 2, М., 2002, с. 132.

[4] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Кузьменко Ю., Ранные германцы и их соседы, Санкт-Петербург, 2011, էջ 123-142:

նացիների ամենավաղ հայրենիքում՝ Սկանդինավիայում և Հյուսիսային Գերմանիայում ապրող ժողովուրդների բնորոշ մշակույթի (ոչ միայն նյութական, այլև ծիսակարգային) «չընդհատվող շարունակականության մասին»[5]:

Անկասկած, գերմանների հայտնությունը անտիկ պատմագրության ծառայությունն է[6]: Հույն և հռոմեացի բազմաթիվ հեղինակներ (Պոսիդոնիոս, Կեսար, Ստրաբոն, Պատերկուլուս, Պլինիուս Ավագ, Տակիտուս, Պլուտարքոս, Ապպիանուս, Դիոն Կասիուս, Ամմիանուս Մարցելլինուս և այլք) զանազան ժամանակներում տեղեկություններ են հաղորդում գերմանական ժողովուրդների մասին՝ ստեղծելով որոշակի կերպար, որը գերիշխող է դառնում այդ ժողովուրդների հետագա պատմության և արժևորման համար:

Գերմանագիտության պրոբլեմներից է նաև **«գերմաններ» անվանումը**: Հայտնի է, որ այն՝ իբրև ընդհանուր ինքնանվանում, գերմանացիների մեջ սկսում է գործածվել Ռեֆորմացիայի ժամանակներում: Հայտնի է նաև, որ անտիկ հեղինակները բավական երկար ժամանակ «գերմաններ» ասելով հասկանում էին այն ժողովուրդներին, որոնք ապրում էին Հռենոսից այն կողմ, այսինքն՝ անվանումն ավելի շատ աշխարհագրական, քան էթնիկական բովանդակություն է ունեցել[7]: Առաջին անգամ «գերմաններ» անվանումը հանդիպում է մ.թ.ա. III դարի վերջի լատիներեն մի արձանագրության մեջ՝ ի պատիվ «գալլերի, ինսուբրերի և գերմանների դեմ» կոնսուլ Կլավդիոս Մարցելլուսի հաղթանակի[8]: Այնուհետև անվանումը հանդիպում է հույն Պոսիդոնիոսի (135-50թթ.) ֆրագմենտներից մեկում, որտեղ սրահական (ստոյիկ) փիլիսոփան պատմում է. «Գերմանացիները սննդի մեջ օգտագործում են փոքր կտորներով տապակած միս՝ դրա հետ խմելով կաթ և անխառն գինի»[9]: Սակայն ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում գերմանագետների մեջ հիմնավոր կասկածներ են հայտնվում՝ արդյո՞ք գերմանացի ասելով հասկացվել են բուն գերմանները, թե մեկ այլ ժողովուրդ: Ամեն ինչ հստակեցվում է Հուլիոս Կեսարի (100-44թթ.) և նրա հաջորդների շնորհիվ: «Որոշակիորեն կարելի է ասել,- որ մինչև մեր ժամանակները գոյություն

---

[5] Brather S., Etnische Interpretationen in der frühgeschichtlichen Archeologie, Berlin New York, 2004, S. 210.

[6] История Германии в трех томах, т. 1, М., 2008, с. 20.

[7] Տե՛ս Feist S., Indogermanen und Germanen, Halle, 1924, S. 5-6.

[8] Reallexikon der Germanischen Altertumskunde Studienausgabe Gie Germanen, Berlin New York, 1998, S. 2.

[9] Մեջբերման աղբյուրը՝ История Германии в трех томах, т. 1, М., 2008, с. 12.

ունեցող «գերմանացի» հասկացությունը՝ մեզ համար հայտնի իբրև գերմաներեն խոսող և հիմնականում Հռենոսի աջ ափին բնակվող ցեղերի ընդհանուր անվանում լատինական ավանդույթի մեջ մտցնում է Կեսարը («Նոթեր Գալլական պատերազմի մասին»), իսկ հունականում՝ Ստրաբոնը («Աշխարհագրություն»)»[10]: Կեսարից հետո «գերմանացի» անվանումը որոշակիանում է այնպես, ինչպես «հույն», «կելտ» կամ «սկյութ» անվանումը: Պատահական չէ, որ Տակիտոսը, որը օգտվել է Կեսարի «Նոթերից», նկատում է, որ «Գերմանիա բառը նոր է և վերջերս է մտել շրջանառության մեջ»[11]:

Մեկ այլ հիմնահարց է գերմանական ժողովուրդների **տիպաբանությունն ու դասակարգումը:** Անտիկ ազգագրության մեջ առաջինը նման փորձ կատարում է Պլինիուս Ավագը (23-79թթ.), որն իր «Բնական պատմության» գլուխներից մեկում ներկայացնում է գերմանական ժողովուրդներին հինգ խմբերում. 1. Վանդիլներ, որոնց մեջ մտնում են բուրգունդները, վարիները, գուտոնները, 2. Ինգեվոնները, որոնց մեջ մտնում են տևտոնները և կիմբրերը, 3. Իստևոնները (սիկամբրները), 4. Հերմիոնները, որոնք ապրում են երկրի ներսում (սվևներ, հերմանդուրներ, խաթթեր, խերուսկներ), 5. Պևկիններ և բաստարներ, որոնք սահմանակից են դակերին: Այս խմբերից դուրս են մնում նեմետները, տրիբոնները, վանգիոնները, ֆրիզները, բատավները, ուբիները, որոնք վաղուց ծանոթ էին հռոմեացիներին:

Կեսարը ներկայացնում է գերմանական տասնվեց ժողովուրդների:

Գերմանների դասակարգման այլ սկզբունք է կիրառում Տակիտոսը (54-120թթ.), որը «Տարեգրություններից» զատ, որտեղ տեղեկություններ կան գերմանների մասին, գրում է այդ ժողովուրդների պատմությանը, ծագմանը և դիցաբանությանը նվիրված մի առանձին աշխատություն՝ «Գերմանացիների ծագման մասին և Գերմանիայի տեղագրությունը»: Համոզմունք հայտնելով, որ գերմանները «այս երկրի վաղնջական բնակիչներն են»[12], Տակիտոսը կարծում է, որ գերմանացիները ծագում են նրանց միֆական նախնի Մաննի երեք որդիներից՝ Ինգեից, Իսկեից և Հերմինից կամ Էրմինից, ուստի ներկայացնում են երեք խումբ՝ ինգևոններ, որոնք ապրում են

[10] Кузьменко Ю., Ранние германцы и их соседи, Санкт-Петербург, 2011, с. 13.

[11] Тацит К., Сочинения в двух томах, т. 1, Ленинград, 1969, с. 354.

[12] Тацит К., Сочинения в двух томах, т. 1, Ленинград, 1969, с. 354.

հյուսիսում, հերմիոններ, որոնք ապրում են երկրի ներսում և իստևոններ (կամ իսկևոններ), որոնք մնացած գերմանացիներն են[13]:

Այսօր առավել ընդունված տարբերակներից մեկն է գերմանական ժողովուրդներին էթնոաշխարհագրական երեք խմբի բաժանելը՝ հյուսիսային ժողովուրդներ, որոնք ապրում են Սկանդինավիայում, Յուտլանդիայում Գերմանիայի հյուսիսում, արևելյան ժողովուրդներ, որոնք ապրում են Էլբայի և Վիսլայի միջակայքում, արևմտյան ժողովուրդներ, որոնք ապրում են Հռենոսի և Էլբայի միջակայքում: Այս բաժանումը որոշակիորեն համընկնում է լեզվական բաժանմանը, քանի որ գերմանական լեզուները ևս բաժանվում են երեք խմբի՝ արևելյան, որոնցով խոսում էին գոթերը, բուրգունդները, գուտոնները, արևմտյան, որոնցով խոսում էին անգլերը, ֆրիզները, սաքսերը, ֆրանկները, տևտոնները, յուտերը, բավարցիները և այլն, հյուսիսային, որոնցով խոսում էին սկանդինավյան ժողովուրդները:

Անտիկ հեղինակների երկերի հիման վրա կարելի է հետևել նաև գերմանական ժողովուրդների պատմության կարևորագույն իրադարձություններին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նրանք մշտապես՝ իրենց պատմության վաղ շրջանից սկսած, ակտիվ շփումների, բախումների և ինտեգրացիոն պրոցեսների մեջ են գտնվել թե՛ միմյանց, թե՛ հարևան ժողովուրդների հետ: Արևելքում դրանք սլավոններն էին կամ արևելյան այլ ժողովուրդներ (հոներ, ալաններ, ավարներ), արևմուտքում՝ կելտերը, իսկ հարավում՝ Հռոմեական կայսրությունը: Կարևոր էին հատկապես շփումները կայսրության հետ, որոնք սկիզբ են առնում մ.թ.ա. երկրորդ դարի վերջերին: Խոսքը տևտոնների և կիմբրերի հաջող արշավանքների մասին է նախ կելտերի, ապա կայսրության դեմ: Նկարագրելով նրանց մեծաքանակ զորքը և նրա հետ առաջ շարժվող կանանց և երեխաների ամբոխը՝ Պլուտարքոսը գրում է. «Նրանք կարիք ուներին հողերի, որպեսզի հնարավոր լիներ կերակրել նման բազմաքանակ ժողովրդին»[14]: Մ.թ.ա. առաջին դարի կեսերին գերմանական ժողովուրդները բախվում են Կեսարի բանակների հետ: Գերմանական ժողովուրդներից Կեսարն առանձնացնում է հատկապես սվեբներին («Սվեբնե-

[13] Նույն տեղում:

[14] Плутарх, Биография Гая Мария // Древные германцы, Сборник документов, М., 1937, с, 127. Ի դեպ, Պլուտարքոսի այս տեղեկությունը հիշեցնում է իռլանդական էպոսի «Ցուլի առևանգումը Կուալնգեից» սագան, որտեղ նույնպես նկարագրվում է զորքի հետ տեղաշարժվող կանանց և երեխաների ամբոխ: Հավանաբար այսպես պատերազմ վարելը եղել է բարբարոս ժողովուրդների սովորությունը:

րը ամենամեծ և ամենառազմաշունչ ժողովուրդն են ողջ Գերմանիայում»)[15]: Գերմանացիների և կայսրության ռազմական բախումների պատմության մեջ ճակատագրական է դառնում մ.թ. 9թ. Տևտոբուրգյան անտառի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որտեղ խերուսկների բանակը Արմինիուսի առաջնորդությամբ ջախջախում է երեսուն հազարանոց հռոմեական բանակը: Այդ հաղթանակից հետո կայսրությունն այլևս հրաժարվում է Գերմանիան նվաճելու լուրջ ծրագրերից[16]: Ընդհակառակը, գերմանական ժողովուրդները ուժեղացնում են ճնշումը կայսրության հյուսիսային սահմանների վրա, հարձակումները դառնում են շարունակական հատկապես Մարկոս Ավրելիոսի գահակալությունից սկսած (161-180թթ.)[17], իսկ 4-5-րդ դդ., օդտվելով ժողովուրդների մեծ գաղթի առաջ բերած քաղաքական-տնտեսական անկայունություններից, հիմնավորապես կործանում են կայսրությունն ու տարածվում Եվրոպայով մեկ՝ Անգլիայից (անգլեր, սաքսեր) մինչև Իսպանիա (վեստգոթեր), մինչև իսկ բնակեցնելով Հյուսիսային Աֆրիկայի ծովափնյա առանձին շրջաններ (վանդալներ): Վաղ միջնադարյան պատմական գործընթացների կարևոր գործոն է դառնում հենց **ժողովուրդների մեծ գաղթը**: Միջնադարագետ Ժ. Լե Հոֆի ընկալմամբ կարևոր են ոչ այնքան այդ գաղթի պատճառները (իսկ այդ պատճառների մեջ նա ընդգծում է բնակչության աճը և առավել բերրի հողերի նվաճումը, որ շարժման մեջ է դնում արևելյան ժողովուրդներին և ուղղորդում նրանց դեպի Արևմուտք[18]), որքան հետևանքները: Նոր հողեր նվաճելու կարիքը «ստիպում է բարբարոս ժողովուրդներին, հրհրելով միմյանց,- գրում է նա,- շարժվել դեպի հարավ և արևմուտք՝ ընդհուպ մինչև արևմտյան աշխարհի ծայրը: Դրանց հետևանքով Բրիտանիան դարձավ Անգլիա, Գաղիան՝ Ֆրանսիա, Իսպանիայում առաջ եկավ Անդալուզիան՝ ի պատիվ վանդալների, իսկ Իտալիայում՝ Լոմբարդիան, որ պահպանում էր վերջին նվաճողների՝ լանգոբարդների անվանումը»[19]: Այդ շարժման սկզբունք համարելով «դեպի առաջ փախուստը», Լե Հոֆը մեջբերում է սուրբ Ամբրոսիոսի (IV դ.) վկայությունը. «Հոները հարձակվեցին ալանների վրա, ալանները՝ գոթերի, գոթերը՝ թայֆալների և սարմատների,

[15] Цезарь Г. Ю., Записки о Галлской войне, IV, 1.

[16] История средних веков, т. 1, М., 2005, с. 84.

[17] Տե՛ս Ле Гофф Ж., Цивилизация средневекового запада, Екатеринбург, 2005, с. 14.

[18] Ի դեպ, մեծ գաղթի նման պատճառ է տեսնում նաև Ռ. Շթայները (տե՛ս Штайнер Р., История человечества и мировоззрения культурных народов, М., 2004, էջ 99):

[19] Տե՛ս Ле Гофф Ж., նշված աշխատությունը, էջ 15:

իրենց հայրենիքից դուրս քշված գոթերը մեզնից խլեցին Իլիրիան: Եվ դա դեռ վերջը չէ»[20]: Գերմանական շատ ժողովուրդներ ստեղծում են փոքր կամ մեծ թագավորությունները՝ փորձելով ժողովուրդների մեծ տաղաշարժի հետևանքով առաջ եկած անկայունության և համատարած կործանումների պայմաններում որոշ ժամանակով պահպանել իրենց ինքնուրույնությունը: Խոսքը վերաբերում է հատկապես օստգոթերին Գերմանիայի արևելքում, ապա Հյուսիսային Իտալիայում, վեստգոթեին, որոնք թագավորություն են հիմնում իսպանիայում, անգլերին և սաքսերին, որոնք մեծ Բրիտանիայի հարավում հիմնում են ինքնուրույն թագավորություններ, ինչպես նաև բավարացիներին, բուրգունդներին և մանավանդ ֆրանկներին, որոնց կազմավորած պետությունները ամենակենսունակն էին վաղմիջնադարյան Եվրոպայում:

Այս շրջանում եվրոպական կյանքի վրա իշխում են **քաոսը** և **անապատությունը**: Ավերման կիրքը և դաժանությունը հաջողության գրավական են ստեղծում բարբարոս ժողովուրդների համար: Օրինակ՝ հոների մասին հռոմեացի Ամմիանոս Մարսելինուսը գրում է. «Նրանց վայրենությունը դուրս է ամեն մտքից: Նրանք երկաթով խազխզում են նորածինների այտերը և առաջացնում խոր սպիներ, որպեսզի սկզբից հենց ոչնչացնեն մազածածկը, ուստի ծերանալով անգամ նրանք մնում են անմորուս և այլանդակ՝ ներքինիների պես: Նրանք ամրակազմ են, ունեն ուժեղ ձեռքեր ու ոտքեր...իսկ ուսերի լայնությամբ սարսափ են առաջ բերում: Նրանց կարելի է համարել երկոտանի կենդանի...Հոները իրենց համար ոչ եփում, ոչ էլ պատրաստում են սնունդ, նրանք սնվում են միայն վայրի բույսերի արմատներով և առաջին պատահած կենդանու հում մսով, որը նախապես տաքացնում են՝ նստած մնալով ձիու վրա...Նրանք կարիք չեն զգում ծածկի իրենց գլխավերևում, և նրանք չունեն տուն, ինչպես և գերեզմանոցներ: Թվում է՝ նրանք մեխված են իրենց ձիերին...քանզի ուտում են և խմում՝ առանց իջնելու ձիերից, անգամ քնում են և արթնանում դրանց վրա»[21]: Սարսափի խորհրդանիշ է դառնում բարբարոսների գլխավոր զենքը՝ երկար սուրը, որը հռոմեացիներին անծա-

[20] Նույն տեղում, էջ 15-16:

[21] Մեջբերման աղբյուրը՝ Լե Գոֆֆ Ж., նշված աշխատությունը, էջ 16-17:

նոթ էր և միջնադարյան գրականության մեջ, հատկապես էպոսներում, ձեռք է բերում միֆական նշանակություն[22]:

5-6-րդ դդ. գերմանական ժողովուրդներ- հռոմեական աշխարհ հակամարտությունը հայտնի պատճառներով աստիճանաբար սկսում է մարել: Վրա է հասնում մի պահ, երբ վայրենի բարբարոսները և քաղաքակիրթ հռոմեացիները զգում են միմյանց կարիք: Խոսելով բարբարոս ժողովուրդների, այդ թվում և գերմանների, Լե Հոֆը գրում է. «Նրանք շատ բան էին տեսնում, շատ բան հասկանում ու սովորում…Թափառումների ընթացքում շփվում էին զանազան մշակույթների և քաղաքակրթությունների հետ, որոնցից վերցնում էին բարքեր, արվեստներ և արհեստներ»[23]: Բարբարոսները հռոմեական աշխարհը հարստացնում էին մետաղագործական, կաշեգործական, ոսկերչական, հողագործական իրենց հմտություններով, հիացմունք էին հանդես բերում կրթության և գիտությունների հանդեպ: Ժանակակիցները վկայում են, օրինակ, օստգոթերի արքունիքում զարգացած գիտության մասին: Այստեղ է գործել նշանավոր Ուլֆիլան, որը դեռևս չորրորդ դարում գոթերեն է թարգմանում Աստվածաշունչը: Այդ ասպարեզում մեծ է հատկապես **քրիստոնեության** նշանակությունը: Առաջինը քրիստոնեություն ընդունում են գոթերը, ապա վանդալները, բուրգունդները, ֆրանկները, ավելի ուշ՝ սաքսերը, դաները, նորվեգները (9-11-րդ դդ.): Անշուշտ, քրիստոնեության հաղթանակը «չափավոր, պարզ, հոգևոր ուսմունքի հաղթանակն էր զգայական, դաժան, վայրի հեթանոսության նկատմամբ»[24], բայց նրա ընդունումը չի ընթացել խաղաղ, առանց դիմադրության: Կան տեղեկություններ[25], որ, օրինակ, նորմանները և անգլոսաքսերը հավատացել են հեթանոս աստվածներին և Հիսուսին միաժամանակ: Եվ այդ «դուալիզմը», այսինքն՝ «Հավատում եմ Հիսուսին»-ը երկար ժամանակ ոտղեկցվել է նաև «Հավատում եմ իմ սրին» կարգախոսով, ինչը բնորոշ է եղել ոչ միայն նորմաններին կամ անգլոսաքսերին: Եվ դա շատ լավ արտահայտվում է գերմանական ժողովուրդների էպիկական գրականության մեջ՝ անգլասաքսոնական «Բեովուլֆից» մինչև սկանդինավյան «Էդդան» և գերմանական «Նիբելունգների եր-

[22] Այդ կապակցությամբ Լե Հոֆը գրում է. «Բարբարոսական մեծ արշավանքների երկար սուրը, որն հետագայում դառնում է ասպետականության զենքը, իր մահաբեր ստվերի տակ է առնում Արևմուտքը» (տե՛ս Лե Гоффф Ж., նշված աշխատությունը, էջ 27):

[23] Лե Гоффф., նշված աշխատությունը, էջ 21:

[24] Гримм Я., Немецкая мифология, т. 1, М., 2019,

[25] Նույն տեղում, էջ 135:

գը»: Քրիստոնեական և հեթանոսական ավանդույթների համադրություն է նաև Սաքսոն Քերականի «Դանների գործերը» հանրահայտ ժամանակագրությունը, որի «առաջին ութ գրքերը, ըստ էության, նորդական դիցաբանության գլխավոր հուշարձաններից են»[26]:

Անտիկ հեղինակները ընդգծում են գերմանների մարմնական և բարոյական բնորոշ գծերը՝ ազատասիրություն, դաժան բարքեր, շեկ մազեր և կապույտ աչքեր, բնակավայրի հեշտ փոփոխություն, հարևանների հետ մշտական պատերազմներ և այլն: Այդ գծերից են նաև հյուրասիրությունը[27], դիմացկունությունը[28], բայց հատկապես ռազմական ոգին և աշխատասիրությունը: Նրանց ամբողջ կյանքը անցնում է որսորդության և ռազմական զբաղմունքների մեջ,- գրում է Կեսարը,- նրանք մանկությունից վարժվում են աշխատանքին և դժնդակ կյանքին: Եվ երիտասարդները որքան ավելի երկար պահպանեն առաքինությունն ու անարատությունը, այնքան ավելի մեծ փառքի կարժանանան յուրայինների մեջ: Նրանց կարծիքով,- գրում է Կեսարը,- դա մեծացնում նրանց հասակը և ուժեղացնում մկանները: Մինչև քսան տարեկան դառնալը ճանաչել կնոջը,- ընդգծում է Կեսարը,- նրանք համարում են մեծագույն ամոթ: «Բայց դա չի էլ թաքցվում,- գրում է Կեսարը,- քանի որ երկու սեռերն էլ միասին լողանում են գետերում»[29]: Կեսարը նշում է նաև մի շարք պատճառներ, որոնց հետևանքով գերմանները քիչ էին զբաղվում հողագործությամբ, օրինակ, որպեսզի նստակյաց կյանքը նրանց մեջ չսպակասեցնի հետաքրքրությունը պատերազմի հանդեպ և որպեսզի նրանց մեջ չծնվի ագահություն դրամի հանդեպ[30]: Տակիտուսի տպավորությամբ, գերմանները առանձնահատուկ ժողովուրդ են, քանի որ պահպանել են արյան նախնական մաքրությունը և «նման են միմիայն իրենց»[31]: Նա գրում է, որ հասարակական և մասնավոր այն բոլոր գործերը, որ կատարում են գերմանները, կատարում են միմիայն զինված: «Իսկ կենդանի դուրս գալ մարտից,- ընդգծում է նա,- երբ զոհվել է առաջնորդը, անպատվություն և ամոթ է ողջ կյանքի համար»[32]:

---

[26] Гримм Я., Немецкая мифология, Т. 1, М., 2019, с. 136.

[27] Тацит, т. 1, с. 362.

[28] Цезарь Г.Ю., Записки о галлской войне, IV, 1.

[29] Նույն տեղում, VI, 21:

[30] Նույն տեղու, VI, 23:

[31] Տե՛ս Тацит, т. 1, էջ 355:

[32] Тацит, т. 1, стр. 359:

Գերմանական ժողովուրդների տիպաբանության և մենթալ հատկանիշների մասին վստահելի տեղեկություններ կարելի է գտնել հատկապես նրանց **դիցաբանական, կրոնական պատկերացումներում և դրանց խարսխված էպոսում**:

Ինչպես հայտնի է, գերմանների դիցաբանությունը հունական, հռոմեական և կելտական դիցաբանություններից հետո հնագույններից մեկն է Եվրոպայում: Դրա վերաբերյալ ժամանակակից գիտությունը տիրապետում է ինչպես հնագիտական, այնպես էլ գրավոր հարուստ տեղեկությունների: Դրանք հասկանալի չափով փոխլրացնում են միմյանց՝ գերմանների միֆապատկերացումներն ամբողջացնելու առումով:

Հնագիտական հուշարձանները, որոնք սփռված են Իսլանդիայից մինչև Սև ծով և թվագրվում են բրոնզեդարյան և ավելի ուշ ժամանակների, իրենցից ներկայացնում են ծիսական - պաշտամունքային օբյեկտներ և առարկաներ, թաղման, զոհաբերությունների, սրբազան պուրակների (քանի որ հին գերմանները պաշտամունքային նպատակներով ոչ թե կառույցներ էին պատրաստում, այլ նախընտրում էին անտառների և ծառաշատ վայրերի մեկուսի հատվածներ) պահպանված հետքեր, արժեքավոր են հատկապես սկանդինավյան ժայռապատկերները:

Հարուստ են հատկապես **գրավոր** տեղեկությունները: Դա վերաբերում է նախ անտիկ հեղինակներին, որոնց մեջ առանձնանում են հատկապես Հուլիոս Կեսարը և Տակիտոսը: «Գրառումներ գաղիական պատերազմի մասին» երկում Կեսարը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև գերմանների հոգևոր մշակույթի մասին, ընդսմին նա սիրում է համեմատել գալլերին (կելտերին) ու գերմաններին և առավելությունը մշտապես տալիս է գալլերին՝ իբրև սոցիալապես և մշակույթով առավել կազմակերպված հանրություն: Կեսարը կարծում է, որ գերմանները քիչ ուշադրություն են դարձնում զոհաբերություններին և «հավատում են միայն այն աստվածներին, որոնց ակնհայտորեն տեսնում են», և որոնք նրանց «բացահայտ օգնում են», այն է՝ արևին, Վուլկանին և լուսնին[33]: Այսինքն՝ գերմաններին բնորոշ են առավել առարկայական, ուստիև ցածրակարգ կրոնական պատկերացումներ: Կեսարը նշում է նաև, որ ի «տարբերություն գալլերի»՝ գերմանների մեջ չկան դրուիդներ (քրմեր), ինչը իրականությանը չի համապատասխանում: Գերմանների մեջ քրմական դասի մասին տեղեկություններ կան ինչպես ան-

[33] Цезарь, 6, XXI.

տիկ և միջնադարյան պատմագիրների երկերում, այնպես էլ հետագա մասնագիտական ուսումնասիրություններում: Առավել հարուստ և ճշմարտությանն ավելի մոտ են մեկ այլ հռոմեացու՝ Տակիտոսի տեղեկությունները: «Գերմանիա» աշխատության մեջ նա խոսում է ոչ միայն գերմանների միֆական նախնու՝ հողից ծնված Տուիստոնի և նրա որդու՝ Մաննի և նրա երեք որդիների մասին, որոնք հիմք են դրել գերմանական ազգերին, այլև պաշտվող հիմնական աստվածների՝ Մերկուրիի, Մարսի, Հերկուլեսի և բազմաթիվ այլ աստվածների և աստվածուհիների[34]: Գերմանների մեջ լայնորեն տարածված էր նաև նախնիների, այնուհետև կենդանիների և բույսերի պաշտամունքը: Կանայք առհասարակ առանձնահատուկ համարում ունեին գերմանների մեջ[35]: Ինչպես Կեսարը, այնպես էլ Տակիտոսը վկայում են գերմանների մեջ գուշակության արմատացած սովորության մասին: Թաղման ձևերի մեջ կարևորվում է նավի մեջ թաղելու սովորույթը:

Անտիկ հեղինակներին, որոնք տեղեկություններ են հաղորդում գերմանական ժողովուրդների միֆամշակույթի մասին, միջնադարում քրիստոնեության տարածման շնորհիվ գերմանների կողմից գրի լայն գործածության հետևանքով միանում են նաև հեղինակներ, որոնք սերում են հենց գերմանական ժողովուրդներից: Դրանք մեծ մասամբ **պատմական** ժամանակագրություններ են, որոնցում մասամբ խոսվում է նաև գերման այս կամ այն ժողովրդի դիցաբանական մշակույթի մասին, օրինակ, Գրիգոր Տուրացու (6-րդ դ.) «Ֆրանկների պատմությունը», Յորդանեսի (6-րդ դ.) «Գոթերի ծագման և գործերի պատմությունը», Բեդա Պատվելիի (7-8-րդ դդ.) «Անգլ ժողովրդի եկեղեցական պատմությունը», Պողոս Դիակոնուսի (8-րդ դ.) «Լանգոբարդների պատմությունը»: Համեմատաբար առավել հարուստ է դիցաբանական պատմություններով Սաքսոն Քերականի (12-13-րդ դդ.) «Դանների պատմությունը», որի մասին արդեն խոսվել է:

Ի մի բերելով հնագիտական տեղեկություններն ու գրավոր հարուստ վկայությունները՝ բանասիրությունը հնարավորություն է ունենում խոսել գերմանական ժողովուրդների դիցաբանության և կրոնական պատկերացումների մասին իբրև համակարգ: Նման մոտեցման առաջին փայլուն օրինակը տալիս է Յա. Գրիմմը, որի «Գերմանական դիցաբանություն» եռահա-

[34] Այն հանգամանքը, որ գերմանների աստվածները ներկայանում են հռոմեական դիցարանի անուններով...

[35] Տե՛ս Тацит, նշվ. աշխատությունը, էջ 357:

տոր հիմնարար աշխատությունը (1835), ռոմանտիզմի գեղագիտության, պատմահամեմատական դիցաբանության և լեզվաբանության համադրություն լինելով, մեծապես նպաստում է գերմանագիտության, հատկապես դիցաբանության զարգացմանը առայսօր: 20-րդ դարում գերմանական դիցաբանության շուրջ ուսումնասիրությունները զարգացում են ապրում շնորհիվ Ժ. Դե Ֆրիզի, Հ. Գյոլլի, Ռ. Սիմեկի, Ժ. Դյումեզիլի, Մ. Էլիադեի և մի շարք այլ միֆաբան գիտնականների հետազոտությունների: Նշանակալից է հատկապես Ժ. Դյումեզիլի և Մ. Էլիադեի ներդրումը: Հնդեվրոպական հասարակություններում և դիցաբանության մեջ երեք՝ քրմական, ռազմական և հողագործական գործառույթների մասին իր հանրահայտ տեսության դրույթները տարածելով գերմանասկանդինավյան դիցաբանության վրա՝ Ժ. Դյումեզիլը գտնում է երեք կարևոր հատկանիշներ, որոնք այդ դիցաբանությունն օժտում են անսովոր գծերով: Առաջինն այն է, որ գերմանասկանդինավյան դիցաբանության մեջ երկրորդ, այսինքն՝ ռազմական գործառույթը գերազանցում է թե՛ առաջինին՝ քրմականին, և թե՛ երրորդին՝ հողագործականին: Այս տեսանկյունից բնավ պատահական չէ Կեսարի հիշատակած տեղեկություններն այն մասին, որ գերմանները խուսափում են հողագործական աշխատանքներից՝ ռազմական գործի հանդեպ հետաքրքրությունը չկորցնելու համար: Դյումեզիլի կարծիքով՝ ռազմական գործառույթի գերակշռության արդյունք է նաև երկրորդ հատկանիշը, այն է՝ գերմանական կրոնն ամբողջությամբ կրում է «անհանգիստ, ողբերգական, հոռետեսական» բնույթ: «Նման ոչ մի բան,- գրում է ֆրանսիացի գիտնականը,- չունեն ոչ կելտերը, ոչ իտալիկները, ոչ վեդայական հնդիկները»: Սկանդինավյան աստվածները,- գրում է նա,- հավանաբար նաև մայրցամաքային գերմանների աստվածները բարոյական առումով մոտ են իրենց շուրջը եռացող մարդկությանը և ընդգծում՝ Օդինը (Վոթան) սիրում է խաբել: Երրորդ գիծը վախճանաբանությունն է, որի համաձայն մարդկության պատմությունը հակված է դեպի կործանումն ու անկումը, որից զերծ չեն անգամ աստվածները[36]:

Ընդգծելով գերմանական կրոնի վրա կելտական, հռոմեական, արևելյան, քրիստոնեական, հյուսիս-ասիական նշանակալից ազդեցությունները՝ Մ. Էլիադեն միաժամանակ ընդգծում է «գերմանների կրոնի նախասկզբնա-

[36] Տե՛ս Дюмезиль Ж., Верховные боги индоевропейцев, М., 1986, էջ 137-138:

կան միասնությունը», ինչը մասամբ հետևանք է հնդեվրոպական ժառանգության[37]:

Գերմանասկանդինավյան կրոնի առանձնահատուկ գծերից կարելի է առանձնացնել ևս մի քանիսը, օրինակ՝ աշխարհարարումը և համաշխարհային ծառը (Իգդրասիլ)[38], երկու բանակների՝ ասերի և վաների տևական կռիվները, աստվածների նկատմամբ հաճախ կիրառվող ինիցիացիայի սովորույթը և այլն: Ըստ էության, գերմանների կրոնական և դիցաբանական պատկերացումների համակարգում պետք է դիտարկել նաև ռունական գրերը:

Գերմանների վաղնջական էպոսը ուսումնասիրելու առումով չափազանց արժեքավոր դիտարկում ունի Տակիտոսը: «Հին բանաստեղծական երգերում,- գրում է նա,- իսկ գերմաններին հայտնի է անցյալի մասին պատմելու միայն այդ տեսակը և միայն այդպիսի ժամանակագրություններ (Annalen), նրանք փառաբանում են հողածին աստված Տուիստոնին»[39]: Անշուշտ, խոսքը էպիկական երգերի մասին է, որոնք փառաբանում են ոչ միայն գերմանների հեթանոս աստվածներին, այլև հերոսներին, որոնցով նույնպես հարուստ է էպիկական դարաշրջան ապրած գերմանների պատմությունն ու բանահյուսությունը: Հին գերմանական «Հիլդեբրանդի երգը», անգլասաքսոնական «Բեովուլֆը» և իսլանդական «Ավագ Էդդան» եվրոպական արխաիկ էպոսի կարևոր և հանրահայտ էջերից են:

ANCIENT GERMANS AND THEIR CULTURE

ARAKELYAN ARA
Doctor of Philology, Professor
YSU, GSU Lecturer
e-mail: arakelara1@gmail.com
GRIGORYAN VACHAGAN
Doctor of Philology, Professor
The Head of the Chair of Armenian Language and Literature
e-mail: vachik_grigoryan@mail.ru

[37] Տե՛ս Элиаде М., История веры и религиозных идей, т. 2, М., 2002, էջ 132:

[38] Աշխարհարարման առավել ամբողջական պատկեր առկա է իսլանդական «Վոլվայի գուշակությունը» («Ավագ Էդդա») և Սնորրի Ստուրլուսոնի «Գյուլվիի տեսիլքը» սագաներում:

[39] Тацит, նշվ աշխատությունը, էջ 354:

ISKANDARYAN NAIRA
Associate professor of GSU
e-mail: isnaira123456@gmail.com
KOSYAN ANUSH
YSU Master Student
e-mail: kosyananush97@mail.ru

The article is dedicated to common problems of Germanic history and culture. Special attention is paid to the identity and typology of Germanic people, to testimonies of antique and medieval historians about their [Germanic] history and culture. As for the features of mythology, the article mentions Caesar's and Tacitus's evidences and commentaries of Georges Dumézil and Mircea Eliade.

***Key words**: Germans, great migration of peoples, theory of three social functions, eschatology, world tree, runic letters.*

ДРЕВНИЕ НЕМЦЫ И ИХ КУЛЬТУРА

АРАКЕЛЯН АРА
Доктор филологических наук, профессор
Преподаватель ЕГУ и ГГУ
электронная почта: arakelara1@gmail.com
ГРИГОРЯН ВАЧАГАН
Доктор филологических наук, профессор
Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ
электронная почта: vachik_grigoryan@mail.ru
ИСКАНДАРЯН НАИРА
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ
электронная почта: isnaira123456@gmail.com
КОСЯН АНУШ
Магистр ЕГУ
электронная почта:kosyananush97@mail.ru

Статья посвящена трактовке общих проблем истории и культуры германцев. Особое внимание уделяется идентичности и типологии этих народов, свидетельствам античных и средневековых авторов об истории и культуре гер-

манских народов. В плане особенностей мифологии, отмечены сведения Цезаря и Тацита, комментарии Жоржа Дюмезиля и Мирчи Элиаде.

Ключевые слова: *германцы, болшое переселение народов, теория трех социальных функций, эсхатология, мировое дерево, рунические письма.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.10.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՏԴ 81
DOI: 10.56246/18294480-2023.14-19

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՐՍԻԿ
ԳՊՀ, ՀՊՄՀ դասախոս, ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ varsik.nersisyan@mail.ru

Արդի հայերենի համաժամանակյա բառակազմության ոլորտում առկա մի շարք խնդիրների լուծման ուղիներ փնտրելու նպատակով պայմանավորված՝ անհրաժեշտություն կա անդրադառնալու տարբեր լեզվաբանների համապատասխան ուսումնասիրություններին, տեսական վերլուծություններին: Սույն ուսումնասիրությունը կատարելիս փորձ է արվել բացահայտել Մանուկ Աբեղյանի ընդհանուր մոտեցումներն ու սկզբունքները բառակազմության հարցերում, ներկայացնել բաղադրյալ բառերի՝ մասնավորապես բարդությունների դասակարգման վերաբերյալ նրա ըմբռնումներն ու սկզբունքները: Անդրադարձ է կատարվել հարցի վերաբերյալ այլ հետազոտողների ուսումնասիրություններին ևս՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելով նրանց հիմնական եզրահանգումներն ու գնահատականները:

Մ. Աբեղյանը բառերն ըստ կազմության բաժանում է երկու տեսակի՝ պարզ և բաղադրյալ, բաղադրյալ բառերը՝ բարդ և ածանցական տեսակների: Բարդ բառերը սահմանում է որպես երկու բառից, ածանցական բառերը՝ մի բառից կամ արմատից և մի ածանցից կազմված բառեր: Բարդ բառերը բաժանում է հարադրական (հարադրական բայեր, բաղհյուսական հարադրություններ, կրկնավորներ), կցական և իսկական բարդությունների՝ դրանցից յուրաքանչյուրը ենթարկելով մանրակրկիտ վերլուծության, համապատասխանաբար ներկայացնելով բազմաթիվ օրինակներ: Առանձնացրել է նաև առաջադիրներով բաղադրություններ տեսակը:

Բանալի բառեր՝ *Մանուկ Աբեղյան, բառակազմություն, արմատ, ածանց, բարդություն, բարդության տեսակներ:*

Նշանավոր հայագետ Մանուկ Աբեղյանը (1865-1944), ինչպես հայտնի է, իր ուսումնասիրության նյութ է դարձրել հայ հին և միջին մատենագրությունը, հայ ժողովրդական բանահյուսությունը, հայոց լեզուն: Մ. Աբեղյանի գիտական գործունեությանն անդրադարձել և իրենց գնահատականն են տվել տարբեր հայագետներ. գիտնականի կյանքը և գործունեությունն առանձին ուսումնասիրության նյութ են դարձել Սարգիս Հարությունյանի կողմից, որի գնահատմամբ՝ **«Աբեղյանի լեզվաբանական գործունեությունը շարունակությունն ու ավարտը եղավ այն պայքարի, որ բորբոքվել էր նախորդ հարյուրամյակի կեսերին գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև: Թեպետ այդ պայքարը զգալի լինելուց արտաքնապես դադարել էր, բայց խուլ ձևով շարունակում էր հարատևել մինչև ընթացիկ դարասկզբները, հասնելով նույնիսկ մեր օրերը»**[1]:

Ըստ Հովհաննես Բարսեղյանի՝ «**Լինելով լեզվի խոշոր տեսաբան՝ Մ. Աբեղյանն զբաղվել է հայերենի բառային և քերականական կառուցվածքի համարյա բոլոր տեսական հարցերով, միաժամանակ այս կապակցությամբ անդրադարձել է լեզվի կառուցվածքի տրամաբանական և հոգեբանական բազմաթիվ իրակությունների. վերջապես, Մ. Աբեղյանը նաև մի շարք դասագրքերի հեղինակ է**»[2]: Աբեղյանը լեզվաբանական բազմաթիվ հոդվածների, աշխատությունների հեղինակ է, «…որոնք, ըստ մեծի մասի, աշխարհաբարի քերականության, ուղղագրության և այդպիսի գործնական ուսուցողական խնդիրների են վերաբերում: Այդ աշխատություններից են՝ **«Աշխարհաբարի քերականութիւն»** (Թիֆլիս, 1907, բ. Տպ. 1910), **«Աշխարհաբարի շարահիւսութիւն»** (Վաղարշապատ, 1912), **«Գրաբարի համառօտ քերականութիւն»** (Վաղարշապատ, 1907, բ. տպ. 1936) դասագրքերը: **«Աշխարհաբարի հոլովները»**, (Վաղարշապատ, 1908), **«Հայցական հոլովը մեր աշխարհաբարում»** (Վաղարշապատ, 1908) աշխատություններում ներկայացնում է հինգ հոլովի տեսությունը. երկրորդը նախորդի վերաբերյալ Ստ. Մալխասյանցի գրած քննադատության պատասխանն է, որում դարձյալ մերժում է հայցական հոլովի գոյությունը[3]: Աբեղյանի լեզվաբանական ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են նրա **«Հայոց լեզվի տեսություն»** (Երևան, 1931) արժեքավոր աշխատության մեջ:

---

[1] Ս. Հարությունյան, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Ե., 1979, էջ 487:

[2] Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980, էջ 165:

[3] Տե՛ս Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե. 1962, էջ 134:

Այն բաղկացած է վեց մասից՝ ներածություն, հնչյունաբանություն, բառակազմություն, ձևաբանություն. վեցերորդ մասը, որ միայն հինգ էջ է գրավում, շարահյուսությունն է. այդ մասի համար հեղինակը հանձնարարում է յուր «Աշխարհաբարի շարահյուսություն»-ը[4]: Հայտնի է, որ Մ. Աբեղյանը քերականագիտության մեջ ստեղծել է այսպես կոչված ֆորմալիստական ուղղությունը, որի էությունը Է. Աղայանը ձևակերպում է հետևյալ կերպ. «...բոլոր քերականական բնորոշումների հիմքում դնելով միայն ձևական առանձնահատկությունների սկզբունքը, նա խոսքի մասերի դասակարգման մեջ նույնացնում է. ա) գոյականներն ու դերանունները, բ) ածականները, մակբայները և դերբայները, որով և ընդունում է բառերի երեք խումբ (=երեք խոսքի մաս)... գոյականներ, ածականներ, բայեր. միջարկությունը, իբրև խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարող բառեր, հանում է խոսքի մասերի շարքից: Նույն սկզբունքից ելնելով, ուղղական ու հայցական հոլովը նույնացնում է իրար և չի ընդունում առանձին հայցական հոլովի գոյությունը աշխարհաբարում, սեռականն էլ նույնացնում է տրականին: Բայը նույնացնում է ստորոգյալի հետ, որով և իբրև բայ, փաստորեն ընդունում է միայն դիմավոր ձևերը, իսկ դերբայները բաժանում է ածականի զանազան խմբերի միջև: Այս սկզբունքներով էլ ահա ուսումնասիրում է աշխարհաբարի քերականական կառուցվածքը, բառակազմությունը, հնչյունա-բանությունը»[5]: Եթե «Աշխարհաբարի քերականության» և «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ «Աբեղյանը արևելահայերենի իրակությունները քննում է համաժամանակյա (սինխրոնիկ) մեթոդով և բավարարվում է մեծ մասամբ լեզվի բաղադրիչ մասերի նկարագրությամբ և նրանց բաղադրության օրենքների սահմանումով միայն, ապա «Հայոց լեզվի տեսության» մեջ նա կիրառում է հետազոտության տարժամանակյա (դիախրոնիկ) մեթոդը և արևելահայերենի հնչյունաբանական, բառագիտական ու ձևաբանական իրակությունները ուսումնասիրում նրանց պատմական զարգացման ընթացքում: Նա այստեղ լեզվական բաղադրիչների ոչ միայն նկարագրող է և դրանց բաղադրությունների օրենքները սահմանող, այլև դրանց **գիտական մեկնաբանող**»[6]:

Անդրադառնալով բառակազմության հարցերի քննությանը՝ Ս. Հարությունյանն իրավացիորեն նշում է, որ մինչև Աբեղյանը հայերենի բառակազ-

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Նշվ. Աշխ., էջ 148:

[6] Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 553:

ման համակարգը մշակել էին գրաբարի քերականներ Գ. Ավետիքյանը, Ա. Բագրատունին, իսկ նոր հայերենի հետազոտողներն (Ա. Այտընյան, Ստ. Պալասանյան) «իրենց անդրանիկ քերականություններում արդեն կարևոր տեղ էին հատկացնում աշխարհաբարի բառակազմության ձևերին»: Հարությունյանը համառոտ ներկայացնում է, թե այս ուղղությամբ ինչ աշխատանքներ են կատարել վերջիններս, և թե ինչ սկզբունքով է Աբեղյանը բաժանել բառերն ըստ կազմության, ինչ փոփոխություններ է կատարել **«Հայոց լեզվի տեսության»** մեջ **«Աշխարհաբարի քերականության»** համեմատությամբ[7]: ««**Աշխարհաբարի քերականութիւն»-ը, որ կարելի է որակել Աբեղյանի քերականագիտական համակարգի ու հասկացությունների խտացված միկրոաշխարհ, իր հետ բերում էր նաև նոր հայերենի բառակազմության նրա մշակած այն սիստեմը իբրև հիմնակմախք, որն իր մարմնավորումը գտավ փոքր-ինչ ուշ գրված «Հայոց լեզվի տեսության» մեջ**»[8]: Թեև քերականագիտական այդ ուղղությունը (ֆորմալիստական) մերժելի է և վաղուց մերժվել է, սակայն **«Մ. Աբեղյանն էր, որ խորապես ուսումնասիրելով աշխարհաբարը, կարողացավ հրաժարվել գրաբարյան կամ կիսագրաբարյան քերականական սխեմաներից, աշխարհաբարի քերականությունն ուսումնասիրելով ինքն իրենով և իր մեջ, որպես յուրահատուկ համակարգ, և ստեղծել այդ համակարգն արտացոլող քերականական սխեման՝ անկախ գրաբարյան սխեմայից»[9]:** Ըստ Է. Աղայանի՝ «Հայ քերականագիտական գրականության մեջ անուշադրության մատնված բնագավառներից մեկն է եղել բառագիտությունը: Մենք ունեցել ենք հիանալի բառարաններ, բայց չենք ունեցել բառագիտություն: **Մ. Աբեղյանն իր ուսումնասիրություններով հիմնադրեց բառագիտությունը որպես լեզվի գիտական ուսումնասիրության կարևորագույն ճյուղերից մեկը՝ իր երկու բաժիններով (իմաստաբանություն և բառակազմություն),** և վերջին տարիներում այդ ուղղությամբ կատարված աշխատանքները դեռ հեռու են տեսական այն մակարդակին հասնելուց, որ ներկայացնում են «Հայոց լեզվի տեսություն» աշխատության «Բառերի նշանակությունը (իմաստաբանություն)» և «Բառակազմություն» գլուխները» (ընդգծումը՝ Վ. Ն.)[10]: Է. Աղայանի գնահատմամբ՝

[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 572-573:

[8] Տե՛ս նշվ. աշխ., էջ 573:

[9] Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 149-150:

[10] Նշվ. աշխ., էջ 151:

«…**եթե Ս. Պալասանյանը ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրության հիմքը դրեց, ապա Մ. Աբեղյանը ստեղծեց ժամանակակից հայոց լեզվի գիտական քերականությունը**»[11]:

Ինչպես նշում է Հ. Բարսեղյանը, **«Մ. Աբեղյանի քերականական համակարգում լեզվական վերլուծության հիմնական միավորը բառն է: Քերականության երեք մասերում (ինչաբանություն, բառագիտություն, շարահյուսություն) նա բառը ենթարկում է ինչյունական, բառագիտական և շարահյուսական վերլուծությունների»[12]:** Ս. Հարությունյանն իրավացիորեն նկատում է, որ Այտընյանն իր ուսումնասիրություններով դառնում է աշխարհաբարի բառակազմական համակարգի առաջին գիտական մշակողը, իսկ Ստ. Պալասանյանը, հետևելով նրան, համառոտակի ուրվագծում է արևելահայերենի բառակազմության մի քանի ձևեր: Չնայած դրան՝ հայոց լեզվի բառակազմության խոր ու համակարգված գիտական ուսումնասիրությունը պատկանում է Մ. Աբեղյանին[13]:

Բառակազմության հարցերին Աբեղյանն անդրադարձել է նախ **«Աշխարհաբարի քերականութիւն»** աշխատության մեջ՝ հետևյալ բաժիններում՝ **«Բառերի տեսակներն ըստ կազմութեան», «Ձայնափոխութիւն», «Յօդակապ», «Ք ածանց», «Բարդութիւն», «Ածանցում», «Անորոշ դերբայի կազմութիւնը»**՝ վերջինիս մեջ առանձին-առանձին անդրադառնալով «պարզ, սոսկածանց, բազմապատկական, պատճառական, կրաւորական» բայերին[14]: Աշխատության մեջ բարդ բառերը սահմանվում են որպես երկու բառից կազմված, իսկ ածանցականները՝ մի բառից կամ արմատից և մի ածանցից կազմված բառեր[15]:

«Հայոց լեզվի տեսության» մեջ Մ. Աբեղյանը բառակազմության հարցերին անդրադարձել է նախ ներածական բաժնում՝ բնութագրելով լեզվական իրակություններն ընդհանրապես[16], իսկ ավելի հանգամանորեն՝ «Բառակազմություն» բաժնում (տե՛ս ՀԼՏ, էջ 167-297)՝ հետևյալ բաժանումներով՝ **բառերի տեսակներն ըստ կազմության, հարադրական և կցական բար-**

---

[11] Նշվ. աշխ., էջ 151-152:

[12] Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 166:

[13] Տե՛ս Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 573:

[14] Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականութիւն, Դասագիրք ստորին դասարանների համար, Վաղարշապատ, 1906, էջ 79-95:

[15] Տե՛ս նշվ. աշխ., էջ 80:

[16] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն (այսուհետև՝ ՀԼՏ), Ե., 1965, էջ 5-12:

դություններ, իսկական բարդություն, առաջադիրներով բարդություններ, ածանցում, անվանական վերջածանցներ, դերբայական վերջածանցներ: Ներածական բաժնում ածանցների և վերջավորությունների տարբերությունները ցույց տալու նպատակով որպես օրինակ է բերում **քաղաք** բառի նշանակությունը՝ **ացի, ային, իկ** ածանցներով կազմված **քաղաքացի, քաղաքային, քաղաքիկ** բառերում, որոնցից և ոչ մեկը **քաղաք** չի նշանակում (տե՛ս ՀԼՏ, էջ 6): «Դրանք բոլորովին տարբեր բառեր են տարբեր նշանակությամբ,—գրում է հայագետը,—դրա համար և այնպիսի ձևական մասերը, որոնցով կազմվում են տարբեր նշանակությամբ նոր բառեր, կոչվում են **բառակազմության ձևական մասեր** (մասնիկներ) կամ **ածանցներ** (ածանցական մասնիկներ), իսկ նրանցով կազմված բառերը կամ ձևերը՝ **բառակազմության ձևեր** կամ **ածանցական բառեր**» (ՀԼՏ, էջ 6): Ըստ Աբեղյանի՝ «Բառերի նյութական նշանակությունը ձևափոխող այսպիսի ընդհանուր հնչյունական մասերի նշանակությունը կոչվում է **ձևական նշանակություն.** ձևական նշանակություն ունեցող բառամասն ինքը կոչվում է ձևական մաս, իսկ իրական կամ նյութական նշանակություն ունեցող բառամասը՝ **բառի բուն**» (նույն տեղում): Նույն՝ **քաղաք** բառին ավելացնելով հոլովական վերջավորություններ՝ ցույց է տալիս, որ այդ դեպքում բառի նշանակությունը չի փոխվում: Նույնը ցույց է տալիս բայի խոնարհման վերջավորություններով: «Ուստի և այս երկրորդ տեսակի ձևական մասերը կոչվում են **բառափոխության ձևական մասեր** (մասնիկներ) կամ **վերջավորություններ**, իսկ նրանցով կազմված ձևերը՝ **բառափոխության ձևեր** կամ **բառաձևեր**» (ՀԼՏ, էջ 7): Բառաբները բաժանում է երկու տեսակի՝ «1. **ածանցական բներ**, որոնք իրենց կողմից կազմված են մի բնից և մի ձևական մասից (լինի ածանց թե վերջավորություն), և 2. **նախատիպ կամ արմատական բներ**, որոնք այլևս չեն վերածվում բնի և ձևական մասի: Այս երկրորդ տեսակի բները կոչվում են նաև **բառերի արմատներ**, որոնց մեջ է պարունակում նույն խմբին պատկանող բառերի գլխավոր նյութական նշանակությունը» (ՀԼՏ, էջ 9): **«Բառերի արմատները որոշելիս,**— գրում է Աբեղյանը,— **պետք է միշտ նկատի ունենալ լեզվի զարգացման շրջանները, որովհետև լեզուն միշտ փոփոխվում է, ուստի ինչ որ արդի լեզվի մեջ արմատ է, լեզվի մի անցյալ շրջանում կարող է մի ածանցված բառ լինել. ինչպես օրինակ՝ «դանակ» բառը.... այժմ այլևս մեզ համար ածանցական բառ չէ, այլ մի արմատական բառ, քանի որ մեր լեզվի մեջ այժմ «դան» բառ չկա «դանակ» նշանակությամբ, և «դանակ» չի նշանակում փոքր դանակ, ինչպես որ եղել է հին**

լեզվի մեջ, երբ անկախ գործածվելիս է եղել «դան», որից «դանակ» նվազականը» (նույն տեղում)**:** Նշում է, որ «հայերենի արմատները պետք է տարբերել լեզվաբանական կամ սկզբնական արմատներից, որոնք ստացվում են հնդեվրոպական լեզուների համեմատությամբ և մեր լեզվի ու սրան ցեղակից լեզուների հնագույն բաղադրիչ մասերն են» (տե՛ս ՀԼՏ, էջ 9-10): Կարծում ենք՝ արմատների վերաբերյալ դիտարկումն արդիական է նաև մեր օրերում, քանզի երբեմն տարակարծություններ են առաջանում զանազան ուսումնական ձեռնարկներում բառակազմությանը վերաբերող առաջադրանքների առնչությամբ. զարմանալիորեն դրանցում երբեմն հայտնվում են բառեր, որոնց կազմությունը տարակարծությունների տեղիք է տալիս մասնագետների շրջանում, իսկ դպրոցահասակ սովորողներից, չգիտես ինչու, պահանջվում է որոշել տվյալ բառի կազմությունը, որ հաճախ արմատական է լինում և միայն ստուգաբանորեն է վերլուծելի: Աբեղյանը նկատում է, որ «Լեզվի մեջ նոր արմատներ այլևս չեն ստեղծվում, բացի նմանաձայնության կամ բնաձայնության արմատներից, ինչպես՝ **գլլալ, դռռալ** և այլն, որոնց կազմությունը դեռևս կենդանի է՝ բնության թողած անմիջական տպավորության տակ. այլ եղած արմատներից և բառերից, որ հայերենին անցել են հնդեվրոպական նախալեզվից կամ առնվել են ուրիշ լեզուներից, կազմվել են և կազմվում են նոր բառեր» (ՀԼՏ, էջ 10):

«Բառերի տեսակներն ըստ կազմության» բաժնում ներկայացնում է **«Հին և նոր բաղադրություններ»** ենթաբաժինը, որտեղ տարբերակում է երկու տեսակի բաղադրություններ. մեկը՝ հին, մեռած բաղադրություններ, որոնք ծագում են հնդեվրոպական նախալեզվից և կամ նախագրաբարյան շրջանում կազմված են նախալեզվյան օրինակի համեմատ, և մյուսը՝ նոր, կենդանի բաղադրություններ, որոնք կազմված են գրաբարյան և ետգրաբարյան շրջաններում կա՛մ դարձյալ նախալեզվյան օրինակի համեմատ և կա՛մ սրանից անկախ, մեր լեզվի մեջ զարգացած եղանակով(տե՛ս ՀԼՏ, էջ 167-168): Որպես հին բաղադրությունների օրինակ է բերում **հլու (հու«լավ»+ լու«լուր, լուի, լու») «լավ լսող», հմուտ (հու+զօր) «լավ զորեղ», հզօր (հու +մուտ) «լավ թափանցված մի բանի մեջ, ներհուն, խելամուտ»** քարացած ձևերը, որոնցում առկա է **հը<հու** արմատը, որը որպես անկախ բառ չէր գործածվում նաև գրաբարում(տե՛ս ՀԼՏ, էջ 167- 168): Ինչպես խոսքի մասերի դասակարգման դեպքում է առաջնորդվում շարահյուսական սկզբուն-

քով[17], այնպես էլ բարդության տեսակները ներկայացնելիս հիմք է ընդունում **բաղադրիչների շարահյուսական կապը. հայերենի բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են երկու սկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի շարահյուսական կապակցությունից, որ ըմբռնվում է իբրև մի առանձին բառական միություն, մեկ բառ՝ մեկ նշանակությամբ** (տե՛ս ՀԼՏ, էջ 169): Նկատում է, որ երբեմն դժվար է լինում տարբերակել «շարահյուսական կապակցությունը» բարդ բառերից, և դա հիմնավորում է նրանով, որ «...կան աստիճանավորումներ, մինչև որ երկու բառի շարահյուսական կապակցությունը զարգանա և իբրև մեկ բառ զգացվի: Օրինակ՝ մի ժամանակ աշխարհաբարում գրում էին առանձին-առանձին «**այս օր**» (ինչպես՝ *այս շաբաթ, այս ամիս, այս տարի*), իսկ այժմ գրում են միացած՝ «**այսօր**» (տե՛ս ՀԼՏ, էջ 169): Այդ աստիճանավորումները նկատի ունենալով՝ բարդությունները բաժանում է երեք տեսակի՝ **հարադրություններ, կցական բարդություններ, իսկական բարդություններ**: **«Հարադրական և կցական բարդություններ»** բաժնում հարադրական բայերի մասին գրում է, որ դրանք հաճախ մեկ բառով են փոխարինվում (**բաց անել, բանալ**), թեև որոշ դեպքերում դրանք չեն փոխարինվում (**երես տալ, երես առնել**) (տե՛ս ՀԼՏ, էջ 170): **Հարադրական բայերը** բաժանում է մի քանի տեսակի. **1. Անել, լինել** բայերով և **մի հարադիրով կազմված**, որ որոշում է բայի բովանդակությունը, ինչպես՝ **ջանք անել (ջանալ), բան անել (բանել), ոտնակոխ լինել** ևն (տե՛ս նույն տեղում): 2.**Հարադրականներ**, որոնցում բայը պահում է իր նշանակությունը, և հարադիր մասը, «սովորաբար մի տեղական անուն կամ մակբայ, միայն ձևափոխում է, զորացնում կամ պարզում է բայի նշանակությունը, ինչպես՝ **դուրս գալ. վեր գալ** ևն» (տե՛ս նույն տեղում): **«Այս բաղադրությունները համապատասխանում են օտար լեզուների նախաբայերով կազմված կամ նախդրավոր բայերին**,— գրում է Աբեղյանը,— **բայց մինչ ուրիշ լեզուների մեջ հարադիրը հաճախ բայից անբաժան մաս է դարձած, ինչպես ռուսերենում, կամ բայի հետ միանում է, երբեմն բաժանվում, ինչպես գերմաներենում է, մեր լեզվի մեջ այս կարգի բայերի հարադիր մասերն ավելի անկախություն ունին և միշտ անջատ են գրվում, ու խոնարհման ժամանակ հարադիրն ու բայը մեկմեկուց բաժանվում են օժանդակ «եմ» բայով»** (ՀԼՏ, էջ 171): Թեև ժողովրդական խոսքում «կը» և «չը» ձևական մասնիկները դրվում են ոչ թե

[17] Տե՛ս Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 163-205:

բայի, այլ հարադրի վրա… (տե՛ս ՀԼՏ, էջ 171): 3. Կան բազմաթիվ հարադրական բայեր, որոնք իրենց հարադիր մասի հետ «սկզբնապես եղել են մտածության առանձին շուռ տված ձևեր, **շրջաբանական ասություններ**, բայց հետզհետե սրանց պատկերավոր կամ ձևավոր նշանակությունը և շարահյուսական կապակցությունը մթնել է, և այդպիսի կապակցություններն ստացել են վերացական բայերի իմաստ: Օր.՝ **պար գալ, պար ածել**, սկզբնապես մտածվել և ասվել են «ի պար գալ», «ի պար ածել», այսինքն՝ պարի մեջ գալ, պարի մեջ բերել («ածել» հին լեզվի մեջ նշանակում է «բերել»), ապա հետագայում ստացել են «պարել», «պարել տալ» նշանակությունը: Միաժամանակ նկատում է, որ **«Լեզվի մեջ եղած բոլոր շրջաբանական կապակցությունները կարելի չէ հարադրական բայ համարել, այլ միայն այնպիսիները, որոնց շարահյուսական կապակցության եղանակը այլևս զգալի չէ խոսողի համար, և կամ հարադիրը մենակ անկախ չի գործածվում»** (ՀԼՏ, էջ 173): Հարադրական է համարում նաև այնպիսի «դարձվածները», որոնց շարահյուսական կապակցությունը թեպետ հասկանալի է, բայց բայն ու հարադիրը միասին, իմաստի փոփոխությամբ, ստանում են մի նոր, ընդհանուր նշանակություն: Այսպիսի բայերի հարադիրը հոդ չի առնում, ինչպես՝ **վրեժ առնել, վրեժ խնդրել, երես տալ** ևն: «Այսպիսի կապակցությունները, երբ հարադիրը հոդ է առնում, դառնում են դարձյալ սովորական շարահյուսական. ինչպես՝ նա վրեժ առավ թշնամիներից, նա իր **վրեժն** առավ թշնամիներից: Ես նրան ձայն տվի. ես իմ **ձայնը** տվի նրան» (տե՛ս ՀԼՏ, էջ 173): 4. **Միացած մի ընդհանուր նշանակություն են ստանում երկու բայի հարադրությունները:** Այս դեպքում էլ երկու կից բայերն առնվում են իբրև մեկ բայ, և գրության ժամանակ երկուսի մեջ ստորակետ դնելն ավելորդ է, օր.՝ **պոկվել ընկնել, մեռնել պրծնել, սովորել պրծնել**….ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 174):

«**Կցական բարդություն հարադրական բայերից**» բաժնում հանգամանորեն ներկայացնում է գրաբարում իբրև հարադիր բայեր գործածված բայերից կցականների առաջացումը, բերում է համապատասխան օրինակներ՝ **ակն ածել՝** արդեն գրաբարում՝ **ակնածել** «պատկառել», **ի գործ ածել** «գործածել», որից՝ **գործածություն, հանձն առնել** (գրաբար՝ **յանձն առնուլ**)՝ **հանձնառու, վրեժ խնդրել՝ վրեժխնդիր** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 174): Ժողովրդական լեզվի մեջ հաճախ կազմվում են կցական բարդություններ ոչ միայն հարադրական բայերից, այլև ամեն բայից ու իր լրացումից: Այսպիսի բարդությունները վերջից սովորաբար ունին մի ածանցական մասնիկ: Օրինակ՝

իրար անցնել-իրարանցում, սիրտ կոտրել- սիրտկոտրում... ևն (բերում է բազմաթիվ օրինակներ, Վ. Ն.)» (ՀԼՏ, էջ 175): Վերջում նշում է, որ երևույթը հատուկ է նաև նոր գրական հայերենին (տե՛ս ՀԼՏ, էջ 175):

«Բաղհյուսական բարդություններ» բաժնում գրում է. «Հաճախ նույնանիշ և համանիշ (մոտիկ նշանակություն ունեցող) բառերը «ու» (և) շաղկապով, կամ «առ» շաղկապի հարադրվելով՝ առնվում են իբրև մեկ բառական միավոր» (ՀԼՏ, էջ 176): «Այս հարաբերությամբ սաստկանում կամ զորանում է բառի իմաստը» (ՀԼՏ, էջ 176): Նշում է, որ այսպիսի բառերով կազմվում են նաև հարադիր բայեր՝ **ջարդ ու բուրդ անել, հալ ու մաշ լինել...** ևն: Առանց շաղկապի՝ կարող են գրվել գծիկով՝ **լռիկ-մնջիկ, ցիր-ցան** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 176): Այս կարգին է պատկանում նաև այնպիսի բառերի հարադրությունը, որոնք իրենց նշանակությամբ «որևէ առնչություն ունին միմյանց հետ», բայց հարադրվելով՝ չեն պահում յուրաքանչյուրն իր նշանակությունը, այլ միասին մի նոր ընդհանուր, երբեմն հավաքական իմաստով են առնվում իբրև մի բառական միություն: Միանում են «ու» (և) շաղկապով կամ գրվում են առանց կետադրության, երբեմն միանում են գծիկով. օր.՝ **աս ու լիս** (սկզբնապես՝ ասել ու լսել, ապա զրույց, խոսակցություն, ուրիշի վրա վայրիվերո զրույց), **եփ ու թուխ**, **կանաչ-կարմիր** (ծիածան), **ձյուն-ձմեռ** ևն: Մի առանձին տեսակ է համարում իրար հաջորդող թվականների (միավոր և տասնավոր) միացումները, որոնց մեջ թվականները չեն պահում իրենց նշանակությունը, այլ երկուսը միասին մի մերձական անորոշ թիվ են ցույց տալիս (**մեկ-երկու, մի-երկու, երկու-երեք, հիսուն-վաթսուն** ևն): Բաղհյուսական բարդությունները հոլովվում և հոդ են առնում որպես մեկ բառ՝ **անց ու դարձեր, անց ու դարձից** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 176-177): Հանգամանորեն ներկայացնում է կցական բարդությունների առաջացումը բաղհյուսական հարադրություններից: «Մի անգամ, որ մեր լեզվական զգացումով հոդի և հոլովվելու նկատմամբ՝ բաղհյուսական հարադրություններն իբրև մի բառական միություն են ըմբռնվում, վերջիվերջո դրանք ձգտում են կցվելու իբրև մեկ բառ և մեկ դառնալու: Կան և այնպիսիները, որ արդեն միացած են գրվում իբրև մեկ բառ, ինչպես՝ կերուխում, անցուդարձ, եռուզեռ, ասուլիս, մինուճար: Կան և այնպիսիները, որ արդեն միշտ միացած են գրվում՝ այրուձի, առուտուր, տարուբեր, երթևեկ, ելևէջ ևն» (ՀԼՏ, էջ 177): «Այսպիսի բառերի կցմանն իբրև հիմք ծառայում է ոչ միայն այն, որ դրանց նշանակությունը բոլորովին փոխվում է, և դրանք իբրև մեկ բառ են հոլովվում ու հոդ առնում, այլև այն, որ հարադրության անդամներից մեկը կամ երկուսն էլ մենակ ու

անկախ չեն գործածվում, կամ թե դրանցից նոր բառեր են կազմվում, որոնք միացած են գրվում, և այս նոր բառերի անալոգիայով նաև դրանց բունը միացած է գրվում: Այս պայմաններից մեկը միայն բավական է այդ բառերը միացած գրելու համար. բայց երբեմն ազդում են բոլոր պայմաններն էլ միասին: Օր.՝ **առուտուր, առևտուր**, որ նշանակում է՝ առնել ու տալ, միացած է գրվում, որովհետև ստացել է «վաճառականության» նշանակություն, և դրանից էլ կազմված է **առևտրական** բառը» (տե՛ս ՀԼՏ, էջ 177): Բերում է նմանատիպ մի շարք օրինակներ և բացատրում:

«Կցական բարդություններ վերադրի և **իր գոյականի**, **այլև ուրիշ շարահյուսական կապակցությունների»** բաժնում նախ անդրադառնում է **սեռական+վերադիր** կաղապարին՝ *հորեղբայր, մորեղբայր*: Գրում է, որ գրաբարից ունենք բառեր, որոնցում սեռականները հնացած են, և բառերը կորցրել են շարահյուսական նշանակությունները: Օր.՝ *շանսափակ, շնջրի* (ջրշուն), *արենտեր* (արյունտեր) ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 179): «Ավելի հաճախ միանում են իբրև մի բառ **ածական վերադիրն ու իր գոյականը**, երբ առաջինը կամ ավելի երկրորդը իբրև անկախ բառ չի գործածվում, կամ երկուսից մի նոր նշանակությամբ բառ է կազմվում. ինչպես՝ *հարյուր ամ, հազար ամ, բայց հարյուրամյա, հազարամյա, հիսուն ամ, տասն ամ, բայց*՝ *հիսնամյակ, տասնամյակ*... ևն» (նույն տեղում): Այսպես և ուրիշ բարդություններ՝ *ամպհովանի, հինավուրց, կինարմատ* ... ևն (տե՛ս նույն տեղում): «Միացած գրվում են և ուրիշ բառեր, որոնց քերականական ձևերը հնացած են, կամ շարահյուսական կապակցությունները, մանավանդ երբ նախդիրներով են, անհասկանալի են, և կամ առնչվում են իբրև մի բառ մի նոր նշանակությամբ, օրինակ՝ այսուհետև, այնուհետև, որովհետև... ևն» (նույն տեղում): Կան հարադրություններ էլ, որ կազմված են ամբողջ խոսքերից, ինչպես՝ *որևէ, ովևէ, ինչևէ, ովևիցե, տերողորմյա* (համրիչ, հարմեղիկ)... ևն: Այսպես և ուրիշ բառի՝ հաճախ իրար հետ դրվելով՝ վերջիվերջո ձգտում են միանալու, ինչպես՝ **նաև (նա և), այլև (այլ և), նա՛մանավանդ** (տե՛ս նույն տեղում): **Ե)** Թվականները՝ **տասնումեկ, տասնևմեկ, տասներկու, ...տասնևվեց, տասնյոթը** ևն: «Քսանից սկսած՝ «և» շաղկապով սովորաբար անջատ են գրվում՝ քսան և մեկ, քսաներկու ևն» (նույն տեղում): Որպես գծիկով գրվող բարդություններ է ներկայացնում **երկու-գլխանի, երեք-աչքանի, իր-ասածի, ոչ-գեղեցիկ** և նման բաղադրություններ (տե՛ս նույն տեղում):

Կրկնավորներ: Հարադրության մի առանձին տեսակն է նույն բառերի կրկնությունը, որով կազմվում են կրկնավոր բառերը: Կրկնվում են սովորա-

բար կարճ՝ միավանկ, երբեմն՝ «երկվանկ» բառերը, որոնք գրվում են անջատ, երբեմն միանում են «ու» (և) շաղկապով կամ գծիկով: Այնուհետև առանձին-առանձին ներկայացնում է գոյականների կրկնությունները, որոնցով կազմվում են «որակական ածականներ, որոնք կարող են իբրև մակբայ գործածվել (կերպ կերպ, փունջ փունջ, թել թել ևն»: Սրանք, ըստ Աբեղյանի, բազմակիության, զանազանության նշանակություն են ստանում, ուստի սովորաբար դրվում են հոգնակի գոյականի հետ (տե՛ս ՀԼՏ, էջ 180-181): Դերանունների կրկնությունները, սովորաբար «ու» շաղկապով, ստանում են բազմակիության նշանակություններ, երբեմն ցույց են տալիս մենակ, առանձին մի բան անելը, օրինակ՝ **ո՞վ ո՞վ, ո՞վ ու ո՞վ, ինձ ու ինձ** ևն(տե՛ս նույն տեղում): Ածականների և մակբայների կրկնությունը սովորաբար սաստկացնում է ածականների իմաստը՝ միացնելով նաև բազմակիության նշանակությունը, ուստի գործ են ածվում սովորաբար հոգնակի գոյականների հետ, ինչպես՝ **ծանր ծանր խոսքեր, սուր սուր փշեր** ևն: Իբրև մակբայ գործածվելիս ցույց են տալիս գործողության կրկնություն, երբեմն նաև՝ առարկայի վիճակը, դրությունը, **մանր մանր փրթել, ուշ ուշ գալ, հիվանդ հիվանդ տեղից վեր կացավ** ևն (տե՛ս նույն տեղում): Թվականների կրկնությունը, բացի բազմակիությունից, ստանում է նաև բաշխական նշանակություն(տե՛ս ՀԼՏ, էջ 182): **Հնչյունների կրկնությամբ կրկնավորները** ներկայացնում է հետևյալ բաժանումով. 1. Երկրորդ մասի մեջ ձայնավորը փոխվում է «ու» ձայնավորի՝ **ծակ ու ծուկ (ծակծուկ), մարդ-մուրդ** ևն: 2. Երկրորդ մասի մեջ բաղաձայնը փոխվում է ուրիշ բաղաձայնի, սովորաբար՝ «Մ», ինչպես՝ **հաց ու մաց, սուտ-մուտ, պարապ-սարապ** ևն: 3. Երկրորդ մասի սկզբում ավելանում է մի բաղաձայն, սովորաբար «Մ». ինչպես՝ ոլոր-մոլոր, **ավել-մավել** ևն: 4. Առաջին մասի սկզբում դուրս է ընկնում բառասկզբի բաղաձայնը՝ **այլուն-փայլուն, ավալ-թավալ գալ, առոք-փառոք, ապաղ-ճապաղի գալ (հանկարծաման լինել)՝ ճապաղել՝ փռվել** բայից, ևն: 5. Ածականների առաջին վանկի փոփոխություն՝ **կափ-կանաչ, սեփ-սև** ևն (տե՛ս նույն տեղում):

«Կցական բարդություններ կրկնավորներից» ենթաբաժնում գրում է, որ մեծ թվով կրկնավոր բառեր կան, որոնք միացած իբրև մեկ բառ են գրվում, առավելապես այնպիսիները, որոնց քերականական կապակցությունը մթագնած է կա՛մ նախդիրներով միանալու, կա՛մ հնչյունների փոփոխության պատճառով, կա՛մ թե նրա համար, որ դրանցից նոր բառեր են կազմվում՝ **գույնզգույն, պատիպատ, դեմառդեմ, թրթիռ, թրթռալ ևն, հին լեզվից՝ հեղեղ, խորխորատ, միմյանց** (**մի մի**) ևն: Հին լեզվից ունենք նաև

իսկական բարդություններ՝ **շեղջաշեղջ, նորանոր** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 182-183): **Կրկնավոր կամ կրկնական բայերը** ցույց են տալիս գործողության կրկնություն կամ բազմազանություն. կազմվում են արմատի կրկնությամբ, հարադիրների դեպ-քում՝ հարադիրի կրկնությամբ՝ **վեր վեր ընկնել, ետ ետ գնալ, վառվռել, կցմցել** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 183): Այսպիսի կրկնավորներ հաճախ կազմվում են բնաձայնություն ցույց տալու համար՝ **ճվճվալ, ծվծվալ** ևն, բաղաձայնների փոփոխությամբ՝ **թռվռալ, գռմռալ** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 184):

Նախդրավոր կազմությունների մասին գրում է. «Բայերի վրա դրվող նախդիրները կամ, ինչպես ասում են, «նախաբայերը»,—որ մեծ տեղ են բռնում հնդեվրոպական հին լեզուների մեջ, ինչպես՝ հունարենում ու լատիներենում, իսկ նոր լեզուներից՝ ռուսերենում ու գերմաներենում - հայերենում նախագրաբարյան շրջանում արդեն գործածությունից դուրս են եկել» (ՀԼՏ, էջ 184): «Նախդիրներին փոխանակել են սովորաբար մակբայները, ինչպես, օրինակ, գրաբարում՝ ի բաց գնալ, փակել ի ներքս… ևն, կամ նախդրով դերանուն խնդիրները, օրինակ՝ կոչել առ ինքն, առնուլ ընդ իւր ևն» (ՀԼՏ, էջ 184): **Ս,Դ, Ը** հոդով, ինչպես՝ **մեջը մտցնել, մոտս կանչեցի…** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 184): «Գրաբարում կան նաև սակավաթիվ բայեր, որոնց սկզբից միացած կա մի նախդիր: Այսպիսի բայերի մեծ մասը, սակայն, իսկական նախդրավոր բայեր չեն, այսինքն՝ նախաբայի և բայի հարադրությամբ չեն կազմված, այլ նախդիրները նախ դրված են անունների վրա, և ապա նոր կազմվել են բայեր այդ նախդիրը ունեցող անուններից» (ՀԼՏ, էջ 185): Այնուհետև առանձին–առանձին հանգամանորեն ներկայացնում է նախդրավոր կազմությունները. **զգետնել, առշեղել, առձեռել, ըստանձնել, ընդբերանել …** ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 185-189):

Ինչպես իրավացիորեն նշում է Ս. Հարությունյանը, «Բառակազմության վերաբերյալ Աբեղյանի հայացքների տեսական խորությունն ու նրբությունները դրսևորվում են հատկապես **իսկական բարդությունները** քննելու ժամանակ, երբ բարդ բառերի նկատմամբ հայերենի հին ու նոր վիճակների պատմա-համեմատական վերլուծություններով երևան է հանում բառաբարդությունների առաջացման և զարգացման էական օրինաչափությունները»[18]:

Իսկական բարդությունները ներկայացնում է երեք կետերով. 1. «Բարդության երկու մասերի մեջ մտնում է Ա ձ.ը, որ կոչվում է հոդակապ. բայց երբ բաղադրիչ մասերից երկրորդը սկսվում է ձայնավորով (ա, օ, ու, է, ի, ը),

[18] Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 578:

այն ժամանակ երկու բառի մեջ հոդակապ չի մտնում. ինչպես՝ զորագունդ, բայց՝ թանաքաման: Բառասկզբի «յե» և «վո» կապակցությունների «յ» և «վ» հնչյուններն այս դեպքում դուրս են ընկնում. ինչպես՝ «յեկ», բայց «նորեկ», «վորակ», բայց՝ «վատորակ»: 2. Բարդության առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական հոլովը, օրինակ՝ **մարդ-ա-սեր:** 3. Բարդության առաջին անդամի վերջի փակ վանկի ձայնավորները մնալով անշեշտ՝ կրում են ձայնափոխություն, օր.՝ **երկիր- երկրագունդ, թռչուն-թռչնորս, մատյան-մատենավար»** (ՀԼՏ, էջ 189)**:**

Հանգամանորեն ներկայացնում է հոդակապը, նրա ծագումը, գործածությունը (տե՛ս ՀԼՏ, էջ 190-193): Հոդակապը ներկայացնում է որպես բառաբնի «ա» ձայնավոր. «Ինչքան էլ այս եղանակը ծագած է շարահյուսական կապակցությունից, չպիտի կարծել, թե այդ եղանակով բարդված բառերը բոլորը շարահյուսական կապակցություն են կազմել. որովհետև նույնիսկ հնդեվրոպական մայր լեզվի այն շրջանում, երբ առանձին լեզուներ են առաջ եկել, գոյություն չի ունեցել **մաքուր** բուն առանց վերջավորության: Ուստի այս եղանակով բարդված բառերն ամենամեծ մասով անալոգիական կազմություններ են այնպիսի նախնական բաղադրությունների նմանությամբ, որոնք շարահյուսական կապակցությունից են ծագած եղել: Բացի այդ՝ բառաբնի «ա» ձայնավորն անալոգիայով անցել է և այնպիսի բառերի բարդության, որոնք «ա» ձայնավորով բուն չունին...» (ՀԼՏ, էջ 190): Ներկայացնելով **անհոդակապ բարդությունները**՝ նախ բերում է օրինակներ հին լեզվից, որոնցում կա հոդակապ, որը դուրս է ընկնում բառի աճմանը զուգընթաց, ինչպես՝ արծաթասեր- արծաթսիրություն, ընկերասեր-ընկերսիրություն … ևն: Թե՛ հին, թե՛ նոր լեզվի մեջ կան բազմաթիվ բառեր, որոնք կազմված են բաղաձայնից առաջ առանց «ա» հոդակապի: «Այդ բառերի մի մասն ունին նաև հոդակապով ձևեր և հաճախ դժվար է որոշել, թե այդպիսի բառերը սկզբնապես առանց հոդակապի են կազմվել և հետագայում երկրորդաբար հոդակապով ձևեր են առաջ եկել, թե՞ ընդհակառակն, առանց հոդակապի ձևերը հոդակապով ձևերի սղումն են» (ՀԼՏ, էջ 193): Իբրև օրինակ է բերում **խրատտու-խրատատու, զինավոր-զինվոր** և այլ բառեր: Սրանց կողքին կան նաև առանց հոդակապի՝ **ջրվեժ, ջրմուղ, ջրկալ …** և այլ ձևեր (տե՛ս ՀԼՏ, էջ 193): **Իսկական բարդությունների** կազմությունը ներկայացվում է հետևյալ կետերով. **1. Գոյականի ու ածականի միացումով**՝ *ծալպակաս, երեսբաց* ևն: 2. **Ածականի և գոյականի միացումով**՝ *բացբերան, բացգլուխ, նեղսիրտ* … ևն: **3.Երկու գոյականի միացումով՝** *ջրհոր, արևմուտք* և այլ

բառերի անալոգիայով նաև՝ *մեջկապ, արևշող, բակդուռ* … ևն: **4.Անվան և բայարմատի միացումով,** որ շատ սովորական է ժողովրդական լեզվում, մանավանդ երբ բայարմատի ետևից որևէ մասնիկ է լինում, ինչպես՝ **ի, իկ, ուկ, ում, անք, իչ, ուք, ոց, իք.** *ծամկալ, դեղդիր, քարհափ, ականջմտիկ, բրինձքամիկ, բանջարաբուսիկ* ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 196):

Բարդության առաջին անդամը, ինչպես տեսանք, է՛ ուղղական հոլովը. 1. Գրաբարում կան բառեր, որոնք գործ են ածվում միշտ, կամ սովորաբար, հոգնակի ք-ով իբրև անեզական բառեր, օր.՝ *կառք, փառք, խելք, կյանք* … ևն: Բառակազմության ժամանակ առնվում է սրանց եզակին՝ առանց ք-ի՝ *կառավար, փառապանծ, խելառ* … ևն: Աշխարհաբարում ևս պահվում է այս կանոնը, թեև ք-ն այլևս հոգնակիի իմաստ չի արտահայտում: Կան նաև ք-ով կազմություններ՝ *կրծքաբաց, հանքափոր* ևն: 2. Այս նույն զարգացումն է առաջ եկել Ն, Ղ, Ր բներն ունեցող բառերի նկատմամբ՝ *ականափես, ականակուռ*, բայց նաև՝ *ակնախփիղ, ակնակապիճ* ևն: 3. Հին լեզվում «ըն» վերջացած բառերի վերջի «ըն» մասը նոր լեզվի մեջ դուրս է ընկել, օր.՝ ուսումն-ուսում, մատն, մատ ևն: Բառակազմության ժամանակ, ինչպես և հոգնակի թվի մեջ, սակավ բացառությամբ, այսպիսի բառերի վերջի «ն» տառը վերականգնվում է՝ ուսումնասեր, մատնացույց ևն: 4. Հարադրական բառերի կցումից, ինչպես տեսանք, կազմվում են կցական բարդություններ. դրանցից «կեանսուսոյց» բառը, ենթարկվելով ձայնափոխության, դառնում է՝ «կենսուսոյց»: Կան այսպիսի բազմաթիվ բառեր: Այսպիսով «կյանք» բառից բարդությունների համար առաջ է եկել *կեանս, կենս* ձևը, փոխանակ *կեան, կեն* ձևի (տե՛ս ՀԼՏ, էջ 195-201):

Ձայնափոխությունը ներկայացնելիս նկատում է, որ երբ բառակազմության ժամանակ բառն աճում է, այսինքն՝ բառի վերջից նոր վանկ կամ վանկեր են ավելանում, ձայնավորները, շեշտից զրկվելով, փոփոխության են ենթարկվում: Հանգամանորեն ներկայացնում է ձայնավորների և երկբարբառների հնչյունափոխությունը, բերում համապատասխան օրինակներ (տե՛ս ՀԼՏ, էջ 198-201): Բառակազմության ժամանակ բաղաձայնների փոփոխություն առաջ է գալիս միայն **ռ** և **ր** բաղաձայնների նկատմամբ, այն էլ հին լեզվի մեջ, այն է՝ արմատական Ն հնչյունից առաջ ընկնում է Ռ հնչյունը, բայց վերջինս, երբ հեռանում է Ն հնչյունից, դառնում է Ր. օրինակ՝ *ամառն-ամարան-ամարային*(տե՛ս ՀԼՏ, էջ 201): Խոսելով իսկական բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերության մասին՝ գրում է. **«Ինչքան էլ իսկական բարդության մեջ շարահյուսական կապակցության ձևն**

իբրև այնպիսին անհետացած է, բայց և այնպես երկու բաղադրիչ մասերի շարահյուսական հարաբերության զգացումը մնում է» (ՀԼՏ, էջ 201): Ըստ Աբեղյանի՝ սակավաթիվ են համադասական հարաբերությամբ կապակցված բաղադրիչներով բարդությունները (*տեղատարափ՝ տեղ ու տարափ, ազգատոհմ՝ ազգ ու տոհմ* ևն): Սովորաբար բարդության բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է (հացատուն, սևահող ևն) (տե՛ս ՀԼՏ, էջ 201): Անվանական բաղադրություններն ըստ շարահյուսական հարաբերության բաժանում է հետևյալ կերպ. Ա. Գոյականների, ածականների, բայարմատների բարդություն գոյականների հետ. 1. **Զորագունդ, անձրևաջուր, երկնակամար** ևն, 2. **Սևահող, մեծամարդ, չորաթան** ևն, 3.**Զբոսավայր, ածաման, պահաման** ևն: 4.Գոյականների ու ածականների բաղադրություն ածականների հետ՝ **լուսապայծառ**՝ լույսի պես պայծառ, մեծապայծառ՝ մեծապես պայծառ, սրտաբաց՝ սիրտը բաց ևն: Գ. Գոյականների և ածականների բաղադրությունը մի բայարմատի կամ բայաբնի հետ՝ 1. **Գերեդարձ՝** գերիների դառնալը, **զորաժողով՝** զորք ժողովելը, զորակոչ՝ զորքի մեջ կանչելը: 2. **Բազմաչարչար**՝ շատ չարչարված, արագագնաց՝ արագ գնացող ևն: Երբ առաջին մասը գոյական է, ստանում է զանազան հոլովների, նախադրությունների, հետադրությունների նշանակություն: Ուղղականի նշանակությամբ՝ *սրտամեռ՝ սիրտը մեռած, տնաքանդ՝ տունը քանդված* ևն: Հայցականի և զանազան նախդիրների նշա-նակությամբ՝ *մարդասեր՝ մարդ սիրող, գետնամուտ՝ գետինը մտնող, երկնահաս՝ մինչև երկինք հասնող* ևն: Սեռականի նշանակությամբ՝ *ջրատար՝ ջրի տարած, գայլակեր՝ գայլի կերած* ևն: Տրականի նշանակությամբ՝ *գրավարժ՝ գրի վարժված, խավարասովոր* ևն: Բացառականի նշանակությամբ՝ *երկրաբույս՝ երկրից բուսած, հողածին՝ հողից ծնված* ևն: Գործիականի նշանակությամբ՝ *ալեզարդ՝ ալիքով զարդարված, ձյունապատ՝ ձյունով պատած* ևն: Ներգոյականի նշանակությամբ՝ *խավարաբնակ՝ խավարում բնակող, տնասուն՝ տանը սնված* ևն: Հաճախ միևնույն բարդությունը կարող է տարբեր նշանակություններով հասկացվել, օրինակ՝ լավատես՝ 1. *լավը տեսնող,* 2. *լավ տեսնող* ևն (տե՛ս ՀԼՏ, էջ 202-207):

Ուշադրության արժանի է **«Առաջադիրներով բաղադրություններ» բաժինը**, որտեղ գրում է. «Առանձին տեղ են բռնում մի քանի մակբայներով կամ նրանց արմատներով և մի քանի բայարմատներով ու մասնիկներով բաղադրությունները, որոնք մասամբ կազմված են ուրիշ լեզուների «նախաբայավոր» կամ նախդրավոր բաղադրությունների նմանությամբ և նույնիսկ

երբեմն այնպես, որ հակառակ մեր սովորական բաղադրության եղանակին, երկրորդ բաղադրիչն է դառնում լրացում առաջինին: Օր.՝ **միջագետք, արտակարգ, գերբնական, ստորերկրյա, մակբայ** նշանակում են՝ գետերի մեջ (գետամեջ), արտաքո կարգի կամ կարգից դուրս, բնականից վեր (գեր քան զբնական), գետնի տակի (գետնատակի), բայի վրա (դրվող). մինչդեռ սովորական բաղադրության եղանակով դրանք պիտի նշանակեին՝ միջի գետեր (ինչպես՝ միջաթաղ—միջի թաղ), դրսի կարգ, գերապես բնական ինչպես՝ (գերամաքուր, չափազանց մաքուր), ստորին կամ տակի երկրի, վրայի բայ (ինչպես՝ մակերևույթ—վրայի երևույթ)» (ՀԼՏ, էջ 207-208): «Այդ ձևական բառերի նշանակությամբ բառերի մի մասը՝ **մեջ, վեր, վայր, առաջ, ետ, դեմ, շուրջ**, թե՛ գրաբարի և թե՛ աշխարհաբարի մեջ սովորական բառեր են, ետադրություններ կամ մակբայներ, որոնցով կազմվում են, ինչպես տեսանք, հարադրյալ բայեր և կցական բարդություններ (§80.2.81). սովորական բառեր են նաև՝ **փոխ, շար, նախ, ստոր, զույգ**, միայն բարդությունների մեջ սովորական նշանակությամբ չեն առնվում, ուրիշները՝ **անդր, այսր, բաց (ի բաց), պար, թափ, տար, հար (յար)** գրաբարից են մտած նոր գրական լեզվի մեջ, բայց մենակ իբրև անկախ բառ չեն բաց (ի բաց), պար, գեր թափ, տար, հար (յար) գրաբարից են նաև մնացածները՝ **արտ, ներ, մակ, դեր, ենթ, հակ, համ** (համայն), **համ** (զույգ), **վեր** (վերստին) **տրամ հեղ** (յեղ), **բաղ**, որոնք գրաբարում արդեն անկախ գործածություն չունին. սրանք կամ կիրառությունից դուրս ընկած հին բառեր են, կամ մակբայների ու բայերի արմատներ: Այս առաջադիր բառերի մի մասը դարձած են արդեն առաջադիր մասնիկներ կամ նախամասնիկներ. այսպես են՝ **ենթ, համ, տրամ** ևն» (ՀԼՏ, էջ 208): Նկատում է, որ այս ձևական բառերով ու մասնիկներով հունարենի հետևողությամբ բառեր են կազմել հունական դպրոցի թարգմանիչները՝ փիլիսոփայական լեզվի բառերը ճշտությամբ արտահայտելու համար, և այդ բառերի մեծ մասը «արվեստական» է համարում: Յուրաքանչյուր առաջադիրի մասին հանգամանորեն խոսելուց հետո ներկայացնում է նաև օտարաբան կազմությունները: Որպես առաջադիրներ է ներկայացնում՝ **անդր, առաջ, արտ, բաղ, բաց, գեր, դեմ, դեր, զույգ, թափ, թափա, թեր, թերա, կանուխ, հակ, համ, համայն, հար, հեղ, հետ, մակ, մեջ, մինչ, ենթ, ետ, հետ, նախ, ներ, շար, շաղ, շուրջ, պար, ստոր, վայր, վեր, տար, տրամ, փոխ:** Որպես բացասական մասնիկներ է ներկայացնում **ան, ապ, դժ, տժ, տ, չ** (տե՛ս ՀԼՏ, էջ 207-222):

Եզրակացություններ: Այսպիսով՝ Մ. Աբեղյանը բառերն ըստ կազմության բաժանում է երկու տեսակի՝ պարզ և բաղադրյալ, բաղադրյալ բառերը՝ բարդ և ածանցական տեսակների: Բարդ են այն բառերը, որ կազմված են երկու բառից, ածանցական բառերը կազմված են մի բառից կամ արմատից և մի ածանցից: Բարդ բառերը բաժանում է **հարադրական (հարադրական բայեր, բաղհյուսական հարադրություններ, կրկնավորներ)**, **կցական** և **իսկական բարդությունների՝** դրանցից յուրաքանչյուրը ենթարկելով մանրակրկիտ քննության, ներկայացված բազմաթիվ օրինակների հանգամանալից վերլուծությամբ: Առանձնացրել է նաև **առաջադիրնով բաղադրություններ** տեսակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականութիւն, Դասագիրք ստորին դասարանների համար, Վաղարշապատ, 1906:
2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
3. Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962:
4. Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:
5. Ս. Հարությունյան, Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Ե., 1979:

CLASSIFICATION OF COINED WORDS IN THE WORKS BY MANUK ABEGHYAN

NERSISYAN VARSIK
PHD in Philology, Associate Professor
GSU, ASPU lecturer, Senior Researcher at the NAS RA
Institute of Language
e-mail: varsik.nersisyan@mail.ru

In order to find ways to solve the issues in the sphere of synchronous word-formation of the Armenian language, there is a strong need to analyze relevant works and theoretical studies of various linguists. The author of the given paper has made an attempt to study Manuk Abeghyan's approaches and principles in the sphere of work-formation, to present his vision and principles of classifying the coined words, particularly, the compound words. In the framework of this paper, the author studies the works by other scholars as well, presenting their findings and evaluation, if necessary.

M. Abeghyan divides words into two types: simple and coined words. Coined words are classified into compound and affixal ones (words with affixes). According to Abeghyan, compound words are those consisting of two words and affixal words are those consisting of one word or root and one affix. Abeghyan brings forward his own classification of compound words dividing them into analytical (analytical verbs, syntactic relations, iterative), connective, native phrases. He studies each type in detail giving numerous examples. Abeghyan distinguishes a particular type which he calls "prefix combinations".

Key words: *Manuk Abeghyan, word-formation (word building), root, affix, compound word, types of compound words.*

КЛАССИФИКАЦИЯ ПРОИЗВОДНЫХ СЛОВ В ТРУДАХ МАНУКА АБЕГЯНА

НЕРСИСЯН ВАРСИК
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ, АГПУ, старший научный сотрудник
Института языка НАН РА
электронная почта: varsik.nersisyan@mail.ru

С целью нахождения путей решения проблем, существующих в сфере синхронного словообразования современного армянского языка, есть необходимость обратиться к соответствующим трудам и теоретическим исследованиям разных лингвистов. В ходе данного исследования автором была предпринята попытка выявить подходы и принципы Манука Абегяна в области словообразования, представить его понимание и принципы классификации производных и, в частности, сложных слов. В рамках статьи автор обращается и к трудам других исследователей, по мере необходимости представляя их выводы и оценки.

М. Абегян слова по составу делит на два типа: простые и производные. Последние Абегян делит на сложные и аффиксальные. Абегян считает сложными слова, состоящие из двух слов, а аффиксальными – слова, состоящие из одного слова или корня и одного аффикса. Абегян предлагает также свою классификацию сложных слов, группируя их в аналитические (аналитические сложные глаголы, соединительные сочетания, итеративные) и соединительные, исконные словосложения, детально исследуя каждый тип, приводя многочисленные примеры по каждому типу. Абегян выделяет также отдельный тип, названный им «префиксальные сочетания».

Ключевые слова: *Манук Абегян, словообразование, корень, аффикс, сложное слово, типы сложных слов.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 13.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ՊԱՌԱՎԻ ԿԵՐՊԱՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՃՅՈՒՂՈՒՄ

ՀՏԴ 82
DOI: 10.56246/18294480-2023.14-20

ՂԱՐԻԲՅԱՆ ԱԼԻՆԱ
ԳՊՀ դասախոս
Էլփոստ՝ alinagharibyan@rambler.ru

«Սասնա ծռեր» էպոսում՝ կանանց կերպարների շարքում, իր ուրույն տեղն ունի պառավի կերպարը: Տարբեր պատումներում այս կերպարն ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ զանազանություններ՝ հաճախ միահառնելով էթնիկական-առասպելական ու ծիսական հատկանիշներ: Այս աշխատանքում ձգտել ենք տարբեր պատումների առաջին ճյուղի ընձեռած նյութի հիման վրա սփռանալ կերպարի ընդհանրությունների և յուրահատկությունների ամբողջական պատկերը: Փորձել ենք քննությունը կատարել հայ ժողովրդական հեքիաթների և այլ ժողովուրդների բանահյուսության մեջ պառավի կերպարի զուգահեռների հետ համեմատությամբ: Քննությունը կատարել ենք ըստ պառավի գործառույթների՝ նվիրագործման և որդեգրման ծեսեր իրացնողի, խորհրդատուի, հրաշագործ օգնականի, զգուշացնողի և հիմնականը գործառույթներից մեկի՝ միջնորդի դերակատարի: Պառավի շուրջ հյուսված մոտիվաշարերը հիմնականում կրում են հնագույն առասպելների, հեքիաթների ազդեցությունը, և պառավի կերպարը այս ճյուղում գրեթե ամբողջությամբ կրում է հեքիաթի ազդեցությունը: Առաջին ճյուղում Պառավի ընդգծված հեքիաթային որակների պատճառով էպոսը ամբողջապես չի յուրացրել այս կերպարը, այսինքն՝ պառավը շատ հարազատ հերոս չի դառնում էպոսի համար, որով էլ կարելի է բացատրել պատումներում նրա ներկայության սակավադեպությունը:

Բանալի բառեր՝ *էպոս, պատում, կանացի կերպարներ, պառավ, գործառույթ, մոտիվ, հեքիաթ, դիցաբանություն, ծես, միջնորդ:*

Ներածություն

Պառավի կերպարը, տարածված լինելով աշխարհի շատ ժողովուրդների առասպելներում, ծեսերում և ավանդություններում, ներկայանում է կա՛մ

անունով, կա՛մ անձանվան բացակայությամբ: «Պառավ» ընդհանրական անունը տարբեր ուսումնասիրողների մոտ ստացել է տարբեր մեկնաբանություններ:

Մարդաբանական դպրոցի ներկայացուցիչ անգլիացի Ջ. Ֆրեզերը, նկատի ունենալով ցանքսի և հնձի հետ կապված ծեսերն ու ծիսակատարությունները, նկատում է, որ ժողովրդական առասպելներում և ստեղծագործություններում աստվածները ունեն անուններ, օրինակ՝ Դիոնիսոս, Պերսեփոնե, Դեմետրա և այլն, ու պարունակում են նրանց վարքագրությանը և խառնվածքներին վերաբերող տվյալներ: Նշում է նաև, որ աստվածների գործունեությունը չի սահմանանափակվում բնության կոնկրետ բնագավառով, այլ ավելի ընդգրկուն է և տարածվում է անկենդան ու կենդանի բնության ամենատարբեր ոլորտների վրա: Ի տարբերություն աստվածների՝ ոգիների ազդեցության ոլորտը սահմանափակվում է բնության կոնկրետ բնագավառով, և նրանց նվիրված ծեսերը ավելի մոգական, քան գթաշարժ հատկություն ունեն, նրանց կատարման համար չկան հատուկ առանձնացված տեղեր կամ մարդկանց որոշակի խմբեր: Ծեսերի գործող անձինք՝ գերբնական էակները, ոչ այնքան աստվածներ են, որքան ոգիներ, որոնք չունեն այսպես կոչված վարքագրություն և ամենակարևորը՝ կրում են տոհմական անուններ, օրինակ՝ Գարու մայր, Պառավ, Կույս, և ոչ թե անձնանուններ[1]: Հայ ազգագրագետ և բանագետ Վ. Բդոյանը նույնպես շատ հետաքրքիր բացատրություն ունի «Պառավ» ընդհանրական անվան վերաբերյալ: Ըստ գիտնականի՝ «Պառավը հասարակ անուն չէ, այլ հեթանոսության շրջանի Անահիտ աստվածուհու ծպտյալ[2] անունը… Ծպտված Անահիտը, շատ տեղերում Սևերես Պառավը կամ պարզապես Պառավը քրիստոնեական կրոնի սկզբնական շրջաններում հասկացվելիս է եղել Անահիտ դիցու-

[1] Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան» հր., 1989, էջ 482-483:

[2] Ծպտումի երևույթը. միմյանց հաջորդող կրոններից մերժվածի պաշտամունքը հալածանքների պատճառով ենթարկվում է ծպտումի՝ ընդհատակ անցնելու: Նոր կրոնի մեջ ծպտվածը պաշտվում է աննկատելիորեն…Ծպտում հասկացությունն այնպիսի երևույթներից է, ինչպիսին վերապրուկ-մնացուկը, կերպարանափոխությունը, անձնավորումը, կենդանակերպավորումը և մարդակերպավորումը, սակայն դրանցից ոչ մեկի հետ չի նույնանում… Քանի որ կրոնների մեջ ծպտումի ենթարկվողը հալածվողն է, հավատացյալների գլուխներում ընդհատակ է անցնում, մի տեսակ պատենավորվում է այլ երևույթներով և դրանով ապահովում է իր գոյությունը (տե՛ս Վ. Հ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 452):

հի: Բայց հետագայում Պառավ անունը վեր է ածվել հասարակ գոյականի այն պատճառով, որ իրեն փոխարինած մենաստվածությունը և մանավանդ Մարիամ աստվածածինը հաստատուն տեղ է գրավել: Անահիտը այդ շրջանում ծպտվել է հենց Մարիամ անվան տակ, բայց հետո իսպառ մոռացվելով՝ իր ամբողջ պաշտամունքը թողել է վերջինին»[3]: Պառավի կերպարը հետաքրքրական դրսևորումներ ունի մեր էպոսի տարբերակներում՝ պատումից պատում հանդես բերելով ինչպես ընդհանրություններ, այնպես էլ զանազանություններ՝ հաճախ միախառնելով առասպելական ու ծիսական հատկանիշներ: Այս աշխատանքում դիտարկում ենք այդ կերպարը՝ փորձելով հրապարակված և առաջին ճյուղ ունեցող բոլոր պատումների ընձեռած նյութի հիման վրա ներկայացնել հիշյալ յուրահատկությունները, ստանալ կերպարի ամբողջական նկարագիրը: Միաժամանակ, փորձում ենք քննությունը կատարել այլ ժողովուրդների բանահյուսության մեջ պառավի կերպարի զուգահեռների հետ համեմատությամբ:

Պառավի կերպարը բանահյուսության մեջ

Այս կերպարը, ամենանատարածվածը լինելուց բացի, նաև աչքի է ընկնում կայուն գործառույթներով՝ անկախ էթնիկական և բանահյուսական ժանրերի տարբերություններից:

Պառավի կերպարը այն քիչ հանդիպող երկրորդական կերպարներից է, որոնց հետ հանդիպումը կամ որոնց խորհուրդը դառնում է սկիզբ հերոսի կարգաբերված և գիտակցված գործողությունների համար: Պառավը հերոսին ուղեկից Մայրն է, որ նրան պիտի հասցնի այն նպատակին, ինչին կոչված է: Այսպիսով՝ ժողովրդական բանահյուսության մեջ նվիրագործման ծեսը իրացնող կարևորագույն կերպարներից մեկը Պառավն է: «Սասնա ծռեր» էպոսում այն հանդես է գալիս պատումների սկզբում, այլ կերպ ասած՝ հերոսների մանկության կամ պատանեկության շրջանում, և հերոսի գործողություններն ու հատկանիշները բնութագրվում են առասպելական մայր-որդի հարաբերությունների տեսանկյունից:

Առասպելաբանական մակարդակում Պառավը կարող է իբրև Մեծ մայր կամ Մայր դիցուհի հանդես գալ որպես Կույս և Մայր դիցուհիների երրորդ դրսևորում «Այս իմաստով իգական աստվածությունը համարվում է բացառիկ՝ բազմաթիվ տարբեր ամրոցներով, այսինքն. «Բոլոր աստվածուհիները

[3] Նույն տեղում:

մեկ աստվածուհի են». Այնուհետև ենթադրվում է, որ այս Աստվածուհին ունի երեք դեմքեր կամ կյանքի փուլեր. սրանք այն են, որ ունեցել են Կույսը, Մայրը և Քրոնը (Maiden, Mather, Crone - MMC): Այս փուլերից հետո հատկանիշները որոշակիանում են և օգտագործվում են ոչ միայն փուլերը նշելու, աստվածուհու փուլերը, այլ նաև՝ բոլոր կանանց կյանքի փուլերի համար»[4]: Նման դեպքերում այս կերպարը հանդես է բերում Մեծ մորը բնորոշ շատ ընդհանրական հատկանիշներ[5], և անձնանունը գրեթե պարտադիր է դառնում[6]՝ ինչպես հունական առասպելաբանությունից հայտնի Հեկատեն[7], Հեկալան[8], Հինդու աստվածուհի Կալի[9] կամ Կալի Ման, որը հաճախ նույնպես դիտվում է որպես Կրոնայի (Crone) ասպեկտի օրինակ:

Պառավը կարող է բանահյուսական տարբեր ժանրերում (դյուցազնավեպ, հեքիաթ[10], ծիսական երգեր՝ գութանի երգերում[11]) հանդես գալ «պառավ» ընդհանրական անունով՝ իրացնելով կերպարին բնորոշ՝ նվիրագործման ծիսարարի, խորհրդատուի, հրաշագործ օգնականի, միջնորդի, որդեգրության ծեսը իրացնողի գործառույթներ: Պառավի կերպարը շատ տարածված է նաև ծիսական, հմայական արարողությունների ժամանակ, երբ «պառավ, տատ» բառերին ավելանում են մի շարք մակդիրներ՝ Հացի մայր, Գարու մայր, Հնձի մայր, Մեծ մայր, տատիկ, պառավ տատիկ, ծերունի[12],

---

[4] Сорита Д'Эсте для Adamantine Muse, Профанация Гекаты: Дева, Мать или Богиня Старуха?// Draco Scandere, https://vk.com/@ignis_nox-profanaciya-gekaty-deva-mat-ili-boginya-staruha.

[5] Рабинович Е. Г., Богиня-Мать // МНМ, т 1, Москва, Советская энциклопедия, 1980, с. 178-180: Նույն տեղում, Баба-Яга, с. 149 /с.-671/ Мать прародительница // Энциклопедия знаков и символов,

[6] Мелетинский Е. М., Австралийская мифология // МНМ, т. 1, Москва, 1980, Советская энциклопедия, с. 29-32:

[7] Тахо-Годи А. А., Геката // МНМ, т. 1, М., 1980, с. 269-270:

[8] Пиотровский М. Б., Гекала // МНМ, т. 1, М., 1980, с.269:

[9] https://ru.wikibrief.org/wiki/Goddess_movement:

[10] Пропп В., Исторические корни волшебной сказки, Ленинград, 1946, с. 40-68: Հայրապետյան Թամար, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2016, էջ 181-184:

[11] Վ. Հ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 470-471:

[12] Ջ. Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989, Հայաստան», հր., էջ 469-472:

նաև «Ուտիս տատին», «Սևերես պառավ», «շերփը ձեռքին պառավ»[13], որոնք հիմնականում կապվում են հողի պաշտամունքի, երկրագործական տարբեր ծեսերի և տոնակատարություններ հետ:

Ընդհանրապես դիցաբանության մեջ պառավը ամենաարխաիկ կերպարներց է համարվում: «Քանի որ Պառավ աստվածուհու ասպեկտը երբեմն կործանարար է, ոմանք կարծում են, որ այն պարունակում է և՛ դրական, և բացասական պատկերացումներ և ներկայացնում վարքագծի բարդություններ... Գաղափարն այն է, որ Մութ դարերում կարգավորող ուժը արդարացիորեն պետք է լինի մութ ուժերի կողմից ուղղորդված: Այդպիսով ավելի մութ ասպեկտ է հայտնվում պայքարելու համար անգիտության դևերի, էգոյի, զայրույթի և այլնի դեմ. Հետագայում նրա դաժան կերպարը նույնիսկ մեղմանում է իրեն պաշտողների սիրո մեջ»[14]: Այդ պատճառով էլ հեքիաթներում (հրաշապատում), նաև առասպելներում պառավը լինում է կա՛մ բարի, կա՛մ չար: Բարի պառավը սովորաբար հանդես է գալիս խորհրդատուի, միջնորդի, նվիրագործման ծեսը իրացնողի գործառույթներով, նաև նրա «մյուս էթիկական համոզմունքներն այն են, որ կյանքի փոխկապակցված ցանցը չպետք է վնասվի, և որ նպատակները պետք է լինեն խաղաղությունն ու գործընկերությունը, ոչ թե պատերազմն ու իշխումը»[15]:

«Չար պառավին» ժողովրդական մտածողությամբ անվանում են ջադու, քավթառ, վիուկ, նա մի շարք հեքիաթներում օժտված է պատժելու, հսկելու, զգուշացնելու գործառույթներով: Նա կարող է լիրնել մարդակեր, մարդագել, նրան բնորոշ են մարդկային համայնքից վտարված լինելու, հարսնացու փախցնելու, թշնամու և զոհի խորհրդանիշները, հեքիաթներում պառավը

[13] Վ. Հ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 452-453:

[14] https://ru.wikibrief.org/wiki/Goddess_movement: Դրա երկակիությունը հեշտությամբ համաձայնում է հինդուիզմի մոնիզմի հետ, որը պնդում է, որ ճշմարտության հիմնարար միասնությունը հասկանում է որպես անանձնական և շերտավորված գոյություն՝ էգոյի կապերով (ինչպես, օրինակ, մարդու վիճակը), և, հետևաբար, չարի կամ անարդարության համար այն անձնավորում է կործանում, իսկ սիրող ու բարոյական նվիրյալի համար դա ոչ այլ ինչ է, քան մայրական սեր /նույն տեղում/:

[15] https://ru.wikibrief.org/wiki/Goddess_movement:

դևի մայր կամ կին է համարվում[16], պառավը լինում է նաև գիշերամոր տեսքով, որն ապրում է ավերակներում և հետապնդում է արևին[17]:

«Պառավ» բառի ամենատարածված հոմանիշներից են «մեր, մերա, մարե, մամե, դեդի, ադե» բառերը: Սա պայմանավորված է նախ նրանով, որ պառավը հեքիաթներում երեխա կամ երեխաներ ունի, և երկրորդ՝ դա հարգալից դիմելաձև է[18]:

Ըստ Աճառյանի՝ «պառավ» բառը պահլավական փոխառություն է, որ պարսկերենում ևս ունի «ծեր կին, պառավ» իմաստը[19]: Ստ. Մալխասյանցը պառավ բառը մեկնաբանելիս որպես առաջնային իմաստ նշում է «ծերացած, հասակն առած կին» և ավելացնում, որ այս բառը գործ է ածվում և ծերացած տղամարդու մասին[20]:

Պառավի գործառույթները «Սասնա ծռեր» էպոսում

«Սասնա ծռեր» էպոսում այսպես կոչված երկրորդական հերոսները նույնպես հսկայական դերակատարում ունեն: Նրանց գործառույթները հիմնականում պայմանավորված են գլխավոր հերոսների արարքներով և գործողություններով, գրեթե չկա գլխավոր հերոսների շուրջ հյուսված որևէ մոտիվ, որը ուղղորդված չլինի որևէ երկրորդական հերոսի կողմից՝ լինի խորհուրդներով, հերոսներին պաշտպանելով, թե դեպի փորձությունները մղելով՝ նվիրագործման ծեսը իրացնելով: Այս կերպարները էպոսի վիպական հյուսվածքում դառնում են այն կարևորագույն շաղախը, որը հանդես է գալիս էպոսի գրեթե բոլոր ճյուղերում, ապահովում կապը վեպի առանձին ճյուղերի միջև՝ դառնալով նաև այն մի քանի կարևոր գործոններից մեկը[21],

---

[16] Գալստյան Մարինե, Պառավի կերպարը հայկական հրաշապատում հեքիաթներում, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2004:

[17] Աբեղյան Մ., հ. Է, Երևան, 1975, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 31:

[18] Գալստյան Մարինե, նշվ. աշխ.:

[19] Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ. 4, 1926, Ե., էջ 29:

[20] Մալխասյանց Ստ. Հայերէն բացատրական բառարան, հ. 4, 1945, Ե., էջ 53:

[21] Սահակյան Արուսյակ, Սասնա ծռերի պատումների քննական համեմատություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 82-83: Հարությունյան Սարգիս, «Սասնա ծռեր» ժողովրդական վեպ, Երևան, «Սովետական գրող» հրատ., էջ 640-642: էպոսի ամբողջականությունն ապահովող կարևոր գործոններից են համարվում բոլոր ճյուղերում նույն թեմաների առկայությունը՝ պետականության հիմնադրում, հարկահանություն, շինարարություն, ամուսնություն, հզոր ժառանգի ծնունդ, պետականության անկում, արդարության և պետականության վերականգնման երազանքներ և այլն, նաև՝ հայր-որդի ժառանգորդական կապի ապահովում, հերոսական ժառանգական հատկանիշների փոխանցումները և այլն:

որոնց շնորհիվ վեպը ընկալվում է որպես մեկ հերոսական ամբողջական պատում, մեկ պատմական բանաստեղծություն կամ բանաստեղծական պատմություն: Այդպիսի կերպարների՝ Ձենով Հովանի, Քեռի Թորոսի շարքը լրացնում է նաև Պառավի կերպարը, ընդ որում՝ այդ շարքը կա, գործում է վեպի գրեթե բոլոր ճյուղերում՝ հանդես բերելով նման կերպարներին տիպաբանորեն բնորոշ վիպական-առասպելական շատ արխաիկ գծեր:

Մեր էպոսում պառավի կերպարը դրսևորվում է նաև ծերունու տեսքով, մի բան, որ արտահայտվում է վեպի առաջին, երկրորդ /քիչ հանդիպող/, երրորդ, չորրորդ ճյուղերում:

Մեր կողմից դիտարկված են վեպի շուրջ իննսունչորս տպագրված պատումներ. հ. Ա[22], հ. Բ, մաս Ա[23], հ. Բ մաս Բ[24] գրքերում 47 պատումներից 28-ը ունեն առաջին ճյուղ, որոնցից պառավի կամ ծերունու /խալիվոր, խայ, սըվտակմորուս մարդ, մեծ մարդ, փիր ըխտիար/, կերպար հանդիպում է Մոկաց 5 պատումներում /Դ, Է, Ժ, ԺԱ, ԻԴ/, որը հիմնականում Սանասարի կամ Բաղդասարի ամուսնության և փորձություններ հաղթահարելու համար հյուրընկալողի և խորհրդատուի գործառույթներ է իրացնում, իսկ 3-ում այդ գործառութները կատարում են՝ կախարդված փեսացուները (մոկացի Մանուկ Հարությունյանի պատումում), Գոհարը և նրա հովիվը (գավաշեցի Եղիազար Հակոբյանի պատումում), Գոհարը (գավաշեցի Համբարձում-Խապո Գրիգորյանի պատումում): Մշո միայն 2 պատումներում հանդես են գալիս պառավը (Մուրադ Հովսեփյանի) և ալևորը (անհայտ պատմող Վանի գավառաբարբառով): Վերջին պատումում խորհրդատուի դերով հանդես է գալիս նաև դևերի մայր, մարդակեր պառավը: Գ հատորի[25] 14 պատումներից 11-ը ունեն առաջին ճյուղ, որոնցից միայն 1-ում (ԺԴ-Զոհրապ Ավետիսյանի պատումում) է նկարագրված եղբայրների ամուսնությունը առասպելական մոտիվներով, ինչպիսիք են՝ Պղնձե քաղաքի աղջկա նամակը Սանասարին, Սանասարի կողմից ոսկի խնձորի ցած բերելն ու տեղը դնելը, փահլևանների հետ կռիվը, Բաղդասարի՝ օգնության հասնելը, նաև ջրարգել դևից աղջկան ազատելն ու Բաղդասարի ամուսնությունը նրա հետ /Գ 556-560/, սակայն ծերունու կամ պառավի կերպարը չի հանդիպում նշված պատումներում: Դ

[22] Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հ.Ա, Եր., 1936:

[23] Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հ.Բ, մաս Ա, Եր., 1944:

[24] Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հ.Բ, մաս Բ, Եր., 1951:

[25] Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հ. Գ,Պատումների գրառումը և բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Եր., 1979:

հատորում[26], որի մեջ ամփոփված են միայն Սասնա պատումներ, առաջին, նաև երկրորդ, չորրորդ ճյուղերը կարճառոտ են, թռուցիկ, միջադեպային են[27]: 17 պատումներից 9-ը ունեն առաջին ճյուղ կամ առաջին ճյուղի միջադեպերի հպանցիկ ներկայացում[28]: Միայն Վահան Ասատրյանի և Սարգիս Սաֆարյանի պատումներում են առկա Սանասարի և Բաղդասարի ամուսնության առասպելական մոտիվները, ընդ որում միայն վերջինիս՝ Սարգիս Սաֆարյանի պատումի մեջ են հիշատակվում պառավի և ծերունու կերպարները իրենց հիմնական՝ հյուրընկալ և խորհրդատու հատկանիշներով: ««Սասունցի Դավիթ[29]» նոր պատումների» /Գ. և Վ. Գրիգորյանների կողմից հավաքած և հրատարակած/ 8 պատումներից առաջին ճյուղ ունեն 4-ը /Բ, Գ, Ե, Ը/, որոնցից 2-ի՝ սասունցի Սարգիս Ավագյանի և սասունցի Ֆարման Թովմասյանի պատումներում կան պառավի և ծերունու կերպարները: «Սասնա ծռեր[30]», 7 նորահայտ պատումների 7-ն էլ առաջին ճյուղ ունեն: Հովհաննես Վրթոյանի, Սոփեր Հովհաննիսյանի, Բարսեղ Բարսեղյանի պատումներում կա ծերունու՝ *պաբեյ* կերպարը՝ նույն գործառույթով: ««Մոկս», Հայոց բանահյուսական մշակույթ» գրքում[31] առաջին անգամ տպագրված 2 պատումներից մեկը, որը 1962թ. գրի է առել բանահավաք Ալեքսանդր Հակոբի Դարբինյանը Աշտարակի Ագարակ գյուղում բանասաց Հարություն Դարմանյանից[32], ունի առաջին ճյուղ և պառավի կերպարը, որը Սանասարին հայտնում է թագավորի աղջկա պայմանների մասին /ոսկի խնձորի ձեռքբերում, աշտարակի գլխից գուրզի ձեռքբերում, փահլևանների հետ կռիվ/, հանդես է գալիս նույն խորհրդատուի և միջնորդի գործառույթներով:

Ինչպես նկատում ենք, էպոսի իննսունչորս պատումներից վաթսունը ունեն առաջին ճյուղ, իսկ դրանցից տասնչորսում հանդես է գալիս պառավի//ծերունու կերպար: Գործառույթների վերաբաշխումը այս երկու կերպար-

[26] Սասնա ծռեր, հ. Դ, Երևան, 1999, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:

[27] Սահակյան Արուսյակ, Սասնա ծռերի պատումների քննական համեմատություն, Երևան, 1975, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 53, հավելված:

[28] Սասնա ծռեր, հ. Դ, Երևան, 1999, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 52:

[29] «Սասունցի Դավիթ» նոր պատումներ, հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գ. և Վ. Գրիգորյանները, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977:

[30] «Սասնա ծռեր», 7 նորահայտ պատումներ, Պատումները գրառել և հրատարակության են պատրաստել Ռ. Գրիգորյանը և Ե. Մելիք-Մուրադյանը, Ե., 2000:

[31] Մոկս, Հայոց բանահյուսական մշակույթ, Երևան, 2015, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 222-223:

[32] Նույն տեղում, էջ 562:

ների միջև, բնականաբար, պայմանավորված է տարիքի, փորձի, իմաստնության փաստով, նաև հրաշածին (ծերունու կերպարով պայմանավորված[33]) կամ ոչ հրաշածին լինելու փաստով: Սա և՛ հեքիաթների, և՛ նաև ընդհանրապես ժողովրդական մտածողության դրսևորումներից մեկն է: Սրանով էլ պայմանվորված է տան նահապետի, տոհմի մեծի հանդեպ մեծագույն հարգանքն ու ակնածանքը, մեծի խոսքը հարգելը:

Պառավ//ծերունի կերպարի հիմնական գործառույթներից է նվիրագործման ծիսակատարի և խորհրդատուի գործառույթը. օրինակ՝ Մի ուրիշ մոկացու պատումում ծերունի ափոն Բաղդասարին խորհուրդ է տալիս, թե ինչ անի, որ Պղնձե թագավորի աղջկան առնի. «Ասաց.-Վորտի, էնի ոսկի խնձուր ի. Գորզ ըմ կա էնու հիրդսներու տակ. Ինչ ղվաթով էլնի՝ էն գորզ վիրուցի, Զարկե էն ոսկի խնձուր բիրի տակ, դնի ուր ծուց, Թագավորի խիտ կռիվ անե, կտրիճ էլնի, Աղջիկ կտանի իրեն» /Ա, 149/, կամ՝ սասունցի Սարգիս Ավագյանի պատումում խալիվորը Սանասարին խորհուրդ է տալիս, թե ինչպես վարվի, որ Չինումաչինի թագավորի աղջիկ Քառասուն Ծամ Դեղձոնին առնի. «Լաո, դե օր կուզիս տանիս, Է՛, է՛, ան դիրաք գըհինաս, Զդիրաքի կլխու խնձոր կըհինաս, Պետգ է ծիով թռնիս, հասնիս դիրաք, Զխնձուր դիրաքից բերուս ցած: Թը ադ պան էրեցիր, Դեղձոն կտանիս, Թը չերեցիր, թաքավուր զքու կլուխ գըթռցու» /ՍԴ, 73/: Նորբայազետցի Առաքել Շակոյանի պատումում պառավը նախ շնորհակալ է լինում, հետո նաև խրատում է Մհերին (երկրորդ ճյուղում), որ իր մորը պաշտպանի, որպեսզի պապը նրան չամուսնացնի կռապաշտ թագավորի տղի հետ /հ. Բ, մաս Բ, 100-101/: Այսպիսով՝ նշված պատումներում Պառավը Սանասարին /նաև Բաղդասարին/ խորհուրդ է տալիս, թե ինչպես փորձությունները հաղթահարի (ոսկի խնձորի կամ վիշապի բերանում գտնվող մատանու ձեռքբերումը հերոսի կողմից, թագավորի փահլևանների հետ կռիվը և այլն) և ամուսնանա Քառասուն Ծամ Դեղձունի հետ: Այլ կերպ՝ առաջին ճյուղում Պառավի գործառույթը սկսվում և ավարտվում է ամպրոպային հերոսին նախաամուսնական փոր-

[33] Պրոպը անդրադառնալով տոտեմական նվիրագործման ծեսին, նկատում է, որ նվիրագործման այդ տիպը կտրականապես անհասանելի է եղել կանանց համար, սակայն սլավոնական հեքիաթների հիմնական հերոսներից մեկը հենց կին է՝ ծեր վհուկ Բաբա Յագան:

ձությունների մղելով, որոնք ծավալվում են տնից, երկրից հեռու, օտարության մեջ, ինչը բնորոշ է տղաների հասունության նվիրագործման ծեսին[34]:

Պառավը նաև զգուշացնողի դերով է հանդես գալիս, որպեսզի հերոսին փորձանքից հեռու պահի. օրինակ մոկացի Սախոյի պատումում խալիվորը Սանասարին զգուշացնում է, որ հեռու մնա Քառասուն Ճուղ Ծամի կախարդանքից. «Աղջիկ ըմ կա սըհեր կենե, Քանը-քանը թագավուրը տղա, Եկին, վուր զան առնեն՝ Սըհեր էրավ, էթալ սարիր. Մեկ էրիր ի աղվես, մեկ էրիր ի՝ Յոթը ջաղացը ջուր կխմի, Կըսի՝ իս ծարավ մեռա: Մեկ դըսա, մեկ դընա: Չըլնը՞ դու իկիր իս՝ վուր զան առնիս: Իս կիրիշկիմ՝ դու ափսուս տղա մ"իս» /Ա, 321/, նույնպես և մոկացի Վարդան Մուխսի-Բազիկյանի պատումում՝ սրճատան ծերունին է զգուշացնում է. «Ծի թագավուրը ախճկան սերըբանդութենեն ի՞նչ կա: Կըսը.-Մեխք իս, էտա պանիրուց վա՜զ կաց. Շատիր էկած, չկարցած, վա՜զ կաց» /Ա 486/:

Մուրադ Հովսեփյանի պատումում Պառավի հետ կապված միջադեպերում Պառավը հանդես է գալիս նաև հրաշագործ օգնականի գործառույթով, ով գլուխ է բերում խնամախոսության բոլոր գործողությունները. հերոսի պահանջով գնում է աղջիկ ուզելու, կատարում է և լուծում խնամախոսությանը բնորոշ կարևոր հարցերը. լեզու գտնում թագավորի հետ, հարթում խնդիրները, պայմանավորվածություններ ու համաձայնություն ձեռք բերում, ուղեկցում հերոսին նվիրագործական փորձություններ խորհրդանշող գործողությունների ընթացքում[35]: Պատումում Բաղդասարը Պառավին[36] ուղարկում է թագավորի աղջկան ուզելու. «Պառա՛վ, Կարա՞ս էթա թագավորի կուշտ: Պառավ ասավ. -Յես չեմ կարա: Էդի խանեց մեկ բուռ ոսկի ջեբից, տվեց պառավին: Պառավ ասավ. -Աստված հաջողա՛, լուս բացվի, կէրթամ. Թագավորին կիմացնեմ, ինչ որ դու ասելու յես»: Պառավը կատարում է հարսնախոսի իր սուրբ պարտականությունները՝ 7 անգամ գլուխ տալով և միայն 8-րդին ձեռ բռնելով, կանգնելով, ինչը հարսնախոսության հնագույն ծես է

[34] Եվա Զաքարյան, Հեքիաթի հրաշագործ օգնականը և հայոց հարսանիքի քավորը//Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 434-445:

[35] Նույն տեղում:

[36] Սովորաբար հեքիաթներում հրաշագործ օգնականը, որը հարսնախոսության գործառույթն է իրացնում, լինում է հերոսի ընկերը, ծառան, եղբայրացուն, քիչ հեքիաթներում է, որ «օգնականը ներկայացվում է իբրև պառավ կին (ՀԺՀ V, 512-514), ... որով բանասացը փորձում է մեղմել նորապսակների հետ նրա՝ անկողին մտնելու փաստը» (նույն տեղում, հղում):

հիշեցնում. «Թագավորն ասավ.-Պառա՛վ, ի՞նչ կա, ասա՛: -Իմ տուն մեկ ղոնաղ ա եկե, քո աղջիկն ուզում ա: » /հ. Բ, մաս Բ, 243-245/: Այստեղ հետաքրքիր մոտիվ է նաև հերոսի կողմից պառավին ոսկի կամ փող տալը, ինչը նույնպես պառավի գործառույթների հետ կապվող սյուժետային գիծ է: Սա ևս կարող է իբրև հերոսին փորձության ենթարկելու տարբերակ հանդես գալ. «Հերոսի կողմից պառավի նկատմամբ ուժ գործադրելը: Այն կոչված է ապացուցել, որ հերոսը պատրաստ է անցնել նվիրագործման ծանր ճանապարհը, նաև ցույց է տալիս փեսացուի՝ ամուսնությանը նյութապես պատրաստ լինելը»[37]: Ինչից հետո թագավորը իր պայմանների մասին է հայտնում. Բաղդասարը պիտի կռվի թագավորի փահլևանների ու ասլան-ղափլանների հետ: Երբ թագավորի պայմանները կատարվում են, թագավորը աղջկան տալիս է Բաղդասարին, եղբայրները աղջկան վերցնում են, գալիս են պառավի տուն, շնորհակալ են լինում նրանից, փող են տալիս նրան և գալիս Սասուն /հ. Բ, մաս Բ, 245/: Կարելի է ենթադրել, որ այստեղ պահպանված է հեռավոր հիշողություն աղջկա դիմաց աղջկա հորը «ղալան» կամ գումար տալու հին սովորության մասին[38]:

Որդեգրության մոտիվը գործուն է եղել հայկական բանահյուսական միջավայրում, հատկապես հեքիաթներում, որոնցում որդեգրման արարողությունները կատարվում են տարբեր ձևերով՝ երեխային կորցնելու միջոցով, գումար տալով, կրծքին դնելով, ծիծը բերանը դնելով, նաև այլ եղանակներով, երբ որդեգրող մայրը երեխային իր շապիկի միջով է անցկացնում, ինչը հայոց մեջ կոչվել է «կուրծքը փոխել», հայրն է մոր շապիկի միջով երեխային անցկացրել և այլն[39]: Այդ մոտիվի արձագանք պետք է համարել Առաքել Շակոյանի պատումում հանդիպող մի մոտիվ. Սանասարն ու Աբամելիքը հյուրընկալվում են պառավի տանը, որոշ ժամանակ մնում են այնտեղ, պառավը նրանց իր որդիներն է համարում, իսկ երբ մեռնում է խալիֆի ղայֆաչին, վեզիրը նոր ղայֆաչի է փնտրում: Տեսնում է պառավի դռան առջև նստած տղաներին և պառավից խնդրում է նրանցից մեկին: Պառավը պատասխա-

[37] Գալստյան Մարինե, նշվ. աշխ.:

[38] Այս սովորույթը միչև օրս գործուն է եզդիների, քրդերի և մուսուլմանական աշխարի շատ ժողովուրդների մոտ: Հիշենք Արտաշեսի ամուսնության ծեսը. Եվ ուստի տացէ Քաջն Արտաշես (տե՛ս, Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր. 1961, Հայպետհրատ, էջ 207):

[39] Այս մասին և, ընդհանրապես, որդեգրման ծեսի մասին տե՛ս Հայրապետյան Թամար, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2016, էջ 181-184:

նում է. «Իննը ամիս փորս եմ պախե, Տըսվերկու տարի էլ ջրից, կրակից ու ճրագից Ազատ եմ արե, չե՝մ տա»[40]: Իսկ երբ վեզիրը քառասուն քիստ է տալիս խալիֆի խորհրդով, պառավը համաձայնում է, և մեկի փոխարեն երկուսով են մտնում թագավորի մոտ ծառայության /հ. Բ, մաս Բ, 109-110/: Այս մոտիվում այսպես պառավը որդեգրության ծեսը փաստում է խոսքերի միջոցով՝ ընդգծելով իրենից ծված լինելու փաստի անհերքելիությունը: Որդեգրության ծեսը խոր արմատներ է ունեցել և տարածված է եղել այլ ժողովուրդների մոտ. «Դիոդորոսը պատմում է, որ երբ Զևսը իր խանդոտ կնոջը՝ Հերային համոզեց որդեգրել Հերակլեսին, աստվածուհին պառկեց անկողնում և, հաղթանդամ հերոսին սեղմելով իր կրծքին, հրեց նրան իր հագուստի միջով, գցեց գետնին, նմանակելով իսկական ծննդաբերություն»[41]: Կիրգիզական «Մանասում» հերոսների եղբայրացումը (братание) ուղեկցվում է օտար հերոսի՝ «կաթնային որդեգրման» ծեսով, այսինքն՝ ցեղի մեջ որդեգրումով (Մանասի մայր՝ Չիիրդին կրծքով կերակրում է որդու եղբայրացուին)[42]:

Որդեգրման ծեսի դրսևորում պիտի համարել Վանի բարբառով Անհայտ պատմողի պատումում[43] առկա երկու մոտիվները: Առաջինը, երբ Սանասարն ու Բաղդասարը Քամու ձիեր հեծած գնում, 40 դև եղբայրների հետ քեֆ են անում: Քեֆի վերջում ավագ դև եղբայրը խորհուրդ է տալիս Սանասարին, որ նա բռնի իրենց դև մոր՝ թևերին գցած ծծերի պտուկը, նրա խորհուրդը լսի, որ հասնի իր մուրազին: Սանասարը այդպես էլ անում է. տուն մտնելով՝ «....տեսավ որ ախագին, սարի պես կնիգ ըն՝ ուր երկու ծծեր էրկու թիվքերանց վրա թալած՝ հոգեխաց էր թխե: Էնիկ տեսնելուն պես՝ շուտ ըմ խասավ յետեվանց ու էնոր ծծի պտուկն առեց պերան: Կնիկ ասաց.- Խողաձին, կոտրի էն պերան, որ էսա քե ասաց. Թե չէ տու իմ պատրաստի կեր պիտի էլնեիր մկա. Ամա էս կերպով տուն էլ էլար իմ զավկներաց մեկ» /հ. Բ, մաս Բ, 398-399/: Այս մոտիվները տարածված են հեքիաթներում, օրինակ «Միրզա Մահմուտի հեքիաթում» (Բասեն) նույն կերպ հստակ ձևակերպված

---

[40] Ըստ էության, պառավի կողմից որդեգրության գործառույթն է իրացվում: Պառավին հանդիպող ամպրոպային հերոսները մայրական հոգացողության կարիք են զգում, նրանք կամ որբ են, կամ մորից հեռու, ինչը դյուցազնական հերոսներին բնորոշ կարևոր մոտիվ է:

[41] Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան» հր., 1989, էջ 24:

[42] В. Жирмунский В., Народный героический эпос, Сравнительно-исторические очерки, М., 1962, ст. 28.

[43] Վեպի այս պատումը /հ. Բ, մաս Բ 391-481/ հատկապես «ծանրաբեռնված է» հեքիաթային տարրերով:

է որդեգրության ծեսի իմաստը. «Պառավ դևը ասում է, -Այ հողածին, բաց թող իմ ծիծս, ես քո մուրազը կկատարեմ, դու եղար ընձի հոգևոր ավլատ»[44]: Վեպի այս պատումում առկա է Ջանփոլադ անունով հերոս, և հետաքրքրական է, որ որդեգրման ծեսի արձագանքները դրսևորվում են նաև հայ ժողովրդական «Ջանփոլադ» հեքիաթում[45]: Ինչպես արդեն նկատված է, «Հեքիաթային պառավի կրծքերը մայրության խորհրդանիշ են: Բնագրերում նշվում է, որ դրանք երկար են, կախված, այսինքն՝ կորցրել են իրենց նշանակությունը: Հիշյալ փաստը հեքիաթներում հիմնավորվում է նրանով, որ պառավը դրանք ուսերի վրայով մեջքին է գցում, ինչը կրում է անցածի գաղափարը: Պառավի ուսերին գցած կրծքերը հեքիաթներում ունեն կիրառական նշանակություն. դա հնարավորություն է տալիս հերոսներին գաղտնի մոտենալ և կաթ ուտել նրա կրծքից, ինչն ըմբռնվում է որպես որդեգրություն: Պառավի կրծքից կաթ ծծելն ունի արարողական բնույթ»[46]:

Երկրորդ մոտիվը, որը դարձյալ հանդիպում է նույն պատումում, նույնպես որդեգրության ծեսի արձագանքներն է պահպանում. Սանդուխտը երազում տեսած ալևորի խրատով գնում է զբոսնելու, խմում է աղբյուրի ջրից, նաև ձիուն է խմեցնում նույն աղբյուրի ջրից, վերադարձին հանդիպում է նույն ալևորին, որը ասում է, որ ծնված տղան պիտի այդտեղ ժամ շինի, անունն էլ դնի «Մարութա Պանցը Ասպածածին»: Այդ գիշեր Սանդուխտը գիշերում է թագավորի մոտ՝ ալևորի խորհրդով: Երբ լրանում է 9 ամիսը, Աստված զույգ տղա է տալիս Սանդուխտին: Նորից հայտնվում է ալևորը և անվանակոչում է տղաներին. մեկին՝ Սանասար, մյուսին՝ Պաղտասար, նաև ձիու քուռակին՝ Քուռկու Ջալալի, որը ծնվել էր եղբայրների հետ միաժամանակ /հ. Բ, մաս Բ, 392-394/, ինչ-որ առումով ձին կարող է համարվել երկվոր յակներին եղբայրացու[47]: Որդեգրության ծեսը ըստ էության կատարվում է

---

[44] ՀԺՀ, հ. IV,Շիրակ, հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Մ. Մկրտչյանը, Երևան, 1963, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 210:

[45] «Ջանփոլադ»(Արծկե), Բիւրակն, Կ. Պոլիս, 1898, N 21,էջ 406-408:

[46] Գալստյան Մարինե, նշվ. աշխ.:

[47] Նարթական էպոսում կովկասյան դիցուհի Սաթանեի մայրը՝ Ձերասան, որը նաև ծովային աստված Դոնբետրի աղջիկն է, իրեն նետում է ծովը, որեսզի չամուսնանա Վաստրջիի հետ, որին օսերը պատկերացնում են սպիտակ ձիու վրա նստած, սպիտակազգեստ ծերունու տեսքով: Վաստրջրին դամբարանում մերձենում է մեռած Ձերասանին, իրենից հետո էլ նրա մոտ է բաց թողնում իր նժույգին և շանը: Մեկ տարի հետո կինը ծնում է Սաթանեյին, Արֆան ձիուն և ազնվացեղ Սիլամ շանը: Տես՛, Դալալյան Տ., Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ//Պատմաբանասիրական հանդես, 2002, 2, էջ 191-211:

թագավորի կողմից, առանց նրա գիտության: «Սասնա ծռերում» հանդիպող այս մոտիվը առանձին քննության նյութ է, քանի որ Մոկաց մի քանի պատումներում Խալիֆը ընդունում է, որ տղաները իր որդիներն են:

Հետաքրքիր է ապարանցի Բարսեղ Սահակյանի պատումում պառավի հետ կապված մի մոտիվ, որը մյուս պատումներում չի հանդիպում. Սենեքերիմը պաշարում է Երուսաղեմը, սովը ընկնում է քաղաքը, մարդիկ իրար են ուտում, հերթը հասնում է պառավին և իր միակ տղային, պառավը փախչում, գալիս է թագավորի մոտ և հայտնում քաղաքում տիրող սովի մասին, թագավորը շատ ալյուր է տալիս քաղքացիներին, պատարագ է մատուցում և շտապ փախչում է իր երկիր՝ երկու որդիներին մատաղ խոստանալով կուռքերին (երկվորյակների մայրը կռապաշտ է) /հ. Բ, մաս Բ, 485-486/: Այստեղ շատ ալյուր տալը և հատկապես պատարագ մատուցելը ըստ էության ներկայացնում են քրիստոնեական աշխարհայեցողությամբ Հացի ոգուն երկրպագություն տալը, արխաիկ երևույթ է, որդիներին՝ կուռքերին մատաղ խոստանալը: Այսինքն՝ այստեղ առկա է քրիստոնեական կրոնի և կռապաշտության միաժամանակյա դրսևորում: Այս մոտիվում պառավը ըստ էության միջնորդի դեր է կատարում, այլ կերպ՝ դառնում է միջնորդ քաղաքացիների և թագավորի կամ՝ գերբնական՝ երկրային և երկնային ուժերի միջև: Ինչը և պառավի հիմնական գործառույթներից է:

Կազարյան Թառոյի պատումում հանդիպող մի միջադեպ կա, որտեղ առկա է հայկական հեքիաթներում հանդիպող հրաշածին խորհրդատուի կերպարը, ով հերոսին հմայական արգելքի պատվիրանն է տալիս, որը խախտելու դեպքում հերոսը հայտնվում է կամ անդրաշխարհում, կամ այլ թագավորությունում[48], ինչը բնորոշ չէ վեպին. Սանասարը հանդիպում է չորս ճամփի մեջտեղ նստած ալևորին, բարևում է. «Բարև քե, բաբալըխ», «ըխտիար» մարդը նույնպես բարևում է՝ Սանասարի անունը տալով: Սանասարին դա զարմացնում է, և նա հարցնում է, թե նա ո՞վ է, որ իրեն ճանաչում է: «Ասաց.-Ես եմ, խրեշտակն Աստծուն, որ նստեր եմ ըստեղ, ճամպախներ կը բաժնեմ… Թե էսա ճամպախն էրթաս, կելնիս թագավոր, Թե որ մեկ ալ ճամպախն էրթաս, կելնիս թուջար, Ամա թե որ էրթաս Քաջանց էրկիր, Էնտեղ վնաս կը քաշես… Ինչ որ քե ռաստ կու գա՝ Թե քար, թե թուփ, թե

[48] Խեմչյան Մարինե, Նվիրատուն և խորհրդատուն Կարսի հրաշապատում հեքիաթներում// Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 426-433:

հայվան, թե ջանավար, Ըմենուն էլ բարև տաս, առանց բարևի չընցնես. Թե որ առանց բարևի ընցար, էն էրկիր սեհրի ի, քե շատ վնաս կու տա» /հ. Ա, 1034-1035/: Եթե հմայական արգելքը հրաշածին խորհրդատուի կողմից է տրվում, ապա ակնհայտ է, որ նա հաստատապես գիտի արգելքի և դրան հաջորդող ուժի կամ գործողության ազդեցության մասին[49]:

Սասունցի Ֆարման Թովմասյանի պատումում /ՍԴ 335-336/ Սանասարը Քառասուն Ճող Ծամի վերջին պայմանը կատարելու համար ձիով հայտնվում է Օձ քաղաքում[50] և հյուրընկալվում պառավի տանը: Պառավը նրան հայտնում է թևավոր վիշապի մասին, որը երբ թևերը շարժում է, այդ ժամանակ է քաղաքը լուսավորվում: Սանասարը քնում է և պառավին պատվիրում, որ վիշապի թևերի շարժման ժամանակ պառավը նրան արթնացնի: Այդպես նաև նա պառավին պատվիրում է, որ երբ աղջկան տանեն զոհաբերելու ջրարգել վիշապին, պառավը նրան այդ մասին հայտնի, քանի որ երկու դեպքում էլ Սանասարը քնում է: Ավելին, վերջին մոտիվում նա քնում է գլուխը դրած զոհաբերվող աղջկա ծնկանը՝ նրան նույնպես զգուշացնելով, որ երբ վիշապը գա, իրեն լուր տա: Այլ կերպ՝ հերոսը քնած է, նա ակտիվ չէ: Առասպելական մակարդակում քունը նշանակում է ժամանակավոր մահ[51]: Սանասարի քնած վիճակը լրիվ համապատասխանում է մութ կամ ստորին աշխարհում գտնվելու պահանջին: Երկու դեպքում էլ Սանասարը պառավի իրազեկման շնորհիվ սպանում է և՛ թևավոր վիշապին, և՛ աղբյուրի ակը փակող ջրարգել վիշապին՝ ազատություն տալով երկնային և երկրային ջրերի հոսքին: Նա սպանում է նաև արծվի ձագերին ուտող երրորդ վիշապին: Հետաքրքիր է, որ բացի պառավից, այս դիպաշարում վիշապին զոհաբերվող աղջիկն էլ է նվիրագործման ծես կատարում. երբ վախից լեզուն կապ է ընկնում, լաց է լինում. «Վախից լացավ, արտասունք թափավ տղի էրեսին, տղեն զարթնավ» (ըստ էության՝ աղջիկն ու հերոսը այստեղ կարող են ընկալվել

[49] Նույն տեղում:

[50] Ընդհանրապես, Օձ քաղաքը, որը ենթադրաբար գտնվում է արևմուտքում, խորհրդանշում է մայր մտնող Արևը, Ստորին աշխարհը: Այս պատումում քաղաքը և՛արևմուտում է գտնվում, և՛ մթով է ծածկված. «Ծեր քաղաքն ինչի է մութ»-հարցնում է Սանասարը հյուրընկալող պառավին:

[51] Հայկական հավատալիքներում քունը առհասարակ դիտվում է իբրև ժամանակավոր մահ (տե՛ս, Աբեղյան Մ., հ. Է, Եր., 1975, էջ 33: Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, 2000, Բեյրութ, էջ 386-390):

որպես ակտիվ և պասիվ սկիզբներ[52]): Յունգյան հոգեվերլուծական դպրոցի վերլուծությամբ արցունքը նվիրագործման ծեսի սկիզբն է, ինչը, հրաշապատում հեքիաթում վերածվելով գետի[53], դառնում է ժամանակային յուրօրինակ քրոնոտոպ ցուցիչ[54]: Թե ինչ է խորհրդանշում այդ երեք վիշապների սպանությունը ամպրոպային հերոսի կողմից, Ս. Հարությունյանը իր հայտնի աշխատանքում[55] այդ հարցին հանգամանորեն անդրադարձել է կատարել: Բայց այդ երեք վիշապ-ուշապներին էլ Սանասարը սպանում է հայտնի բանաձևային արտահայտությամբ. «Հացն ու գինին, Տեր կենդանին»: Այսինքն՝ այստեղ Պառավը, չնայած իր արխաիկ, դեմոնային էության արձագանքներին (քանի որ Դևստան քաղաքի պառավն է), միավորում է հերոսական դիցաբանության աշխարհը և արխաիկ դիվահարությունը՝ օգնելով ամպրոպային հերոսին՝ ի տարբերություն այլ առասպելների, որոնցում ստորին աշխարհի պառավը գերիշխող դիրք է ունենում և ոչնչացնում է դասական հերոսությունը և կախվածության մեջ է գցում հերոսին մութ ուժերից[56]: Ամպրոպային հերոսին օգնող պառավի կերպար է նաև հունական առասպելաբանության մեջ հայտնի Հեկալես[57] անունով պառավը, որը անշահախնդիր ջերմությամբ գիշերը հյուրընկալում է հույների դյուցազնական հայտնի հերոս կիսաաստված Թեսեին, երբ նա գնացել էր վայրի ցուլ որսալու, և անակնկալ վրա էր հասել փոթորիկը: Եվ երբ Թեսեն որսից վերադառնում է, որպեսզի նրան շնորհակալ լինի, պառավին մեռած է գտնում: Հերոսը նրա պատվին սահմանում է «Հեկալեսի տոն»: Այստեղ պառավը երկու աշխարհները կապողի, միավորողի դերում է հանդես գալիս, ինչը կարելի է համարել էպոսի՝ պառավի կերպարի առանձնահատկությունը՝ ի տարբերություն հեքիաթի պառավի: Այսպիսով, այս պատումում դրսևորվում են պառավի մի քանի

---

[52] Рабинович Е. Г., Богиня-Мать // МНМ, т 1, Москва, Советская энциклопедия, 1980, с. 178-180.

[53] «Չար պառավը» հեքիաթում, ՀԺՀ, հ. Vʻ, Արցախ, հատորի բնագիրը և ծանոթագրությունները՝ Ա, Նազինյանի, Մ.Գրիգորյանի, Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 615-616:

[54] Մաքս Լյութերի կարծիքով՝ հեքիաթի հերոսի աղեկտուր լացը ոչ թե վկայություն է նրա ծանր հոգեվիճակի մասին, այլ այնկողմնային աշխարհից օգություն ստանալու միակ հնարավոր ճանապարհն է (տե՛ս M. Luthi, The European Folktale: Form and Nature (trans. John D. Niles), p. 14).

[55] Հարությունյան Ս., Վիշապամարտը «Սասնա ծռեր»-ում, //Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, 11, էջ 65-94:

[56] Тахо-Годи А. А., Геката // МНМ, т. 1, М., 1980, с. 269-270:

[57] Пиотровский М. Б., Гекала //МНМ, т. 1, М., 1980, с. 269:

գործառույթներ. նախ՝ պառավը ստորին և վերին աշխարհների սահմանագլխում գտնվող կամ այդ աշխարհները իրար կապող օղակն է: Երկրորդ՝ միջնորդի գործառույթ է իրացնում՝ ամպրոպային հերոսին կամ վիշապամարտիկին մութ աշխարհի փորձություններով դեպի լույս աշխարհ ուղեկցելով, որը վիշապամարտի գլխավոր առանցքն է: Միաժամանակ մայրացուի գործառույթներ է իրացնում՝ հերոսին իրազեկելով վտանգների մասին, որպեսզի նա արթնանա ժամանակավոր քնից կամ քրիստոնեական մեկնաբանմամբ՝ հարություն առնի և վերականգնի աշխարհի խաթարված կարգը՝ վերանա մութը՝ քաոսը:

Եզրակացություններ

«Սասնա ծռեր» էպոսի առաջին ճյուղում պառավ//ծերունու շուրջ հյուսված մոտիվաշարերը, անկախ նրանից՝ դրանք կայուն են, թե հանդիպում են միայն մեկ անգամ, հիմնականում կրում են հնագույն առասպելների, հեքիաթների ազդեցությունը: Քանի որ վեպի ամենաառասպելական մոտիվներով հարուստ ճյուղը առաջին ճյուղն է[58], երկրորդական հերոսները, հատկապես պառավը գրեթե ամբողջությամբ կրում է հեքիաթի ազդեցությունը: Այս ճյուղում պառավ//ծերունու կերպարով իրացվում են հեքիաթներում հանդիպող պառավ//ծերունիներին բնորոշ նվիրագործման և որդեգրման ծեսը իրացնողի, խորհրդատուի, հրաշագործ օգնականի, զգուշացնողի, միջնորդի գործառույթները, և երկրորդ՝ այս բոլորը նախորդում և ապահովում են հերոսի՝ Սանասարի կամ Բաղդասարի ամուսնությունը՝ ինչը, սակայն, հեքիաթին բնորոշ հիմնական հատկանիշներից մեկն է՝ «երջանիկ ավարտը»: Սակայն առասպելներում և էպոսում ամուսնությունը սոցիալական համերաշխության ձև է, միջոց՝ ձեռք բերելու ուրիշ արժեքներ, այլ ոչ թե ինքն իրենով արժեք է[59]:

Քանի որ իրականության արտացոլումը էպոսում ենթարկվում է էպիկական օրենքներին[60], կարծում ենք՝ Պառավի խթոնիկ կերպարը այս ճյուղում

---

[58] Սահակյան Ա., «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Ե., 1975, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 104:

[59] Мелетинский Е. М., Женитьба в волшебной сказке (ее функция и место в сюжетной структуре), Москва, 1958, изд-во Восточная литература, https://www.gumer.info/bibliotek_Buks/-Literat/melet10/10.php

[60] Пропп, Эпос и действительность, Москва, 1958, изд-во «Наука», ст. 94:

այդ օրենքներին շատ չի ենթարկվել, քանի որ գործառույթները կայուն չեն՝ ի տարբերություն Արտատեր պառավի կերպարի: Եթե պառավի կերպարը կա, գործում է, հերոսը փորձությունները հաղթահարում է, չկա պառավի կերպարը՝ հերոսը նույն կերպ դարձյալ անցնում է նույն փորձություններով՝ ի տարբերություն հեքիաթի հերոսի, ով ինքն իրենով անուժ է, քանի դեռ չի հանդիպում ծերունուն կամ Բաբա Յագային, որը որոշակիացնում է ամբողջ հետագա ընթացքը[61]: Կարծում ենք՝ պառավի ընդգծված հեքիաթային որակների դրսևորման պատճառով վեպը ամբողջապես «չի յուրացրել», այս կերպարը, ինչով էլ պայմանավորված է՝ պատումներում ոչ միայն նրա ոչ հաճախադեպ առկայությունը, այլ նաև հաճախ ծերունիների կերպարներով փոխարինելը, ի տարբերություն առասպելի և էպոսի, որտեղ Պառավը որպես Մեծ մոր կերպար, ուղեկցում կամ ուղղորդում է հերոսին փորձությունների հաղթահարման կամ նվիրագործման ծեսի իրացման ժամանակ, ինչպես Հեկատեն[62] էր ուղեկցում Պերսեփոնեին, Արտատեր պառավը՝ Դավթին:

Մյուս կողմից՝ «Պառավ» անվան ընդհանրական ձևը և հեքիաթի պառավների հետ մի շարք ընդհանրությունները հաստատում է այն կարծիքը, որ այս կերպարը մեր վեպի ամենաարխաիկ կերպարներից մեկն է:

THE CHARACTER OF THE OLD WOMAN IN THE FIRST BRANCH OF THE EPIC "SASNA TSRER"

GHARIBYAN ALINA
GSU Lecturer
e-mail: alinagharibyan@rambler.ru

The character of the old woman has a special place among the female characters of the "Sasna Tsrer" epic. In various versions of the epic, this figure represents both common features and differences, often mixing ethnic, mythical and ritual features. In this work, we tried to get a complete picture of the characteristics of the character on the material provided by different options. We tried to make the examination by comparison with the parallels of the image of the old woman in the folklore of other peoples. We made the observations according to the functions of an elderly woman: to advise and warn, to collect and give news, among them the

[61] Նույն տեղում, էջ 97:
[62] Тахо-Годи А. А., Геката // МНМ, т. 1, М., 1980, с. 269-270:

main thing being a mediator. We also looked at motifs related to the character, such as, for example, adoption and dedication rituals, etc. The motifs woven around the old woman are mainly influenced by ancient myths and fairy tales, and the character of the old woman is completely influenced by the fairy tale. Due to the pronounced fairy-tale qualities of the old woman, the epic did not fully appropriate this character, that is, the old woman does not become a very familiar hero for the epic, which can explain the rarity of her presence in the variants.

Key words: *epic, version, female characters, old woman, function, motif, fairy tale, mythology, ritual, mediator.*

ПЕРСОНАЖ СТАРУХИ В ПЕРВОЙ ВЕТВИ ЭПОСА "САСНА ЦРЕР"

КАРИБЯН АЛИНА
Преподаватель ГГУ
электронная почта: alinagharibyan@rambler.ru

Образ старухи занимает особое место среди женских персонажей эпоса «Сасна Црер». В различных сказах эпоса эта фигура представляет собой как общие черты, так и различия, часто смешивая этнические, мифические и ритуальные черты. В данной работе мы попытались получить полное представление о характеристиках персонажа на материале первой ветви, представленном разными сказами. Мы попытались провести исследование путем сравнения с параллелями образа старухи в армянских народных сказках и в фольклоре других народов.Нами был проведён анализ функций старухи: дарителя и усыновителя, советчика, чудесного помощника а, главное - посредника. Мотивы, сплетенные вокруг старухи, в основном несут на себе влияние древних мифов и сказок, а образ старухи в этой ветви почти полностью несет на себе влияние сказки. По причине ярко выраженных сказочных качеств старухи в первой ветви, она не становится обычным эпическим героем, чем можно объяснить редкость ее присутствия в сказах.

Ключевые слова: *эпос, сказ, женские образы, старуха, функция, мотив, сказка, мифология, обряд, посредник.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ՇԻՐԱԿԻ ՕՐՈՐՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ[1]

ՀՏԴ 398
DOI: 10.56246/18294480-2023.14-21

ՄԱՏԻԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ
Շիրակի պետական համալսարան,
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
բանասիրական գիտությունների թեկնածու
Էլփոստ՝ hasvrej@mail.ru

Հոդվածում ներկայացված են մեր գրառած բանահյուսական օրորները, որոնք Շիրակի տարածաշրջանի «ծնունդ» են և մեկնաբանվել են լեզվաբանագիտական հայեցակետից: Շիրակի բանահյուսական օրորոցայինը ունի գեղարվեստական ուրույն նկարագիր. օրորի միջավայրը օրհնանքաբուխ է, օրհնանքածին:

Հոդվածում անդրադարձ է կատարվել Շիրակի բանահյուսական օրորոցային ժանրի արտահայտչական բնութագրին: Ժանրի կայուն բանաձևերի ու հորինվածքային համատեքստերում դիտարկվել են այն յուրահատկությունները, որոնք ակնհայտ են մերօրյա գրառումներում:

Մեզ հուզող խնդրի տեսանկյունից արժևորվում են Շիրակի բանահյուսական այն օրորները, որոնք արարման ու կատարման հատուկ միջավայր են պահանջում: Օրորոցայինը՝ որպես տարողունակ և կենսունակ ժանր, երբեմն համադրում է տարբեր ժանրեր, որոնց ծուլումից առաջանում են տարբերակներ: Օրորասացը երգի կատարման ընթացքում հաճախ օգտագործում է մեծերից լսած օրորներ: Բանահյուսական օրորոցային տեքստի արարման միջավայրը ծնում է նոր տարբերակներ: Օրորասացի տրամադրությամբ, օրվա աշխատանքով պայմանավորված՝ կարող է փոխվել բանահյուսական օրորի լեզուն, հետևաբար առաջանում են բանահյուսական նմուշի տարբերակներ: Օրորոցայինը կատարողական տեքստ է: Կատարողականությունը հատկորոշվում է տեքստային, ոճական կամ համատեքստային չափորոշիչներով:

[1] Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» գիտական թեմայի շրջանակներում:

Բանալի բառեր՝ *բանահյուսություն, տեքստ, օրորոցային, նկարագրություն, իրավիճակ, երգ:*

Մի անուշ ձայն՝ թովիչ, քնքուշ ու վետ-վետ
Շշնջում է ինձ քույրորեն մտերիմ,
Հին–հին ժամանակի ոսկե մի լեգենդ,
Երբ մնում եմ ես մեն-մենակ սրտիս հետ...
...Հեռունե՛րը, հեռուները լայն ու խոր
Երազների քարավաններն են զնգում,
Ո՞վ է երգում տխուր լացով մեղմ օրոր.
Այս մարմանդը ինչպես լավ է ու անդորր...
(Իսահակ Իսահակյան, Շիրակի դաշտերը, 1914)

Օրորոցային երգը՝ որպես բանահյուսական կայուն ժանր, կենցաղավարում է Շիրակում: Մեր կատարած արդի գրառումները ցույց են տալիս, որ օրորը ուրույն տեղ ու դեր ունի շիրակյան կենցաղում:

Օրոր բառանունը նշված տարածաշրջանում հատկորոշվում է որպես *նանիգ, այիգ-այիգ* և այլն: Հարցումներն անցկացրել ենք տարիքային տարբեր խմբերում՝ միտում ունենալով պարզել օրորի փոխանցման շարժունությունը, հաճախականությունը, օրորերգերում լայն կիրառություն ունեցող բառաշերտերը, կայուն բանաձևերը:

Շիրակի օրորների երաժշտագիտական ուսումնաքննության գործում մեծ դերակատարում ունի երաժշտագետ, ֆոլկլորագետ Հասմիկ Ափինյանը: Մեզ հուզող խնդրի տեսանկյունից նշենք նրա հոդվածներից երկուսը՝ «Օրորոցային երգի տաղաչափական առանձնահատկությունների շուրջ»[2], «Օրորոցային երգի ժանրը Շիրակի ժողովրդական երգարվեստում»[3]: Հոդվածներում հեղինակը ընդգծում է օրորոցային ժանրին հատուկ տիպաբանական առանձնահատկություններ և տարատեսակ դրսևորումներ: Մեջբերենք Հ. Ափինյանի գրառած օրորներից.

---

[2] Ափինյան Հ., Օրորոցային երգի տաղաչափական առանձնահատկությունների շուրջ, ՇՊՄԺ Հանրապետական հինգերորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 65-66:

[3] Ափինյան Հ., Գիտական աշխատություններ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, հ.3, 2000, էջ 165-175:

Նանիկ, նանի, շիմշաթ երես,
Նանիկ արա, վարդիս թերթն ես /ԿԱՌ –ի ֆոնդ, 1984,1/10/[4]:

Աղա բալեն իմ փաշեն է,
Էս տան սունը իմ տղեն է.../ԿԱՌ –ի ֆոնդ, 1984,1/10/:

Նշենք, որ բերված օրորի հիմքը ասութային կայուն բանաձևն է՝ *էս տան սունը իմ տղեն է:*

Նշված օրորներից առաջինում *շիմշաթ* բնութագրականը ընդգծում է երեխայի բարեկազմ, սլացիկ, նրբիկ լինելու գովերգը, իսկ երկրորդ օրորում առկա է դարձվածքային մտածողություն՝ տղամեծարություն, երեխայի՝ ծնողին սատար, թև ու թիկունք կանգնելու սպասվելիք իրողություն: Շիրակում տարածված կայուն բանաձևերից են՝ *տղեն տան լույսն է, տան ծուխը վառողը կամ վառ պահողը, տղեն օջախի սունն է և այլն, իսկ աղջիկ երեխայի համար ասում են՝ աղջիկը լավ է, եթե լավ տեղ ընգնի (լավ ընտանիք կազմի) կամ աղջիկը դսի պապ է, աղջիկ ղսմին մեղկ է և այլն:* Ակնհայտ է, որ տղա երեխայի ծնունդը արժևորվել է ոչ միայն Շիրակում, այլ նաև Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում: Տղա երեխայի՝ որպես տան սյան, տան պաշտպանի կարևորությունը մատնանշվում է նաև գրական միջավայրում: Մեջբերենք մի հատված Մուրացանի ստեղծագործությունից.

- Աստված մեծ է, ողորմությունն անչափ: Հոր հազարները փչացնելը ամեն տեղ տեսնված է, բայց *ղոչաղ տղեն էլի կծխացնե հոր քանդված օջախը*:

- Աստված զորացնե այդպիսի տղերքը, *մարդը սյուն դարձավ*, կանգնեցրեց հոր պապենական օջախը,- ասում էր մի ուրիշը[5]:

Օրորների ավանդական բաշխվածությունը պատկերացնելու համար ներկայացնենք ավագ բանասաց-երգասացների խոսքերը, երգային պատառիկները, խրատներն ու հորդորները երիտասարդ օրորասացներին: Հարկ է նշել այն իրողությունը, որ յուրաքանչյուր ավագ օրորասաց, հավատարիմ մնալով ավանդական օրորի բանաձևին, ստեղծում է իր օրորը, որը երբեք չի մոռանում անգամ տարիների հորձանուտում: Այս խմբի օրորները հարուստ են օրինանքներով, կենսափորձի փոխանցման առատությամբ: Օրորի հիմք են կազմում փաղաքշական բառերն ու դանդաղահունչ, ռիթմիկ միավորները.

[4] Կումայրի արգելոց-թանգարանի ֆոնդ:
[5] Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., Հայպետհրատ, 1963, էջ 344:

Օրո՛ր, օրո՛ր, *իմ բալա,*
Նախշուն, սիրուն, իմ լալա
Ծլի, ծաղկի իմ բալեն,
Վարդ բոլորի իմ բալեն…[6]

Նշված օրորի *ծլի, ծաղկի* բառամիավորները օրհնանքների տիրույթում մեծ տարածում ունեն. նկատելի է գործողությունների հերթականություն՝ *ծլել, ծաղկել* շեշտադրումներով:

Ուշագրավ է, որ աստվածաշնչյան կիրառություններում *ծլել, ծաղկել, ծիլ, ծաղիկ* բառաշղթան պարբերաբար մեջբերվում է՝ կարևորելով կյանքի ռիթմը, շարունակականությունը. *Եւ եղաւ որ հետեւեալ օրը Մովսէսը վկայութեան խորանը մտաւ. Եւ ահա Ղեւիի տան կողմից տրուած Ահարօնի գաւազանը ծաղկել էր, եւ ծլեց եւ ծաղկեց եւ նուշեր հասցրեց* (Թվոց 17:8):

Ծիլ-ծաղիկ պատկերավոր միավորը մանկական գրականության միջավայրում հաճախադեպ է, մասնավորապես Թումանյանի «Ծաղիկների երգը» ստեղծագործության մեջ.

Աղջի,աղջի,ծիլ-ծաղիկներ,
Քանի՞ քնեք, վե՛ր կացեք, վե՛ր…[7]

Օրոր ասեմ, իմ բալին,
Նանիգ ըսեմ, իմ բալին,
Իմ անուշ հոտովին…

Բանասացը կարևորեց օրորը՝ նշելով. *Հին ժամանակներից սկսած բոլոր հայ կանայք իրանց էրեխեքի համար երգել են՝ տալով իրանց հանգիստ ու անուշ քուն:*[8]

Երբեմն էլ օրորի բովանդակային կառուցվածքում տեսնում ենք մոր կողմից ասվող անկեղծ տողեր.

Քնի՛, քնի՛, անուշ բալես,
Հերիք ընձի չարչրես,
Ու քունս խանգարես…[9]

---

[6] Բանասաց՝ Խանում Միքայելյան, 85 տարեկան, ապրել է Թավշուտ գյուղում, մահացել է 2022թ.:

[7] Թումանյան Հ., Բալլադներ, Ե., Յավրուհրատ., 2012, էջ 45:

[8] Բանասաց՝ Սուսաննա Թովմասյան, ծնվել է 1956թ., ապրում է Մարմաշենում:

[9] Բանասաց՝ Լուսյա Ղազարյան, ծնվել է 1949թ., ունի միջնակարգ կրթություն, նախնիները գաղթել են Մուշից:

Անգամ պարզունակ թվացող օրորերգի մեջ մայրը պահպանում է հանգավորումը՝ բալ*ես*, չարչր*ես*, խանգար*ես:*

Հարցումների ընթացքում օրորասացները հիշողության գունապնակից տալիս էին օրորոցային երգի իրենց նկարագիրը.

Օրորոցային երգը հոգու զմայլք է, շոշափելի չէ, բայց ապրեցնող է ու կյանք փվող: Օրորոցայինը փանում է իմ էրեխու մանկությունը:[10]

Ավագ բանասացների օրորների շարքում ընդգրկուն տեղ ունի Արևմտյան Հայաստանը, օրորի կանչով նրանք վերադառնում են պատմական անցյալ՝ պապերի հայրենիք: Բերենք երկու գրառած օրոր.

Մուրադ գեղի բոլորը
Ես մի մարալ,
Դարդեդ ընկա չոլերը,
Քնի՛ բալես, քնի՛ բալես… (բանասաց՝ Խանում Միքայելյան):

Ուշագրավ է այն, որ թե՛ բանասացների հանկարծաստեղծ օրորներում, թե՛ հայ ժողովրդական երգերում գետանուններն ունեն խորհրդանշական իմաստ.

Մշո գելներ երկու գետ,
Մշո գելներ երկու գետ,
Մեկ *Մուրատ*, մեկ *Մեղրագետ,*
Երթան թափվին *Եփրատ* գետ:

Ս. Հարությունյանը «Բանագիտական ակնարկներ» մենագրության մեջ անդրադառնում է քնարական սեռի ստեղծագործություններին՝ ընդգծելով. «քնարական բանահյուսության յուրաքանչյուր ավանդական երկի տարբերակ դառնում է արտահայտիչը այն կատարող որոշակի անհատի կամ նրա միջավայրի տվյալ պահի հոգեվիճակի, տրամադրությունների, հույզերի և ապրումների: Այստեղից էլ այն հարատևող բանաստեղծական կենդանի զգացողությունն ու ընկալումը, որ միշտ ուղեկցում է ավանդական քնարական երկին նրա յուրաքանչյուր կատարման ժամանակ»[11]:

[10] Բանասաց՝ Էմմա Խաչատրյան, ծնվել է 1946թ., ունի բարձրագույն կրթություն, նախնիները գաղթել են Ղարսից, ապրում է Գյումրիում:

[11] Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 103:

Օրորն էլ, իր հերթին, միջավայրի ու հիշողության «ծնունդ» է: Ավագ բանասացների օրորերգերում *Էրկիր* կամ *Էրկրեն* բառը տարածական է. կարոտի, պատմական հիշողության կնիք կա ամփոփված.

Նանիկ, նանիկ, իմ բալիկ,
Անուշ քնիր, մեծըցիր,
Դարձիր մարդ մարդկանց մեջ,
Քունն անուշ է իմ ձագի,
Արևն է նստել նրա մեջ,
Չես ուզում փակել աչերդ
Փնտրում ես պայծառ արև…
Օրոր ասեմ, խրատեմ ու աղոթեմ,
Դառնա արև իմ բալեն,
Լույս սփռե չորս կողմեն,
Օրոր քաղցրիկ, բալի բալ,
Սերունդ ես, տոհմ ու ազգ,
Էկան ձերոնք ***Էրկրեն***,
Ղարսի Հարսնեքար գյուղեն,
Եկան հասան Հայաստան,
Դարձան նորեն մշտական,
Օրոր, օրոր ու նանիգ,
Իմ անուշ ու քաջ բալիկ…
Պահիր հարգանք մեծի հանդեպ…

Բանասաց Կարինե Այվազյանը իմաստային աստիճանավորմամբ է հյուսում օրորը՝ *սերունդ-տոհմ, ազգ* օրգանական կապով: Նշված օրորը խրատի, աղոթքի բացառիկ օրինակ է: Այս առիթով մեջբերենք նրա խոսքը. *շատ առաջ էրեխեն մեծըցել է քաղցրահունչ օրորների, ժպիտով մայրերի և հանգստացնող դեմք ունեցող մամերի գրկի մեջ:*[12]

Շիրակի օրորները հատկորոշվում են հանկարծաստեղծությամբ. երբեմն մայր օրորասացը օրորերգի դաշտում է գովերգում երեխային. գովքը դառնում է օրորի ստեղծման նախապայման: Մեջբերենք բանասաց Գյուլնարա Մահլամյանի խոսքն ու օրորաստեղծ տողերը. *Ստեղծել եմ բառեր կա-*

[12] Բանասաց՝ Կարինե Այվազյան, ծնվել է 1956 թ., Ջաջուռի Կրի գործարան, Նախնիները Կարսից են:

մաց հնչյուններից՝ փասիկ, բոքոլիկ, գոջո ու ըդպես քնցրել եմ, շատ ձևերով եմ սիրել ու երգել, օրինակ՝

Լուսդ ուտեմ, իմ բալա,
Համով, սիրուն իմ բալա,
Խուճուճ-մուճուճ իմ բալա//
Քնի՛, քնի՛, իմ լալա…[13]

Օրորների գրառման ժամանակ օրորասացները ոչ միայն երգում էին օրոր, այլ նաև հանգամանալիորեն նշում էին երգի պահպանման կարևորությունը. *Օրորոցայինի մեջ կա մի առանձնահատուկ բան, նրանից դուս գուգա սեր ու ջերմություն, բդի պահել ու պահպանել…*[14]

Շիրակի օրորներում տեսանելի են նաև ժողովրդական խաղիկներ.

Անքուլ, քանքուլ իմ Արոն,
Դաստա քանուլ իմ Արոն,
Սարեր շուռ գա իմ Արոն,
Բարով տուն գա իմ Արոն:
Մալաքա ձորն ամպել ա,
Արոն ձինը թամբեր ա,
Անձրև էկե թռչեր ա,
Արև զարկե չորցեր ա[15]:

Ամփոփելով նշենք, որ Շիրակի օրորները ավանդականի ու նորօրյա դրսևորումների համաձուլվածք են. կայուն կրկնատողեր են՝ *նանիգ, նանիգ, իմ բալա, այիգ, այիգ, քուն մտի բալես…* Կայուն բանաձևերից տարածական է օրհնանքը:

Կատարած ուսումնասիրությունը վկայում է, որ պատմական թեմատիկա ունեցող օրորները առավել ազատ են կառուցվածքի տեսանկյունից. օրորասացը, հավատարիմ մնալով օրորի չափածո տեսակին /տեքստային ռիթմի ապահովում և այլն/, օրորերգի կատարման ընթացքում ասելիքը մեկընդ-

[13] Բանասաց՝ Գյուլնարա Մահլամյան, ծնվել է 1969թ., տնային տնտեսուհի է, հայրական կողմը՝ Սալմաստ գավառի Մահլամ գյուղից:
[14] Բանասաց՝ Թեհմինե Շահինյան, ծնվել է 1955թ. գյուղ Սիզավետում, Նախնիները Մուշից են:
[15] Գրիգորյան Ռ. Հ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 174:

մեջ տեղափոխում է արձակի տիրույթ, որը թերևս պայմանավորված է պատմական առատ իրողությունների թվարկմամբ, վերհուշի զգացողությամբ, կոնկրետ իրավիճակի հիշատակմամբ, որը պատումային է: Ընդգծենք նաև այն, որ ժամանակի հոլովույթում փոխներթափանցում է նկատվում. օրորերգը ավագ բանասացներից փոխանցվում է երիտասարդներին, որը ենթադրաբար փոփոխություններ է կրում տեքստային մակարդակում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ափինյան Հ., Օրորոցային երգի ժանրը Շիրակի ժողովրդական երգարվեստում Գիտական աշխատություններ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, հ. 3, 2000:
2. Ափինյան Հ., Օրորոցային երգի տաղաչափական առանձնահատկությունների շուրջ, ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002:
3. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:
4. Թումանյան Հ., Բալլադներ, Ե., Յավրուհրատ., 2012;
5. Իսահակ Իսահակյան, Շիրակի դաշտերը,
1914file:///c:/users/smart/downloads/%d5%87%d5%ab%d6%80%d5%a1%d5%af%d5%ab_%d5%a4%d5%a1%d5%b7%d5%bf%d5%a5%d6%80%d5%a8.pdf /մուտք՝ 12.05.2022/:
6. Կումայրի արգելոց-թանգարանի ֆոնդ՝ 1984,1/10/:
7. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010:
8. Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., Հայպետհրատ, 1963:

LINGUO-FOLKLORISTIC STUDY OF LULLABIES IN SHIRAK

MATIKYAN HASMIK
PhD in Philology
Shirak Center for Armenological Studies NAS RA
State University of Shirak
e-mail: hasvrej@mail.ru

The article is based on the field work carried out in Shirak region. It should be noted that the research was conducted from a linguistic point of view.

The study shows that lullabies with historical themes are more free in terms of structure. Adhering to the type of cradle song verse (ensuring text rhythm, etc.), some cradle songs are in the domain of prose; they are abundant with the enumeration of historical facts, the feeling of remembrance.

It should be emphasized that there is mutual penetration in the course of time. The cradle song is passed from senior lullaby singers to young people; the text naturally undergoes changes.

Key words: *folklore, text, lullaby, description, situation, song.*

ЛИНГВОФОЛЬКЛОРНОЕ ИССЛЕДОВАНИЕ КОЛЫБЕЛЬНЫХ ПЕСЕН ШИРАКА

МАТИКЯН АСМИК
Кандидат филологических наук
Ширакский центр арменоведческих исследований НАН
Ширакский государственный университет
электронная почта: hasvrej@mail.ru

Статья основана на полевых работах, проведенных в Ширакской области. Следует отметить, что исследование проводилось с лингвистических позиций.

Исследование показывает, что колыбельные на историческую тематику более свободны в структурном отношении. Придерживаясь типа колыбельного стиха (обеспечение ритма текста и др.), некоторые колыбельные песни изобилуют перечислением исторических фактов, воспоминаниями в прозаической форме.

Подчеркнем, что с течением времени происходит взаимное проникновение различных жанров. Колыбельная песня передается от старших к молодежи и, как следствие, текст естественно претерпевает изменения.

Ключевые слова: *фольклор, текст, колыбельная, описание, ситуация, песня.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 23.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 08.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԲԱՌԱԲԱՐԴՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

ՀՏԴ 81
DOI: 10.56246/18294480-2023.14-22

ՂԱՄՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու
էլփոստ՝ lgamoyan@mail.ru

Քննելով «հագուստ» իմաստային դաշտի բառակազմական համակարգը՝ սույն հոդվածի նպատակն է ներկայացնել և դասակարգել այդ բառերից կազմված բարդություններն ըստ տեսակների, ըստ բաղադրական հիմքերի և դրանց միջև առկա ներքերականական հարաբերությունների: Ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ բուն կամ իսկական բարդությունների կառուցվածք-բանաձևերում ակտիվություն դրսևորող երեք անուն խոսքի մասերից (գոյական, ածական, բայ) առաջին հերթին առանձնացվել է գոյականը՝ հետևյալ կաղապարներով՝ գոյական+գոյական, ածական+գոյական, թվական+գոյական, մակբայ+գոյական, բայարմատ+գոյական: Կան նաև բայարմատ գերադաս անդամով բազմաթիվ բարդ բառեր, որոնք հիմնականում կազմված են գոյական+բայարմատ կաղապարով. դրանց բաղադրիչները իմաստային առումով արտահայտում են խնդրային և պարագայական շարահյուսական հարաբերություններ:

Առանձնացվել են՝ ա) բարդություններ, որոնք ունեն և՛ հոդակապով, և՛ անհոդակապ զուգահեռ ձևեր, բ) բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը բարբառային, արևմտահայերեն կամ փոխառյալ բառ է, գ) բարդություններ, որոնք առկա են և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ տարբերակներով և այլն:

Անիսկական բարդությունների բառակազմական, իմաստային, շարահյուսական էական առանձնահատկությունների հիման վրա առանձնացվել են հարադրական և կցական բարդություններ: Հարադրական բարդություններն իրենց հերթին դասակարգվել են ըստ անվանական (կրկնավոր, բաղհյուսական) և բայական հարադրությունների: «Հագուստ» իմաստային դաշտում կցական բարդությունները ծագել են կրկնավորներից և բաղհյուսական հարադրություններից, որոնք առավել հաճախ հանդիպում են բարբառներում:

Ուշադրություն է դարձվել նաև նորակազմ բարդություններին:

Բանալի բառեր՝ *բարդ բառեր, բուն կամ իսկական, կաղապար, անիսկական, հարադրական, կրկնավոր, բաղհյուսական, կցական, նորակազմություններ:*

Նախաբան

Հայոց լեզվի բառակազմական մեծ ճկունությունը պետք է համարել հայերենի բառապաշարի հարստության կարևոր աղբյուրներից մեկը: Այն անսպառ հնարավորություն է տալիս ստեղծելու անթիվ ու անհամար բառեր ամենաբազմազան իմաստների համար:

Ուսումնասիրելով «հագուստ» իմաստային դաշտի բառակազմական համակարգը՝ փորձ է արվել այն քննել համաժամանակյա մոտեցմամբ, վերլուծության միջոցով բացահայտել այս ենթահամակարգի բառակազմության օրինաչափությունները, բառակազմական միավորների կառուցվածքը, կապակցման միջոցներն ու եղանակները, առավել կենսունակ կաղապարները:

Անդրադառնալով վերոհիշյալ իրողությունների քննությանը՝ սույն հոդվածում առանձնացրել ենք միայն բառաբարդման երևույթները. ներկայացրել ենք *«հագուստ»* իմաստային դաշտի բառերից կազմված այնպիսի բարդություններ, որոնք ոչ միայն հագուստ կամ հագուստի մաս հասկացություն նշող բառեր են, այլև այնպիսի բաղադրություններ, որոնք ունեն նախատիպ առարկայի հետ կապված «մասնագիտություն, զբաղմունք, արհեստ ցույց տվող» և այլ բառակազմական նշանակություններ: Այնուհետև տվել ենք դրանց բառակազմական պատկերը՝ ըստ տեսակների, ըստ բաղադրական հիմքերի և դրանց միջև առկա ներքերականական հարաբերությունների:

Հագուստ կամ հագուստի մաս նշող հասկացություններից կազմվում են բազմաթիվ բարդ բառեր:

Հիմնվելով հայ լեզվաբանության մեջ եղած դասակարգման վրա[1]՝ հոդվածում առանձնացրել ենք *իսկական* և *անիսկական* բարդություններ. վերջիններս իրենց հերթին վերախմբավորելի են բառակազմական որոշ առանձնահատկությունների հիման վրա *(ինչպես՝ հարադրական* և *կցական):*

[1] Տե՛ս **Գ. Սևակ,** Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 2009, էջ 151:

Ա) Բուն կամ իսկական: Լինելով բառակազմության ամենաարդյունավետ եղանակը՝ բարդության այս տեսակը լայն տարածում ունի նաև «*հագուստ*» իմաստային դաշտում:

Բուն բարդությունների[2] բաղադրիչները միմյանց հետ որոշակի շարահյուսական հարաբերության մեջ են գտնվում (համադասական կամ ստորադասական), որը երևում է բարդությունները կապակցության վերածելիս:

Այսպիսով՝ «*հագուստ*» իմաստային դաշտի բառերից կազմվում են՝

1. գոյական գերադաս անդամով բարդություններ՝ *հոդակապով* և *անհոդակապ*, որոնք ունեն կազմության հետևյալ կաղապարները.

ա) ***գոյական+գոյական:*** Նման բաղադրություններում առաջին բաղադրիչ գոյականը է հատկացուցիչ-հատկացյալի և որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *հոդակապով* բարդություններ՝ ***առնազգեստ[3], բարուրաշոր, բեմազգեստ, գլխաշալ, արքայազգեստ, գիշերագդակ*** (ԺՀԼԲԲ)**,** նորակազմություններից՝ ***խաղաշապիկ[4]*** (ՆԲ, Բ, 59), ***խաղակոշիկ*** (ՆԲԲԲ, 80), ***գիշերախալաթ*** (ՆԲ, Գ, 30), ***դիմաքող*** (ՆԲ, Դ, 40), ***փաբատածալ*** (ՆԲ, Ե, 136), ***կոշկակապ*** (ՆԲ, Զ, 91), ***օձիքագոտի*** (ՆԲ, Զ, 198), ***փեշափուշ*** (ՆԲ, Զ, 189) և այլն:

Առկա են նաև *անհոդակապ* բարդություններ՝ ***ոտնաման, թևկապ*** (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***գդակաստառ*** (ՆԲ, Դ, 30), ***գրպանեզր*** (ՆԲ, Դ, 35), ***քուղկապ*** (ՆԲ, Զ, 196) և այլն: Որոշ անհոդակապ բարդություններ արդի հայերենին են փոխանցվել բարբառներից և մասամբ խոսակցական լեզվից, ինչպես՝ ***թևլաթ, թևշոր, երեսլաթ*** (ԺՀԼԲԲ) և այլն:

բ) ***Ածական+գոյական***: Այս կաղապարով կազմված բարդություններում ածականը տարբեր կողմերով լրացնում է գոյականին, իսկ վերջինս գործածվում է իր բուն իմաստով: Պետք է նկատել, որ այս կաղապարով բարդու-

---

[2] Իսկական բարդությունները «բուն բարդություն» անվանումով է բնորոշել Էդ. Աղայանը (տե՛ս **Էդ. Աղայան,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 269):

[3] Օրինակները բերված են հետևյալ բառարաններից. *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Ե., 1969-1980, **Ռ. Սաքապետոյեան,** *Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան* (այսուհետև՝ ԱՀՆԲ), Ե., 2011, *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հհ. 1-7, Ե., 2001-2012:

[4] Բոլոր նորակազմությունները վերցված են հետևյալ բառարաններից. Նոր բառեր (կազմ.՝ **Ա. Գալստյան** և ուրիշներ), Ա-Զ, Ե., 2015-2021թթ. (այսուհետև՝ ՆԲ), **Փ. Մեյթիխանյան,** *Նոր բառերի բացատրական բառարան* (այսուհետ՝ ՆԲԲԲ), Ե., 1996, **Ս. Էլոյան,** *Արդի հայերենի նորաբանությունների բացատրական բառարան* (այսուհետ՝ ԱՀՆԲ), Ե., 2002:

թյունները բազմաթիվ են *«հագուստ»* իմաստային դաշտում, ինչպես՝ *հոդակապով՝* ***աղքատազգեստ, թավշազգեստ, թխազգեստ, լայնաթեզան, կարճազգեստ, կեղտաշոր, կիսաբաճկոն, կիսագուլպա, կիսազգեստ, ճերմակազգեստ,*** (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***հնազգեստ*** (ՆԲ, Գ, 86), ***կարճատաբատ*** (ՆԲ, Դ, 75) և այլն:

Շատ հաճախ բարդության առաջին բաղադրիչը գունանուն է, մյուսը՝ հագուստի անվանում, ինչպես՝ ***նարնջազգեստ, կապտազգեստ, կապտաբաճկոն, սևահանդերձ, սևակոսպանդ, սևասքեմ, սևաքող, սպիտակազգեստ, սպիտակաշապիկ, սպիտակաշոր, կարմրաքող, կարմրաշոր, կարմրօձիք*** (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***կարմրաշալվար*** (ՆԲ, Ե, 68), ***կարմրամուշտակ*** (ԱՀՆԲ, 236), ***կարմրահանդերձ*** (ՆԲԲԲ, 94), ***կանաչահանդերձ*** (ՆԲ, Գ, 64) և այլն:

Ածական+գոյական կաղապարով անհոդակապ բարդություններից են՝ ***կեղծօձիք, կարմրօձիք, շեղօձիք, ոսկերիզ, սևերիզ*** (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***բարձրօձիք*** (ՆԲ, Գ, 24), ***փակօձիք*** (ՆԲ, Զ, 189) և այլն:

գ) ***Թվական+գոյական:*** Այս կաղապարով բաղադրված բարդությունները «հագուստ» իմաստային դաշտի բառերից կազմում են հատկանշային իմաստ արտահայտող բառեր՝ ածականներ՝ արտահայտելով որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ ***երկքղանցք*** (ՆԲ, Զ, 47), նորակազմությունը:

դ) ***Բայարմատ կամ բայահիմք+գոյական:*** Այս կաղապարով կազմվում են գոյականներ, ինչպես՝ ***զսպաշապիկ, լողազգեստ, սուզազգեստ*** (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***մարզաշապիկ*** (ԱՀՆԲ, 334) և այլն:

ե) ***Մակբայ+գոյական:*** Այս կաղապարով կազմված բարդությունները հիմնականում ունեն *գոյական* և մասամբ *ածական* անվան խոսքիմասային իմաստ, իսկ շարահյուսական կապակցության վերածելիս արտահայտում են որոշիչ-որոշյալ և մասամբ էլ պարագայական հարաբերություն, ինչպես՝ ***շրջազգեստ, կրկնազգեստ*** «(արևմտհ.) շորերի վրայից հագնելու թիկնոց», ***կրկնակոշիկ*** «խոնավությունից պահպանելու համար կոշիկի վրա հագնելու ռետինե ոտնաման» (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***կրկնագուլպա*** (ՆԲ, Զ, 95) և այլն:

2. Բայարմատ (բայահիմք) գերադաս անդամով կազմված բարդություններ, որոնց բնորոշ են հետևյալ կաղապարները.

ա) ***Գոյական+բայարմատ կամ բայահիմք:*** Նման կաղապարով բարդությունների բաղադրիչները իմաստային առումով կարող են արտահայտել

բայի և իր լրացումների՝ խնդրային և պարագայական շարահյուսական հարաբերություններ: Այսպես՝

- ուղիղ խնդիր հարաբերությամբ՝ ***զգեստափոխ, կոշկավաճառ, կոշկապահ, կոշկահան, լաթահավաք, կոշկակար, վեղարակիր, զգեստասեր, գլխափաթաթ, ծիրանեկիր//ծիրանակիր, կոճակարձակ, կոշկաջինջ*** «(հզվդ.) կոշիկ մաքրող փայլեցնող (արհեստավոր)» (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***չթավաճառ*** (ՆԲ, Ե, 119)***, զգեստակիր*** (ՆԲ, Ե, 42), ***թաշկինակավաճառ*** (ՆԲ, Ե, 47), ***երեսակար*** «երեսը կարած» (ՆԲ, Զ, 45), ***ճարմանդակիր*** (ՆԲ, Զ, 116),
- միջոցի խնդիր հարաբերությամբ՝ ***ասեղնագործ*** (ԺՀԼԲԲ)***, տարազահանդերձ*** «տարազով հանդերձավորված» (ՆԲ, Բ, 170), ***ճարմանդազարդ*** «ճարմանդներով զարդարված» (ՆԲ, Ա, 130),
- հանգման անուղղակի խնդիր հարաբերությամբ՝ ***գոտկահար*** «մինչև գոտին հասնող» (ԺՀԼԲԲ),
- տեղի պարագա հարաբերությամբ՝ (արևմտհ.) ***գլխադիր*** (ԱԱՆԲ)***, ուսարկ «անթև վերարկու»*** (ԺՀԼԲԲ) և այլն:

3. Գոյական+բայ կաղապարով բազմաթիվ բարդություններ են կազմվում *«հագուստ»* իմաստային դաշտի բառերից, ինչպես՝ ***ժապավենազարդել, կարակցել, կերպասագործել, մահուդապատել, շուլալակարել, չուխայապատել, պատանապատել, փաթաթակարել*** (ԺՀԼԲԲ), բարբառային բառերից՝ ***թելթփել*** «*Խրբ.* այնքան մաշվել, որ առէջի թելերը երևան» (ՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***քուղապնդել*** (ՆԲ, Ե, 149) և ***բայարմատ+բայ*** կաղապարով նորակազմ ***լցակարել*** *բարդությունը*՝ «լցակար անել, լցակարի միջոցով պատռվածքը կամ անցքը փակել՝ նորոգել» իմաստով (ՆԲ, Բ, 56) և այլն:

Պետք է նկատել, որ *«հագուստ»* իմաստային դաշտում կան բարդություններ, որոնք ունեն և՛ հոդակապով, և՛ անհոդակապ զուգահեռ ձևեր՝ առանց իմաստային տարբերության, ինչպես՝ ***վզակապ*** և ***վզկապ, երեսակալ*** և ***երեսկալ, թևաշոր*** և ***թևշոր, կրծակալ*** և ***կրծկալ, ուսակապ*** և ***ուսկապ*** և այլն (ԺՀԼԲԲ):

Ուսումնասիրությունից երևում է, որ *«հագուստ»* իմաստային դաշտի բառերից կազմված բարդությունների մի եզրը կարող է լինել՝ ա) **բարբառային** բառ, ինչպես՝ ***գլխալաչակ, երկարափեշ, լայնափեշ, զսպախալաթ*** (ԺՀԼԲԲ), բ) **արևմտահայերեն** բառ, ինչպես՝ ***կարճատաբատ*** (ՆԲ, Դ, 75), գ) **փոխառյալ** բառ կամ օտարաբանություն, ինչպես՝ ***կապրոնաթել, կոս-***

փյումապահ, կիսասապոգ, ցիլինդրաձև (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***ֆրակակիր*** (ՆԲ, Զ, 202), ***կինոզգեստ*** (ՆԲ, Դ, 78) և այլն:

Ոչ մեծ թիվ են կազմում եռաբաղադրիչ բարդությունները, ինչպես՝ ***կարմրավզկապ, կարմրափողկապ, կիսակարկատ, կիսաշրջազգեստ, ջրարջամուշտակ, կոշկակարկատ*** (ԺՀԼԲԲ), նորակազմություններից՝ ***բոլորաշրջազգեստ*** «կլոր՝ շրջանաձև զգեստ» (ՆԲ, Դ, 25), ***ներքնաշրջազգեստ*** «շրջազգեստի տակից հագնելու համար նախատեսված ներքնաշոր» (ՆԲ, Գ, 108), ***փողկապանման*** (ՆԲ, Ե, 146), ***կիսաճտքակոշիկ*** (ՆԲ, Զ, 88), ***ձյունակրկնակոշիկ*** (ՆԲ, Զ, 114), ***քողարկաբաճկոն*** (ՆԲ, Զ, 195) և այլն:

Այս բոլոր օրինակների կառուցվածքային հատկանիշը բաղադրական հիմքերից կազմված լինելն է, իսկ կազմության եղանակի էական հատկանիշը բաղադրիչների համադրումն է (սինթեզը) մեկ անբաժանելի միասնության մեջ:

Ինչպես նկատեցինք, *«հագուստ»* իմաստային դաշտի բառերից կազմված բարդություններում **ու, ի** ձայնավորները, որոշ բառերում՝ **յա, յու** հնչյունակապակցությունները (երկհնչյունները), զրկվելով շեշտից և նախաշեշտ դիրք գրավելով, կարող են սղվել կամ ամփոփվել (ի, ու>ը կամ զրո, յա>ե, յու>ե). ինչպես՝ ***թավշակար, կոշկաթել, բրդազգեստ, կնգղազգեստ, քրձազգեստ, ժանեկազարդ*** (ԺՀԼԲԲ), այդպես նաև՝ ***եղջերամուշտակ*** (ՆԲ, Ե, 36) նորակազմությունը և այլն: Դրա հետևանքով **ե (է), ի, ու** ձայնավորներով և **յա, ույ** հնչյունակապակցություններով բաղադրական հիմքերն ունենում են երկուական դիրքային տարբերակ՝ անհնչյունափոխ և հնչյունափոխված, ինչպես՝ ***շեղ(օձիք), բարձր(օձիք)*** և ***(օձք)ափակ, (օձք)ածալ, սևա(կնգուղ)*** և ***(կնգղ)աձև, կիսա(կոշիկ)*** և ***(կոշկ)ահան, մետաքսա(թավիշ)*** և ***(թավշ)ակար, ծաղկա(չիթ)*** և ***(չթ)ածածկ, ժամա(շապիկ)*** և ***(շապկ)աընկեր*** (բրբ.) «վարտիք», ***լանջա(գոտի)*** և ***(գոտ)եզարդ, (գոտ)եծև*** (ԺՀԼԲԲ) և այլն:

Հաճախ նույն բարդությունը առկա է և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ տարբերակներով, ինչպես՝ ***գուլպակապ*** և ***գուլպայակապ, սամույրազգեստ*** և ***սամուրազգեստ, սամույրամուշտակ*** և ***սամուրամուշտակ, սենյակազգեստ*** և ***սենեկազգեստ, կոճակածակ*** և ***կոճկածակ*** (ԺՀԼԲԲ) և այլն:

Բարդության առաջին եզրի բաղադրիչներն իրենց ձևաբանական և հնչյունական համակարգի մի շարք կողմերով կապված լինելով հին հայերենի հետ, ժամանակակից հայերենի բարդության համակարգում հանդես են բե-

րում լեզվական տարբեր յուրահատկություններ ու օրինաչափություններ[5]: Օրինակ՝ *«հագուստ»* իմաստային դաշտի մի շարք բարդ բառերում անեզական բառերի ***ք*** վերջավորության անկման երևույթը, ինչպես՝ ***կուրծք-կրծկալ***: Կան բարդություններ էլ, որոնցում ***ք***-ն պահպանվում է, ինչպես՝ ***նեղճիփք***, ***ճտքակոշիկ, ճտքածալ, լայնափողք*** (ԺՀԼԲԲ), այդպես նաև՝ ***թևքածալ*** (ՆԲ, Զ, 59) նորակազմությունը և այլն: Մեր առանձնացրած բառացանկում առկա են հին անեզական բառերով բաղադրված բառերի ***ք*** մասնիկով վերջացող և առանց ***ք***-ի տարբերակներ, ինչպես՝ ***կողագրական*** և ***կողքագրական, կուրծքկալ//կրծքակալ*** և ***կրծկալ*** (ԺՀԼԲԲ) և այլն:

«Հագուստ» իմաստային դաշտում առկա են նաև այնպիսի բարդություններ, որոնց առաջին բաղադրիչը ***ն*** բաղաձայնով վերջացող հինհայերենյան բառ է, և բառակազմության ժամանակ վերջին ***ն***-ն արդի հայերենում ընկել է, ինչպես՝ ***ձեռակար, ոտաշոր,*** սակայն մի շարք բարդությունների առաջին եզրում վերականգնվում է, ինչպես՝ ***ասեղ[ն]ակար, ոտ[ն]ակապ, ոտ[ն]ման, ոտ[ն]աժապավեն, ձեռ[ն]ամուշտակ, հարս[ն]աշոր, հարս[ն]ատարազ, հարս[ն]աքող*** և այլն (ԺՀԼԲԲ):

Բ) Անիսկական բարդությունների բառակազմական, իմաստային, շարահյուսական էական առանձնահատկությունների հիման վրա տարբերում ենք *հարադրական* և *կցական* բարդություններ:

Հարադրական բարդություններ: Արդի գրական հայերենի *«հագուստ»* իմաստային դաշտի հարադրական բարդությունները հազվադեպ են (ի տարբերություն համադրական բարդությունների): Դրանք առավել գործածական են բարբառներում: Նման բարդությունների բաղադրիչները *ձևային* տեսակետից անկախ են, ունեն առանձին բառական շեշտ, իսկ *իմաստային* տեսակետից անկախ չեն և արտահայտում են բառային մեկ ամբողջական, ընդհանրական իմաստ[6]:

Հաշվի առնելով դրանց խոսքիմասային պատկանելությունը՝ առանձնացրել ենք *անվանական* և *բայական* հարադրություններ:

Անվանական հարադրությունները կազմվել են տարբեր անուն խոսքի մասերից, և դրանց բաղադրիչները միմյանց հետ կապվում են համադասական և ստորադասական հարաբերությամբ: Ըստ այդմ էլ լինում են՝

---

[5] **Մ. Աբեղյան,** Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 195-198:

[6] **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.,** Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1979, հ. 1, էջ 258:

ա) **կրկնավոր,** ինչպես՝ ***թել-թել*** (ԺՀԼԲԲ)**,** բարբառներում՝ ***փոթ-փոթ*** «*Պլ.* ծալ-ծալ», ***պըլե-պըլե*** «*Մշ. (Բղշ.)* զգեստը թույլ հագնող»: Երբեմն կրկնավոր հարադրության առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնը դուրս է ընկնում, ինչպես՝ բարբառներում առկա ***ալաս-փալաս*** բարդությունը՝ «անարժեք լաթեղեն» իմաստով, կամ՝ երկրորդ բաղադրիչի մեջ փոխվում է առաջին բաղադրիչի ձայնավորը, ինչպես՝ ***փալաս-փուլուս,*** երբեմն էլ կրկնավորների մեջ կրկնվում է առաջին վանկը, ինչպես՝ բարբառային ***կուտ-կուտուզ*** բարդությունը՝ «*Նկմ.* հագնված-զուգված» իմաստով (ՀԼԲԲ),

բ) **բաղհյուսական հարադրություններ,** որոնք, ըստ կապակցման ձևի, լինում են *շաղկապավոր* և *անշաղկապ,* ինչպես՝ *շաղկապավորներից*՝ ***չուլ ու փալաս***, ***կար ու կաթ*** (բրբ.) «կարելու զանազան բաներ, 2. կարելու աշխատանք» (ՀԼԲԲ), *անշաղկապ բաղհյուսական հարադրության* օրինակ է արևմտահայերենում առկա ***հագուածք-շքուածք*** բարդությունը՝ «հագնվելու՝ զուգվելու ձև» իմաստով (ԱԱՆԲ) և այլն:

գ) ***Նոր փիպի***[7] ***անվանական հարադրություններից*** *«հագուստ»* իմաստային դաշտում առանձնացրել ենք այնպիսի օրինակներ, որոնց բաղադրիչները բարդության մեջ ստորադասական հարաբերություն ունեն, այսինքն՝ առաջին բաղադրիչը ստորադասվում է երկրորդին, լրացնում է նրան և ամբողջ բարդությունն արտահայտում է որոշիչ-որոշյալի հարաբերություն, ինչպես՝ ***զապող-խալաթ*** (ԺՀԼԲԲ), բարբառներում՝ ***կես-բաբուճ*** «*Պլ.* 1. կիսամաշ կոշիկ, 2. *փխբ.* դեն գցելու բան», ***փերչամ-բաստի*** «*ՆՆ.* հարսի գլխի ծածկոց», ***քոլլիկ-գլուխ*** «կանանց հատուկ գլխանոց, բաղկացած խեժավոր թաղիքից և կարծր գտակից», ***սրմա-զպուն*** «*Վն.* սրմայով՝ ոսկեթելով ասեղնագործած կանացի երկարափեշ զգեստ, պարեգոտ» (ՀԼԲԲ) և այլն:

Բայական հարադրությունները թեև համալրում են ժամանակակից հայերենի բայական բառապաշարը, սակայն հազվադեպ են *«հագուստ»* իմաստային դաշտում, ինչպես՝ ***կար անել:*** Ունենալով բառական, քերականական, իմաստային և ոճական յուրահատկություններ՝ սրանք ամբողջությամբ վերցրած բայիմաստ են արտահայտում և տարբեր կենսունակությամբ գործել են մեր լեզվի զարգացման բոլոր շրջաններում: *«Հագուստ»* իմաստային դաշտի բայական հարադրություններից շատ կան բարբառներում, ինչպես՝ ***կռնակ անցնել*** «*Պլ.* հագնվել», ***կար կարել*** «կար անել, կարել», ***կուտկապ էնել*** «շապկի ներքևի եզրերը նախշազարդել», ***կարկտան***

[7] Նույն տեղը, էջ 269-270:

անել «հին՝ պատառոտված շորեր կարկատել», ***կտոր գցել//կտոր դնել*** «հագուստը՝ ոտնամանը կամ այլ բան նորոգելիս կարկատան անել, կարկատել», ***հատը գնալ*** «գուլպայի՝ գործվածքի թելը քանդվել», ***հատը հավաքել*** «գուլպայի կամ այլ հյուսվածքի բաց թողած հատը վերականգնել՝ վերահյուսել», ***պտղունց ունենալ*** «կար ու ձև իմանալ, ասեղնագործության շնորհք ունենալ», ***տոմբախ՝ տոնբախ ածել*** «նոր հագած զգեստի համար նվեր՝ շնորհավորանք տալ», ***փոթ-փոթ քցել*** «*Ղրբ.* հագուստի վրա ծալքեր՝ դարսեր անել» (ՀԼԲԲ) և այլն:

Հարադրական բայերի մեջ առանձնացրել ենք նաև մի քանի *զուգադրական բայեր,* որոնց բաղադրիչները միասին վերցրած արտահայտում են երկու և ավելի գործողությունների յուրահատուկ ընդհանուր իմաստ, որի մեջ առկա են բոլոր բաղադրիչների բառային իմաստներն էլ՝ առանց որևէ մեկի իմաստի գերազանցության, ինչպես՝ ***հագնել-կապել, հագվել-զուգվել*** (ԺՀԼԲԲ) և այլն:

Կցական բարդություններ: *«Հագուստ»* իմաստային դաշտում բայական կրկնավորներից առաջացած կցական բարդություններից հանդիպում ենք՝ ***կարկատել***, որտեղ ինչյունափոխություն է տեղի ունեցել առաջին եզրում տարնմանության օրենքով՝ **կար-կար-ել**, կրկնավորներից առաջացած կցական բարդություն է նաև բարբառային ***փոֆփոֆ***-ը՝ «*Պլ.* շռայլված զգեստ» (ՀԼԲԲ) իմաստով:

Բաղիյուսական հարադրություններից առաջացած կցական բարդություններից է ***կուշտուհագնված*** «կուշտ և հագնված, ապահովված» (ԱՀՆԲ, 254) նորակազմությունը, ինչպես նաև՝ բարբառային հետևյալ բառերը՝ ***լանթուփթուր*** «հնացած, մաշված քուրջ դարձած», ***խադուխուլինջ*** «*Հմշ.* տարբեր գույներով դաջված (կտորի մասին)», ***փուլուշար*** «*Կլկ. (Մրշ.)* ոսկե՝ արծաթե թելերով հյուսած հարսնաքող» (ՀԼԲԲ) և այլն:

Եզրակացություն

Այսպիսով՝ քննելով *«հագուստ»* իմաստային դաշտի բառերից կազմված *բուն* կամ *իսկական* բարդությունները՝ տեսնում ենք, որ դրանք մեծ թիվ են կազմում և հիմնականում բաղադրված են *գոյական+գոյական* և *ածական+գոյական* կաղապարներով: *Անիսկական* բարդություններն առավել հաճախ հանդիպում են բարբառներում: Նկատվում է նաև որոշ ձևույթների բառակազմական ակտիվություն. *զգեստ, հանդերձ, կոշիկ, օձիք* արմատները բավական հաճախադեպ են:

Ի դեպ, լեզվի զարգացման ընթացքում, պահպանվելով նախորդ փուլերի բառակազմական համակարգերի իրողությունները՝ առավել կամ պակաս կենսունակությամբ, ի հայտ են գալիս նորակազմություններ, որոնք կարող են իրենց տեղը գտնել հայերենի բառագանձարանում՝ հարստացնելով և համալրելով այն, կամ էլ մեկուսացած մնալ՝ իբրև իրավիճակային պահանջով կազմված բառեր՝ չդառնալով լեզվական իրողություն:

Համառոտագրություններ

Մշ.-Մուշ	**ՆՆ-Նոր Նախիջևան**
Բղշ.-Բաղեշ	**Ղրբ.-Ղարաբաղ**
բրբ.-բարբառային	**Հմշ.-Համշեն**
Նկմ.-Նիկոմեդիա	**Կլկ.-Կիլիկիա**
Պլ.-Պոլիս	**Մրշ.-Մարաշ**
փխբ.-փոխաբերական	**արևմտհ.-արևմտահայերեն**
Վն.-Վան	**հզվդ.-հազվադեպ**

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աբեղյան Մ.,** Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. **Աբրահամյան Ս.,** Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981:
3. **Աղայան Էդ.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
4. **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.,** Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979:
5. **Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ.,** Արդի հայերենի բառապաշարը, Երևան, 2020:
6. **Էլոյան Ս.,** Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:
7. **Էլոյան Ս.,** Արդի հայերենի նորաբանությունների բացատրական բառարան, Երևան, 2002թ.:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1969-1980:
9. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. 1-7, Երևան, 2001-2012:
10. **Ղամոյան Լ.,** «Հագուստ» իմաստային դաշտը նորակազմ բաղադրություններում // Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ, Երևան, 2020, էջ 105-119:

11. **Մեյթիխանյան Փ.,** Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, 1996:

12. Նոր բառեր (կազմ.՝ **Ա. Գալստյան** և ուրիշներ), Ա-Զ, Երևան, 2015-2021թթ.:

13. **Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ.,** Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980:

14. **Սաքապետոյեան Ռ.,** Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երևան, 2011:

COMPOUNDINGS IN THE SEMANTIC FIELD "CLOTHES"

GHAMOYAN LUSINE
PhD in Philology,
Senior Researcher at the Institute of Language after
H. Acharyan, NAS RA.
e.mail: lgamoyan@mail.ru

The purpose of this article is to present and classify compound words by types, constituent components, internal relations between them by considering the word-formation system of the semantic field "clothes". According to the grammatical expression of compoundings from the three parts of speech (noun, adjective, verb), acting in structures-formulas of initial or valid complications, first of all, the noun is distinguished according to the following patterns: noun + noun, adjective + noun, numeral + noun, adverb + noun, verb root + noun. There are many compound words with a predominant verb root, consisting mainly of noun + verb root. Their components semantically express additional-objective syntactic relations.

The following compoundings have been singled out: a) compoundings with or without synharmonisms, which have parallels; b) compoundings, in which one of the components is a dialectal, Western Armenian or a borrowed word, etc.

On the basis of the word-formation, semantic and syntactic essential features of the actual compoundings, we identify relatively adjectival complications. Comparative complications, in turn, are classified according to noun (duplicative, syntactic) and verb relations. Adjectival compoundings in the semantic field of "clothes" emerged because of duplicates, which are more common in dialects.

Attention was also paid to newly-formed compoundings.

Key words: *compound words, original or actual, pattern, inadmissible, relative, duplicate, syntactic, adjective, neologisms.*

СЛОВОСЛОЖЕНИЯ В СЕМАНТИЧЕСКОМ ПОЛЕ «ОДЕЖДА»

ГАМОЯН ЛУСИНЕ
Кандидат филологических наук
Старший научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА
электронная почта: lgamoyan@mail.ru

Целью данной статьи является представление и классификация сложных слов по типам, составляющим компонентам, внутренним отношениям между ними, путем рассмотрения словообразовательной системы семантического поля «одежда».

Основные типы сложных слов выделяются исходя из характера главного, управляющего (синтаксически независимого) члена словосочетаний: существительного, глагола, прилагательного. Из них, в первую очередь, выделяют имя существительное по следующим закономерностям: имя существительное + имя существительное, прилагательное + существительное, имя числительное + существительное, наречие +существительное, корень глагола + существительное. Есть много сложных слов с превалирующим глагольным корнем, состоящих в основном из существительного + корень глагола. Их компоненты семантически выражают дополнительно-обстоятельственные синтаксические отношения.

Были выделены: а) словосложения с сингармонизмом или без-, имеющие параллели, б) словосложения, одним из компонентов которых является диалектное, западноармянское или заимствованное слово, в) словосложения, которые присутствуют как в чередованных, так и в нечередованных версиях и т. д.

На основе словообразовательных, семантических и синтаксических существенных признаков исконно сложных слов выделены сопоставленные и соединительные словосложения. Сопоставленные словосложения, в свою очередь, классифицируются по номинальным (итеративные, соединительные) и глагольным отношениям. Соединительные словосложения в семантическом поле «одежда» возникли из-за дубликатов, которые чаще встречаются в диалектах.

Обращалось внимание и на новообразованные словосложения.

Ключевые слова: *сложные слова, исходное или действительное, шаблон, недействительное, относительное, дублирующее, синтаксическое, прилагательное, новообразования.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ[1] ԾԱԳՄԱՆ ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81
DOI: 10.56246/18294480-2023.14-23

ՊԱՊԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ
ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ papikyansilva@yandex.ru

Յուրաքանչյուր ժողովրդի լեզվում արտացոլվում է նրան շրջապատող իրականությունը: Հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքում տեղի ունեցած ամեն փոփոխություն իր արտահայտությունն է գտնում տվյալ լեզվի բառապաշարում: Հայ ժողովուրդը իր պատմական զարգացման ընթացքում քաղաքական և մշակութային կապերի մեջ է եղել տարբեր ժողովուրդների հետ և փոխառել բազմաթիվ բառեր: Փոխառությունների մեջ առանձնանում է մի շերտ, որն անվանվում է հատկական փոխառություն (էկզոտիզմներ, տարաշխարհիկ բառեր, օտար բառեր), որոնք հատկապես շատ են թարգմանական գրականության մեջ, մամուլում՝ տեղական միջավայրի, կոլորիտի պահպանման, օտար իրույթները (ռեալիաներ) նկարագրելու համար:

Ուսումնասիրության նպատակն է քննել թյուրքական լեզուներից փոխառված որոշ հատկական փոխառություններ և դասակարգել դրանք: Նյութը հավաքել ենք տարբեր աղբյուրներից՝ բառարաններ, մամուլ, գեղարվեստական գրականություն, հեռուստաեթեր և այլն:

Առանձնացվել են հետևյալ իմաստային խմբերը՝ կրոնական բառեր, զենք-զինվոր, հագուստ, կացարան-տարածք, ընդհանուր բառեր: Քննությունից պարզվում է, որ թյուրքական ծագման հատկական փոխառությունների մի մասը թուրք-թաթարական են, մի մասը միջնորդավորված փոխառու-

[1] Թյուրքական լեզուների մեջ են մտնում թուրքերենը, ադրբեջաներենը, թուրքմեներենը, բաշկիրերենը, ուզբեկերենը, ղազախերենը, ղրղզերենը, չուվաշերենը, յակուտերենը և այլն: Տե՛ս А. Реформатский, Введение в языковедение, М., 1967, с. 423-424: Տե՛ս նաև Էդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 449:

թյուններ են այլ լեզուներից, մի մասն էլ բառիմաստի ընդլայնում է ունեցել տարբեր հիմունքներով:

Բանալի բառեր՝ *բառապաշար, փոխառություն, փոխաբերացում, բառիմաստի ընդլայնում, իմաստափոխություն, բարբառ, միջնորդավորված փոխառություն:*

Յուրաքանչյուր ժողովրդի լեզվում արտացոլվում է նրան շրջապատող իրականությունը: Հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքում տեղի ունեցած յուրաքանչյուր փոփոխություն իր արտահայտությունն է գտնում բառապաշարում: Կենդանի լեզուների բառապաշարը գտնվում է շարունակական զարգացման և կատարելագործման գործընթացում: Բառապաշարի համալրման գործում կարևոր դեր են կատարում փոխառությունները, որոնք հետևանք են ազգերի, ժողովուրդների միջև փոխադարձ շփումների, մշակութային և տնտեսական փոխհարաբերությունների: Սկզբնաղբյուր լեզվից վերցնելով նոր հասկացությունը՝ փոխառու լեզուն վերցնում է նաև օտար բառը՝ մինչև իր բառակազմական հնարավորություններով սեփական բառի ստեղծումը: Երբեմն փոխառյալ բառը արմատանում է և դառնում բառապաշարի գործուն անդամ: Փոխառությունների մեջ որոշակի քանակ են կազմում հատկական փոխառությունները[2] (անվանվում են նաև էկզոտիզմներ, տարաշխարհիկ բառեր, օտար բառեր): (Հատկական փոխառությունների քննությանը անդրադարձել ենք մի քանի հոդվածներում[3]): Այս բառերը պատկանում են բառապաշարի ոչ գործուն շերտին, գործածվում են ըստ անհրաժեշտության. հատկապես շատ են հանդիպում թարգմանական գրականության մեջ, մամուլում՝ մասնավորապես տեղական միջավայրի, կոլորիտի պահպանման, օտար իրույթները (ռեալիաներ) նկարագրելու համար: Դրանց գործածությունը նպաստում է ոչ միայն տվյալ ժողովրդի կյանքի, ժամանակաշրջանի, կենցաղի մասին որոշակի պատկերացումներ կազ-

[2] Այս տերմինը շրջանառության մեջ է դրել Էդ.Աղայանը: Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե,. 1984. էջ 169: Կարծում ենք՝ բառը լիովին բացահայտում է նրա հիմքում ընկած հասկացության իմաստը:

[3] Տե՛ս Ս. Պապիկյան, *Արաբական ծագման հատկական փոոխառությունների քննություն*, Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, 2021, թիվ 10, էջ 341-348, *Հատկական փոխառությունների քննություն*, Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, 2021, թիվ 11, էջ 313-321:

մելուն, այլև որոշակի հուզական-զգացական վերաբերմունք է առաջացնում: Ժամանակի ընթացքում այս բառերի մի մասը կարող է ձեռք բերել միջազգային տարածվածություն՝ այնուամենայնիվ պահպանելով որոշակի ազգային նրբերանգ: Այս խմբի մեջ մտնում են ազգային դրամական միավորների, կերակրատեսակների, հագուստի անվանումների, տիտղոսների, կոչումների, կացարան անվանող բառերի անվանումները և այլն: Ժամանակի ընթացքում որոշ հատկական փոխառություններ կարող են համալրել սովորական փոխառությունների շարքը, երբ յուրացված են փոխառու լեզվի կողմից:

Ինչպես հայտնի է, հատկական փոխառությունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ լայն և նեղ ընդգրկում ունեցող: Լայն ընդգրկում ունեցողները գործածվում են շատ լեզուներում, նեղ ընդգրկում ունեցողները՝ մեկ-երկու լեզվում:

Հատկական փոխառությունները կարելի է քննել տարբեր տեսանկյուններից՝ 1. ըստ ծագման, 2. ըստ բառիմաստի փոփոխության, 3. ըստ ժամանակաշրջանի, 4. ըստ իմաստային խմբերի և այլն:

Հոդվածում դիտարկվել են թյուրքական ծագման որոշ հատկական փոխառություններ, որոնք դասակարգվել են տարբեր խմբերում:

Հայերը երկար ժամանակ, սկսած 11-րդ դարից, եղել են թուրք-թաթարական զանազան ցեղերի՝ սելջուկների, թաթարների, թուրքմենների, օսմանյան թուրքերի տիրապետության տակ: Բնականաբար, փոխադարձ շփումների հետևանքով կատարվել են կյանքի տարբեր բնագավառներն ընդգրկող բազմաթիվ փոխառություններ: Դրանք հատկապես շատ են բարբառներում, որոնց մի մասը պահպանվել է մինչև հիմա: Թյուրքական լեզուները իրենց հերթին բազմաթիվ փոխառություններ են կատարել արաբերենից և իրանական լեզուներից, որ հայերենին են անցել թուրքերենի միջնորդությամբ, միջնորդավորված փոխառություններ են: Սակայն որոշ բառերի դեպքում դժվար է որոշել՝ դրանք հայերենին անցել են անմիջականորե՞ն, թե՞ միջնորդավորված են:

Ըստ Հ. Աճառյանի՝ հայերենում թուրքերենից կատարված փոխառությունների քանակը 4000-ից ավելի է, որոնք բոլորն էլ ժողովրդական փոխառություններ են[4]:

---

[4] Տե՛ս Աճառյան Հր, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1951, հ. 2, էջ 270, Ալ. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1993, էջ 162:

Թուրքերենից կամ թուրքերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունները դասակարգել ենք հետևյալ խմբերում՝

1. կրոնական բառեր, 2. տիտղոս- կոչում- դիմելաձև, 3. զենք-զինվոր, 5. հագուստ, 6. կացարան-տարածք, 7. ընդհանուր բառեր: Բառերի՝ միջնորդավորված լինելու դեպքում փակագծերում տրվել է նաև փոխատու լեզուն[5]:

1. Կրոնական բառեր՝ *բայրամ՝* թուրք.՝ bayram՝ «*հանդիսություն*»՝ «մահմեդականների երկու եռօրյա տոների անվանումները. առաջին մասը սկսվում է Ռամազանից անմիջապես հետո, երկրորդ մասը՝ առաջինից յոթ օր հետո», ***գյավուր*** (<թուրք. gĕvur < արաբ.)՝ «*անհավատ*՝ մամեդականների կողմից քրիստոնյաներին տրվող արհամարհական անվանում», ***նամազ*** (< թուրք. < պարսկ՝. nemaz՝ *աղոթք*)՝ «մահմեդականների առօրյա աղոթք, որ կատարվում է օրական հինգ անգամ», ***շեյթան*** (< թուրք. < արաբ. šaitân՝ *դև*) «մահմեդական դիցաբանության մեջ՝ չար ոգի, դև»:

Բերված օրինակներում կրոնական բնույթի բառերը միջնորդավորված փոխառություններ են արաբերենից և իրանական լեզուներից:

2. Տիտղոս-կոչում-դիմելաձև՝ *աղա՝* թուրք. aga. ըստ ՀԲԲ-ի[6]՝ փոխառություն թուրքերենից (տաճկերենից): Բառն արձանագրված չէ ՀԱԲ-ում[7], Ջահուկյանի ՀՍԲ-ում[8]: ՀԲԲ-ում ունի 9 իմաստ՝ «կալվածատեր, ազնվական, ունևոր, գործատեր, կոչում, հարգական տիտղոս, փխբ. բարեկեցիկ, ած. առատաձեռն, խորհրդային տարիներին՝ անարգական բառ», ***բեգ/բեկ/բեյ***՝[9] թուրք.՝ bey «1. ֆեոդալների, կալվածատերերի և պաշտոնյաների տիտղոսը թյուրքական ժողովուրդների մոտ, 2. գործածվում է հատուկ անուններին կից», ***էֆենդի՝*** թուրք. efendi՝ «Թուրքիայում՝ տղամարդուն տրվող հարգական տիտղոս, որ համապատասխանում է *պարոն*-ին», ***խաթուն՝*** թաթար.՝ xatun՝ «*կին, ազնվական տիկին, տիրուհի*»՝ «1. խազարների թագուհու պատվանուն, հարգական կոչում, 2. իշխանուհի, տիկին, 3. տիկին, 4. տիկնիկ, 5. փխբ. պարկեշտ, զգոն»[10], ***խան՝*** թաթար.՝ xan՝ «1. թաթարների և մոնղոլների

---

[5] Հոդվածում բառերի բացատրությունները տրված են՝ ըստ գրականության ցանկում ներկայացված բառարանների:

[6] Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., 1944-1945 թթ.:

[7] Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ),հհ.1-4, Ե., 1971-1979:

[8] Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՍԲ), Ե., 2010:

[9] Հաճախ գործածվում է որպես հատուկ անունների բաղադրիչ, հմմտ. *Նովրուզ բեկ, Իզմայիլ բեյ:*

[10] *Խաթուն* արմատով հայերենում բաղադրված են *խաթունանակ*՝ «խաթունի պես», խաթունավայել «խաթունին վայելուչ», *խաթունիկ* «փոքր՝ դեռահաս խաթուն», խաթմամայ՝ խաթուն+

իշխանապետների տիտղոսը, թաթարների թագավոր: 2.տիտղոս զանազան իշխանական տոհմերի՝ թաթարական ծագումով: 3. Պարսկաստանում՝ ազնվական ծագում ցույց տվող տիտղոս, որ տրվում է ավատական իշխաններին կամ դրվում է անուններից հետո՝ իբրև պատվանշան». հմմտ. Հովհաննես խան Մասեհյան, ***խանում*** թուրք.՝ xanɣm «*տիկին*»՝ «տիկին, հարգական մակդիր, փխբ. շնորհալի»՝ Մեր կատուն *խանում* կատու է (ՀԲԲ), ***փաշա՝*** թուրք.՝ paša՝ «1. Թուրքիայում՝ քաղաքացիական և զինվորական բարձր կոչում, 2. նահանգապետ Թուրքիայում, 3. հարգական մակդիր, որ դրվում է ազգակցություն ցույց տվող բառերից առաջ, 4. ազնվատոհմ», ***սուլթան*** (< թուրք. < արաբ. sultân)՝ «մահմեդական երկրներում՝ միապետի ժառանգական տիտղոս, ինչպես և այդ տիտղոսը կրող անձը, 2. փխբ. տիրակալ», ***վեզիր*** (<թուրք. <արաբ. vezir) «Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում՝ բարձրաստիճան պալատական պաշտոնյա, խորհրդական»:

Բերված օրինակներում տիտղոսներ, կոչումներ անվանող հատկական փոխառությունները անմիջական փոխառություններ են թյուրքական լեզուներից (բացառությամբ *վեզիր* և *սուլթան* բառերի, որոնք միջնորդավորված փոխառություններ են արաբերենից): Սրանք տարածված են աշխարհի շատ լեզուներում, կարելի է ասել՝ հարում են միջազգային բառերի շերտին:

3. Զենք- զինվոր[11]**՝** ***ասկյար/ասկեր*** (< թուրք. < արաբ. asker)՝ «թուրք զինվոր», ***բաշիբոզուկ***՝ bašibozuk՝ թուրքերենում բառացի՝ *գլուխը խանգարված*[12] «անկանոն զորք և այդպիսի զորքի զինվոր: 2. թուրք զինվոր, 3. փխբ. վայրագ, վայրենի» (ԱՀԲԲ), ***բասմաչ՝*** basmač «հակահեղափոխական բանդայի անդամ Միջին Ասիայում. 1918-24թթ. ոչնչացվել են Կարմիր բանակի կողմից», ***ենիչերի/ենիչարի/յանիչարի***՝ թուրք.՝ yeničeri՝ «նոր զորք»՝ «1.բռնի մահմեդականացված քրիստոնյա մանուկներից կազմված զորքի զինվոր Թուրքիայում, 2. փխբ. վայրագ, վայրենի մարդ», ***կազակ*** (< ռուս. < թյուրքական լեզուներից)՝ «ազատ, կտրիճ, անվեհեր մարդ», ***համիդիե՝***

մամայ՝ «մեծ մայր», խաթունմայ՝ խաթուն+ մամայ՝ «1.զոքանչ, 2.հարգական կոչում պատվավոր կանանց, տիկին» (ՀԲԲ):

[11] Այս խմբի մեջ մտնող բառերից մի քանիսին՝ *ասկյար, բաշիբոզուկ, ղզլբաշ, չավուշ,* անդրադարձել ենք «Հատկական փոխառությունների քննություն» հոդվածում: Տե՛ս Գիտական հոդվածների ժողովածու, Գավառի պետական համալսարան, 2021, թիվ 10, էջ 313-321:

[12] Ռուսերենը նույնպես բառը փոխառել է թուրքերենից՝ *баш* - «голова», бозук- «потерянная, обреченная», Краткий этимологический словарь русского языка,, М. 1971, էջ 38: Փոխաբերական իմաստով բառը հոմանիշ է ռուսերեն «головорез» բառին:

թուրք.՝ hamidie՝ «սուլթան Համիդի կազմակերպած քրդական հեծելազոր», ***յաթաղան՝*** yatagăn՝ «կոր, կարճ թուր՝ Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մոտ», ***ղզլբաշ՝*** թուրք.՝ kizilbaš՝ բառացի՝ «կարմրագլուխ»[13], ***չավուշ՝*** թուրք.՝ čavuš՝ «արքունական զինվոր Օսմանյան կայսրությունում, տասնապետ զինվոր»[14]:

4. Հագուստ՝ ***բաշլըղ/բաշլուղ՝*** թուրք.՝ bašlŋk՝ «հաստ կտորից գլխի ծածկոց՝ վեղարի ձև ունեցող, սուր, երկար ծայրերով կամ ականջներով, որով կարելի է փաթաթել գլուխը և ծայրերը փաթաթել վզին», ***բաշմակ*** < թաթար.՝ bašmag՝ «կանացի կամ երեխայի՝ հիմնականում կաշվից կարված ցածրակրունկ կոշիկ», ***բեշմետ՝*** թուրք.՝ bešmet՝ «տղամարդու զգեստ, որ տարածված է Միջին Ասիայում և Հյուսիսային Կովկասում», ***յափնջի/յափունջի՝*** < թուրք.՝ japunža՝ *այծենակած* «1. այծամազից պատրաստված կաճ՝ թաղիք, 2. թաղիքից պատրաստված հագուստ», ***չալմա՝*** *թուրք.*՝ čalma՝ «մահմեդականների գլխի փաթթոց՝ նուրբ, երկար կտոր, որ մահմեդականները մի քանի փաթ փաթաթում են ֆեսի շուրջ: Սպիտակ չալման վերապահված է սեիդներին, կանաչ չալման՝ էմիրներին» (ՀԲԲ), ***փարաջա/ փերաճիկ՝*** թուրք.՝ feraǧ՝ «թուրք կանանց շրջազգեստ»՝ «1. հոգևորականի երկար զգեստ, 2. կանանց երկար զգեստ Արևելքի երկրներում», ***ֆես՝*** թուրք.՝ fes՝ տղամարդկանց և կանանց գլխարկ, սովորաբար կարմիր գույնի՝ առանց կողերի և ճակատնոցի. ունենում է մետաքսե ծոպ: Անունն ստացել է Մարոկկոյի Ֆեց քաղաքի անունից, որտեղ արտադրվում էր: Հավանաբար թուրքերենի միջնորդությամբ է անցել մյուս լեզուներին, նաև՝ հայերենին: Շատ տարածված է եղել Մերձավոր Արևելքում, Թուրքիայում, Արևմտյան Հայաստանում:

5. Կացարան-տարածք՝ ***աուլ՝*** թուրք.՝ aul՝ «գյուղ՝ Միջին Ասիայում և կովկասյան լեռնականների մոտ», ***ղշլաղ/ ղշլայ՝*** թուրք.՝ kŋšlak՝ «ձմեռանոց»՝ «1. ձմեռանոց, 2. լեռան հարավային կողմը, որտեղ ձմեռները ոչխարները կարողանում են աշնանից մնացած խոտը արածել», ***յուրտ/յուրդ՝*** թաթար.՝ yürt՝ «բնակատեղի, ուրթ»՝ «շարժական վրան Կենտրոնական և Մի-

---

[13] ԱՀԲԲ-ում *Ղզլբաշ* բառի իմաստը հղվում է *Կարմրագլուխ* գլխաբառին: Ըստ ՀԲԲ-ի՝ «պարսիկ»: «Կարմրագլուխ» անվանումը տրվել է պարսիկներին՝ գլխին կարմիր փաթթոց՝ չալմա փաթաթելու համար:

[14] Հայերենում բառն ունի 5 իմաստ՝ «1. տասնապետ, 2. մունետիկ, 3. դիտող, 4. լրտես, 5.նվիրակ» (ՀԲԲ): Փոխառյալ բառը հայերենում իմաստի ընդլայնում է ունեցել տարբեր՝ կցորդության և գործառական հիմունքներով:

ջին Ասիայի վաչկատուն ժողովուրդների մոտ», ***չադր***՝ թուրք.՝ čadər՝ «վրան, տաղավար», ***վիլայեթ*** (< թուրք. < արաբ. vilâyet) «վարչատարածքային միավոր Թուրքիայում»:

6. Ընդհանուր բառեր՝ *բուռդյուկ* թուրք.՝ *burdyuk*՝ «Կովկասում, Սիբիրում՝ այծի կաշվից պարկ՝ հեղուկ պահելու համար», ***կունակ***՝ թուրք.՝ kunak՝ «բարեկամ, մտերիմ, ընկեր», ***մանկուրտ***՝ փոխառություն ղրղզերենից[15]:

20-րդ դարի մեծագույն գրողներից մեկի՝ Չինգիզ Այթմատովի «Եվ դարից երկար ձգվում է օրը» վեպի թարգմանության միջոցով բառը փոխառել են աշխարհի շատ լեզուներ, *մանկուրտ*-ին վերաբերող լեգենդը տարածվել է, բառն էլ փոխաբերացման հետևանքով ունեցել է իմաստի ընդլայնում՝ դառնալով շատ լեզուներում գործածական բառ:

Հայերենում բառն արձանագրված է Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում»՝ «1. Բռնի կերպով հիշողությունից զրկված: 2. փխբ. Իր ինքնության արմատները չճանաչող»: Արձանագրված են *մանկուրտացում* «մանկուրտ դառնալը, դարձնելը», *մանկուրտիզմ, մանկուրտություն* «փխբ. Ազգային արժեքների, ազգայինի մոռացությունը»[16] բառերը:

---

[15] Բառի ծագումը պարզ չէ: Հետազոտողների մի մասի կարծիքով՝ բառը «ստեղծել» է ղրղզ գրող Չ.Այթմատովը, մյուս մասի կարծիքով՝ բառը հավանաբար ծագում է հին թյուրքական *մունգուլ* (*munqul)*՝ «հիմար, բանականությունից զրկված» բառից, մյուս մասն էլ առնչում է հին թյուրքական *ման* (*man)*՝ «հագցնել», գոտևորել և *գուրուտ* (*qurut)*՝ «չորացրած» բառերին, այսինքն՝ մարդ, որի գլխին գոտի է հագցվում և չորացվում: Տե՛ս https://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1441/,
https://gufo.me/dict/kuznetsov/%D0%BC%D0%B0%D0%BD%D0%BA%D1%83%D1%80%D1%82.,
https://arar.sci.am/dlibra/publication/79440/edition/71822/content:
Մանկուրտի մասին Չ.Այթմատովի նկարագրած լեգենդի համառոտ բավանդակությունը հետևյալն է: Ժամանակին միջինասիական տափաստաններում հայտնվել է ջուանջուան անվանվող ցեղը, որ շատ դաժանությամբ էր վերաբերվում գերի ընկած ռազմիկներին՝ դարձնելով մանկուրտ. սափրում էին նրա գլուխը և հագցնում էին «շիրի»՝ նոր մորթած ուղտի վզի հատվածի կաշին: Գերուն կապում էին այնպես, որ չկարողանա հանել ուղտի կաշին, և թողնում էին անապատում մի քանի օր: Բարկ արևի տակ կաշին կծկվում էր և սեղմում գլուխը: Գերու մազերը սերտաճում էին կաշվի հետ՝ սոսկալի ցավ պատճառելով, որից զոհը կա՛մ մեռնում էր, կա՛մ կորցնում էր հիշողությունը: Չ. Այթմատովի վեպի մանկուրտ-հերոսը չի ճանաչում իրեն գտած մորը և տերերի հրամանով սպանում է նրան: Տե՛ս Չ. Այթմատով, Եվ դարից երկար ձգվում է օրը, Ե., 1983, էջ 125: Թարգմ.՝ Սոֆի Ավագյանի:

[16] Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002, էջ 328-329:

Օրինակներ՝ «Այս խոսքերի վրա *մանկուրտը* սփրթնեց, գորշ-գորշացավ թուխդեմքը»[17]: «Գուցե կարող է *մանկուր* լինել սովետական քաղաքացին, բայցայդպես վայել չէ լինել մի երկրի նախագահի, ազարամյակների պատմություն, մասունքներ ու հիշողություն ունի»: Առաւօտ, 2002. 01. 26:

Եզրակացություն:

Դիտարկված հատկական փոխառությունների քննությունից պարզվում է՝

ա/ հագուստի անվանումները հիմնականում թուրք - թաթարական են,

բ/ միջնորդավորված փոխառություններ են՝ *ասկյար/ասկեր* < թուրք. <արաբ., *գյավուր* < թուրք. <արաբ, *կազակ* < ռուս. <թուրք., *վեզիր* < թուրք. <արաբ, *վիլայեթ* < թուրք. <արաբ և այլն. կրոնական բնույթի բառերը միջնորդավորված են արաբերենից և իրանական լեզուներից,

գ/ բառերի մի մասը ունեցել է բառիմաստի ընդլայնում տարբեր հիմունքներով, ձեռք է բերել նոր իմաստներ՝ *աղա, բաշիբոզուկ, ենիչերի, մանկուրտ, փաշա* և այլն. ընդ որում, դրանց փոխաբերական գործածությունն ավելի հաճախական է: Սրանք լայն ընդգրկում ունեցող փոխառություններ են:

է/ թյուրքական ծագման հատկական փոխառությունների մի մասը պահպանված է հայերենի բարբառներում, գեղարվեստական ստեղծագործություններում:

Համառոտագրություններ

ԱՀԲԲ – Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան
ՀԱԲ – Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան
ՀԼԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան
ՀԲԲ- Ստ.Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան
ՀՍԲ – Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան
արաբ.- արաբերեն
թաթար.- թաթարերեն
թուրք. – թուրքերեն
խոհր. - խոհարարական
ռուս. – ռուսերեն

[17] Չ.Այթմատով, նշվ. աշխ., էջ 144:

պարսկ. - պարսկերեն
փխբ. – փոխաբերական

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե,. 1984:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:
4. Աճառեան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951:
5. Այթմատով Չ., Եվ դարից երկար ձգվում է օրը, Ե., 1983:
6. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:
7. Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, Ե., 2011:
8. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան հ. 1-4, Ե., 1944-1945:
9. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
10. Большой толковый словарь русского языка, С.-Петербург, 1998.
11. Древнетюрский словарь, Ленинград, 1969.
12. Словарь иностранных слов, М., 1949:
13. Ожегов С., Словарь русского языка, М.,1970:
14. Н. Шанский, В.Иванов, Т.Шанская, Краткий этимологический словарь русского языка, М., 1971.
15. https://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1441/.
16. https://dic.academic.ru/dic.nsf/dic_wingwords/1441/, https://gufo.me/dict/kuznetsov/%D0%BC%D0%B0%D0%BD%D0%BA%D1%83%D1%80%D1%82., https://arar.sci.am/dlibra/publication/79440/edition/71822/content

EXAMINATION OF SOME EXOTICISMS OF TURKIC ORIGIN

PAPIKYAN SILVA
PhD in Philology
Researcher at the Languagee Institute
after H.Acharyan, NAS RA
e-mail: papikyansilva@yandex.ru

The language of each nation reflects its surrounding reality. Any change taking place in socio-political and economic life finds its expression in the vocabulary of the

given language. In the course of their historical development, Armenians had political and cultural relations with different nations and borrowed many words. Borrowing is one of the means of extending the vocabulary of a language. There is a layer in borrowings called exoticism (alien words, foreign words) used a lot in translated literature and in the press to describe the local environment, the atmosphere of the time and to render foreign realias. The purpose of our study is to examine some exoticisms borrowed from the Turkic languages and to classify them in an attempt to show the changes they underwent. The material is collected from different sources: dictionaries, press, fiction, television, etc. The following thematic groups are emphasized: religious words, weapons-soldiers, clothes, dwelling-area, general words. The examination reveals that some exoticisms of Turkic origin are Turkish-Tatarian, some are mediated borrowings from other languages, and some have extended their meaning on various grounds.

Key words: *vocabulary, borrowing, metaphorization, extension of meaning, change of meaning, dialect, mediated borrowing.*

РАССМОТРЕНИЕ НЕКОТОРЫХ ЭКЗОТИЗМОВ ТЮРКСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

ПАПИКЯН СИЛЬВА

Кандидат филологических наук, доцент

Старший научный сотрудник Института языка им. Р. Ачаряна НАН РА

электронная почта: papikyansilva@yandex.ru

В языке каждого народа отражается окружающая его действительность. Всякое изменение, происходящее в общественно-политической, экономической жизни, находит свое выражение в лексике данного языка. В ходе своего исторического развития армяне имели политические и культурные отношения с разными народами и заимствовали много слов. В заимствовании есть слой, именуемый экзотизмом (инородные слова, иностранные слова), которые широко используются в переводной литературе и в печати для описания местной среды, колорита и чуждых реалий. Цель нашего исследования состоит в том, чтобы рассмотреть некоторые экзотизмы, заимствованные из тюркских языков, и провести их классификацию в попытке показать изменения, которым они подверглись. Материал собран из разных источников: словари, пресса, художественная литература, телевидение и т. д. Особое внимание уделяется следующим тематическим группам: религиозные слова, оружейно-войсковые,

одежда, места обитания-помещения, общие слова. Исследование показало, что некоторые экзотизмы тюркского происхождения являются тюрко-татарскими, некоторые являются опосредованными заимствованиями из других языков, а некоторые подверглись расширению смыслового значения по различным причинам.

Ключевые слова: *словарный запас, заимствование, метафоризация, расширение значения, изменение значения, диалект, опосредованное заимствование.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 23.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆԱԽԴԻՐ+ԳՈՅԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՏԴ 811.11
DOI: 10.56246/18294480-2023.14-24

ԹՈՌՉՅԱՆ ԼԻԼԻԹ
Գավառի պետական համալսարան,
օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս
էլփոստ՝ l.torchyan@gsu.am

Այս հոդվածի նպատակն է պարզել անգլերենի նախդիր + գոյական համակցությունների համապատասխանությունը հայերենի հոլովների հետ:

Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը», Թեոդոր Դրայզերի «Ջենի Գերհարդ» և Ջեք Լոնդոնի «Մարտին Իդեն» ստեղծագործություններից վերցված որոշ օրինակների հայերեն թարգմանությունները համեմատվել են՝ հաշվի առնելով նախդիր+գոյական համակցությունների և հայերենի հոլովների միջև համապատաս-խանության նրբությունները:

Աշխատանքում դիտարկվել են «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը» ստեղծագործության երկու թարգմանությունները, որոնք կատարվել են թարգմանիչներ Վահե Հովհաննիսյանի և Նաիրա Հարությունյանի կողմից:

Բանալի բառեր՝ *նախդիր, գոյական, հոլով, համեմատություն, համապատասխանություն, թարգմանություն:*

Հոլովի կարգը գոյականի կարևորագույն քերականական կարգերից մեկն է: Հոլովը գոյականի փոփոխությունն է, ձևափոխությունը, որով դրսևորվում են առարկաների, իրերի, երևույթների այլևայլ հարաբերություններ: Հոլովը հոլովական իմաստի և ձևի միասնությամբ հանդես եկող քերականական կարգ է:

Հոլովի կարգը տիպաբանական և ձևակազմական տարբեր հատկանիշներով առկա է հնդեվրոպական լեզվաընտանիքի մի շարք լեզուներում, որոնցում այս կամ այն տեսքով պահպանված հոլովական համակարգերը,

իրենց ընդհանրություններով հանդերձ, հաճախ դրսևորում են նաև զգալի տարբերություններ:

Հայ լեզվաբանության մեջ ժամանակակից հայերենի հոլովական համակարգի և հոլովների քանակի վերաբերյալ միանշանակ մոտեցում չի ցուցաբերվել առայսօր: Որոշ լեզվաբաններ ընդունում են 5 հոլով, որոշ լեզվաբաններ՝ 6, մյուսներն էլ ընդունում են 7 հոլով:

Հայերենի հոլովներն են՝ **ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:**

Հին անգլերենն ուներ 5 հոլով՝ նոմինատիվ/ուղղական/, ակուզատիվ/-հայցական/, գենետիվ/սեռական/, դատիվ/տրական/ և ինստրումենտալ/գործիական/:

Ժամանակակից անգլերենում գոյականն ունի միայն երկու հոլով՝ ընդհանուր (the common case) և ստացական (the posessive կամ the genitive case):

Ընդհանուր հոլովով դրված գոյականը չունի հատուկ վերջավորություն: Ստացական հոլովի վերջավորությունն է -s: Ընդհանուր հոլովն ունի անորոշ իմաստ:

Անգլերենի ստացական հոլովը ցույց է տալիս պատկանելություն՝ George's belongings – Ջորջի իրերը:

Պատկանելություն կարող է ցույց տալ նաև գոյականի ընդհանուր հոլովով կապակցությունը՝Ann's predictions – Predictions of Ann. Պատկանելությունն արտահայտվում է նաև of նախդրի միջոցով, եթե գոյականը, որին պատկանում է որևէ բան, անշունչ գոյական է: Այնուամենայնիվ, սա ավելի վաղ շրջանի քերականագետների դիրքորոշում է, և մեր օրերում այդպիսի սահմանափակումներ չկան /of-ը պատկանելություն կարող է ցույց տալ ինչպես անշունչ, այնպես էլ շնչավոր գոյականների հետ/:

Գոյականի եզակի ստացականը կազմվում է բառին -s ավելացնելով: Հոգնակի ստացականը կազմվում է ապաթարցի հավելումով՝ students' grades.

Եթե գոյականի հոգնակին կազմվում է բառարմատի ձայնավորի փոփոխությամբ, ստացական հոլովը կազմվում է ճիշտ այնպես, ինչպես եզակի թվի դեպքում՝ men's glows, women's dresses:

Բաղադրյալ գոյականների ստացական հոլովը կազմելու համար –s վերջավորությունն ավելացվում է վերջին բաղադրիչին՝ my mother-in-law's visit:

Այս հոդվածի նպատակն է պարզել, թե անգլերենի նախդիր + գոյական կապակցությունները հայերենի որ հոլովներին են համապատասխանում:

Համեմատենք Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը», Թեոդոր Դրայզերի «Ջեննի Գերհարդ»և Ջեկ Լոնդոնի «Մարտին Իդեն» ստեղծագործություններից քաղված որոշ օրինակների հայերեն թարգմանությունները՝ ուշադրության առնելով վերոնշյալ երևույթները: Դիտարկվել են նաև «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը» ստեղծագործության երկու թարգմանությունները՝ կատարված Վահե Հովհաննիսյանի և Նաիրա Հարությունյանի կողմից:

across -ունի **այն կողմ, հանդիպակաց, զուգահեռաբար, վրայով** իմաստները:

Տեսնենք, թե ինչպես է թարգմանվել այն հայերեն հետևյալ հատվածներում.

1) It was morning, and the new sun sparkled gold **across the ripples of a gentle sea.**

Առավոտ էր, ծագող արևը ոսկեշողում էր **հանդարտ ծովի մեղմ ծփանքում** /Ն. Հարությունյան/:

Լույսը բացվեց, և ջահել արեգակի ոսկե ցոլքերը պար բռնեցին խաղաղած ծովի հազիվ նշմարելի **կոհակների վրա**/Վ. Հովհաննիսյան/:

2) He learned to sleep in the air, setting a course at night **across the offshore wind...**

Նա սովորեց օդում քնել. գիշերով ուղղություն վերցնել **ափից փչող քամուն հակառակ...**/Ն. Հարությունյան/:

Նա սովորեց օդում քնել, սովորեց, երբ քամին **փչում էր ափից...** /Վ. Հովհաննիսյան/:

3) As it had shined **across him** all his life, so understanding lighted that moment for Jonathan Seagull.

Իր ողջ կյանքում դա ցոլցլացել էր նրա խորքերում, եւ հիմա Ջոնաթան Ճայի միտքը հանկարծ լուսավորվեց /Ն. Հարությունյան/:

Ջոնաթանն իր ամբողջ կյանքն ապրել էր այդ մտքով, և Ջոնաթանը հասկացավ, հասկացավ ակնթարթորեն /Վ. Հովհաննիսյան/:

4) He gave one last long look **across the sky**.

Նա մի վերջին երկար հայացք **գցեց երկնքին**... /Ն. Հարությունյան/:

Նա մի վերջին հայացք **ձգեց երկնքին**… /Վ. Հովհաննիսյան/(Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»):

5) Then as though not caring to linger any longer amid such plebeian company, he hastened **across** the network of tracks and was lost to view.

Ապա որպես թե չցանկանալով կանգ առնել այդքան անարժան խմբի մեջ՝ նա **շտապ անցավ ռելսերը և չքացավ** (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

6) They bristled with unknown perils, and he gazed at them, fascinated, till their dazzle became a **background across** which moved a succession of forecastle pictures.

Այդ իրերը նրան սպառնում էին անիմանալի վտանգներ, և նա, կարծես հմայված, երկար նայում էր նրանց, մինչև որ աչքերը շլացան նրանց փայլից, և **այդ պսպղուն ֆոնի վրա** նրան երևաց նավաստիների կամրջակի ծանոթ պատկերը (Ջեկ Լոնդոն, «Մարտին Իդեն»):

Across բառը, որը հիմնականում ունի **այն կողմ, հանդիպակաց, զուգահեռաբար, վրայով** իմաստները, վերևում բերված նախադասություններում թարգմանված է տարբեր բառերով և բառակապակցություններով:

Ընդհանուր առմամբ «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը» ստեղծագործության թարգմանված երկու տարբերակների առնչությամբ կարելի է նշել, որ Վահե Հովհաննիսյանի կողմից արված թարգմանությունը, ըստ մեզ, ավելի հոգեհարազատ է բնագրին, գեղարվեստական և քերականական տեսանկյունից ավելի ճիշտ է ձևակերպված, և անգլերեն նախդիրների իմաստներն այստեղ ավելի ճշգրիտ են արտահայտված:

Այսպես, առաջին օրինակում /**across the ripples of a gentle sea**/ across բառը հայերենում համապատասխանաբար թարգմանվել է **ծփանք** բառի ներգոյական հոլովով /**ծփանքում**/, իսկ թարգմանության երկրորդ տարբերակում այն թարգմանվել է **կոհակ** բառի հոգնակի սեռականով և **վրա** շաղկապով: Երկրորդ օրինակի առաջին տարբերակում՝ **հակառակ** բառով, երկրորդ տարբերակում՝ **ափ** բառի բացառական հոլովով, երրորդ օրինակի առաջին տարբերակում՝ կրկին ներգոյական հոլովով, իսկ երկրորդ տարբերակում բոլորովին այլ կերպ է թարգմանված, որն ավելի ճշգրիտ է արտահայտում անգլերեն նախադասության իմաստը: Չորրորդ օրինակի առաջին տարբերակում այն թարգմանվում է գոյականի տրական հոլովով և ճիշտ այդպես է թարգմանված նաև երկրորդ տարբերակում: Հինգերորդ օրինա-

կում across նախդրի իմաստն արտահայտված է **ռելսեր** բառի հայցական հոլովով, իսկ վեցերորդ օրինակում այն ունի **վրա** իմաստը:

through - հայերենում թարգմանվում է **միջով, միջոցով, շնորհիվ, ընթացքում:**

1) Flock flashed **through** the air.

Երամի ճիչը ակնթարթորեն ծակեց **օդը** /Ն. Հարությունյան/:

Այդ լուրը ակնթարթորեն հասավ նախաճաշի սպասող **երամին**.../Վ. Հովհաննիսյան/:

2) Ten times he tried, and all ten times, as he passed **through** seventy miles per hour, he burst into a churning mass of feathers, out of control, crashing down into the water.

Նա տասն անգամ փորձեց և ամեն անգամ, երբ անցնում էր ժամում յոթանասուն մղոն **արագությունից**, վերածվում էր չկառավարվող փետրագնդի և գահավիժում ջրի մեջ /Ն. Հարությունյան/:

Տասը փորձ արեց և տասն անգամ էլ, հենց **արագությունը գերազանցում էր ժամում յոթանասուն մղոնը,** նա վերածվում էր փշաքաղված փետուրների չկառավարվող գնդի ու քարի պես ընկնում /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»):

3) After a time another form came shadowlike **through** the side gate.

Քիչ անց մի ինչ-որ ստվեր ներս ընկավ կողքի **դռնակից** (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

4) The moon and the lights twinkling on the water, throwing out little beacon-trails **through the night,** and all so peaceful and still ...

Լուսինն ու աստղերը առկայծում էին ջրում՝ փոքրիկ, փարոսող ցոլքեր սփռելով **գիշերվա մեջ.** ամեն ինչ այնպես լուռ էր ու խաղաղ /Ն. Հարությունյան/:

Լուսինը և փարոսի կրակների պես **գիշերային ծովի մեջ** խայտացող լույսի արտացոլանքը, չորս բոլորն այնպես խաղաղ ու հանգիստ է/Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»):

5) He was in the books himself, adventuring **through** the printed pages of bound volumes.

Ասես նա ինքը գրքի մեջ էր ընկել և դեգերում էր կազմած **հատորի էջերում** (Ջեկ Լոնդոն, «Մարտին Իդեն»):

6) Do you have any idea how many lives we must have gone through before...

Պատկերացնո՞ւմ ես, թե քանի կյանք է հարկավոր եղել.... /Ն. Հարությունյան/:

Պատկերացնու՞մ ես քանի-քանի կյանք պիտի ապրել մինչև.../Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»): /հինգերորդ և վեցերորդ օրինակների տեղերը փոխել/

Through բառը հայերենում թարգմանվում է **միջով, միջոցով, շնորհիվ, ընթացքում,** սակայն **Flock flashed through the air** (Երամի ճիչը ակնթարթորեն ծակեց օդը) նախադասության մեջ այն թարգմանվել է *օդ* բառի հայցական հոլովով: Թարգմանության երկրորդ տարբերակում (Այդ լուրը ակնթարթորեն հասավ նախաճաշի սպասող **երամին**...) նախադասության իմաստը բոլորովին այլ կերպ է տրված և ավելի է համապատասխանում բնագրի մտքին: Երկրորդ օրինակի առաջին տարբերակում և երրորդ օրինակում կարելի է տեսնել, որ այն թարգմանվում է նաև գոյականի բացառական հոլովով, թարգմանության երկրորդ տարբերակում այն տրված է գոյականի հայցական հոլովով, իսկ չորրորդ և հինգերորդ օրինակներում՝ ներգոյական հոլովով: Վեցերորդ օրինակում to go through դարձվածային արտահայտության մեջ **through** նախդիրը կորցրել է իր առաջնային իմաստը՝ թարգմանվելով փոխաբերական իմաստով:

beyond - վեր, ուշ, հեռվում, այն կողմը, անդին

1) Jonathan took all his courage in hand and walked to the Elder Gull, who, it was said, was soon to be **moving beyond this world**. ....

Իր ողջ քաջությունը հավաքելով՝ Ջոնաթանը դիմեց Ավագ Ճային, որը, ասում էին, շուտով հեռանալու էր այս **աշխարհից:** /Ն. Հարությունյան/

Ջոնաթանը սիրտ արեց մոտենալ Տոհմավագին՝ ճայ, որն, ինչպես ասում էին, պատրաստվում էր շուտով հրաժեշտ տալ այս **աշխարհին:** /Վ. Հովհաննիսյան/

2) Beyond a few hundred feet, I can lift this old body no higher."

...այնինչ ես չեմ կարող այս ծեր մարմինը **մի քանի հարյուր ոտնաչափից** ավելի բարձրացնել /Ն. Հարությունյան/:

Ես իմ լխկած մարմինը կարող եմ ևս մի **քանի հարյուր ֆուտ բարձրացնել**, բայց ավելի վեր՝ ոչ .../Վ. Հովհաննիսյան/:

3) Beyond boat and shore...

ձկնորսանավից ու ափից **անդին...**/Ն. Հարությունյան/:

Մարդաբանական անունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում էթնոնիմները /ցեղանուններ/, քանի որ դրանք ներկայացնում են մի ամբողջ էթնիկ համայնք՝ իր բոլոր բնորոշ հատկանիշներով: Էթնոնիմների միջոցով դարձվածային միավորների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս թարմացնել գիտելիքներն այն մասին, թե ինչպես է լեզվամշակութային համայնքը առնչվում իր և մյուսների հետ, որոշել այլ համայնքների հետ փոխգործակցության կառուցման կանոնները: Աշխատանքում վերլուծվում են ցեղանուններով կազմված դարձվածային միավորները ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ուշադրության կենտրոնում են նրանց բառային և իմաստային հատկությունները, գնահատման դասակարգումն արտահայտելու առանձնահատկությունները: Ըստ նրանց գնահատման՝ ուսումնասիրվող միավորները բաժանվել են չեզոք, դրական և բացասական գնահատողական լրացուցիչ իմաստ ունեցող դարձվածային միավորների: Պարզվել է, որ գերակշռում են բացասական գնահատական ունեցող դարձվածային միավորները, և այն, որ շատ դեպքերում բացասական հատկությունները վերագրվում են այլ ժողովուրդների ներկայացուցիչներին, իսկ դրականները՝ իրենց, ինչը ցույց է տալիս ուսումնասիրվող լեզուների՝ «յուրային» - «օտար» հակադրությունը: Դարձվածային միավորների օգնությամբ էթնոնիմներով արտահայտված նման հակադրության առկայությունը արտացոլում է այն կարծրատիպերը, որոնք ձևավորվել են այլ ժողովուրդների և ազգությունների ներկայացուցիչների նկատմամբ՝ պատմական շփումների և փոխազդեցության արդյունքում:

Բանալի բառեր՝ *դարձվածային միավոր, էթնոնիմ, գնահատում, կարծրատիպ, դրական, բացասական, չեզոք լրացուցիչ իմաստ:*

EVALUATION COMPONENT IN PHRASEOLOGICAL UNITS WITH ETHNONYMS IN THE ENGLISH AND RUSSIAN LANGUAGES

TUTSKAYA YEKATERINA
5th-year student of the Minsk State Linguistic University
e-mail:tess17@mail.ru
SVISTUN TATIANA
Head of the Department of Theory and Practice of the English Language, Minsk State Linguistic University,
PhD in Philological Sciences, Associate Professor
e-mail: tess17@mail.ru

Ethnonyms occupy a special place among anthroponyms, because they nominate an entire ethnic community with all its inherent characteristics. The study of phraseological units with ethnonyms makes it possible to update knowledge about how one linguocultural community relates to itself and others, to determine the rules for building interaction with other communities. The paper analyzes phraseological units with ethnonyms in Russian and English. The focus is on their lexical-semantic specificity and features of the expression of the evaluation category. According to their assessment, the units under study were divided into phraseological units with a neutral evaluative connotation, with a positive evaluative connotation and with a negative evaluative connotation. It was determined that phraseological units with a negative assessment prevail. It was also found that in most cases negative qualities are attributed to representatives of other people, and positive qualities are attributed to their own, which indicates the implementation of the opposition "one's own" - "alien" in the studied languages. The existence of such an opposition, expressed with the help of phraseological units with ethnonyms, reflects the stereotypes that have developed in relation to representatives of other people and nationalities as a result of historical contacts and interaction.

Key words: *phraseological unit; ethnonym; evaluation; stereotype; positive, negative, neutral connotation.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.11.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 17.11.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ «ՊԵՊՈ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

ՀՏԴ 37.01
DOI: 10.56246/18294480-2023.14-27

ԲԱԳՈՅԱՆ ԱԼԼԱ
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ allabagoyan@mail.ru
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Գավառի՝ Պապին Ղանդիլյանի անվան համար 2 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
էլփոստ՝ lusine.hovhannisyan74@mail.ru

Գեղարվեստական գրականության ուսուցումը հանրակրթական դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Այստեղ կարևոր են ուսուցչի ոչ միայն գիտելիքներն ու հմտությունները, դեռահասների հոգեբանության և տարիքային առանձնահատկությունների իմացությունը, այլև նյութի մատուցման տարբեր մեթոդների կիրառումն ու ստեղծագործական մոտեցումները: Արդի մանկավարժությունն ունի դասը վարելու եղանակների հարուստ զինանոց, ինչը նպաստում է ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնառության արդյունավետությանը:

Մեր հոդվածի նպատակն է ներկայացնել Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգության՝ համագործակցային մեթոդներով ուսուցման մեր փորձը հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանում:

Աշակերտները հաճախ դժվարությամբ են հաղթահարում Թիֆլիսի բարբառով գրված բնագրի ընթերցումն ու յուրացումը, ուստի ուսուցչից պահանջվում է ճկունություն և այնպիսի մեթոդների ընտրություն, որոնք կնպաստեն ծրագրային նյութի լիարժեք ընկալմանը: Նշված թեմայի ուսուցումն արդյունավետ է իրականացնել մտագրոհի, խմբային հետազոտության, քարտեզագրման, դերախաղի եղանակներով, իսկ գործնական աշխա-

փանքը ներկայացման պատրաստումն է, որում ներգրավված են դասարանի բոլոր աշակերտներն ըստ իրենց ունակությունների: Այս աշխատանքը ծավալուն, հաջորդական քայլերով զարգացող ուսումնական գործունեություն է, որի գլխավոր նպատակն է աշակերտի մեջ զարգացնել ինքնուրույն աշխատանքով գիտելիք ձեռք բերելու, անձնական պատասխանատվություն ստանձնելու, իրադրական խոսքի զարգացման և այլ հմտություններ:

Բանալի բառեր՝ *գրականություն, համագործակցային ուսուցում, մեթոդ, մտագրոհ, խմբային հետազոտություն, քարտեզագրում, խճանկար, դերախաղ, Գ. Սունդուկյան, «Պեպո»:*

Ժամանակակից մանկավարժության նպատակը ուսուցման և դաստիարակման գործընթացը արդի կյանքի պահանջներին համապատասխանեցնելն ու առավելագույնս անձնակենտրոն դարձնելն է: Իսկ անձնակենտրոն ուսուցումն այն ուսուցումն է, որի առանցքում դրվում է երեխայի անձը, նրա ինքնատիպությունը, արժեքը: Կրթության բովանդակությունը, նրա միջոցներն ու մեթոդները այնպես են կառուցվում, որ սովորողին տրվի առարկայական նյութի, նրա ձևի և տեսակների ընտրության հնարավորություն: Այդ նպատակով կազմվում են այնպիսի ուսումնական ծրագրեր, որոնք նպաստում են հետազոտական մտքի զարգացմանը: Սովորողը մշտապես հանդես է գալիս ոչ թե որպես հանդիսատես, այլ որպես գործող անձ, մասնակից, հաճախ էլ՝ սեփական կրթության գործընթացը նախաձեռնող:

Ուսուցման գործընթացում այսօր կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերումը, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ուսուցման գործընթացը ուսուցչի և աշակերտների ներդաշնակ համագործակցություն է, որի ընթացքում իրականանում են որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, դրանց համապատասխան կարողություններ, հմտություններ ձևավորելու նպատակադրումները: Ինչպես նշել է մեծ մանկավարժ Ա. Բալյանը. «Ուսուցումը բարդ պրոցես է, որի ընթացքում խթանվում ու կառավարվում են աշակերտի ուսումնական ճանաչողական ակտիվությունն ու ինքնուրույնությունը»[1]:

[1] Ա. Ա. Բալյան, Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, 1983, էջ 175:

Հայոց լեզվի և գրականության ուսուցման համակարգը, բացի բուն առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի մեկ այլ կարևոր հիմնախնդիր՝ արդեն դպրոցական նստարանից սովորողներին ընդգրկել հասարակական բազմաբնույթ հարաբերությունների մեջ՝ ձևավորելով ճանաչողական-տրամաբանական, համագործակցության, հաղորդակցման, ստեղծագործական կարողություններ, ինչպես նաև ինքնուրույն գործունեություն ծավալելու, որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու հմտություններ:

Այսօր հանրակրթության մեջ առկա մի շարք խնդիրներ որոշակի առումով խտացվել և հատկապես տեսանելի են դարձել գրականության դասավանդման բնագավառում: Գրականությունն էապես առանձնանում է հանրակրթական մյուս առարկաներից միայն իրե՛ն բնորոշ առանձնահատկություններով, ինչպես նաև անձի ձևավորման ու կրթության գործում հնարավորությունների բազմազանությամբ: Այս առարկայի արդյունավետ ուսուցումը լուծում է բազմաթիվ կարևոր խնդիրներ՝ «ձևավորել գիտական աշխարհայացք, լուծել գաղափարական, քաղաքական, գեղագիտական, բարոյական և աշխատանքային դաստիարակության բազմազան խնդիրներ...»[2]: Կարդալով, ընկալելով, վերլուծելով ու մեկնաբանելով գրական ստեղծագործությունները՝ աշակերտները ձեռք են բերում բանավոր ու գրավոր խոսքի կարողություններ, վերլուծական, ստեղծագործական միտք, երևակայություն, համադրելու, հակադրելու և այլ կարողություններ: Բոլոր այս կարողություններն անհրաժեշտ են մարդուն կյանքի ընթացքում՝ անկախ մասնագիտությունից:

«Գիրքը մարդու համար անհատնում գիտելիքի աղբյուր է: Ուսուցչի հիմնական խնդիրներից է աշակերտներին սովորեցնել սիրել գիրքը, նոր գիտելիքներ քաղել նրանից...»[3]: Բայց այսօր ընթերցասեր աշակերտ ձևավորելը գրականության հանրակրթական դասընթացի ողջ շղթայում ամենաբարդ խնդիրն է: Այն շատ ավելի դժվար է իրականացնել, քան նույնիսկ գրական ստեղծագործության ուսումնասիրությունը, վերլուծությունը, գրական-տեսական գիտելիքների սերտումը: Ընթերցասեր աշակերտ ձևավորելու ամենաարդյունավետ ժամանակը մանկական հասակն է: Եթե այս տարիքում

[2] Հ. Մ. Մախչանյան, Հայ գրականության ուսուցման պատմություն, Երևան, 1979, էջ 401:
[3] Ա. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978, էջ 7:

ուսուցիչը չի նպաստում այդ կարողության ձևավորմանը, ապա անխուսափելիորեն առաջ է գալիս անտարբերություն դեպի գեղարվեստական խոսքը, ինչը կարող է հանգեցնել գեղագիտական ճաշակի, պատկերային մտածողության բացակայության: Աշակերտն այսօր խուսափում է ընթերցել ծրագրային նույնիսկ ամենահետաքրքիր երկերը, առավել ևս արևմտահայերենով կամ Թիֆլիսի բարբառով գրված երկերը: Խնդիրն այն է, որ նույնիսկ ընթերցասեր աշակերտը, հանդիպելով դժվարությունների, այն է՝ անհասկանալի բառերի, քերականական ձևերի, հիասթափվում է, հրաժարվում գիրքն ընթերցելուց: Այս պարագայում է, որ պետք է երևա ուսուցչի հմտությունը: Նա պետք է այնպիսի մեթոդներ գտնի, որ, նախ, հետաքրքրություն առաջացնի ստեղծագործության հանդեպ, ապա՝ օգնի աշակերտին հասկանալ, յուրացնել երկը, աշակերտների համար «անհետաքրքիր, բարդ» ստեղծագործություններն այնպես մատուցի, որ դասը դառնա հետաքրքիր, գրավիչ գործընթաց: Այսպես, գրական երկի մատուցումը բեմականացմամբ նոր հնչեղություն, կենդանի օրինակի արժեք է տալիս ստեղծագործությանը, մեծանում է ոչ միայն երկի դաստիարակչական նշանակությունը, այլև հետաքրքրությունն այդ երկի հանդեպ, որովհետև ավելի մատչելի է դառնում և ընկալելի: Երբ աշակերտը ուսումնառության ընթացքում հանդիպում է դժվարությունների, նրա մեջ ծնվում են բացասական հույզեր, և նա հրաժարվում է տվյալ առաջադրանքը կատարելուց: Իսկ եթե այդ դժվարությունները շարունակական են, ապա բացասական վերաբերմունք է առաջանում դեպի առարկան:

Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը ներառված է 8-րդ դասարանի դպրոցական ծրագրում: Տարիներ շարունակ ուսուցիչները դժգոհում էին և պահանջում, որ այդ թեման դուրս հանվի դպրոցական ծրագրից՝ հաշվի առնելով այն դժվարությունները, որոնք ծագում էին այդ թեման ուսուցանելիս, այն է՝ անհասկանալի բառերը, քերականական ձևերը աշակերտի մոտ առաջացնում էին բացասական վերաբերմունք տեքստի հանդեպ, որն էլ խոչընդոտում էր երկի ուսուցումը: Սակայն անլուծելի խնդիրներ չկան, պարզապես **պետք է գտնել խնդրի լուծման ճիշտ ուղին**: Այսօր ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար ուսուցիչը պետք է գտնի և կիրառի ճիշտ մեթոդներ ու հնարներ, որպեսզի սովորողի մեջ առաջացնի առարկայի, ուսուցանվող թեմայի նկատմամբ հետաքրքրություն:

Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունն ուսուցանելիս ուսուցիչը հանդիպում է դժվարությունների ոչ միայն այն պատճառով, որ անհասկա-

նալի բառեր և արտահայտություններ կան, նաև այն պատճառով, որ գործ ունի դեռահասների հետ: Այս տարիքում սովորողները ինքնուրույն գործունեություն են ծավալում և անընդհատ ձգտում են ընդարձակելու դրա սահմանները: Սրանով նրանք ուզում են շեշտել, որ իրենք արդեն մեծ են, հասունացել են, այլևս երեխա չեն: Սա նրանց ամենախոցելի տեղն է և ամենագլխավոր նպատակադրումը: Տարիքային այս խմբի համար հավասարապես կարևոր են ինչպես ուսումնական նյութի բովանդակությունը, այնպես էլ այդ նյութից գիտելիք քաղելու գործընթացը, միջոցները, եղանակները: Հետաքրքիր են այն դասերը, որոնց ընթացքում սովորողները գիտելիք են ձեռք բերում ոչ միայն դասագրքից, այլև օժանդակ միջոցներից: Իսկ եթե գիտելիքի միակ աղբյուրը դասագիրքն է, ապա այն դառնում է անհետաքրքիր և միօրինակ: Ուսուցիչը պիտի կարողանա ուսումնական գործընթացը դարձնել *իմացական ուրախության* աղբյուր, աշակերտներին մղի ինքնուրույն հետազոտական աշխատանքի, ինչը նրանց մեծ բավականություն կպատճառի, որովհետև նրանք ուզում են ինքնուրույնաբար հասնել ինչ-որ բանի, գյուտեր և բացահայտումներ անել:

«Պեպո» կատակերգության ուսուցումը պետք է սկսել Գ.Սունդուկյանի կյանքի գլխավոր դրվագների, գրական-հասարակական գործունեության ներկայացմամբ, ստեղծագործության ընդհանուր բնութագրով: Աշակերտը նախ պետք է հասկանա գրողի թողած վաստակի կարևորությունը, արժևորի նրան և նրա ստեղծագործությունը, ապա և ուսումնասիրի նրա՝ մարդկությանը թողած անզուգական քերթվածքները:

Դրամատուրգ Գ. Սունդուկյանն իր ստեղծած կերպարների ամբողջականությամբ, միջավայրի, կենցաղի, մարդկային հոգեբանության ճշմարտացի արտացոլմամբ դարձել է հայ թատերգության ռեալիստական ուղղության սկզբնավորողներից: Մեծ է նրա դերը թատերգության և թատերական արվեստի զարգացման գործում: Դ. Դեմիրճյանի դիպուկ բնորոշմամբ նա «հայ դրամատուրգիայի Աբովյանն է»: Պեպոն՝ Սունդուկյանի համանուն կատակերգության հերոսը, դարձել է հավերժական կերպար իր ազնիվ նպատակների, արդար պայքարի շնորհիվ, մի պայքարի, որ մղվել է արդարության, ճշմարտության համար, որն էլ բոլոր ժամանակների վեհ մղումներից է: Պեպոն «իր վճիտ հոգիի աղբերափայլ գեղեցկությունովը հավիտենականության առջև հոյակապորեն խաղք-խայտառակ արեց պժգալի վաշխառու

Ջիմզիմովին և մեզ զովացրեց մարդկությանը անպատվող զիմզիմովներուն գոյութենեն»[4]:

Ոչ այնքան դյուրին այս թեմայի մատուցումը հնարավորինս արդյունավետ դարձնելու նպատակով 2010 թվականից ի վեր մենք հաջողությամբ կիրառում ենք համագործակցային ուսուցման մեթոդները, որոնք նպաստում են և՛ նյութի յուրացմանը, և՛ անհատական ու խմբային գործունեության հմտությունների զարգացմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդները բազմաթիվ են, և ուսուցիչն է ընտրում՝ որ մեթոդներից օգտվի այս կամ այն թեման դասավանդելիս:

Համագործակցային ուսուցման մասին առաջին անգամ խոսվել է դեռևս նախորդ դարի 80-ական թվականներին Սպենսեր Կագանի կողմից: Նա մշակել է խմբային համագործակության եղանակով դասի անցկացման շուրջ 160 կառույց և առաջարկել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք նպաստում են սովորողի **անձնական աճին** և հետապնդում են չորս հիմնական նպատակ՝ զարգացնել սովորողների կարդալու, գրելու, բանավոր խոսքի և միմյանց լսելու ունակությունները[5]:

Կագանը ձևակերպել է համագործակցային ուսուցման հետևյալ սկզբունքները՝

- **Դրական փոխկախվածություն**, որը ենթադրում է հանձնարարության ինքնուրույն անհատական կատարում՝ արդյունքը համաձայնեցնելով խմբի հետ՝ որոշակի նպատակի հասնելու համար:
- **Անհատական պատասխանատվություն** խմբի մյուս անդամների հանդեպ՝ կատարված առաջադրանքի արդյունքի համար:
- **Հավասարաչափ մասնակցություն**, երբ խմբի ներսում առաջադրանքները բաշխված են համաչափ, մասնակցության պայմանները հավասար են բոլորի համար:
- **Միաժամանակյա փոխազդեցություն**, երբ խմբի բոլոր անդամները հայտնում են իրենց կարծիքը և միասին որոշում կայացնում:

Արդեն նշել ենք, որ Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը ներառված է 8-րդ դասարանի դպրոցական ծրագրում յոթ դասաժամով: Այս դասաժամերի ընթացքում աշակերտները պետք է ուսումնասիրեն հեղինա-

[4] Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1966, էջ 358:

[5] https://www.kaganonline.com/free_articles/dr_spencer_kagan/281/Kagan-Structures-A-Miracle-of-Active-Engagement, 2:

կի կենսագրությունն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, թատերգությունը՝ որպես գրական սեռ, «Պեպո» կատակերգության կառուցվածքը, լեզուն, դիպաշարը, կերպարներն ու հիմնական գաղափարը: Սակայն համագործակցային ուսուցմամբ այս գործընթացը դուրս է գալիս ավանդական ուսուցման շրջանակներից: Այսպես, առաջին դասաժամին կամ առաջին փուլում ուսուցիչը ներկայացնում է նախօրոք պատրաստած սահիկաշարը գրողի կենսագրության վերաբերյալ՝ նպատակ ունենալով հետաքրքրություն առաջացնել նոր թեմայի նկատմամբ: Ուսուցիչը ամեն ինչ չէ, որ պետք է ընդգրկի տեսանյութում, այլ աշակերտին ինքնուրույն աշխատելու, իր աշխատանքից բավականություն ստանալու հնարավորություն տա: Սունդուկյանին ներկայացնելով որպես հայ մեծանուն գրող ու դրամատուրգ՝ ուսուցիչը նշում է, որ գրողի կյանքի, ստեղծագործության, մշակութային գործունեությանը մանրամասնորեն ծանոթանալու համար աշակերտները պետք է կատարեն ինքնուրույն հետազոտական աշխատանք, և նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է աշխատանքը ճիշտ կատարելու համար: Այստեղ ուսուցիչը կարող է կիրառել **նախագծերի մեթոդը**: Դասարանը բաժանելով խմբերի (մեր դեպքում՝ չորս խմբի)՝ ուսուցիչն ընտրում է ավագներ, խմբերից յուրաքանչյուրին տրվում է հանձնարարություն, այն է՝ համակարգված ներկայացնել տեղեկություն հետևյալ վերնագրերով՝

1-ին խումբ՝ Թիֆլիսը՝ որպես մշակութային քաղաք,

2-րդ խումբ՝ Սունդուկյանի կյանքը և մշակութային գործունեությունը,

3-րդ խումբ՝ Սունդուկյանի ստեղծագործությունները,

4-րդ խումբ՝ պատրաստված շնորհանդեսը համալրել նոր տեսանյութերով՝ հաշվի առնելով խմբերին հանձնարարված թեմաների հաջորդականությունը:

Խմբերին աշխատանքները հանձնարարելուց հետո ուսուցիչը պետք է նշի նաև այն աղբյուրները, որտեղից կարող են օգտվել նրանք **խմբային հետազոտությունն** իրականացնելիս: Խմբի ներսում ավագը կատարում է աշխատանքի բաժանում և տալիս հանձնարարականներ, ուսուցիչն էլ ուղղորդում է նրանց, խորհուրդներ տալիս:

Հաջորդ դասին, երբ աշակերտները կատարում են հանձնարարությունները, ուսուցիչն անցնում րկրորդ փուլին, այն է՝ հանձնարարությունների ստուգում, քննարկում, խմբագրման և համակարգման աշխատանքներ, ժամանակագրության կազում և այլն: Յուրաքանչյուր խումբ պաստառի վրա ցուցադրում է իր աշխատանքը, ապա աշակերտները ներկայացնում են

իրենց հետազոտության արդյունքները, մեկնաբանում: Աշակերտների աշխատանքին հետևելով՝ ուսուցիչը ուշադրություն է դարձնում համագործակցային աշխատանքի վրա՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությանը խթանող միջավայր: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է իրեն պատասխանատու զգա խմբային աշխատանքում, անի առավելագույնը՝ խմբի աշխատանքը լավ ներկայացնելու համար: Բացի դրանից՝ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը: Շնորհանդես պատրաստած խումբը, մյուս խմբերի աշխատանքներին համապատասխան, ներկայացնում է իր խմբային աշխատանքը: Որպեսզի աշակերտները լսեն իրար, ուսուցիչը դասի սկզբում պետք է շեշտի, որ աշխատանքները ներկայացնելուց հետո խմբերից յուրաքանչյուրը ներկայացնելու է իր պատրաստած հարցերը, և խմբերը կգնահատվեն նաև հարցերին ճիշտ պատասխանելու համար: Այս կետը կարևոր է, որովհետև դասի ընթացքում հնարավոր է, որ խմբերը չլսեն միմյանց, փորձեն միայն իրենց աշխատանքը լավ ներկայացնել: Բացի դրանից՝ այս փուլում յուրացվում է «Թատերգություն» թեման՝ դիտարկելով այն գրական սեռերի համակարգում և նրա տեսակները՝ օգտվելով **քարտեզագրման մեթոդից** և համապատասխան աղյուսակը լրացնելով:

Այս աշխատանքներն իրականացնելուց հետո նոր պետք է սկսել «Պեպո» կատակերգության ուսուցումը: **Մտագրոհի** միջոցով ուսուցիչը խթանում է աշակերտների հետաքրքրությունը, վեր հանում նյութին առնչվող նախնական գիտելիքները, այն է՝ ինչ գիտեն ստեղծագործության, հերոսի մասին, որովհետև աշակերտներից ոմանք դիտած կլինեն համանուն կինոնկարը: Լսելով աշակերտներին՝ ուսուցիչը, աշակերտներին ոգևորելու, նրանց ուշադրությունը թեմային սևեռելու համար, հայտնում է, որ «Պեպո» կատակերգության ուսուցումից հետո որպես գործնական աշխատանք պետք է բեմադրեն հատվածներ այդ ստեղծագործությունից: Այնուհետև ուսուցիչը դ**ասախոսության** միջոցով ներկայացնում է կատակերգության կառուցվածքը, բովանդակությունը, կերպարները՝ հավելելով, որ երկի բազմակողմանի ուսումնասիրություն պետք է կատարեն ողջ դասարանով. աշակերտներից յուրաքանչյուրը կունենա իր դերակատարումը այդ աշխատանքում: Հանձնարարություններ տալիս ոսուցիչը այնպիսի բաժանում պետք է կատարի, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր կարողություններին համապատասխան աշխատանք, որն էլ կկարողանա կատարել: Եթե աշակերտն զգա, որ աշխատանքը բարդ է, իրեն մատչելի չէ, կհիասթափվի,

կընկնի ինքնագնահատականը, կհրաժարվի աշխատանքը կատարելուց, իսկ հակառակ դեպքում կոգևորվի, հետաքրքրությամբ կլսի ուսուցչի հրահանգները, հաջողություններ գրանցելով՝ կարժևորի իրեն, իր աշխատանքը, և կբարձրանա ինքնագնահատականը:

Երրորդ փուլում ուսուցիչը աշակերտներին բաժանում է նոր խմբերի, յուրաքանչյուր խմբին տալիս է «Պեպո» կատակերգության պատճենահանված տարբերակից հատվածներ: Ուսուցիչը խմբերն այնպես պիտի կազմի, որտեղ լինեն և՛ ուժեղ, և՛ թույլ աշակերտներ: Հանձնարարությունն այսպիսին է. խմբի աշակերտները ընթերցում են բնագրից տրված հատվածը, համառոտում, դուրս թողնում այն հատվածները, որոնք այնքան էլ կարևոր չեն: Արդեն մշակված թերթիկը ավելի թույլ աշակերտները (իհարկե, «թույլ» բառը չպետք է բարձրաձայնել աշակերտների մոտ, խմբում բոլոր աշակերտների աշխատանքը պետք է կարևորվի, արժևորվի) արտագրում են բնագիրը: Այս գործընթացը հսկում է ուսուցիչը, ուղղորդում, խորհուրդներ տալիս նրանց, որովհետև աշխատանքն այնքան էլ դյուրին չէ: Այնուհետև արդեն արտագրված հատվածից դուրս են գրում անհասկանալի բառերն ու քերականական ձևերը, ուսուցչի օգնությամբ գրում, սովորում դրանց բացատրությունները: Այս քայլի միջոցով ուսուցիչը նպաստում է աշակերտերի *իրադրական խոսքի զարգացմանը*: Բացի դրանից՝ աշակերտներն ծանոթանում են լեզվի մյուս շերտերին, այս դեպքում՝ Թիֆլիսի հայերենին: Բառերը գրում են առանձին թերթիկների վրա, սովորում դրանք, հետո փոխանցում մյուս խմբերին: Այս աշխատանքը կատարում են 2 դասաժամում: Արդյունքում յուրաքանչյուր խումբ կընթերցի կատակերգությունից ևս մեկ հատված (2-րդ հատվածը դասագրքինն է), համառոտելով հանգամանորեն կծանոթանա տեքստին, կսովորի անհասկանալի բառերի բացատրությունները: Այս աշխատանքի նպատակն այն է, որ աշակերտները ընթերցեն ստեղծագործությունից այլ հատվածներ: Իսկ որպեսզի ընթերցեն դասագրքի հատվածը, աշխատանքը տրվում է այլ կերպ: Տեքստը ուսուցիչը նորից բաժանում է 4 հատվածների (ըստ տեսարանների) և հանձնարարում խմբերին կատարել նույնպիսի աշխատանք, բայց արդեն անհատական: Որպես տնային աշխատանք՝ աշակերտներից յուրաքանչյուրը կունենա հատվածի համառոտած իր տարբերակը: Թույլ աշակերտներին կարելի է հանձնարարել ավելի փոքր հատվածներ: Տնային հանձնարարությունը քննարկում են խմբի ներսում, ընտրում լավագույն տարբերակը և օգտվելով **խճանկար մեթոդից**՝ միացնում են մյուս խմբերի աշխատանքներին՝ ստանալով գրքի հատվածի համա-

ռոտ տարբերակը: Ավարտելով իրենց աշխատանքները՝ յուրաքանչյուր խումբ դասարանին է ներկայացնում իր հատվածի բովանդակությունը: Մինչ այդ ներկայացումը ուսուցիչը շեշտում է, որ աշխատանքները ներկայացնելուց հետո կտրվեն հարցեր, որպեսզի խմբերը լսեն միմյանց:

Չորրորդ փուլում, կրկին կիրառելով **քարտեզագրման մեթոդը**, ուսուցիչը խմբերին բաժանում է թերթիկներ, որոնց վրա պատկերված է կերպարի վերլուծության գծապատկերը (յուրաքանչյուր կերպարի համար մեկական թերթիկ): Հանձնարարվում է լրացնել դրանք՝ ներկայացնելով կերպարներն ըստ տրված հատվածի: Աշակերտները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին՝

1. Ո՞վ է, ի՞նչ է անում կերպարը,
2. Ինչպե՞ս է փոխվում կերպարը, ինչո՞վ է ավարտվում նրա գործելակերպը,
3. Ի՞նչ է մտածում կերպարը, ի՞նչ նպատակներ ունի,
4. Ինչպե՞ս են ուրիշները վերաբերվում կերպարին:

Ավարտելով աշխատանքը՝ աշակերտները հերթով ներկայացնում են կերպարների բնութագրերը՝ քննարկելով, վերլուծելով նրանց արարքները: Գիտելիքն ամրապնդելու նպատակով, որպես տնային աշխատանք, ուսուցիչը կարող է հանձնարարել ոչ մեծ շարադրանք, որտեղ ներկայացվում է նախընտրած կերպարի բնութագիրը:

Այս բոլոր աշխատանքներից հետո անհրաժեշտ է կատարել անդրադարձ՝ ողջ թեման ամփոփելու համար: Հինգերորդ փուլում աշակերտներին տրվում է ուսումնասիրած երկի վերլուծության գծապատկերը, որում պետք է նշել «Պեպո» կատակերգության թեման, գեղարվեստական արժեքը, գրման ժամանակաշրջանը, պատմականությունն ու արդիականությունը, բովանդակությունն ու գաղափարը, բաղկացուցիչ մասերը և այլն: Նույն խմբերով աշխատում են թերթիկների վրա, լրացնում գծապատկերը, այնուհետև ներկայացնում դասարանին: Խմբերը լսում են միմյանց, լրացնում, դիտողություններ անում: Լրացնելով գծապատկերի համապատասխան կետերի պահանջները՝ աշակերտները համակարգում են իրենց գիտելիքները տվյալ թեմայի վերաբերյալ:

Հաջորդ՝ վեցերորդ փուլն արդեն բեմադրության նախապատրաստումն է: **Դերային խաղի** միջոցով աշակերտները պետք է ներկայացնեն հատվածներ «Պեպո» կատակերգությունից: Ուսուցիչն այս ձևով աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում դեպի թատերգական ստեղծագործու-

թյունները: Ուսուցիչը նախապես այնպես պիտի կազմի խմբերը, համալրի այնպիսի աշակերտներով, որ հետո նրանք կարողանան բեմադրել իրենց հանձնարարված հատվածը: Քանի որ աշակերտները շատ են, դերերը՝ քիչ, կարող են նույն դերը ստանձնել մի քանի աշակերտ, որոնք կներկայացնեն իրենց բաժին հատվածը: Յուրաքանչյուր աշակերտ՝ թույլ թե ուժեղ, սիրով է ստանձնում իր դերը, անկախ այն բանից՝ ունի դերասանական շնորհ, թե ոչ, քանի որ ամբողջ դասարանն է մասնակցում բեմադրությանը: Խմբի ներսում բաժանվում են դերերը և հանձնարարվում սովորել տրված հատվածները: Անհրաժեշտ է, որ փորձերը կատարվեն ամբողջ դասարանի ներկայությամբ, որովհետև մի քանի անգամ լսելով այս կամ այն կերպարի խոսքը՝ մյուս խմբերի անդամները կյուրացնեն իրենց անծանոթ հատվածի բովանդակությունը, կերպարների խոսքը, նույնիսկ անգիր կսովորեն դուր եկած հատվածները: Բացի դրանից՝ դիտելով բեմադրությունը՝ ավելի ուժեղ կտպավորվեն կերպարները, նրանց արարքները:

Այսօր հանրակրթության մեջ առկա մի շարք խնդիրներ որոշակի առումով խտացվել և հատկապես տեսանելի են դարձել գրականության դասավանդման բնագավառում: Գրականությունն էապես առանձնանում է հանրակրթական մյուս առարկաներից միայն իրե՛ն բնորոշ առանձնահատկություններով, ինչպես նաև անձի ձևավորման ու կրթության գործում հնարավորությունների բազմազանությամբ: Այս առարկայի արդյունավետ ուսուցումը լուծում է բազմաթիվ կարևոր խնդիրներ՝ «ձևավորել գիտական աշխարհայացք, լուծել գաղափարական, քաղաքական, գեղագիտական, բարոյական և աշխատանքային դաստիարակության բազմազան խնդիրներ…»[6]:

Հայոց լեզվի և գրականության ուսուցման համակարգը, բացի բուն առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի մեկ այլ կարևոր հիմնախնդիր՝ արդեն դպրոցական նստարանից սովորողներին ընդգրկել հասարակական բազմաբնույթ հարաբերությունների մեջ՝ ձևավորելով ճանաչողական-տրամաբանական, համագործակցության, հաղորդակցման, ստեղծագործական կարողություններ, ինչպես նաև ինքնուրույն գործունեություն ծավալելու, որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու հմտություններ:

Ինչպես արդեն նշել ենք, ուսուցման գործընթացում այսօր կարևորվում է ոչ միայն գիտելիքների ինքնուրույնաբար ձեռքբերումը, այլև այդ գիտելիք-

[6] Հ. Մ. Մախչանյան, Հայ գրականության ուսուցման պատմություն, Երևան, 1979, էջ 401:

ները կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: Այս գործընթացն իրականացնելու համար ուսուցիչը պետք է կիրառի զանազան մեթոդներ, հնարներ՝ աշակերտների մեջ ուսման նկատմամբ սեր, հետաքրքրություն, ոգևորություն առաջացնելու համար: Ճիշտ է՝ ուսուցման նոր մեթոդները ուսումնական գործընթացը դարձնում են բավականին հետաքրքիր և աշխույժ, սակայն նպատակահարմար է համադրել *ավանդական* և *նոր* մեթոդները՝ լավագույն արդյունքի հասնելու համար: Բացի դրանից՝ մեթոդներն ու ուսուցման ձևերն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները: Միջին դպրոցի սանը որակապես տարբերվում է տարրական դպրոցի աշակերտից: Կրտսեր դպրոցականը իր բնույթով խիստ տպավորվող և ներշնչվող է, զարգացած չէ նրա ինքնուրույնությունը: Դեռահասության տարիքում, ընդհակառակը, անձի ինքնուրույնությունը վառ դրսևորում է ձեռք բերում: Այս տարիքում սովորողները ինքնուրույն գործունեություն են ծավալում և անընդհատ ձգտում են ընդարձակելու դրա սահմանները: Սակայն դեռահասն իր պատրաստակամությունը չի կարողանում գործնականում կիրառել, քանի որ չի տիրապետում ուսումնական գործունեության բազմազան և նոր եղանակների: Ուսուցչի խնդիրն է դեռահասին սովորեցնել ուսումնառության այդ նոր եղանակներն ու ձևերը և թույլ չտալ, որ ուսման նկատմամբ հետաքրքրությունը հանգչի: Մանկավարժը մշտապես ականատես է, թե դեռահասն ինչ բուռն ոգևորություն է հանդես բերում նոր նյութի հանդեպ, բայց ինչքան արագ է նա հիասթափվում դրանից: Ուսուցման գործընթացն աշակերտների համար ավելի հետաքրքիր, ոգևորիչ է **համագործակցային ուսուցմամբ**: Այս դեպքում խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը դրդապատճառ է դառնում ուսուցման գործընթացի համար: Երբ նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքր մասերի, որոնք ավելի հեշտ են յուրացվում աշակերտների կողմից և լավ ներկայացվում, աշակերտները խրախուսանք են ստանում աշխատանքի համար, ինչն էլ դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Այսպիսով, **համագործակցային ուսուցմամբ** նպատակահարմար է կազմակերպել այն ստեղծագործությունների ուսուցումը, որոնց յուրացման ընթացքում առաջանում են բարդություններ, այն է՝ աշակերտները, հանդիպելով դժվարությունների, հիասթափվում են, նրանց մոտ առաջանում է բացասական վերաբերմունք երկի հանդեպ: Այդպիսի ստեղծագործություննե-

րից է Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը, որի ուսուցման ընթացքում մի շարք խնդիրներ են առաջանում՝ կապված Թիֆլիսի բարբառով գրված բնագրում առկա մեծ քանակությամբ անհասկանալի բառերի, քերականական ձևերի հետ: Իսկ օգտագործելով համագործակցային ուսուցման վերոնշյալ տարբերակը՝ ուսուցիչը կարող է ուսումնական գործունեությունը հասցնել նպատակակետին: Այս աշխատանքը ծավալուն, հաջորդական քայլերով զարգացող ուսումնական գործունեություն է, որն ուսուցչից պահանջում է մեծ եռանդ, համբերություն և լուրջ պատրաստվածություն: Աշխատանքներն աշակերտներին հանձնարարելիս նա պետք է հաշվի առնի աշակերտների ընդունակություններն ու հնարավորությունները, ստեղծի այնպիսի մթնոլորտ, որ դասարանում յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը արժևորվի, գնահատվի: Կարևորն այն է, որ ոչ մի աշակերտ չմեկուսանա դասարանից, իրեն զգա խմբի լիարժեք անդամ, և այս ամենը ուսուցչից պահանջում է մեծ վարպետություն, ճկունություն: Համագործակցային մեթոդներով ուսուցման այս գործընթացը թերևս բարդ է, բայց անցնում է սահուն, հագեցած, կարևորը՝ աշակերտներն այդ ընթացքում աշխատում են սիրով, նպատակաուղղված, պատասխանատվությամբ և հաճույքով: Իսկ եթե ուսումնառության ընթացքում կա սեր, ձգտում, ոգևորություն, անհնար է, որ այդտեղ չլինի արդյունք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասմարյան Լ., Գաբրիել Սունդուկյան: Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980թ., 121 էջ:
2. Բալյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, Լույս, 1983թ., 456 էջ:
3. Մախչանյան Հ., Հայ գրականության ուսուցման պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1979թ., 447 էջ:
4. Չոպանյան Ա., Երկեր, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1966թ., 578 էջ:
5. Սունդուկյան Գ., Պեպո: Կատակերգություն 3 գործողությամբ, Երևան, Հայաստան, 1971թ., 139 էջ:
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Լույս, 1980թ., 564 էջ:
7. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978թ., 246 էջ:

8. https://www.kaganonline.com/free_articles/dr_spencer_kagan/281/Kagan-Structures-A-Miracle-of-Active-Engagement,2:

TEACHING G. SUNDUKYAN'S COMEDY "PEPO" BY COOPERATIVE METHODS

BAGOYAN ALLA
GSU lecturer
e-mail: allabagoyan@mail.ru
HOVHANNISYAN LUSINE
Teacher of Gavar secondary school No. 2
after Papin Ghandilyan
e-mail: lusine.hovhannisyan74@mail.ru

The teaching of fiction in a public school has its own characteristics. Not only the knowledge and skills of the teacher, the knowledge of the psychology and age characteristics of teenagers, but also the use of different methods of presenting the material and creative approaches are important. Modern pedagogy has a rich arsenal of ways to conduct the lesson, which contributes to the effectiveness of the teacher's work and the students' learning.

The purpose of the article is to present our experience of teaching G. Sundukyan's comedy "Pepo" using cooperative methods in the 8th grade of a public school. Students often struggle with reading and mastering the original text written in Tiflis dialect, so the teacher must be flexible and choose such methods that will contribute to the full understanding of the program. The teaching of the mentioned topic is effective through brainstorming, group research, mapping, role playing, and the practical work is the preparation of a presentation, in which all the students of the class are involved according to their abilities. The main goal of this work is to develop the student's ability to acquire knowledge through independent work, take personal responsibility, develop factual speech, and other skills through extensive, step-by-step learning activity.

Key words: *literature, cooperative learning, method, brainstorming, group research, mapping, mosaic, role play, G. Sundukyan, "Pepo".*

ОБУЧЕНИЕ КОМЕДИИ Г.СУНДУКЯНА «ПЕПО» КООПЕРАТИВНЫМИ МЕТОДАМИ

БАГОЯН АЛЛА
Преподаватель ГГУ
электронная почта: allabagoyan@mail.ru
ОГАННИСЯН ЛУСИНЭ
Учитель Гаварской средней школы N2 им. Папина Гандиляна
электронная почта: lusine.hovhannisyan74@mail.ru

Чтение и изучение художественных произведений на тифлисском диалекте иногда составляют трудности для учащихся. Поэтому на уроках литературы нужно применять такие методы, которые способствуют эффективности обучения.

Данная статья представляет наш многолетний опыт обучения на примере комедии «Пепо» Г.Сундукяна в 8-ом классе общеобразовательной школы с использованием кооперативных методов.

Ключевые слова *- литература, кооперативное обучение, метод, мозговой штурм, групповое исследование, картирование, мозаика (пазл), ролевая игра, Г. Сундукян, Пепо.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

INTERACTIVE METHODS OF MEMORY DEVELOPMENT AT FOREIGN LANGUAGE CLASSES

UDC 37.01
DOI: 10.56246/18294480-2023.14-28

TORCHYAN LILIT
Lecturer of Foreign Language and Literature Chair,
Gavar State University
e-mail: l.torchyan@gsu.am

In this work, we have brought the available empirical research on children's working memory performance to a level relevant to practical application and to the teaching and education of school-aged children.

In summary, working memory difficulties can be addressed through targeted interventions, effective classroom management of working memory workloads, and the teaching of specific strategies, as achieved in our experimental work.

Key words: *interactive methods, memory development, types of memory, memorization, working memory, experimental work, schoolchildren, diagnostics.*

In modern society, the role of foreign languages is increasing every year. Knowledge of the language makes it possible to join the world culture, contributes to the formation of the child's personality and its social adaptation to the conditions of a constantly changing world. A foreign language expands the linguistic horizons of students, contributes to their overall speech development, which is very relevant when working with children of primary school age.

In the process of learning a foreign language, the following tasks are implemented: taking into account the individual speech capabilities of children, developing attention, memory, thinking, imagination, familiarizing children with new social experience, fostering a friendly attitude towards representatives of other countries, forming not only speech, intellectual and cognitive abilities of children, but also general learning skills.

Of particular importance in the study of a foreign language is memory, as one of the cognitive processes. The relevance of the topic lies in the fact that human consciousness is not limited only to forms of direct reflection. The experience of students is based on accumulation, that is, the accumulation by memory of peculiar images created by the influence of the real world, providing them with the opportunity to acquire new knowledge, learn and master professional skills.

The principles of memorization and methods of memory development have been of interest to the mankind since ancient times. The ancient Greeks, for example, thought that information is some kind of material particles that enter the head and leave original imprints on the brain, as if on wax. Since then, knowledge about the mechanisms of memory has improved significantly. There are many memorization techniques that allow children and adults with different types of thinking to choose effective and efficient ways for themselves.

Learning a foreign language involves mastering a large vocabulary. According to the European system of levels of foreign language proficiency, 400-500 words is an active vocabulary for a basic level, 800-1000 words is an active vocabulary for explaining oneself, or a passive vocabulary for reading at a basic level.

2000 words is an active vocabulary, which is quite enough to ensure everyday communication throughout the day, or a passive vocabulary, sufficient for confident reading[7]. Such results can only be achieved with a well-developed memory. All of the above factors confirm the relevance of the chosen research topic: “Memory development at foreign language classes”.

Memory research is currently occupied by representatives of various sciences: psychology, biology, medicine, genetics and others. Each of these sciences has its own theories of memory: psychological (G. Ebbinghaus, K. Levin, P. Janet), biogenetic (I. Pavlov, I. Sechenov), physiological (L. Vygotsky).

Research hypothesis: the process of memory development among younger students at English classes will be most effective if it:

- develops students' imagination at English classes;

[7] Verbitskaya M. V., B. Ebbs, E. Worell, E. Ward, Oralova O. V. English: Grade 3: a textbook for students of educational organizations: Part 1. Moscow: Ventana-Graf Pearson Education ltd., 2014 95 p.

- develops and implements a set of exercises for the development of memory in younger students;
- creates pedagogical conditions for students, conducive to the development of memory.

The object of the study is the process of teaching younger students with disabilities or difficulties connected with memorizing the material at English classes.

The subject of the study is the conditions for the implementation of a set of exercises for the development of memory among younger students, as well as scientific and educational literature on the topic under study.

The purpose of the study is to substantiate and experimentally prove the effectiveness of a set of developed exercises aimed at developing memory among younger students at English classes.

The hypothesis, object, subject and purpose of the study led to the formulation and consistent solution of the following tasks:

1. Analyze the psychological and pedagogical literature devoted to the problematic aspects of memory development among younger students.
2. Consider the features and conditions for the development of memory among younger students at English classes.
3. Determine the best methods and techniques for developing the memory of younger students at English classes.
5. Conduct an analysis of teaching materials in English for elementary school on the problem of memory development at foreign language classes.
6. Determine the features of the organization of the ascertaining experiment and investigate its results.
7. Conduct a formative experiment and analyze its results.

Scientific research methods: analysis of psychological and pedagogical literature, study and generalization of pedagogical experience, conversation, observation, questioning, stoichiometry, qualitative and quantitative data processing.

The practical significance of the study. The materials of this work can be used in the practical educational work of elementary schools. It is also possible to use the results of the study to further search for ways and methods that will help improve the process of memory development in younger students at English classes.

In the course of studying the problematic aspects of memory development at foreign language classes, we solved a number of research tasks, which made it possible to achieve the goal of the final qualification work. As a result of the work carried out, we made a number of the following theoretical conclusions:

1. Memorization of educational material by students is an important pedagogical goal at English classes in elementary school. Therefore, the improvement of memory in children of primary school age at English classes is primarily due to the acquisition during educational activities of various methods of memorization that are associated with the organization and processing of educational material.

2. The leading types of memory among children of primary school age are figurative and emotional. At English classes, it is easier for children to remember specific objects, events and faces than descriptions, explanations and definitions. The main principle of memory development at English classes for children of primary school age is that the information to be remembered must be vivid, imaginative and emotionally colored.

3. To improve the properties of memory, teachers adhere to the following methodological techniques: distribute the repetition of the material at regular intervals, do not try to teach everything at once; systematically alternate students' perception of information that needs to be remembered with its active recall; use various mnemonic techniques; carry out a change of activity; diversify educational material for memorization.

4. In order to confirm the hypothesis put forward at the beginning of the work, as well as the theoretical provisions of the final qualifying work, we conducted a pedagogical experiment, which consisted of three stages: stating, forming, controlling. The pedagogical experiment was carried out at the secondary school of Noratus village of Gegharkunik region: 4th-grade students participated in it. The children were initially divided by the English teachers of this school into 2 groups (experimental and controlling), 8 people in each, all children aged 8-9 years. The ascertaining stage of the pedagogical experiment, conducted in January 2022, was aimed at identifying the initial level of memory development of younger students in both groups, and analyzing the results obtained.

Diagnostics in the experimental group showed the following results at the first stage of the experiment:

- 1 schoolchild (12.5%) has a level of memory development above the average,
- 3 students (37.5%) have an average level,
- 4 schoolchildren (50%) have a level of memory development below the average.

In turn, diagnostics in the controlling group at the first stage of the experiment showed the following results:

- 2 schoolchildren (25%) have a higher-than-average level of mediated memory,
- 2 students (25%) have an average level,
- 4 schoolchildren (50%) have a level of memory development below average.

We determined and compared the average level of mediated memory development in the experimental and controlling groups, as a result of which we concluded that both groups have approximately the same level of mediated memory development, and that these groups of children need further memory development. These results also made it possible to select appropriate tasks for the formative experiment.

The formative stage of the pedagogical experiment lasted 1 month. During it, children from two groups studied according to the curriculum developed at the beginning of the 2021-2022 academic year by an English teacher using the textbook being studied.

Since this textbook, based on the results of the analysis of the text book, did not have special exercises for the development of students' memory, in order to develop memory among the children included in the experimental group, game materials were included in the pedagogical work. Based on the studied literature on the research problem, we concluded that the game activity is the most appropriate for 8–9-year-old children. In addition, the specifics of working with children limited us in choosing the means that can be used to develop their memory.

Therefore, during this stage of the pedagogical experiment, at all stages of the English class in the experimental group, game tasks were used to develop different types of memory among children. Besides, the tasks were being changed during the whole process.

During the controlling stage of the pedagogical experiment, the following diagnostic results were obtained in the controlling group: 2 schoolchildren (25%) had a higher-than-average level of mediated memory development, which is equal to the result of the ascertaining experiment. 3 students (37.5%) have an average level - this indicator has improved per student, 3 students (37.5%) have a level of mediated memory development below average.

Thus, in the course of the pedagogical experiment in this group, we can talk about insignificant dynamics of changes in the levels of memory development, which is explained by the physiological and psychological development of children.

At the same time, during the controlling stage of the pedagogical experiment in the experimental group, higher results were obtained: among 3 schoolchildren (37.5%), the level of mediated memory development was above average, this indicator increased among two schoolchildren, and among 4 schoolchildren (50%) an average level of mediated memory was revealed.

At the same time, the level of development of mediated memory below average remained only in case of one student, but this student also showed a better result than during the ascertaining experiment. Thus, in this group, at the last stage of the experiment, significant dynamics were revealed at the levels of development of mediated memory.

In general, the results of the controlling stage of the pedagogical experiment showed that the level of memory development in the experimental group of children increased significantly. After the pedagogical experiment, which lasted six months, in the experimental group the level of development of mediated memory was recorded at high and medium levels, and only one student demonstrated a level of memory development below average. On the other hand, among children from the controlling group at the controlling stage of the pedagogical experiment, only a slight dynamics of memory development was recorded.

Thus, we can conclude that the hypothesis posed at the beginning of the study is proven, i.e. the process of memory development among younger students at English classes occurs most effectively if we develop the imagination of students during the classes, use game exercises to develop memory among younger students, and also create pedagogical conditions for students that contribute to the development of their memory.

In addition, the set of exercises used in the course of the pedagogical experiment aimed at developing memory among younger students showed its high practical effectiveness at English lessons, which states that we have achieved our goal.

To conclude, a child may try really hard at school but still struggle to learn. In such cases, often "the problem isn't effort; the problem is working memory" (Alloway 2011:9). Limitations in working memory capacity negatively impact cognition, development and learning in both typical and atypical child populations, as they may impair a child's ability to extract information and learn the skills that form the basis for later effective functioning in mathematics, science, language studies and interpersonal interactions (Cowan 2014).

In this work, we have taken the available empirical research on working memory functioning in children to the level of practical application and relevance for childhood learning and education.

We summarize on the positive note that working memory difficulties can be addressed through targeted interventions, effective classroom management of working memory load, and the teaching of specific strategies which was achieved in the result of our experimental work.

References

1. Common European competencies of foreign language proficiency: Learning, teaching, assessment [electronic resource]. Access mode: http://www.linguanet.ru.

2. Galskova N.D. Modern methods of teaching foreign languages A guide for teachers. M.: ARKTI, 2013. 192 p.

3. Gnedoy LN The development of the memory of preschoolers through memorization of poems [electronic resource]. Access mode: http://www.nsportal.ru.

4. Kolker Ya.M. Practical method of teaching a foreign language. Moscow: Education, 2010. 380 p.

5. Komarova Yu. A. The book for the teacher to the textbook Yu. A. Komarova, I. V. Larionova, J. Perrette "English. Brilliant" Grade 4. 2nd ed. Moscow: Russkoe Slovo Macmillan, 2014. 111 p.

6. Komarova Yu. A. The book for the teacher to the textbook Yu. A. Komarova, I. V. Larionova, J. Perrette "English. Brilliant": Grade 2. 2nd ed. Moscow: Russkoe Slovo Macmillan, 2013. 111 p.

7. Komarova Yu. A., The book for the teacher to the textbook Yu. A. Komarova, I. V. Larionova, J. Perrette "English. Brilliant": Grade 3. 2nd ed. Moscow: Russkoe Slovo Macmillan, 2014. 103 p.

8. Kospanova V.M., Semenova T.I. Modern methods of teaching English. Curriculum for teachers of English in general education institutions. M.: MGADA, 2014. 83 p.

9. Luria A. R. A little book about great memory. M.: Academy, 2009. 554 p.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԵՐԻՆ

ԹՈՌՉՅԱՆ ԼԻԼԻԹ
Գավառի պետական համալսարանի
օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս
էլփոստ՝ l.torchyan@gsu.am

Այս աշխատանքում մենք երեխաների մոտ աշխատանքային հիշողության գործունեության վերաբերյալ հասանելի էմպիրիկ հետազոտությունները հասցրել ենք գործնական կիրառման և դպրոցահասակ երեխաների ուսուցման և կրթության համար անհրաժեշտ մակարդակի:

Ամփոփելով հարկ է նշել, որ աշխատանքային հիշողության հետ կապված դժվարությունները կարող են լուծվել նպատակային միջամտությունների, աշխատանքային հիշողության ծանրաբեռնվածության դասարանային արդյունավետ կառավարման և հատուկ ռազմավարությունների ուսուցման միջոցով, որոնք ձեռք են բերվել, որին հաջողվել է հասնել մեր փորձարարական աշխատանքի արդյունքում:

Բանալի բառեր՝ *ինտերակտիվ մեթոդներ, հիշողության զարգացում, հիշողության տեսակներ, մտապահում, աշխատանքային հիշողություն, փորձարարական աշխատանք, դպրոցականներ, ախտորոշում:*

ИНТЕРАКТИВНЫЕ МЕТОДЫ ПО РАЗВИТИЮ ПАМЯТИ НА ЗАНЯТИЯХ ПО ИНОСТРАННОМУ ЯЗЫКУ

ТОРЧЯН ЛИЛИТ
Преподаватель кафедры иностранного языка и литературы ГГУ
электронная почта: l.torchyan@gsu.am

В этой работе мы довели имеющиеся эмпирические исследования производительности рабочей памяти детей до уровня, необходимого для практического применения, а также для обучения и воспитания детей школьного возраста.

Таким образом, трудности с рабочей памятью можно решить с помощью целенаправленных вмешательств, эффективного управления нагрузкой рабочей памяти в классе и обучения конкретным стратегиям, как это было достигнуто в нашей экспериментальной работе.

Ключевые слова: *интерактивные методы, развитие памяти, виды памяти, запоминание, рабочая память, экспериментальная работа, школьники, диагностика.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 01.10.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

CREATING ONLINE VISUALS AND APPLYING THEM IN EFL CLASS

UDC 37.01
DOI: 10.56246/18294480-2023.14-29

MNATSAKANYAN ANGELINA
Graduate of the Bachelor Program
Faculty of Philology, Department of English Language and Literature, GSU
e-mail: angel.mnatsakanyan@bk.ru
SARGSYAN RUZANNA
PhD, Associate Professor
Associate Professor of the Chair of Foreign Language and Literature, GSU
e-mail: ru-zanna@hotmail.com

The given paper is devoted to the application of online visuals in EFL class in Armenian schools. Online visuals are generally interesting, creative, context simplifying tools the design of which provides the instructors and students an effective teaching-learning process as they are applied. There is a plethora of various online tools aimed at creating online visuals, just a few of them have been presented in the given paper: worksheets, infographics, mind maps and crosswords. The main objective of the study is to check the didactic potential of online visuals via the application of worksheets, infographics, mind maps and crosswords while teaching EFL in an Armenian setting. Language instructors can either create visuals by themselves (as we did) or take ready-made visuals to explain difficult topics, at the same time increasing the students' motivation, interest, creativity and productive skills. Based on our own experience we can claim that creating tailored online visuals and using them in teaching sessions is beneficial for both teachers and learners making teaching-learning more efficient and enjoyable.

Key words: *online visuals, creating online visuals, applying online visuals, EFL (English as a foreign language), worksheets, infographics, mind maps, crosswords.*

INTRODUCTION

The given paper is devoted to online visuals in an EFL (English as a Foreign Language) and their application in an EFL classroom in an Armenian setting.

Online visuals are generally interesting, creative, context simplifying tools the design of which provides the instructors and students an effective teaching-learning process as they are applied. Online visuals are widely used in the modern society in various fields. From the point of education, they are used for all levels of learning and teaching from pre-school education to post-graduate studies. They are effective for all types of subjects/ courses.

In the focus of our attention is applying online visuals, particularly worksheets, infographics, mind maps and crosswords in a foreign language class (EFL) in an Armenian setting.

The main objective of the study is to check the didactic potential of online visuals via the application of worksheets, infographics, mind maps and crosswords while teaching EFL in an Armenian setting.

METHODOLOGY

During the research the following **methods** were applied:

- *theoretical:* study of relevant scientific literature and Internet sources;
- *social and pedagogical:* observation and monitoring of the teaching-learning process;
- *experimental:* conducting experimental teaching with the use of online visuals;
- *statistic:* statistical analysis of the data received.

LITERATURE REVIEW

The use of visuals is very important as it helps the teacher "to clarify, establish, correlate and coordinate accurate concepts, interpretations and appreciations, and enable him to make learning more concrete, effective, interesting, inspirational, meaningful and vivid"[1].

[1] https://www.researchgate.net/publication/326652939_Visual_Aids_in_Language_Education

Many researchers believe that visuals help the learners to comprehend the learning material easily. They can easily memorize the mental image of a particular situation and later recall it.

Language teachers prefer using different teaching aids to make the teaching-learning process interesting and resourceful. They can make use of fine equipment to use those teaching aids in the classroom. The effectiveness of this equipment usage mostly depends on the teacher's creativity, motivation, technical knowledge and the learners' reaction towards these aids. Such activities referring to receptive and productive skills (listening and speaking) mostly require the usage of audio-visual materials.

We have chosen several formats of online visuals for our research: worksheets, infographics, mind maps and crosswords.

Worksheets

The term "worksheet" can be defined as a sheet of paper on which one performs some work. Usually they are limited to two pages which form a single sheet. Most common types of worksheets are: students' school exercise assignments, exam papers, tax forms. etc. We have huge opportunities to create worksheets online then have them printed on a paper sheet. Simple examples of worksheets are those which students use during school classes, for example, questions referring to the lesson. Being individual activities, worksheets are necessary for both parents and students, as they are easily accessible; parents can track their child's routine at school, assignments, marks, as for students, they can use them as summaries of the knowledge gained. From teachers' perspective worksheets are important for understanding their students' knowledge, their progress and general and specific outcomes of the teaching-learning process.

Worksheets are created and used for all subjects/courses. English teachers use them in order to practice recently learned or explained topic. They can either take ready-made worksheets or create themselves using various worksheet-creating websites. Typical English worksheets should contain one topic, have beautiful design, be enjoyable to complete, not be time consuming.

Infographics

The term "infographics" is a combination of the words "info" and "graphics". It is a special tool used in order to enhance comprehension and attract people. Being used by people of various professions, infographics are

beneficial. For example, professionals in the field of trade use them to make their products visible and competitive. As for the teachers, this tool is used in order to explain difficult lessons, give information in an attractive way to make it easier for comprehension.

There are various types of infographics, but they generally fall into three categories each serving a definite purpose:

- ***Visualization of information*** is done with the help of diagrams, charts. This is the visual representation of some data, for example, the results of a school test, researches.
- ***Design of information*** is actually an important part of the information representation, as it makes the display more effective and impressive.
- ***Editorial infographics*** have become a great shift in the field of publications, as the importance of visual content has risen greatly in order to engage readers.

Mind maps

Mind maps are special diagrams which are used in order to organize some information presenting relationships among the parts of the whole. Generally, they are created on one concept, which is put in the middle of a blank page, and lots of related ideas are drawn, such as images, words, concepts, etc. All of the related ideas are concentrated on the central idea; they present the branches of it. The diagram looks like a spider or sun rays, that's why mind maps are sometimes called "spider diagrams" or "bursting sun diagrams".

The term "mind map" was first used by Tony Buzan, a famous psychologist and TV celebrity. Mind maps are necessary, because:

- ❖ They are a good way for brainstorming,
- ❖ Note taking process becomes easier,
- ❖ They save space and time,
- ❖ Complex concepts become easily comprehensible,
- ❖ The presentation of some information is clearer,
- ❖ The learners can find the interrelations between various concepts,
- ❖ Highlights stimulate brain work,
- ❖ Learning and memorizing is more effective.

Below is an example of a mind map created by us with the help of an online tool.[2]




Figure 1: Structure of a mind map.

Crosswords

A crossword, otherwise called "a crossword puzzle", is a kind of puzzle, which is generally found in magazines, newspapers, books and the Internet. Arthur Wynne, a journalist, was the creator of the first crossword puzzle. Nowadays we can find lots of crossword examples in various magazines, newspapers.

The general or traditional type of crosswords consists of black and white squares which are known as "grids", vertically or horizontally arranged. They should have another white square touching it from any side. The aim of these crosswords is to form various words in the white squares.

Some benefits of crosswords can be as follows:

- They enhance vocabulary, as putting different words together, people do a mental exercise improving their word stock, which plays an important role in communication.
- They have a calming effect since they can reduce the stress level. While solving crossword puzzles, people can ponder for a long while, as they make an aim of completing that puzzle. In the end, after solving it entirely, people can feel relieved.
- Stimulation for brain work. During the process of thinking over the puzzles, our brain cells keep working, thus being a good factor for creative and critical thinking.

[2] https://miro.com/app/board/

➢ Improving spelling skills. Puzzles are good means for checking students' spelling skills, because they can't be successful, if they fill in the grids incorrectly.

RESEARCH

Participants of the research were students of Gavar school N2 after Papin Ghandilyan (13 learners of the 7th grade, 11 learners of the 6th grade, 7 learners of the 11th grade). The necessary data for the research were collected by using computers, surveys, created with the help of software programs, interviews in order to clarify the efficiency of worksheets, infographics, crosswords and mind maps used during EFL teaching-learning process in the Armenian setting.

During the research and teaching sessions the following tools were used to create and implement online visuals:

- Microsoft Word,
- Crossword maker[3]
- Worksheet maker[4]
- Infographic maker[5]
- Mind map maker [6].

During the research, qualitative and quantitative methods were used.

For the qualitative portion, a conversation-interview with the learners to check their awareness of modern technological means while learning English was practiced. The learners were asked 2 questions: *"Has your English teacher ever used computers at school while explaining a new lesson?" (Yes, they have), "Do you use them substantively when you want to learn the lesson you haven't understood?" (Yes, we do, No, we don't, Sometimes).*

For the quantitative portion, worksheets created with the help of Microsoft Word and Krita application were used. The aim of these worksheets was to check whether the students are visual learners or not and how they liked the use of pictures and videos while learning English. This worksheet-based research was the primary research before the detailed research referring to the direct application of the visual tools. The following conclusion was drawn: most

[3] https://crosswordhobbyist.com

[4] https://www.canva.com/create/worksheets

[5] https://www.easel.ly

[6] https://miro.com/app/board

of the learners were visual learners, had good memory, liked learning with images, videos, didn't have difficulties with using ICT for studying.

After the pre-teaching research, the main aim of which was to check whether the students were interested in learning with visuals, it was decided to conduct lessons with the help of Mind Maps, Infographics, Worksheets and Crosswords. It took us long hours to create the above mentioned visuals with online tools, because we preferred self-created visuals rather than ready-made ones.

With the help of https://www.canva.com/create/infographics/ an infographic about the modal verbs "Shall/Should" was created. This website requires registration. You have to choose "open a new infographic design" on the first page below the description of how to make an infographic. You can select a template from "education infographic" section and start your work deleting some figures, adding and changing them.



Figure 2: Infographics created with the help of CANVA.

Worksheet was created with the help of https://www.canva.com/create/worksheets. It was a matching exercise to practice the grammar topic.



Figure 3: Worksheet created with the help of CANVA.

With the help of https://miro.com/app/board/o9J_lTRgG5g=/ a mind map on "The Present Continuous Tense". After registration a template entitled "sitemap" from the templates section was selected. The users can choose different shapes from the shapes section, colors, can make the connecting lines bold. After filling in the shapes, you have to export that mind map in an image format.




Figure 4: Mind map created with the help of MIRO.

This template was used in the 7th grade with 13 students. Their daily grammar topic was “The Present Continuous Tense”. The aim of the lesson was to enhance the students’ knowledge on the formation and usage of the tense. Firstly, the mid map was shown to the students for a short time in order to give them an opportunity to review it beforehand. As there were three subdivisions of the general grammar topic (also in the mind map), the lesson started with the “Formation” section, zooming only that part to make it extra visible and then asking the students to give their own examples. “Usage” and “Some Spelling rules” sections were explained the same way.

With the help of https://crosswordhobbyist.com/ a crossword about school (the topic of the day was “Focus on school”) was created for the 11 students from the 6th grade. It had an option of automatically arranging the words in a crossword format. The words were typed in the blank fields and by clicking “arrange” and we got the crossword. The main objective of the lesson was to revise the words and word combinations referring to school and enhance them with the help of the crossword.




Figure 5: Crossword created with the help of crosswordhobbyist.com.

In order to receive feedback on what the learners thought about online visuals' application in class and if they liked them, a discussion was held with them after each lesson. It turned out that the learners highly appreciated the usage of tailored worksheets, infographics, mind maps and crosswords during classes, finding them more motivating, interesting and effective means compared to the traditional ones.

CONCLUSION

To sum up the given paper, the application of online visual tools is highly effective for teaching-learning English as a foreign language. Language instructors can either create visuals by themselves (as we did) or take ready-made visuals to explain difficult topics, at the same time increasing the students' motivation, interest, creativity and productive skills. There is a plethora of various online tools aimed at creating online visuals, just a few of them have been presented in the given paper. Based on our own experience, we can claim that creating tailored online visuals and using them in teaching sessions is beneficial for both teachers and learners making teaching-learning more efficient and enjoyable.

References

1. Visual Aids in Language Education URL: https://www.researchgate.net/publication/326652939_Visual_Aids_in_Language_Education
2. https://miro.com/app/board/
3. https://crosswordhobbyist.com
4. https://www.canva.com/create/worksheets
5. https://www.easel.ly

ԱՌՑԱՆՑ ՎԻԶՈՒԱԼ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՆԳԵԼԻՆԱ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի բակալավրիատի շրջանավարտ

Էլփոստ՝ angel.mnatsakanyan@bk.ru

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ ru-zanna@hotmail.com

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ դպրոցներում անգլերենի դասերին առցանց միջոցների և պատկերների կիրառմանը: Առցանց վիզուալ /տեսողական/ միջոցները հետաքրքիր, ստեղծագործ, կոնտեքստը դյուրին դարձնող գործիքներ են, որոնց ստեղծումն ու կիրառումը օգնում է սովորողներին և ուսուցիչներին ավելի արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը: Գոյություն ունի առցանց վիզուալ միջոցների մեծ բազմազանություն, սույն հոդվածում ներկայացված են մի քանիսը՝ աշխատանքային թերթեր, տեղեկապատկերներ /ինֆոգրաֆիկա/, մենթալ քարտեզներ, խաչբառեր: Հետազոտության հիմնական նպատակն է վերլուծել առցանց վիզուալ միջոցների դիդակտիկ ներուժը հայկական միջավայրում անգլերեն դասավադելիս աշխատանքային թերթեր, տեղեկապատկերներ /ինֆոգրաֆիկա/, մենթալ քարտեզներ, խաչբառեր կիրառելու միջոցով: Լեզու դասավանդողները կարող են կա՛մ ինքնուրույն ստեղծել առցանց վիզուալ միջոցներ, կա՛մ կիրառել պատրաստի նյութեր բարդ թեմաները բացատրելիս՝ միևնույն ժամանակ խթանելով սովորողների մոտիվացիան, հետաքրքրությունը, ստեղծագործ միտքը և հմտությունները: Հենվելով մեր սեփական փորձի վրա՝ կարելի է պնդել, որ առցանց միջոցների նպատակային ստեղծումը և դրանց օգտագործումը լսարանում օգտակար է և՛ ուսուցիչների, և՛ ուսումնառողների համար, քանի որ դարձնում է ուսումնական գործընթացը ավելի հաճելի և արդյունավետ:

Բանալի բառեր՝ *առցանց վիզուալ /տեսողական/ պատկերներ, առցանց վիզուալ պատկերների ստեղծում, առցանց վիզուալ պատկերների կիրառում, անգլերենը որպես օտար լեզու, աշխատանքային թերթեր, տեղեկապատկեր /ինֆոգրաֆիկա/, մտաքարտեզ, խաչբառ:*

СОЗДАНИЕ ВИЗУАЛЬНЫХ СРЕДСТВ В ФОРМАТЕ ОНЛАЙН И ИХ ИСПОЛЬЗОВАНИЕ НА УРОКЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

МНАЦАКАНЯН АНГЕЛИНА
Выпускница бакалавриата отделения английского языка и литературы филологического факультета ГГУ
электронная почта: angel.mnatsakanyan@bk.ru

САРКИСЯН РУЗАННА
Кандидат педагогических наук, доцент
Доцент кафедры иностранного языка и литературы ГГУ
электронная почта: ru-zanna@hotmail.com

Данная статья посвящена использованию визуальных онлайн материалов в процессе преподавания английского как иностранного в школах Армении. Визуальные материалы в формате онлайн являются интересными, креативными инструментами, облегчающими понимание контекста. Их использование способствует повышению уровня эффективности учебного процесса как для учащихся, так и для преподавателей. Есть огромное множество инструментов для создания визуальных материалов в формате онлайн, и только некоторые из них представлены в данной статье: рабочие листы, инфографика, ментальные карты и кроссворды. Основная цель данного исследования – проверить дидактический потенциал визуальных онлайн средств путем использования рабочих листов, инфографики, ментальных карт и кроссвордов в процессе обучения английскому языку в армянской аудитории. Преподаватели языков могут либо создавать визуальные средства обучения самостоятельно, как в нашем случае, либо использовать готовые дидактические материалы, чтобы объяснять сложные темы, в то же время повышая уровень мотивации учащихся, поддерживая интерес, креативность и развивая продуктивные виды речевой деятельности. С опорой на наш опыт обучения, можно смело утверждать, что создание визуальных средств для конкретной цели и конкретной аудитории и использование последних в ходе урока является весьма эффективным как для преподавателей, так и для учащихся, что в конечном счете делает учебный процесс результативным и приятным.

Ключевые слова: *визуальные средства в формате онлайн, создание визуальных средств, использование визуальных средств, английский как иностранный, рабочие листы, инфографика, ментальные карты, кроссворды.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 30.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԽԱՂԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՄԱՑԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀՏԴ 37.01
DOI: 10.56246/18294480-2023.14-30

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ
էլփոստ՝ nune.miribyan@mail.ru

Սույն հոդվածում ներկայացված է առաջին դասարանի աշակերտների՝ դպրոցին պատրաստվածության, մոտիվացիայի զարգացման մակարդակի, իմացական հետաքրքրությունների ձևավորման վերաբերյալ հետազոտությունը: Հետազոտության նպատակն է բացահայտել խաղի դերը կրտսեր դպրոցականների իմացական հետաքրքրությունների ձևավորման գործընթացում: Հետազոտությունը կատարվել է Գ. Վիտցլակի «Դպրոցին նախապատրաստվող երեխաների զարգացվածության աստիճանի ախտորոշում», Ն. Գ. Լուսկանովայի «Դպրոցական մոտիվացիայի բացահայտում», Վ. Ս. Յուրկևիչի «Իմացական հետաքրքրության մակարդակի ախտորոշման հարցարան» մեթոդիկաների կիրառմամբ: Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ իմացական հետաքրքրությունը՝ որպես անձի մոտիվացիոն ոլորտի բաղկացուցիչ մաս, առաջնային դեր է կատարում կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման գործընթացում՝ խթանելով ուսումնաճանաչողական շարժառիթները: Ինչպես նաև արձանագրվել է, որ դիդակտիկ խաղերի կիրառման արդյունավետությունը առավել բարձր է իմացական հետաքրքրությունների ցածր մակարդակ ունեցող աշակերտների շրջանում: Խաղի միջոցով երեխան ճանաչում է արտաքին աշխարհը, ձեռք է բերում նոր գիտելիքներ և հասարակության մեջ իր համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ: Խաղերը համարվում են կրտսեր դպրոցականների մոտ իմացական հետաքրքրություն ձևավորելու արդյունավետ միջոց:

Հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ ցածր մակարդակ ունեցող երեխաների խմբի հետ անցկացված դիդակտիկ խաղերի շնորհիվ հաջողվում է մեծ մասամբ բարձրացնել աշակերտների ուսումնական մոտիվացիան, իմացական հետաքրքրությունների մակարդակը, ինչն էլ էապես նպաստում է նրանց ուսումնական առաջադիմության բարձրացմանը:

Բանալի բառեր՝ *իմացական հետաքրքրություն, խաղային տեխնոլոգիա, դիդակտիկ նյութեր, կրտսեր դպրոցական, ճանաչողական հետաքրքրություն:*

Աշակերտների իմացական հետաքրքրության զարգացումը ուղղակիորեն կապված է ուսումնական աշխատանքների կազմակերպումից, երբ նրա զարգացումը տեղի է ունենում պարզից բարդ, հայտնիից անհայտ, մերձակայից հեռակա, նկարագրականից բացատրական ընթացակարգերով: Երեխայի ճանաչողական հետաքրքրությունների հաջող ձևավորման և զարգացման համար կարևոր է պահպանել հետևյալ սկզբունքը. որքան փոքր է դպրոցականը, այնքան պետք է ավելի հստակ ու պարզ մեթոդներով կազմակերպվի ուսուցումը, և ավելի շատ պետք է լինի նրա ակտիվությունը: Այս գործընթացում առանցքային նշանակություն է ստանում հատկապես կրտսեր դպրոցական տարիքի երեխաների իմացական հետաքրքրությունների ձևավորման հիմնախնդիրը, որը նրանց ակտիվության ապահավման կարևոր գրավականն է:

Կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների զարգացման մեթոդական և գիտական ուսումնասիրություններով են զբաղվել Ս. Վ. Հարությունյանը, Օ. Ս. Գազմանը, Վ. Մ. Գրիգորիևը, Օ. Ա. Դյաչկովը: Նրանք նշում են, որ կրտսեր դպրոցականների իմացական հետաքրքրություններ ձևավորելու և զարգացնելու համար ամենա արդյունավետ ձևը խաղային տեխնոլոգիաների օգտագործումն է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է արտաքին աշխարհը, ձեռք է բերում նոր գիտելիքներ և հասարակության մեջ իր համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ:

Խաղային գործունեության ձևերը ուսումնասիրել են Պ. Պ. Բլոնսկին, Ս. Լ. Ռուբինշտեյնը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Վ. Պետրուսինսկու՝ «խաղը հոգեբանական վարքի ձևն է»[1], իսկ Լ. Ս. Վիգոտսկին խաղը նկարագրել է որպես «երեխայի ներքին սոցիալականացման» տարածք և սոցիալական վերաբերմունքի յուրացման միջոց[2]:

Ա. Լ. Լեոնտեևը խաղը դիտարկել է որպես երևակայության մեջ անհատի ազատություն, «անիրականանալի շահերի պատրանքային իրականա-

[1] Петрусинский В. В., Игры для интенсивного обучения М., 2005, с.31.

[2] Выготский, Л. С., Психология искусства, М., 2008, с. 180.

ցում»[3]: Առավել համապարփակ սահմանումը ներկայացրեց Շ.Ա. Ամոնաշվիլին. «Խաղը սոցիալական գործունեության, փորձի, հանգստին ուղղված իրավիճակների պայմաններում գործունեության տեսակն է, որտեղ ինքնակառավարման վարքագիծը զարգանում և բարելավվում է»[4]: Այս և մի շարք այլ դիտարկումների ու սահմանումների հիման վրա մենք գալիս ենք այն եզրահանգման, որ հենց խաղն է այն կարևոր գործունեության ձևը, որն ապահովում է կրտսեր դպրոցականի իմացական ակտիվությունը:

Խաղային տեխնոլոգիայի կառուցվածքը որպես գործունեություն ներառում է նպատակների ընդլայնում, պլանավորում, իրականացում, ինչպես նաև արդյունքների վերլուծություն, հետևաբար դրանք խթանում են ուսումնառության հետաքրքրությունների զարգացմանը: Հատկանշական է, որ խաղային տեխնոլոգիայի կառուցվածքային բաղադրիչները հնարավորություն են տալիս ամբողջությամբ ներգրավել դպրոցականին նրանց անձնային զարգացման ոլորտներ՝

- ✓ դերերը, որոնք ստանձնում են խաղացողները,
- ✓ խաղային գործողությունները՝ որպես դերերի կատարման միջոց,
- ✓ օբյեկտների օգտագործումը, այսինքն՝ իրական պայմանների փոխակերպում խաղայինի,
- ✓ խաղացողների միջև իրական հարաբերությունների ձևավորում,
- ✓ սյուժե, որը պայմանականորեն վերարտադրվում է խաղի միջոցով:

Խաղային տեխնոլոգիաների դերը չի կարող գնահատվել որպես միայն զվարճանք: Այն կարող է կիրառվել նաև որպես ստեղծագործական խթանման, մարդկային և աշխատանքային հարաբերությունների մոդելավորման միջոց:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել առաջին դասարանի սովորողների իմացական հետաքրքրությունների ձևավորվածության մակարդակը և խթանել դրանց զարգացումը խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

---

[3] Леонтьев В. Г., Формирование учебной деятельности обучающихся/ Межвуз. Сб. Науч. Тр. Новосибирск, НГПИ, 2005, с. 93.

[4] Амонашвили Ш. А., Загвязинский В. И., Паритеты, приоритеты и акценты в теории и практике образования, М., 2000, с. 14-16.

❖ վերլուծել կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների զարգացման մեթոդաբանական հիմքերը,

❖ հետազոտել կրտսեր դպրոցականի պատրաստվածության և ուսումնական մոտիվացիայի մակարդակի փոխկապակցվածությունը ուսումնական առաջադիմության հետ,

❖ մեկնաբանել հետազոտության համար կիրառվող խաղային տեխնոլոգիաների դերը իմացական հետաքրքրությունների և ուսումնական մոտիվացիայի ձևավորման գործընթացում,

❖ առաջարկել կրտսեր դպրոցականների ուսումնական հետաքրքրությունների զարգացման նպատակով կիրառվող խաղային ուսումնադիդակտիկ նյութեր և ծրագրեր,

❖ գնահատել դրանց ներդրման արդյունավետությունը:

Խնդրի ուսումնասիրության արդյունքում առաջ ենք քաշել հետևյալ վարկածը. եթե ուսումնական գործընթացում հաճախակի կիրառվեն խաղային մեթոդներ ու տեխնոլոգիաներ, ապա դրանք կնպաստեն սովորողների ուսումնական հետաքրքրությունների և մոտիվացիայի զարգացմանը, հետևաբար նաև առաջադիմության մակարդակի բարձրացմանը:

Հետազոտության ընտրանք և բազա է ընտրվել Գեղարքունիքի մարզի, Գավառ քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի I դասարանի 22 աշակերտ: Հետազոտությունը իրականացվել է 2021թ. սեպտեմբեր-հոկտեմբեր և 2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին 3 փուլերով՝ արձանագրող, ձևավորող, ստուգողական: Փորձարարական հետազոտության ժամանակ օգտագործվել են հետևյալ մեթոդները՝

➢ Գ. Վիտցլակի «Դպրոցին նախապատրաստվող երեխաների զարգացվածության աստիճանի ախտորոշում» մեթոդիկան[5],

➢ Ն. Գ. Լուսկանովայի «Դպրոցական մոտիվացիայի բացահայտման» մեթոդիկան[6],

➢ Վ. Ս. Յուրկևիչի «Իմացական հետաքրքրության մակարդակի ախտորոշման հարցարանը»[7]:

[5] https://studfile.net/preview/7390639/page:2/.

[6] https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2018/10/29/metodika-motivatsii-n-g-luskanova.

[7] https://nsportal.ru/shkola/materialy-k-attestatsii/library/2019/04/30/diagnostika-opredeleniya-intensivnosti.

Արձանագրող փուլ:

Գ. Վիտցլակի մեթոդիկայով արձանագրեցինք դպրոց նոր մուտք գործած երեխաների զարգացվածության աստիճանը: Մեթոդիկան հնարավորություն է տալիս որոշել երեխայի զարգացման մակարդակը 3 ոլորտներում՝ ուսուցում, մտածողություն, խոսքի զարգացում: Թեստի յուրաքանչյուր առաջադրանք ախտորոշում է որոշակի հատկությունների զարգացվածությունը:

Մեթոդիկայի արդյունքների վերլուծությունն իրականացվում է հետևյալ կերպ. բոլոր առաջադրանքների միավորները գումարվում են, ստացված արդյունքները Լիդերսի աղյուսակի միջոցով վերածվում է տոկոսի, որը համարվում է երեխայի մտավոր զարգացման, դպրոցին նախապատրաստվածության մակարդակի ցուցանիշ: Միջին ցուցանիշ է համարվում 60 տոկոսը: Յուրաքանչյուր երեխայի համար ստացված արձանագրությունները ենթարկվում են 2 տիպի վերլուծության՝ քանակական և որակական:

Քանակական վերլուծության ստացված տվյալների հիման վրա պարզեցինք, որ 22 աշակերտներից դպրոցին պատրաստվածության բարձր աստիճանը ունեն 8-ը, միջին՝ 8-ը, ցածր՝ 6 աշակերտ:

Որակական վերլուծության ժամանակ երեխայի յուրաքանչյուր պատասխան վերլուծվել է առանձին: Երեխաների 36,3%-ի մոտ նկատվեց պատրաստվածության բարձր, 27,2%-ի մոտ միջին, իսկ 36,3%-ի մոտ ցածր աստիճան:

1. Կիրառել ենք Ն. Գ. Լուսկանովայի «Դպրոցական մոտիվացիայի բացահայտման» մեթոդիկան, որը բացահայտել է սովորողների վերաբերմունքը դպրոցի, ուսումնական գործընքացի նկատմամբ: Մեթոդիկան ներառում է 10 հարց՝ ուղղված դպրոցի և ուսումնական գործընթացի նկատմամբ երեխայի վերաբերմունքի բացահայտմանը: Ըստ այդմ՝ ունենում ենք դպրոցականի մոտիվացիայի 5 մակարդակ՝

1. 25-30 միավոր՝ դպրոցական մոտիվացիայի բարձր աստիճան,
2. 20-24 միավոր՝ դպրոցական լավ մոտիվացիա,
3. 15-19 միավոր՝ դրական վերաբերմունք դպրոցի նկատմամբ,
4. 11-14 միավոր՝ դպրոցական ցածր մոտիվացիա,
5. 10 միավորից ցածր՝ բացասական վերաբերմունք դպրոցի նկատմամբ, դպրոցական դեզադապտացիա:

Արդյունքներից պարզ դարձավ, որ գերակշիռ մասը դպրոցական մոտիվացիայի 4-րդ աստիճանն է (≈41%), այսինքն՝ ցածր դպրոցական մոտիվացիա: Այս աստիճանն ունեցող դպրոցականները հաճախ դժվարանում են

դպրոց հաճախել, նախընտրում են բաց թողնել դասերը, դասարանում հաճախ զբաղվում են այլ գործերով, խաղերով, անտեսելով ուսումնադաստիարակչական գործընթացը, լուրջ դժվարություններ են ունենում ուսումնական գործունեության մեջ, դրսևորում են անկայուն վարք, դժվարությամբ են հարմարվում դպրոցական պայմաններին:

Քանակական վերլուծության ստացված տվյալների հիման վրա պարզեցինք, որ դպրոցական մոտիվացիայի բարձր աստիճան ունեն 3 աշակերտ, դպրոցական լավ մոտիվացիա ունեն 4 աշակերտ, 6 աշակերտ դրական վերաբերմունք ունեն դպրոցի նկատմամբ և 9 աշակերտ ունեն ցածր դպրոցական մոտիվացիա:

Որակական վերլուծության ժամանակ երեխայի յուրաքանչյուր պատասխան վերլուծվել է առանձին: Երեխաների 14%-ի մոտ նկատվել է դպրոցական մոտիվացիայի բարձր աստիճան, դպրոցական լավ մոտիվացիա նկատվել է 18%-ի մոտ, 27% ունեցել են դրական վերաբերմունք դպրոցի նկատմամբ, 41%-ի մոտ նկատվել է ցածր դպրոցական մոտիվացիա:

Երեխաների իմացական հետաքրքրության մակարդակի որոշման նպատակով անցկացրեցինք Վ. Ս. Յուրկևիչի անկետան: Հարցերը ուղղված էին առաջին դասարանի դասվարին: Հարցարանը կազմված է 5 հարցերից, որոնք ունեն իրենց հնարավոր պատասխանները: Ըստ այդմ ունենում ենք իմացական հետաքրքրության ձևավորման 3 մակարդակ՝ բարձր, միջին, ցածր:

Ստացված տվյալները խոսում են այն մասին, որ առաջին դասարանում ոչ լիարժեք է զարգացած իմացական հետաքրքրությունները: Իմացական հետաքրքրությունների զարգացման բարձր մակարդակ ունեին աշակերտների միայն 23%-ը: Նրանց բնորոշ է իմացական առաջադրանքների ինքնուրույն լուծելու ցանկությունը:

Իմացական հետաքրքրության զարգացման միջին մակարդակ արձանագրվեց աշակերտների 41%-ի մոտ, ցածր մակարդակ՝ 36%-ի մոտ, որոնց բնորոշ է ինքնուրույնության և նախաձեռնողականության բացակայությունը:

Արձանագրող փուլում պարզեցինք նաև երեխաների առաջադիմությունը:

Այսպիսով, համադրման մեթոդով պարզեցինք, որ այն երեխաները, որոնք ունեն դպրոցին պատրաստվածության, ուսումնական մոտիվացիայի և իմացական հետաքրքրությունների ցածր մակարդակ, ցածր էր նաև նրանց առաջադիմությունը:

Ձևավորող փուլ

Գնահատման արդյունքում ստացված տվյալները թույլ տվեցին կազմել 8 աշակերտից բաղկացած փորձարարական խումբ, որոնք ունեին ուսման հանդեպ շահագրգռվածության, իմացական հետաքրքրությունների ցածր մակարդակ, և նրանց հետ կազմակերպեցինք ուսումնական գործընթաց՝ կիրառելով խաղային մեթոդներ: Ձևավորող փուլի նպատակն էր բարձրացնել երեխաների իմացական հետաքրքրությունների մակարդակը, ինչը կնպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ստորև ներկայացված են մի քանի խաղային ակտիվացնող միջոցներ, որոնք կիրառել են փորձարարական մասում:

«Անվանիր երկրաչափական պատկերը, դրա ձևը և գույնը»

Երեխայի առջև դրված 12 տարբեր գույներից կազմված խաղատախտակ, մյուս երեխաները առաջադրանք են տալիս. «ցույց տուր այսինչ գույնի, այսինչ չափի այսինչ պատկերը»: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի տրվում է մեկ միավոր:

«Նկարների համեմատում»

Սկզբում դնել առաջին համեմատական նկարը, ապա հավաքել այն և ըստ հերթականության դնել մյուս նկարները: Հարցնել. «Ի՞նչ ես դու կարծում, ինչո՞վ է այս նկարը տարբերվում մյուսից»: Սխալ պատասխանի դեպքում օգնել. «Ի՞նչն է այստեղ տարբեր: Ի՞նչ կա այս նկարում, որ չկա մյուսում»:

Հավաքեք տառով սկսվող (հնչյունը բառի մեջտեղում կամ վերջում) բառ-պատկերների շարքեր

Երեխաները պետք է շարքերով մրցեն և գրատախտակին փակցնեն նշված տառերով սկսվող բառեր, որ շարքը արագ և շատ պատկերներ կգտնի սեղանին դասված նկարներից, այն խումբը ճանաչվում է հաղթող:

Կիրառել ենք նաև արագացվող պարեր ֆիզկուլտ դադարների ժամանակ: Գնդակի նետումով բառերի վանկատման մեթոդը և այլ ակտիվ ուսուցման խաղային մեթոդներ: Կիրառել են տարբեր դիդակտիկ պարագաներ, գրատախտակը, գնդակներ, քարտեր:

Ստուգողական փուլ

Փորձարարական խմբի հետ անցկացվող խաղերի ավարտից մեկ ամիս անց՝ 2022թ.-ի մարտին, ձևավորող փուլի արդյունավետությունը պարզելու և առաջ քաշված ենթադրությունը հաստատելու նպատակով ստուգողական փուլում կրկնել ենք արձանագրվող փուլում անցկացված հետազոտական

աշխատանքները՝ օգտագործելով Ն. Գ. Լուսկանովայի «Դպրոցական մոտիվացիայի բացահայտման մեթոդիկան», Վ. Ս. Յուրկևիչի անկետան, ինչպես նաև երեխաների առաջադիմությունը: Ն. Գ. Լուսկանովայի «Դպրոցական մոտիվացիայի բացահայտման մեթոդիկայի» արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1.

Անուն ազգանուն	**Դպրոցականների մոտիվացիայի մակարդակը**	
	2021 թվական սեպտեմբեր-հոկտեմբեր	**2022 թվական փետրվար-մարտ**
1. Ա. Ս.	14	16
2. Ա. Մ.	13	20
3. Ա. Հ.	13	15
4. Ե. Է.	14	16
5. Յ. Ջ.	14	15
6. Ս. Կ.	12	17
7. Ս. Ա.	14	15
8. Ս. Է.	14	20

Երեխաների իմացական հետաքրքրությունների մակարդակը պարզելու համար կրկնեցինք Վ. Ս. Յուրկևիչի անկետան:

Պետք է նշել, որ փորձարարական խմբի իմացական հետաքրքրության զարգացման ցածր մակարդակ ունեցող 8 երեխաներից 2-ի մոտ գրանցվեց իմացական հետաքրքրությունների զարգացման բարձր մակարդակ, 5-ի մոտ՝ միջին, և միայն 1 աշակերտի մոտ գրանցվեց ցածր մակարդակ /գծապատկեր 1/:

Գծապատկեր 1.



Ստուգողական փուլի արդյունքում ստացված տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Անուն, Ազգանուն	Մոտիվացիայի մակարդակը	Իմացական հետաքրքրության մակարդակը	Առաջադիմություն
1. Ա. Ս.	16	11	-7մ.
2. Ա. Մ.	20	13	-9մ.
3. Ա. Հ.	15	11	-7մ.
4. Ե. Է.	16	11	-7մ.
5. Յ. Ջ.	15	11	-7մ.
6. Ս. Կ.	17	11	-7մ.
7. Ս. Ա.	15	7	-5մ.
8. Ս. Է.	20	13	-8մ.

Ինչպես երևում է տվյալների աղյուսակից, խաղերի արդյունքում հաջողվել է մեծ մասամբ բարձրացնել աշակերտների ուսումնական մոտիվացիան, իմացական հետաքրքրությունների մակարդակը, ինչն էլ էապես նպաստել է նրանց ուսումնական առաջադիմության բարձրացմանը:

Պետք է նշել, որ փորձարարական խմբի իմացական հետաքրքրության զարգացման ցածր մակարդակ ունեցող 8 երեխաներից 2-ի մոտ գրանցվեց իմացական հետաքրքրությունների զարգացման բարձր մակարդակ, 5-ի մոտ՝ միջին, և միայն 1 աշակերտի մոտ գրանցվեց ցածր մակարդակ:

Ելնելով մանկավարժահոգեբանական գրականության ուսումնասիրությունից և վերլուծությունից, ինչպես նաև մեր կողմից կատարած հետազոտական աշխատանքների արդյունքների ամփոփումից, եկանք հետևյալ եզրահանգումներին.

1. Իմացական հետաքրքրությունը համարվում է անձի մոտիվացիոն ոլորտի բաղկացուցիչ մաս:

2. Կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման գործընթացում առաջնակարգ դեր են կատարում ուսումնաճանաչողական շարժառիթները, որոնք անխզելիորեն կապված են իմացական հետաքրքրությունների հետ:

3. Հետազոտության արդյունքները հաստատեցին մեր կողմից առաջ քաշած այն վարկածը, որ դպրոցական պատրաստվածության, ուսումնական մոտիվացիայի, իմացական հետաքրքրությունների ցածր մակարդակ ունե-

ցող երեխաների առաջադիմությունը կբարձրանա, եթե բարձրացնենք առաջինների մակարդակը:

4. Ուսումնական մոտիվացիայի, իմացական հետաքրքրությունների ցածր մակարդակ ունեցող երեխաների խմբի հետ անցկացված ակտիվ ուսուցման և դիդակտիկ խաղերի կիրառման շնորհիվ հաջողվեց մեծ մասամբ բարձրացնել աշակերտների ուսումնական մոտիվացիան, իմացական հետաքրքրությունների մակարդակը, ինչն էլ էապես նպաստեց նրանց ուսումնական առաջադիմության բարձրացմանը:

Ելնելով հետազոտության արդյուքներից՝ առաջարկում ենք կրտսեր դպրոցականների իմացական հետաքրքրությունների ձևավորման համար կիրառել ակտիվ և խաղային ուսուցման տեխնոլոգիաներ, որոնք ոչ միայն նպաստում են ուսուցման արդյունավետությանը, այլև դասարանում դրական միջավայրի ու մթնոլորտի ձևավորմանը:

Դրա համար անհրաժեշտ է զարգացնել տարրական դասարանների ուսուցչի մանկավարժահոգեբանական և դիդակտիկական կոմպետենտությունները, որը կնպաստի դասավանդվող առարկայի և ուսուցման նկատմամբ աշակերտների դրական վերաբերմունքի, ուսումնական հետաքրքրությունների և մոտիվացիայի ձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Амонашвили Ш. А., Загвязинский В. И., Паритеты, приоритеты и акценты в теории и практике образования, М., 2000, с. 14-16.
2. Выготский Л. С., Психология искусства, М., 2008, с. 180.
3. Леонтьев В. Г., Формирование учебной деятельности обучающихся/ Межвуз. Сб. Науч. Тр. Новосибирск, НГПИ, 2005, с. 93.
4. Петрусинский В. В., Игры для интенсивного обучения, М., 2005, с. 31
5. Методика Г., Витцлака «Диагностика уровня разви–тия детей, поступающих в начальную школу» https://studfile.net/preview/7390639/page:2/
6. Методика мотивации Н. Г. Лусканова https://nsportal.ru/nachalnaya-shkola/materialy-mo/2018/10/29/metodika-motivatsii-n-g-luskanova
7. Диагностика определения интенсивности познавательной потребности В. С. Юркевич

https://nsportal.ru/shkola/materialy-k-attestatsii/library/2019/04/30/diagnostika-opredeleniya-intensivnosti

THE ROLE OF A GAME IN THE PROCESS OF FORMING COGNITIVE INTERESTS OF YOUNGER SCHOOLCHILDREN

MIRIBYAN NUNE
Specialist of Foreign Relations and Media Department
e-mail: nune.miribyan@mail.ru

This article presents the study of first-grade students' readiness for school, the level of motivational development, and the formation of cognitive interests. The aim of the study is to identify the role of the game in the process of forming the cognitive interests of younger schoolchildren. The study was carried out according to the method of Witzlak G. "Diagnostics of the Level of Development of Children Preparing for School.", N. G. Luskanov, "Disclosure of School Motivation," and V. S. Yurkevich, "Questionnaire for the Diagnosis of the Level of Cognitive Interest."As a result of the study, we found out that the cognitive interest, as an integral part of the motivational sphere of the personality, plays a vital role in the process of educational activity formation among younger schoolchildren, stimulating educational and cognitive motives. We also noticed that the effectiveness of using didactic games is higher among the students with a low level of cognitive interest. Through the game, the child gets to know the outside world, which brings new knowledge, skills, and abilities that are necessary for him in society. Games are considered to be an effective means of forming cognitive interest among younger schoolchildren. As a result of the research, we discovered that due to the didactic games conducted with a group of low-level children, it was possible to increase the educational motivation of the students and the level of their cognitive interests, which significantly contributed to the increase in their educational progress.

Key words: *cognitive interest, game technology, didactic materials, younger schoolchild, cognitive interest.*

РОЛЬ ИГРЫ В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ ПОЗНАВАТЕЛЬНЫХ ИНТЕРЕСОВ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

МИРИБЯН НУНЕ
Специалист отдела внешних связей и СМИ
электронная почта: nune.miribyan@mail.ru

В данной статье представлено исследование готовности первоклассников к школе, уровня мотивационного развития, сформированности познавательных интересов. Цель исследования - выявить роль игры в процессе формирования познавательных интересов младших школьников.Исследование проведено по методике Г. Вицлака «Диагностика уровня развития детей, готовящихся к школе». Н. Г. Лусканова «Раскрытие школьной мотивации» и В. С. Юркевич «Опросник для диагностики уровня познавательного интереса».В результате исследования мы обнаружили, что познавательный интерес, как составная часть мотивационной сферы личности, играет первостепенную роль в процессе формирования учебной деятельности младших школьников, стимулируя учебные и познавательные мотивы. Мы также отметили, что эффективность использования дидактических игр выше у учащихся с низким уровнем познавательного интереса. Через игру ребенок познает окружающий мир, который приносит новые знания, умения и навыки, необходимые ему в обществе. Игры считаются эффективным средством формирования познавательного интереса у младших школьников. В результате исследования мы обнаружили, что благодаря дидактическим играм, проводимым с группой детей младших классов, удалось повысить учебную мотивацию учащихся и уровень их познавательных интересов, что существенно способствовало повышению в их учебном прогрессе.

Ключевые слова: *познавательный интерес, игровая технология, дидактические материалы, младший школьник, познавательный интерес.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 10.10.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՀՏԴ 021
DOI: 10.56246/18294480-2023.14-31

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՊԱՊԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարանի փոխտնօրեն
էլփոստ՝ muradyanpapin2@gmail.com
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու
էլփոստ՝ grigoryan_maya@mail.ru

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել մարզային գրադարանների գործունեությունը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում, ինչպես նաև ամրագրել ձեռքբերումները, ներկայումս նրանց առջև ծառացած խնդիրներն ու դրանց լուծման տարբերակները: Առաջնորդվելով սույն նպատակով՝ ուշադրություն ենք դարձրել մարզային գրադարաններում նոր տեխնոլոգիաների ներդրման, գործունեության ավանդական ձևերի ու միջոցների վերանայման խնդիրներին: Օգտագործել ենք համեմատության, համադրման, վերլուծական մեթոդները: Նշենք, որ արդի ժամանակաշրջանում գիտության և տեխնոլոգիաների համաշխարհային զարգացումները նոր մարտահրավերներ են առաջադրում նաև մարզային գրադարաններին, որոնք ապահովում են մարզի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում գրադարանային տեղեկույթի էլեկտրոնային շտեմարանը, օգտվում ցանցի հնարավորություններից: Մյուս կողմից, դեռևս առկա են գրադարանային ֆոնդի համալրման, գրադարանավարների մասնագիտական կրթություն չունենալու խնդիրներ, բազմաթիվ տեխնիկական և մասնագիտական հարցադրումներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Կարևոր է մարզային գրադարանների միջև տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայրի ստեղծումը, մարզային գրադարանների տեխնոլոգիական հագեցվածությունը, վերապատրաստման ծրագրերի իրագործումը:

Բանալի բառեր՝ *մարզային գրադարան, գրադարանային հավաքածու, սպասարկում, տեղեկատվության հավաքագրում, տեղեկույթի մշակում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային գրացուցակ:*

Գրադարանային գործի կազմակերպումը տարբեր դարաշրջաններում ունեցել է իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ժամանակաշրջան պարտադրել է որոշակի կանոններ կամ գրադարանների ապագայի իր տեսլականը: Այսօր գրադարանները հասարակության զարգացման անբաժանելի մասն են՝ որպես տեղեկատվությունն հավաքագրող, մշակող և տարածող կառույցներ: Ահա թե ինչու կարող ենք պնդել, որ գրադարանային գործի ճիշտ կազմակերպումն առանձնահատուկ դեր ունի տեղեկատվական հասարակության կայացման ու զարգացման բարդ գործընթացում:

Ներկա ժամանակաշրջանում մեծ կարևորություն է տրվում ՀՀ մարզերի զարգացմանը, նրանցում սոցիալ-տնտեսական և մշակութային վերելքի արդյունավետության բարձրացմանը: Մարզերի մշակութային կյանքում առաջնահերթություն է համարվում նաև գրադարանային գործի կազմակերպումը, որն իրականանում է մի շարք խոչընդոտների հաղթահարման պայմաններում:

1. Արտագաղթ: Ավելացել է բնակիչների հոսքը համայնքերից դեպի մայրաքաղաք և արտերկիր: Բնակչության նվազումը մարզերում ենթադրում է մի շարք խնդիրների առկայություն, որոնք ակամա խոչընդոտում են նաև գրադարանային գործի կազմակերպմանը:

2. Սոցիալական գործոն: Մարզերում առկա սոցիալական խնդիրները էապես նպաստում են մարդկանց մտածելակերպի վրա և ազդում կեցության ձևերի վրա: Սոցիալ-տնտեսական խնդիրները անմիջականորեն ազդում են մշակութային դաշտի վրա՝ մարդկանց մեջ մշակույթի հանդեպ առաջացնելով անտարբերություն:

3. Պետական աջակցություն: Մարզային գրադարաններն ունեն պետական աջակցության կարիք: Յուրաքանչյուր տարի հատկացվող գումարները և տրամադրվող միջոցները բավարար չեն գրադարանների գործունեությունը զարգացման մի նոր մակարդակի հասցնելու համար:

4. Մասնագետներ: Այսօր գրադարանավարի մասնագիտությունը պահանջված չէ: Մասնագետների պակասը ևս լուրջ խնդիր է ոչ միայն մարզե-

րում, այլև ընդհանրապես գրադարանների զարգացումն ապահովելու համար:

Հաշվի առնելով վերը նշված գործոնները՝ կարող ենք նշել, որ մարզերում գրադարանային գործի կազմակերպումը շատ ավելի բարդ գործընթաց է, քան մայրաքաղաքում:

Մարզային գրադարանները՝ ոպես մարզի մշակութային, տեղեկատվական ու կրթական կենտրոններ, իրականացնում են տպագիր հավաքածուի պահպանում, համալրում, մշակում, գրադարանային տեղեկատվական, մատենագիտական սպասարկում, մարզի գրադարանների զարգացման գիտական և մեթոդական աջակցություն և տարաբնույթ այլ աշխատանքներ[1]: Այսօր մարզային գրադարաններում, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և մարզպետարանների կողմից իրականացվող մշակութային քաղաքականության շնորհիվ գրքի սպասարկման, ընթերցանության կազմակերպման աշխատանքները գտնվում են պատշաճ հիմքերի վրա, գրադարանների աշխատանքներն ավելի համահունչ են ժամանակի ոգուն:

Ներկայումս ՀՀ-ում գործում է տասը մարզային գրադարան՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ: Յուրաքանչյուր մարզային գրադարան փորձում է իր տարածքում կենտրոնացնել, համակարգել նախարարության քաղաքականությունը, ինչպես նաև մեթոդական առումով համակարգել տվյալ տարածքի մյուս բոլոր գրադարանների գործունեությունը:

Մարզային գրադարանները, ինչպես մյուս գրադարանները, ունեն գործունեության ամրագրված սկզբունքներ և գործառույթներ, որոնք բոլորը նշված են ՀՀ օրենսդրության մեջ: Սակայն առաջնորդվելով ժամանակի պահանջներով՝ մարզային գրադարանները ստիպված են վերանայել և վերաձևակերպել մի շարք գործառույթներ:

Արդեն իսկ փաստ է, որ տեղեկատվական տեխնոլոգիաները նոր պահանջներ են առաջադրել բոլոր, այդ թվում՝ մարզային գրադարաններին՝ ներկայացնելով ավանդական գործելաոճի վերանայման և նոր ժամանակներին համահունչ ծառայությունների մատուցման պահանջները: Փոխվել է ավանդական գրադարանի տեսքը ինչպես գրադարանավարի, այնպես էլ օգտվողի համար՝ փոփոխության ենթարկելով նաև գրադարանային գործառույթները: Գրադարանավարի համար աշխատանքը դարձել է ավելի բարդ

[1] Տե՛ս ՀՀ օրենքը գրադարանների և գրադարանային գործի մասին՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75198 (08.08.2022 թ.):

ու ծավալուն, իսկ ընթերցողը հնարավորություն է ստացել օգտվելու տարաբնույթ ծառայություններից, որոնք մինչ այդ անհասանելի էին[2]: Ըստ Տ. Զարգարյանի՝ ներկայումս ձևավորել է հիբրիդ գրադարան, այսինքն՝ գրադարան, որտեղ թղթային կրիչներին զուգահեռ գործածվում են նաև տեղեկատվության էլեկտրոնային կրիչները[3]:

ՀՀ մարզային գրադարանները ևս ընդունել են դարաշրջանի մարտահրավերները՝ այս ուղղությամբ ամրագրելով որոշակի հաջողություններ: Դրանցից կարևորագույնը տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումն է: Տեղեկատվական տեխնոլոգիաների աննախընթաց զարգացումը քաղաքակիրթ աշխարհում ուղեկցվում է գրադարարանային համակարգերի համապատասխան բարեփոխումներով, որոնք էլ հանգեցնում են գրադարանների գործառույթների բարեփոխման: Նմանատիպ գործընթաց առկա է նաև ՀՀ մարզային գրադարաններում, որոնց տեխնոլոգիական հագեցվածությունը կրում է պարբերական բնույթ: Դրանց մեջ ներառված են ինչպես սարքավորումները, այնպես էլ տարաբնույթ ծրագրային փաթեթները, որոնք հնարավորություն են տալիս մարզային գրադարաններում նյութերի մշակման ու սպասարկման գործառույթները տեղափոխել նոր հարթակ: Օրինակ՝ համակարգիչների մուտքը հարկադրեց վերաիմաստավորել գրացուցակավորման սկզբունքներն ու մարզային գրադարանի ողջ գործառույթները: Մարզային այն գրադարանները, որոնք հագեցած են նորագույն տեխնոլոգիաներով, ողջ տեղեկատվությունն անցկացնում են կրիչների վրա: Այստեղ վճռորոշ է հատկապես համացանցի առկայությունը, ինչը հնարավորություն է տալիս մարզային գրադարաններին լինել միշտ հասանելի ընթերցողների համար, ինչպես նաև հասանելի է դարձնում տեղեկատվական ամբողջ դաշտը՝ ընթերցողներին սպասարկելու համար:

Շատ կարևոր է Էլեկտրոնային քարտարանի ձևավորման և համակարգման գործընթացը: Տեղեկատվական նոր տեխնոլոգիաները հնարավորություն տվեցին ձևավորել էլեկտրոնային քարտարան, ուր մուտքագրվեցին նաև բոլոր մարզային գրադարանների գրքային հավաքածուները: Ավանդական քարտարանի կողքին էլեկտրոնային գրացուցակի ձևավորումն ու համակարգումը հնարավորություն տվեց տեսանելի դարձնել Հայաստանի

[2] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ համագործակցության նոր ձևեր: Մեթոդական ձեռնարկ, Ե., 1996, էջ 68:

[3] Զարգարյան Տ., Թվային գրադարաններ Ե., 2002, էջ 262:

տարբեր տարածաշրջանների գրադարանների բովանդակությունը, համախմբել դրանք մեկ ընդհանուր դաշտում և դարձնել առավել որոնելի: Համագործակցելով Հայաստանի ազգային գրադարանի հետ՝ հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի գործընթացը ապահովելու համար գրքերի մուտքագրումը սկզբում կատարվում էր ALEPH ծրագրով, որը անհամեմատ ճկուն ու անթերի էր, բայց վճարովի: Վերջին հանգամանքը պատճառ դարձավ, որ 2017 թվականից ներդրվի KOHA համակարգը, որը բաց մատչելիության սկզբունքով հասանելի էր բոլորին: Նշված համակարգի կատարելագործման աշխատանքները ներկայումս էլ շարունակվում են[4]:

Նշենք նաև, որ նախագիծը Հայաստանի մարզային գրադարանների համար մեծ հնարավորություն էր ոչ միայն ավանդականից թվայինին անցնելու, այլև տեղեկատվության և գրադարանավարության տեղի շուկայում նոր և պահանջվող գործիքաշարերը ներկայացնելու հարցում: Էլեկտրոնային քարտարանը մեծ դեր ու նշանակություն ունի գրադարանում, քանի որ նա կարողանում է արագ և արդյունավետ բավարարել ընթերցողական պահանջները: Էլեկտրոնային համահավաք գրացուցակի ձևավորման օգնությամբ բարելավվում է օգտվողների հասանելիությունը առկա տեղեկատվական պաշարներին: Այն նպաստում է հայատառ բովանդակության ստեղծմանը և հայերեն գրավոր ժառանգության մատչելիությանը[5]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ մարզային գրադարաններում սպասարկման գործառույթը թևակոխել է նոր փուլ, ինչն իր հերթին հնարավորություն է տվել իրականացնել էլեկտրոնային պատվեր: Ստեղծելով էլեկտրոնային գրացուցակ, օգտագործելով համացանցի ռեսուրսները՝ մարզային գրադարանները կարող են օրվա ցանկացած ժամի, հաշվված վայրկյանների ընթացքում իրենց ծառայությունները մատուցել ընթերցողներին՝ առկա և առցանց տարբերակներով: Մարզային գրադարաններում դեռևս չի ձևավորված «էլեկտրոնային սպասարկում»-ը, սակայն ներդրված համակարգերի շնորհիվ նրանք հնարավորություն ունեն իրակա-

[4] Ավելի մանրամասն տե՛ս Բաբայան Ն. Գրադարանային գործի արդիականացումը, Երևան, 2017, 35 էջ; Զարգարյան Տ. Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից, Բանբեր Հայաստանի գրադարանների, 2015, թ. 1, էջ 1-12 http://tert.nla.am/archive/NLA%20AM-SAGIR/banbergrad/2015(1).pdf (08.08.2022 թ.)

[5] Զարգարյան Տ., Հայաստանի գրադարանների համահավաք քարտարանը՝ գործողության մեջ, Գիտություն և տեխնիկա, 2003, թ. 5, էջ 2-5:

նացնելու էլեկտրոնային պատվեր: Էլեկտրոնային գրացուցակում կատարված մատենագիտական ճիշտ նկարագրությունների շնորհիվ ավելի արագ և դյուրին է դառնում որոնողական համակարգը, ինչն իր հերթին նպաստում է նյութն առցանց գտնելուն և պատվիրելուն՝ խնայելով թե՛ գրադարանավարի, թե՛ ընթերցողի ժամանակը:

Որոնողական ճկուն համակարգի շնորհիվ մարզային գրադարանները ներկայումս վերածվել են մարզային տեղեկատվական կենտրոնների, որոնց թիվ մեկ խնդիրը օգտվողների տեղեկատվական պահանջների բավարարումն է՝ առկա ու առցանց տարբերակներով: Իհարկե, արագ զարգացող իրականության համատեքստում հարկավոր է անընդհատ աշխատել և զարգացնել հնարավորությունները, սակայն արդեն առկա ձեռքբերումները փաստում են, որ մարզային գրադարանները, բոլոր խնդիրներով հանդերձ, ընտրել են զարգացման ճիշտ ուղի:

Մարզային գրադարանները վերջին հինգ տարիների ընթացքում ներգրավվել են թվայնացման գործընթացների մեջ: Ցավոք, այսօր ոչ բոլոր գրադարաններն ունեն սքանավորման սարքավորումներ, և տեխնոլոգիական հագեցվածության ուղղությամբ դեռ շատ աշխատանքներ կան անելու, սակայն բոլոր գրադարանները, համագործակցելով Հայաստանի ազգային գրադարանի հետ, համապատասխան ծրագրերի միջոցով ներգրավված են սքանավորված նյութերի մշակման աշխատանքների մեջ: Բոլոր նյութերը ներառվում են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանների մեջ՝ առցանց հասանելի դառնալով ընթերցողներին:

Տեղեկատվական դարաշրջանում, օգտագործելով հասանելի բոլոր հնարավորությունները, մարզային գրադարանները դարձել են նաև հասարակության տարբեր շերտերի հետաքրքրություններն ու պահանջները բավարարող կենտրոններ՝ առօրյա աշխատանքային գործընթացի մեջ ներդնելով սոցիալական մեդիայի տարբեր ձևերը: Այսօր նրանց գործունեությունը անհնար է պատկերացնել առանց սոցիալական ցանցերի ներգրվվածության, ինչը գրադարանավարից պահանջում է ունենալ համապատասխան գիտելիքներ՝ գրաֆիկական և տեսախմբագրիչ որոշակի ծրագրերի իմացություն, վեբ ծրագրավորում, մարքեթինգային նրբերանգներ և այլն[6]: Մեդիան

[6] Սոցիալական մեդիա-գրադարան փոխհամագործակցության մասին ավելի մանրամասն տե՛ս Библиотека и социальная медия,
https://kpfu.ru/portal/docs/F309211603/Biblioteka.i.socialnye.media.soobschenie.pdf
(08.08.2022թ.):

ընդհանրապես գրադարանների համար դարձել է տեղեկատվությունը հասցնելու ամենաարագ և արդյունավետ միջոցը: Այն բազմաշերտ և բազմաֆունկցիոնալ է, ձևավորում է երկխոսության դաշտ պտության և հասարակության միջև: Մարզային գրադարաններում մեդիայի զարգացումը տեղի է ունենում մի քանի ուղղություններով: Այն անընդհատ ընդլայնվում է՝ ընդարձակելով լսարանը, առավել մատչելի, բազմաբովանդակ դարձնելով տեղեկույթը: Օգտագործվում են մեդիա դաշտում գործող լրատվամիջոցների գրեթե բոլոր տեսակները՝ տպագիր մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, ինչպես նաև առցանց մեդիան՝ տեղեկատվական դաշտը:

Համացանցի և սոցիալական մեդիայի զարգացումը մարզային գրադարաններին առաջադրեցին նոր խնդիրներ՝ իրականացնել հնարավորինս ճշգրտված տեղեկատվություն, յուրացնել մեդիա գրագիտության նրբությունները, ունենալ քննադատական մտածողություն: Այս ամենն իրականացնելուն միանշանակ նպաստեց տեխնիկական զինվածությունը, ինչն էլ հնարավորություն տվեց մարզային գրադարաններին յուրացնել օրվա հրամայականը՝ մարդը պետք է ստանա տեղեկություն:

Սոցիալական մեդիայի կիրառելիության ոլորտը մարզային գրադարաններում բավականին ընդգրկուն է: Կայքերում զուտ ներկայացված լինելը արդեն ինչ-որ քայլ է[7]: Նշենք, որ ներկայումս բոլոր մարզային գրադարաններն ունեն կայքէջեր, ներկայացված են դիմագրքում: Նրանք լուսաբանում են իրենց գործունեությունը, գովազդում են այն, տարածում են տեղեկատվություն կայանալիք կամ կայացած միջացառումների, շնորհանդեսների, ցուցահանդեսների (անգամ սկավաթիվ հնամաշ ֆոնդի պայմաններում) մասին, տեսանելի են դարձնում համալրման գործընթացը: Այստեղ խիստ կարևոր է գրադարանավարների համապատասխան որակների ձեքբերումը, քանի որ առանց որոշակի գիտելիքների մեդիայի տարբեր հարթակներում մարզային գրադարանների գործունեությունը կձախողվեր[8]:

Մարզային գրադարանների միջև առկա է տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայր, որի վառ ապացույցն է նաև «Հայաստանի

[7] Վեբ կայքերի առանձնահատկություններն ու հնարավորությունները https://abstract.am/website-features-and-functions/#websites-types (08.08.2022թ.):

[8] Ոսկանյան Շողիկ, Սոցիալական մեդիան գրադարանի գործընկեր https://bit.ly/3nTCcQy (08.08.2022թ.):

գրադարաններ: Նորարար գրադարաններ հարթակ»-ը[9]: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են «Նորարար գրադարաններ» աշխատաժողովները, որոնք մեկտեղում են բոլոր, այդ թվում՝ մարզային գրադարաններին՝ հնարավորություն տալով արտահայտելու սեփական տեսակետները, ի ցույց դնելու ձեռքբերումները և, ամենակարևորը, յուրացնելու ոլորտում առկա նորույթները: Մարզային գրադարանները տարվա ընթացքում համախմբվում են տարբեր առկա և առցանց միջոցառումների շուրջ, մասնակցում են տարաբնույթ դասընթացների: Այս ամենը միտված է մարզային գրադարանների միջև կապերի ամրապնդմանը և փորձի փոխանակմանը:

Մարզային գրադարանների կարևոր գործառույթներից է մշակութային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը, որոնք ուժեղացնում են լսարանի վրա հուզական ազդեցությունը երկու բաղադրիչի օգնությամբ՝ ճանաչողական (տեղեկատվական) և վերահսկող (կարգավորող): Այստեղ կիրառելի են տարբեր տեսողական օժանդակ միջոցներ, որոնք սովորաբար ներառում են տեսաձայնային տարբեր տեխնիկական միջոցներ, ներկայացնում են անալոգային և թվային սարքեր՝ տեսողական, ձայնային և տեսողական-ձայնային նյութերի ձայնագրման, վերարտադրության, նախագծման, ցուցադրման և լիարժեք օգտագործման համար (աուդիո-վիդեո նյութեր): Տեսալսողական (մուլտիմեդիա) հարմարությունները և հեռահաղորդակցությունը օգտվողներին ընձեռում են լայն հնարավորություններ: Նման միջոցները խիստ կարևոր են հատկապես տեսողական կամ լսողական խնդիրներ ունեցող ընթերցողների սպասարկման համար: Այս հարթակում արձանագրված հաջողությունների կողքին մարզային գրադարանները դեռևս շատ անելիքներ ունեն՝ սկսած նմանատիպ սարքերի համալրումից մինչև դրանք բոլոր հնարավորությունների լիարժեք կիրառումը:

Մարզային գրադարանների ձեռքբերումներն ու խնդիրները ամրագրելու համար խիստ կարևորվում է վիճակագրական վերլուծությունը, որը վերջին տարիներին ավելի շրջանառելի է դարձել և ընդգրկել է տարբեր գործիքներ: Ներկայումս օգտագործվում են վիճակագրության առցանց տարբեր համակարգեր, ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել ոլորտի խնդիրների մասին: Բացի սրանից՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի ազգային գրադարանը տպագրության է հանձնում Հայաստա-

[9] Հայաստանի գրադարաններ: Նորարար գրադարաններ հարթակ https://reglib.am/ (08.08.2022թ.):

նի Հանրապետության, նաև Արցախի Հանրապետության տարածքներում գործող գրադարանների ամենամյա վիճակագրական վերլուծությունը՝ հիմնված նրանց ամենամյա հաշվետվությունների վրա[10]: Այս գրքում ընդգրկվում են նաև մարզային գրադարանները, իսկ հիմքը հանդիսանում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հաշվետվությունների (Ձև N6-գմ) ձևաչափը: Այսինքն՝ գրքում ներկայացվում են այն տվյալները, որոնք պաշտոնապես գրանցվում են ՀՀ վիճակագրական ծառայությունում և պաշտոնական փաստաթղթերում: Մինչդեռ այդ տվյալների իսկությունը ստուգելու խնդիրը այդպես էլ առայսօր մնում է չլուծված:

Բոլոր այս ձեռքբերումներին զուգահեռ մարզային գրադարաններում առկա են խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Ներդրված տեխնոլոգիական բազմազան միջոցները ձևավորում են տեղեկատվական-հաղորդակցական նոր հարաբերություններ: Հետևաբար մարզային գրադարանների առջև ծառացած խնդիրների արդիական լուծման համար առաջ են քաշվում նաև մեթոդաբանական նորանոր մոտեցումներ:

Ինչպես արդեն նշեցինք, մարզային գրադարանները վերջին տարիներին զգալիորեն բարեփոխվել են: Գործուն մասնակցությունը բազմաբնույթ ծրագրերի, միջոցառումների, դրամաշնորհային մրցույթների մեծապես նպաստել է նրանց զարգացմանը: Համընդհանուր դրական տեղաշարժերի ծիրում մարզային առանձին գրադարաններ ծավալում են բացառապես ինքնուրույն գործունեություն:

Նշենք, որ 1988թ. երկրաշարժը, 1980-ական թթ. վերջերին և 90-ական թթ. ԼՂՀ անկախության համար ծագած հայ-ադրբեջանական պատերազմը, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզման հետևանքով ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր պայմանները բացասաբար անդրադարձան և օրակարգային դարձրին մարզային գրադարանային ֆոնդերի պահպանման, համալրման, սպասարկման և ընթերցանության կազմակերպման հարցերը: Հետագա տարիների համառ աշխատանքի արդյունքում, հաղթահարելով նշված խնդիրների մի մասը, նրանք դարձան տեղեկատվական, մշակութային և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններ: Բայց որոշ խնդիրներ դեռ լուծված են մասամբ կամ չեն լուծված ընդհանրապես:

[10] Հայաստանի գրադարանները: Վիճակագրական վերլուծություն՝ http://nla.am/HAG/test/:

Շատ կարևոր է գրադարանների շենքային պայմանների բարելավումը: Անվիճելի է, որ ժամանակակից գրադարանները, անկախ տեսակից և գտնվելու վայրից, պետք է ունենան նորմալ շենքային պայմաններ, կահավորում, համալրում և տեխնիկա. նրանք պետք է զարգանան որպես մշակութային արժեքների պահպանողներ և ժամանակակից տեղեկատվական կենտրոններ: Մարզային գրադարանների արտաքին տեսքի և շենքային պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ, սակայն յուրաքանչյուր տարի գրադարանները բախվում են այս խնդրին, որովհետև տարիները թողնում են իրենց հետքը:

Շատ կարևոր խնդիր է համալրումը: Յուրաքանչյուր տարի ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագրերով իրականացվում են որոշակի ծրագրեր, սակայն փաստ է, որ մարզային գրադարանների համար համալրման հիմնական աղբյուր մնում են նվիրատվությունները՝ առանց որոշակի կոնկրետության և պարբերականության: Կարծում ենք, որ պետությունը պետք է ընդլայնի այս ուղղությամբ աջակցությունը կամ էլ հատկացնի ավելի մեծ բյուջե, որպեսզի մարզային գրադարանները հնարավորություն ունենան համալրել հավաքածուները սեփական ուժերով: Կարելի է համագործակցել Հայաստանի ազգային գրադարանի հետ, որը գրքափոխանակության միջոցով կարողանում է հատկացնել որոշակի գրականություն: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև համալրվող գրականության բովանդակությանը՝ ներառելով ավելի ժամանակակից և մասնագիտական գրականություն:

Առանձին խնդիր է նաև գրադարանավար-մասնագետների առկայությունը մարզային գրադարաններում: Նշենք, որ գրադարանային գործը սովետական շրջանում զարգացման որակական փուլի է հասել առաջին հերթին հենց գրադարանային ոլորտի համար կադրերի պատրաստման շնորհիվ: Մինչդեռ հետանկախության շրջանում այս մասնագիտությանը վերագրվեց «երկրորդական» դեր: Այսօր Հայաստանի բոլոր գրադարաններում, այդ թվում՝ մարզային գրադարաններում, կա մասնագետների պակաս: Փոխվել են գրադարաններին առաջադրվող պահանջները, փոխվել է գրադարանավարի դերը: Ներկայումս մարզային գրադարաններն անմիջապես առնչվում են գրադարանային բազմաթիվ հիմնախնդիրների, որոնց մի մասի լուծումը կապված է որակյալ մասնագետներ ունենալու իրողության հետ: Խիստ կարևորելով գրադարանային կադրերի վերապատրաստումը՝ անհրաժեշտ է մարզերում կազմակերպել բազմաթիվ դասընթացներ, սեմինարներ, խորհրդատվություններ: Այստեղ խիստ կարևորվում է գրադարա-

նավարների նկատմամբ պետական ուշադրության պակասը: Ամեն տարի՝ հոկտեմբերի 7-ին, նշվում է Գրադարանավարի օրը: Անցկացվում են տարբեր միջոցառումներ և ծրագրեր, ինչպես նաև տարաբնույթ հանդիպումներ գրադարաններում: Լավ առիթ է տվյալ բնագավառում գործունեություն ծավալող մարդկանց վաստակը ըստ արժանվույն գնահատելու:

Մարզային գրադարանների մյուս կարևոր խնդիրը առնչվում է հրատարակչական գործունեությանը: Հրապարակումների համար հրաշալի հարթակ է «Նորարար գրադարաններ» կայքէջը, ուր առանձին բաժնում կարելի է տեղադրել հետաքրքիր ու բովանդակալից նյութերը: Մարզային գրադարանների աշխատողները կարող են ներկայացնել տարբեր խնդիրներ և դրանց լուծման արդյունավետ ուղիները:

ՀՀ գրադարաններին և մշակութային տարբեր կազմակերպություններին ծանուցելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել բազմաբնույթ պլակատների տպագրություն և բաշխում: Յուրաքանչյուր գրադարան իր կանխամշակված ծրագրով իրականացնում է տարբեր միջոցառումներ իր տարածաշրջանում, ինչպես նաև մասնակցում ՀՀ մարզերում և Երևանում այլ գրադարանների միջոցառումների: Գրադարանները պետք է իրազեկվեն իրականացվելիք նման միջոցառումների մասին և դառնան մասնակից:

Մշակութային տեղեկատվական հայաստանյան առկա միջավայրում ժամանակի թելադրանքով տարեցտարի գործնականում ավելի նպատակային պետք է կազմակերպվեն համաժողովները, սեմինար-խորհրդակցությունները, թեմատիկ և մասնագիտական քննարկումները, գրադարանային փաստաթղթերի վարույթի հետ առնչվող խնդիրների իրազեկում-պարզաբանումները: Ժամանակը սրընթաց առաջ է գնում և մարզային գրադարաններից պահանջում է սպասարկման նոր որակ, տեղեկատվական հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների օգտագործում և բանիմաց կադրեր: Այսօր ոլորտի առջև նոր խնդիրներ են դրված, ուստի պահանջվում են նոր մոտեցումներ: Պետք է իրականացվեն այնպիսի ծրագրեր, որոնք միտված կլինեն Հայաստանում զարգացնելու գրադարանային գործը, բարձրացնելու գրադարանավարների մասնագիտական իրազեկության մակարդակը, նպաստելու նոր տեխնոլոգիաների ներդրմանը, գրադարանային սպասարկման արդյունավետությանը և այլն:

Շատ կարևոր է գրադարանային տարբեր գործառույթների չափորոշիչների միասնական համակարգի մշակումը: Այսօր շատ քիչ են մասնագիտական հրապարակումները կամ մեթոդական ձեռնարկները, ինչը տարընթեր-

ցում է առաջացնում տարբեր վայրերում տարբեր գործառույթներ իրականացնելիս: Մինչդեռ մեկ ընդհանուր դաշտի ստեղծումը հնարավորություն կտա յուրացնել մեկ ձև, ինչն էլ կհանգեցնի գրադարանային համակարգի կայունացմանը:

Գերխնդիր է մարզային գրադարանների տեխնիկական զինվածությունը: Վերը նշվածից պարզ է դառնում, որ արդեն իսկ առկա են որոշ սարքավորումներ, կա համացանց, կիրառվում են տարաբնույթ ծրագրեր, սակայն օրեցօր զարգացող աշխարհում տեխնոլոգիաները անընդհատ զարգանում են՝ առաջ բերելով նորանոր հնարավորություններ և գործիքակազմ: Անհրաժեշտ է այդ ամենը ներդնել հայաստանյան գրադարաններում, միևնույն ժամանակ կազմակերպել դասընթացներ՝ դրանք արդյունավետ կիրառելու համար:

Այսպիսով, մարզային գրադարանների զարգացման հեռանկարներն առավելապես պայմանավորված են գիտության և պրակտիկայի փոխադարձ կապերով, մեթոդաբանական համակողմանի մոտեցման սկզբունքներով, գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությամբ մասնագետներին փաստաթղթային-տեղեկատվական համակարգերում ներգրավելու մշակութային քաղաքականությամբ: Անհրաժեշտ է մշակել մարզի գրադարանների զարգացման հայեցակարգ, որի կենտրոնում պետք է լինի մարզային գրադարանը: Պետք է կետ առ կետ սահմանել խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, հատուկ ժամանակահատվածը և հստակ հետևել ժամանակացույցին: Հետևողական աշխատանքը կհանգեցնի արդյունքի: Մարզային գրադարանների զարգացման համար անհրաժեշտ են ֆինանսական ներդրումներ: Որոշներն արդեն իսկ ունեն որոշակի փորձ՝ շահելու ծրագրեր և ստանալու ֆինանսավորում: Կարծում ենք՝ պետք է շարունակել այդ մասնակցությունը: Միաժամանակ պետք է ավելանա նաև պետական աջակցությունը, առանց որի հնարավոր չէ խոսել զարգացման ծրագրերի մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբայան Ն., Գրադարանային գործի արդիականացումը, Երևան, 2017թ.:
2. Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ համագործակցության նոր ձևեր: Մեթոդական ձեռնարկ, Կազմ.՝ Տ. Զարգարյան, Ա. Շիրինյան, Հ. Ավետիսյան, Երևան, 1996թ.:
3. Զարգարյան Տ., Թվային գրադարաններ, Երևան, 2002թ.:

4. Զարգարյան Տ., Հայաստանի գրադարանների համահավաք քարտարանը՝ գործողության մեջ, Գիտություն և տեխնիկա, 2003թ., 5, էջ 2-5:

5. Զարգարյան Տ. Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից, Բանբեր Հայաստանի գրադարանների, 2015թ., 1, էջ 1-12 http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/banbergrad/2015(1).pdf

6. Հայաստանի գրադարաններ: Նորարար գրադարաններ հարթակ https://reglib.am/

7. Հայաստանի գրադարանները: Վիճակագրական վերլուծություն՝ http://nla.am/HAG/test/

8. ՀՀ օրենքը գրադարանների և գրադարանային գործի մասին՝

9. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75198 (08.08.2022թ.):

10. Ոսկանյան Շողիկ, Սոցիալական մեդիան գրադարանի գործընկեր https://bit.ly/3nTCcQy

11. Սոցիալական մեդիա-գրադարան փոխհամագործակցության մասին ավելի մանրամասն տե՛ս Библиотека и социальная медия, https://kpfu.ru/portal/docs/F309211603/Biblioteka.i.socialnye.media.soobschenie.pdf

12. Վեբ կայքերի առանձնահատկություններն ու հնարավորությունները https://abstract.am/website-features-and-functions/#websites-types

DEVELOPMENT TRENDS OF REGIONAL LIBRARIES

MURADYAN PAPIN
Deputy director of "Vatche and Tamar Manoukian" Matenadaran of Mother See of Holy Etchmiadzin
e-mail: muradyanpapin2@gmail.com
GRIGORYAN MAYA
PhD in Philological Sciences
Scientific Secretary of "Vatche and Tamar Manoukian" Matenadaran of Mother See of Holy Etchmiadzin
e-mail: grigoryan_maya@mail.ru

The purpose of this research is to present the activities of regional libraries in the era of information technology development, as well as to document the achievements, the problems they are currently facing and the options for solving them. Guided by this goal, we have paid attention to the problems of introducing new technologies in regional libraries, revising traditional ways and means of activity. We used the methods of comparison, juxtaposition, and analysis.

Accordingly, we should note that in the modern period, the global developments of science and technology pose new challenges to the regional libraries, which ensure the library and information accessibility of the population of the region, replenish the electronic database of library information, and take advantage of the opportunities of the network. On the other hand, still there are problems of replenishment of the library fund, lack of professional education of librarians, many technical and professional issues that need urgent solution. It is important to create a flexible information and communication environment between regional libraries, technological saturation of regional libraries, implementation of training programs.

Key words: *Regional Library, Library Collection, Service, Information Collection, Information Processing, Information Technologies, Electronic Directory.*

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ РЕГИОНАЛЬНЫХ БИБЛИОТЕК

МУРАДЯН ПАПИН
Замдиректор Матенадарана «Ваче и Тамар Манукян»
Первопрестольного Св. Эчмиадзина
электронная почта: muradyanpapin2@gmail.com
ГРИГОРЯН МАЙЯ
Кандидат филологических наук
Научный секретарь Матенадарана «Ваче и Тамар Манукян»
Первопрестольного Св. Эчмиадзина
электронная почта: grigoryan_maya@mail.ru

Целью данного исследования является представление деятельности региональных библиотек в эпоху развития информационных технологий, а также документирование достижений, проблем, с которыми они сталкиваются в настоящее время, и вариантов их решения. Руководствуясь этой целью, мы обратили внимание на проблемы внедрения новых технологий в районных библиотеках, пересмотра традиционных способов и способов деятельности. Использовались методы сравнения, сопоставления и анализа. Соответственно, следует отметить, что в настоящее время мировое развитие науки и техники ставит новые задачи перед региональными библиотеками, которые обеспечивают библиотечно-информационную доступность населения региона, пополняют электронную базу библиотечной информации, могут воспользоваться сетевыми возможностями. С другой стороны, остаются проблемы пополнения библио-

течного фонда, недостаточная профессиональная подготовка библиотекарей, множество технических и профессиональных вопросов, требующих безотлагательного решения. Важно создание гибкой информационно-коммуникационной среды между региональными библиотеками, технологическая насыщенность областных библиотек, реализация обучающих программ.

Ключевые слова: *областная библиотека, библиотечный фонд, обслуживание, сбор информации, обработка информации, информационные технологии, электронный каталог.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 17.08.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

7.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

(համեմատաիրավական վերլուծություն)

ՀՏԴ 342.4
DOI: 10.56246/18294480-2023.14-32

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ
Գավառի պետական համալսարանի և
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլփոստ՝ hranush.hranti@gmail.com
ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Էլփոստ՝ ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը վերաբերում է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից 2015թ. սեպտեմբերին ընդունված կայուն զարգացման նպատակների և 2015 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության՝ սահմանադրական հանրաքվեի ճանապարհով փոփոխված Սահմանադրության համապատասխան դրույթների համեմատաիրավական վերլուծությանը:

Հեղինակները, նկատի ունենալով ՄԱԿ-ի տասնյոթ գլոբալ նպատակները, վերլուծում են ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթները: Արվում է այն եզրակացությունը, որ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների մի մասն արտացոլված է ՀՀ Սահմանադրության մեջ՝ նորմ-նպատակներում, նաև ենթադրվում են համապատասխան հոդվածներում, սակայն բացակայում են կամ անկատար են դրանց կենսագործման կառուցակարգերը: Թեև ՄԱԿ-ի կողմից ընդունված կայուն զարգացման նպատակները միտված են մարդկության կայուն զարգացման ապահովմանը, հուսալի ապագայի կերտմանը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տարի-

ների ընթացքում դրանք շոշափելի արդյունք չեն տվել, և կայուն զարգացման փոխարեն աշխարհը ցնցում են պատերազմներն ու ահաբեկչությունները, արձանագրվում են սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարական լարվածության աճ, հումանիտար ճգնաժամ, խախտվում են մարդկանց իրավունքները, մասնավորապես բացահայտ բարոյական ու իրավական առումներով կոպտորեն ոտնահարվում են Արցախի Հանրապետության ազգաբնակչության՝ 120.00 բնակչի և 30.000 երեխայի հիմնարար իրավունքները և ազատությունները: Ուստի հոդվածում այն տեսակետն է արտահայտվում, որ անհրաժեշտ է ՄԱԿ-ի անվտանգության համակարգի լուրջ վերանայում և բարեփոխում, ներպետական և միջազգային իրավական նոր երաշխիքների ստեղծում՝ խաղաղ և կայուն զարգացման նպատակներն իրապես կյանքի կոչելու համար:

Բանալի բառեր՝ *Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), նպատակ, կայուն զարգացում, Կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ), Հայաստանի Հանրապետություն, Սահմանադրություն, սահմանադրական նորմեր, սկզբունքներ, երաշխիքներ, կառուցակարգեր:*

Նպատակն այն ցանկալի, դրական արդյունքն է, որին հասնելու համար սուբյեկտը կամ սուբյեկտները ձեռնարկում են որոշակի ծրագրված գործողություններ կամ ծավալում շարունակական գործունեություն: Լինելով բազմիմաստ և բազմաշերտ հասկացություն՝ այն ուսումնասիրվում է փիլիսոփայության, հասարակագիտության, հոգեբանության, իրավագիտության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, պատմության, տվյալագիտության, նպատակաբանության (թելեոլոգիայի) և այլ գիտությունների կողմից, տրվել են տարբեր բնորոշումներ ու սահմանումներ: Անդրադառնանք դրանցից առավել տարածվածներին:

«Հաճախ լայն (կիբեռնետիկական) իմաստով նպատակ է կոչվում առհասարակ ամեն մի ինքնակարգավորվող համակարգի որևէ ալգորիթմով տրված վիճակը, որը փոփոխվող պայմաններում ստանում, պահպանում է («ձգտում է» ստանալու, պահպանելու) այդ համակարգը»[1]: Հանրագիտարանային մեկնաբանությամբ՝ «Նպատակը իմաստ և ուղղություն է տալիս մար-

[1] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 8, Երևան: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, 1982, էջ 396:

դու գործունեությանը, նրանով գիտակցական են դառնում առանձին գործողություններ և ամբողջ գործունեությունը. այդ է արտահայտում հասարակական կյանքի նպատակահարմարություն հասկացությունը: Այսպիսով, նպատակաուղղված գործունեությունը վերափոխիչ գործունեություն է[2]»:

Վերջին դիտարկումը չենք կարող միանշանակ ընդունել, քանի որ նպատակաուղղված գործունեության ոչ բոլոր դրսևորումներն են վերափոխիչ, օրինակ՝ երբեք այդպիսին չեն կարող որակվել կազմակերպված հանցավոր գործունեությունը, ահաբեկչությունը, վարձկանությունը և մյուս պատերազմական և այլ հանցանքները, տարաբնույթ իրավախախտումները, այլ պարսավելի արարքները:

Մասնագիտական գրականության մեջ դասակարգվում են կոնկրետ և աբստրակտ (վերացական)[3], ինչպես նաև մոտակա ու վերջնական նպատակներ[4]: Կարծում ենք՝ «վերջնական նպատակ» հասկացությունը պայմանական է, քանի որ հասնելով որոշակի նպատակի իրականացմանը՝ սուբյեկտը ձևավորում է նոր նպատակ՝ միտված զարգացման նոր աստիճանի ձեռքբերմանը:

Իրենց ընդգրկուն բնույթով և կարևորությամբ, ընդունման ընթացակարգով և բարեփոխիչ առաքելությամբ առանձնանում են Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ)՝ հաստատված ՄԱԿ-ի անդամ-պետությունների առաջնորդների կողմից 2015թ. սեպտեմբերին կայացած պատմական գագաթնաժողովի ժամանակ: Նշված նպատակները պաշտոնապես ուժի մեջ են մտել 2016 թվականի հունվարի 1-ից՝ փոխարինելով Հազարամյակի զարգացման նպատակներին, որոնց ժամկետը լրացել էր 2015 թվականի վերջին:

ԿԶՆ-երը (SDGs) նախատեսված են տասնհինգ տարվա համար՝ 2015 թվականից մինչև 2030 թվականը: Սահմանված են 17 նպատակ և 169 յուրահատուկ թիրախ, որոնք ներառված են «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ում, համաձայն որի՝ «Առաջնորդվելով կայուն զարգացման՝ բոլորին վերաբերող նպատակներով՝ պետությունները պետք է համախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհա-

---

[2] Նույն տեղում, էջ 396:

[3] Տե՛ս Философская энциклопедия, Под ред. Ф. В. Константинова, Т. 5, М., 1970, էջ 459:

[4] Տե՛ս Макаров М. Г., Категория “цель” в марксистской философии и критика телеологии, Л., 1997, էջ 24:

վասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչ ոք չանտեսվի»[5]:

Այսպիսով, 2015 թվականին 193 պետություն համաձայնության եկան 17 նպատակների շուրջ[6], որոնք սույն հոդվածում կներկայացնենք ՀՀ Սահմանադրության նորմ-նպատակների հետ համեմատաիրավական վերլուծության մեթոդով:

Նպատակ 1. Ոչ աղքատությանը. ամենուրեք վերացնել աղքատությունն իր բոլոր դրսևորումներով ու ձևերով:

ՀՀ Սահմանադրության նախաբանում (պրեամբուլայում), որպես հայ ժողովրդի կողմից Սահմանադրության ընդունման նպատակ, ի թիվս այլ առաջնահերթությունների ամրագրված է «ապահովելու համար ... **ընդհանուր բարեկեցությունը**», իսկ առաջին՝ անփոփոխելի հոդվածում, որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական բնութագիր, սահմանված է **սոցիալական պետությունը**[7]:

Սահմանադրության՝ տնտեսական կարգին նվիրված 11-րդ հոդվածում նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա հիմնված սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը պետական քաղաքականության միջոցով ուղղված է **ընդհանուր տնտեսական բարեկեցությանը** և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 83-րդ հոդվածը վերաբերում է սոցիալական ապահովությանը և սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում **սոցիալական ապահովության իրավունք**[8]»:

---

[5] https://worldtop20.org/global-movement/

[6] Միավորված Ազգերի Կազմակերպության Կայուն զարգացման նպատակների մասին տե՛ս https://armenia.un.org/hy/sdgs

[7] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. փոփոխություններով), Երևան, 2015:

[8] Տե՛ս https://www.president.am/hy/constitution-2015/

Այսպիսով, ուղղակիորեն չամրագրելով աղքատության դեմ պայքարի կամ աղքատության հաղթահարման նպատակը՝ Սահմանադրությունը նախատեսում է «ընդհանուր բարեկեցության», «ընդհանուր տնտեսական բարեկեցության» ապահովման, սոցիալական ապահովության իրավունքի իրացման և սոցիալական պետության կայացման նպատակները՝ որպես սահմանադրական կարգի հիմունք: Այնուհանդերձ, կարծում ենք, որ **ՀՀ-ում կայանալիք սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 86-րդ՝ «Պետական քաղաքականության հիմնական նպատակները» սահմանող հոդվածում առավել հստակ պետք է սահմանվեն սոցիալական պետության կայացման երաշխիքներն ու կառուցակարգերը՝ սահմանադրորեն ամրագրելով նաև աղքատության հաղթահարման նպատակը:** Այս պարագայում պետությունը կստանձնի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն՝ հասարակության բոլոր շերտերի համար ապահովելու արժանապատիվ կենսապայմաններ և ստեղծելու անհրաժեշտ նախադրյալներ՝ աղքատությունը հաղթահարելու համար:

Նպատակ 2. Ոչ սովին. վերացնել սովը, հասնել պարենային ապահովության և բարելավված սննդի, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը:

Երկրորդ նպատակը առաջին նպատակի օրգանական շարունակությունն է, քանի որ «Ո՛չ աղքատությանը» քաղաքականությունը նախ ենթադրում է սովի վերացում, մարդու կենսապահովման նվազագույն զամբյուղի երաշխավորում, պարենային անվտանգության՝ որպես պետության անվտանգային համակարգի բաղկացուցիչ մասի ապահովում, անձանց սոցիալական ապահովության երաշխավորված համակարգի ստեղծում:

Նպատակ 3. Առողջություն և բարեկեցություն. ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից:

ՄԱԿ-ի կայուն զարգացման երրորդ նպատակի առաջին մասը՝ առողջության և առողջ կյանք ապահովելու վերաբերյալ, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 85-րդ՝ «**Առողջության պահպանությունը**» հոդվածին, ըստ որի՝

«1. Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

2. Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը»[9]:

Երրորդ նպատակի՝ բարեկեցության խթանման վերաբերյալ մասը համահունչ է առաջին և երկրորդ նպատակներին:

Բացի դրանից՝ **պետության քաղաքականության հիմնական նպատակների մասին 86-րդ հոդվածը սահմանում է պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝**

ա) իրականացնելու բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրեր, ստեղծելու արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ (**7-րդ կետ),**

բ) խթանելու բարեգործությունը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով (**16-րդ կետ**):

Սահմանադրությունը նախատեսում է իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին հոգ տանելու՝ ծնողների իրավունքը և պարտականությունը: Բարեկեցիկ կյանքի, լիարժեք և ներդաշնակ զարգացման գրավականներից է որակյալ կրթության ապահովումը, որը սահմանադրորեն միանգամայն տեղին ամրագրվում է որպես ծնողի և՛ իրավունք, և՛ պատականություն[10]:

Միաժամանակ կարծում ենք, որ երեխաների կրթությունը պետք է ոչ միայն պետական քաղաքականության մաս կազմի, այլև ուղղակի սահմանվի որպես նրա պոզիտիվ պարտականություն:

Աշխատանքային պայմանների մասին Սահմանադրության 82-րդ հոդվածը սահմանում է՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»: Հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացման, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման մասին նախատեսված է Սահմանադրության 86-րդ հոդվածի 8-րդ կետում: Հարկ է նկա-

[9] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510:

[10] Տե՛ս ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մաս:

տել, որ ներառական մոտեցումը չի սահմանափակվում միայն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ, նաև արտահայտվում է ներառականության սկզբունքի առավել լայն կիրառմամբ, սոցիալապես խոցելի այլ խմբերի՝ միայնակ կամ բազմազավակ մայրերի, փախստականների, բռնի տեղահանվածների ներգրավմամբ:

Առողջություն և բարեկեցություն ապահովելու նպատակն իրականացնելն առավել բարդ է դառնում արտակարգ և ռազմական դրության ժամանակ, մասնավորապես 2020 թվականին մարդկությանը պատուհասած նոր կորոնավիրուս (COVID-19) համավարակի և պատերազմների պայմաններում: Նման իրավիճակները պետություններից, ՄԱԿ-ից և այլ միջազգային կազմակերպություններից լրացուցիչ երաշխիքներ և ջանքեր են պահանջում:

Նպատակ 4. Որակյալ կրթություն. ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի համար ուսման հնարավորություններ:

Նշված նպատակին համահունչ է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը՝

«**Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը**» վերնագրով, որի համաձայն՝

«1. Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը:

2. Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են»[11]:

Իսկ 38-րդ հոդվածը սահմանում է **կրթության հիմնարար իրավունքը**՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:

Պետության քաղաքականության հիմնական նպատակները սահմանող 86-րդ հոդվածի 13-րդ կետում Սահմանադրությունն ամրագրում է պետու-

[11] Նույն տեղում:

թյան պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ **զարգացնելու անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթությունը:**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, որը ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին և կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները, 3-րդ հոդվածի 15-րդ կետում սահմանում է որակի ապահովման հասկացությունը՝ «15) **որակի ապահովում՝** պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության և բարելավման անընդհատ գործընթաց»[12]:

Հատկանշական է, որ Ազգային ժողովի կողմից ընդունվել **է Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը**[13], որն ունի օրենքի կարգավիճակ և մշակվել է համապատասխան ներպետական և միջազգային իրավական ակտերի հաշվառմամբ՝ մասնավորապես ելնելով «Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային հանձնառություններից՝ ներառյալ Միացյալ ազգերի կազմակերպության կայուն զարգացման 2030 օրակարգը, մասնավորապես Կայուն զարգացման նպատակ 4-ը և հարակից նպատակները՝ աղքատության վերացում, գենդերային հավասարություն, արդարություն, արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար, ինչպես նաև մարդու իրավունքների և հակախտրականության վրա հիմնված մոտեցումներն ու «ոչ ոքի չանտեսելու» սկզբունքը[14]»: Սակայն, ի հեճուկս «ոչ ոքի չանտեսելու» սկզբունքի, ՄԱԿ-ի և մյուս միջազգային կազմակերպությունների հայտարարած մարդու իրավունքների գերակայության և մյուս հիմնարար դրույթների, կոպտորեն խախտվում են Արցախի Հանրապետության ազգաբնակչության բոլոր հիմնարար իրավունքները, այդ թվում՝ կրթության իրավունքը, անտեսվում են գոյութենական իրավունքներին սպառնացող իրական վտանգները: Նման պայմաններում անհնարին է դառնում ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացումը:

---

[12] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820

[13] Տե՛ս https://escs.am/am/news/11602

[14] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր, Երևան, 2022, էջ 4:

Ուստի անհրաժեշտ ենք համարում, որ ՀՀ-ն՝ որպես ՄԱԿ-ի անդամ պետություն, հանդես գա առաջարկությամբ՝ ՄԱԿ-ի անվտանգության համակարգի լուրջ վերանայման և բարեփոխման, ներպետական և միջազգային իրավական նոր երաշխիքների ստեղծման վերաբերյալ: Նաև անվիճելի ենք համարում կայուն զարգացման և առաջընթացի գործում որակյալ կրթության և գիտության նշանակությունը:

Ազգային ժողովը 2021 թվականի մարտի 24-ին ընդունեց «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենք, սակայն Հանրապետության նախագահը չստորագրեց այն և վիճարկեց օրենքի սահմանադրականության հարցը՝ դիմելով ՀՀ Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանը նշված օրենքը ճանաչեց ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին՝ բուհերի ինքնակառավարման և ակադեմիական ազատության սկզբունքներին հակասող, ուստի և անվավեր[15]:

Գտնում ենք, որ նոր՝ ընդունվելիք օրենքում հստակ կերաշխավորվեն վերոնշյալ սկզբունքները, և առանցքային նշանակություն կտրվի բարձրագույն կրթության որակի ապահովմանը:

Մեր կարծիքով՝ **ՀՀ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունը համակարգելու և նոր կոդիֆիկացված ակտ՝ ՀՀ կրթական օրենսգիրք ընդունելու անհրաժեշտություն կա: Այս դեպքում ողջ կրթական համակարգն իր բոլոր օղակներով կդառնա համալիր և արդյունավետ նորմատիվ իրավական կարգավորման միասնական առարկա՝ սահմանափակելով և հնարավորինս նվազագույնի հասցնելով օրենսդրական հակասությունները և իրավական նորմերի տարընթերցումները:**

Նպատակ 5. Գենդերային հավասարություն. հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին:

Նշված նպատակին համապատասխան՝ Սահմանադրության 30-րդ հոդվածը սահմանում է, որ **կանայք և տղամարդիկ իրավահավասար են**, իսկ 35-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ: Հոդված 16-ի համաձայն՝ մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Իսկ 57-

[15] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021թ. օգոստոսի 2-ի որոշումը՝ ՍԴՈ-1608 // https://www.arlis.am/documentview.aspx?docID=155095:

րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին ունի հղիության և ծննդաբերության դեպքում վճարովի արձակուրդի իրավունք: Յուրաքանչյուր աշխատող ծնող երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում ունի արձակուրդի իրավունք»: Վերջին պարբերության համաձայն՝ արձակուրդի իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր աշխատող ծնող՝ լինի հայր, թե մայր: 86-րդ հոդվածում տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը:

Նկատենք, որ Սահմանադրությամբ նախատեսված մարդու և քաղաքացու բոլոր իրավունքները հավասարապես նախատեսված են և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար: Եվ ընդհանրապես, կարող ենք արձանագրել, որ ՀՀ օրենսդրությամբ պահպանվում է գենդերային հավասարության սկզբունքը, և չկա սեռի հատկանիշով որևէ խտրական վերաբերմունք մարդկանց հանդեպ:

Վերջին շրջանում ՀՀ պետական պաշտոններում, դիվանագիտական, քաղաքական գործունեության մեջ ավելի շատ կանայք են ներգրավվում և մասնակցում բարձր մակարդակներում որոշումների ընդունման գործընթացներին:

ՄԱԿ-ի ԿԶՆ-երի շարքում 6-րդ և 7-րդ նպատակներն են.

Նպատակ 6. Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ. ապահովել հասանելիություն և կայուն ձևով կառավարել ջուրն ու սանիտարական պայմանները բոլորի համար:

Նպատակ 7. Մատչելի և մաքուր էներգիա. ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն:

ՀՀ Սահմանադրությունն առանձին դրույթներ չի ներառում մատչելի և մաքուր էներգիայի, սանիտարական պայմանների կամ ջրի մասին, փոխարենը բովանդակում է «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» վերնագրված 12-րդ հոդվածը, որ 1-ին մասում ամրագրված է պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ խթանելու շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն

ապագա սերունդների առջև: Իսկ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է մարդու պոզիտիվ պարտականությանը՝ հոգ տանելու շրջակա միջավայրի պահպանության մասին:

12-րդ հոդվածը հատկանշական է նրանով, որ թե՛ վերնագրում, թե՛ բովանդակության մեջ ամրագրում է **կայուն զարգացման սկզբունքը**, որն անհնար է կյանքի կոչել առանց բնական պաշարների արդյունավետ և խնայողաբար օգտագործման և վերարտադրության ապահովման:

21-րդ դարում խմելու ջրի, քաղցրահամ ջրի պաշարների պահպանումն ու խնայողաբար օգտագործումը մարդկության առջև ծառացած գերխնդիրներից է, որին ՄԱԿ-ը անդրադարձել է իր մի շարք փաստաթղթերում: Այս առումով գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում տարածաշրջանի միակ քաղցրահամ ջրի ավազանի՝ Սևանա լճի էկոհամակարգի հավասարակշռության, ֆլորայի և ֆաունայի պահպանության, ջրի մաքրության հիմնախնդիրները սահմանադրական ձևակերպումներ պետք է ստանան և դառնան պետական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը:

Նպատակ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ. խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճը, լիարժեք և արտադրողական զբաղվածությունը և արժանապատիվ աշխատանքը բոլորի համար:

Աշխատանքի ընտրության ազատությանը և աշխատանքային իրավունքներին է նվիրված Սահմանադրության 57-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք»: Սահմանադրորեն նախատեսված չէ յուրաքանչյուրի աշխատանքի իրավունքը, քանի որ այդ դեպքում համապատասխանաբար կնախատեսվեր պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ յուրաքանչյուրի համար պարտադիր ապահովելու աշխատանք, ինչը շուկայական տնտեսության պայմաններում անհնարին է, բայց դա չի նշանակում, որ պետությունը չպետք է խրախուսի աշխատատեղերի ստեղծումը, չպետք է նախադրյալներ ստեղծի քաղաքացիների զբաղվածության ապահովման, յուրաքանչյուրի կողմից իրեն համապատասխան աշխատանք ազատորեն ընտրելու հնարավորության համար:

Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի

սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք: Իսկ 86-րդ հոդվածում՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակների շարքում որպես երկրորդ նպատակ են սահմանված բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը: ՄԱԿ-ի այս նպատակի համատեքստում կարևորում ենք 84-րդ հոդվածը, որի համաձայն՝

1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:

Նշված սահմանադրական նորմերը սոցիալական պետության կարևոր բնութագրիչներից են:

Գտնում ենք, որ ՀՀ-ում կայանալիք սահմանադրական փոփոխությունների դեպքում պետք է վերանայվեն և լրացվեն գործող Սահմանադրության 86-րդ հոդվածում առկա պետության քաղաքականության հիմնական նպատակները՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները, այդ թվում նաև ներքոհիշյալ 9- 16-րդ նպատակները.

Նպատակ 9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածք. ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել ներառական և կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը:

Նպատակ 10. Կրճատված անհավասարություն. կրճատել անհավասարությունը երկրներում և դրանց միջև[16]:

Նպատակ 11. Կայուն քաղաքներ և համայնքներ. քաղաքները և մարդկանց բնակավայրերը դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն:

Նպատակ 12. Պատասխանատու սպառում և արտադրություն. ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ:

Նպատակ 13. Գործունեություն՝ ի նպաստ կլիմայի. ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ[17]:

---

[16] ՄԱԿ-ի Կայուն զարգացման 10-րդ նպատակն իր երրորդ մասով՝ կրճատել անհավասարությունը երկրների միջև, չի կարող միայն մեկ պետության վերաբերել, այն ընդհանրական խնդիր է առաջադրում:

Նպատակ 14. Կյանքը ջրի տակ. ապահովել օվկիանոսների, ծովերի և ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն կայուն զարգացման:

Նպատակ 15. Կյանքը ցամաքում. պահպանել, վերականգնել և խթանել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը:

Նպատակ 16. Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ. խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հանուն կայուն զարգացման, բոլորի համար հասանելի դարձնել արդարությունը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական հաստատություններ:

Նշված նպատակները կարևոր ու արդիական են և ոչ միայն սահմանադրական ամրագրում, այլև ընդգրկուն իրավական կարգավորում, մշակված համալիր ծրագրեր և պետական ու միջազգային համապատասխան քաղաքականության իրականացում են պահանջում: Նշենք հատկապես խաղաղության հաստատման, արդարության կայացած ինստիտուտների հզորացման մասին 16-րդ նպատակը, որն օրախնդիր պահանջ է՝ ծառացած պետությունների, միջազգային կազմակերպությունների և համաշխարհային հանրության առջև:

Եվ վերջապես, ՄԱԿ-ի կայուն զարգացման վերջին՝ **17-րդ նպատակն է.**

Համագործակցություն՝ նպատակների համար. ուժեղացնել կայուն զարգացման իրագործման միջոցները և ակտիվացնել գլոբալ գործընկերությունը հանուն այս նպատակի:

Ցավոք, վերոնշյալ բոլոր նպատակները կմնան որպես բարի ցանկություններ, եթե դրանք իրականություն դարձնելու համար միջազգային հանրությունը և պետությունները համատեղ ու հետևողական ջանքեր չգործադրեն:

Այսպիսով, ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների մի մասն արտացոլված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներում, հիմնականում արտահայտված են նորմ-նպատակներում կամ ենթա-

[17] ՄԱԿ-ի կայուն զարգացման 13-րդ և հաջորդող նպատակները ևս ընդհանրական բնույթ են կրում:

դրվում են համապատասխան հոդվածներում, սակայն բացակայում են կամ անկատար են դրանց կենսագործման կառուցակարգերը:

Մնում է հուսալ, որ **ՄԱԿ-ը և միջազգային այլ կազմակերպությունները, նրանց անդամ պետությունները հետամուտ կլինեն մարդկության համար կարևոր արժեքների պահպանմանը՝ ոչ միայն հռչակելով կայուն զարգացման նպատակներ, այլև գործնականում ապահովելով դրանք, ստեղծելով անվտանգության ապահովման նոր համակարգ, երաշխավորելով Երկիր մոլորակի բնակիչների, այդ թվում նաև չճանաչված պետություններում, մասնավորապես Արցախի Հանրապետությունում ապրող մարդկանց անվտանգ գոյությունն ու գործունեությունը:**

Օգտագործված գրականության ցանկ

1. Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակներ// https://armenia.un.org/hy/sdgs

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), Երևան, 2015:

3. https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=25820

5. https://www.president.am/hy/constitution-2015/

6. https://worldtop20.org/global-movement/

7. https://escs.am/am/news/11602

8. Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր, Երևան, 2022:

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2021թ. օգոստոսի 2-ի որոշում՝ ՍԴՈ-1608 // https://www.arlis.am/documentview.aspx?docID=155095

10. Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 8, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Երևան, 1982:

11. Философская энциклопедия, Под ред. Ф. В. Константинова, Т. 5, М., 1970:

12. Макаров М. Г., Категория “цель” в марксистской философии и критика телеологии, Л., 1997.

THE SUSTAINABLE DEVELOPMENT GOALS OF THE UNITED NATIONS AND THE PROVISIONS OF THE RA CONSTITUTION (COMPARATIVE LEGAL ANALYSIS)

HAKOBYAN HRANUSH
Lecturer of Gavar State University and
The Public Administration Academy of RA,
Doctor of Law, Professor,
e-mail: hranush.hranti@gmail.com
HAKOBYAN RUZANNA
Rector of Gavar State University,
Doctor of Law, Associate Professor,
e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

The article deals with the comparative legal analysis of the Sustainable Development Goals adopted by United Nations (UN) in September, 2015 and the relevant provisions of the Constitution of the Republic of Armenia amended by the constitutional referendum in December, 2015. The authors refer to the seventeen goals of the United Nations, which were spread around the world as global goals, and analyze the relevant provisions of the RA Constitution. It is concluded that a part of the UN sustainable development goals are reflected in the Constitution, are mainly expressed in the norms-goals or are assumed in the relevant articles, but their implementation mechanisms are missing or incomplete. Although the studied goals are aimed at ensuring the sustainable development of humanity, building a reliable future, the results of their actions are not tangible during these years, and sustainable development is not guaranteed; instead the world is shaken by wars and terrorism, increase in a social, economic, political, ideological tension and humanitarian crisis are recorded, human rights are being violated, in particular, there is a gross and morally and legally impermissible violation of the fundamental rights and freedom of the 120,000 people living in the Republic of Artsakh. Therefore, the UN security system's serious review and reforms, creation of domestic and international new legal guarantees are needed in order to truly implement peaceful and sustainable development goals.

Key words: *United Nations (UN), goal, sustainable development, Sustainable Development Goals (SDG), Republic of Armenia, Constitution, constitutional norms, principles, guarantees, mechanisms.*

ЦЕЛИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ ОРГАНИЗАЦИИ ОБЪЕДИНЁННЫХ НАЦИЙ И ПОЛОЖЕНИЯ КОНСТИТУЦИИ РА (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

АКОБЯН ГРАНУШ
Преподаватель Гаварского государственного университета и Академии государственного управления РА, доктор юридических наук, профессор
электронная почта: hranush.hranti@gmail.com
АКОБЯН РУЗАННА
Ректор Гаварского государственного университета Доктор юридических наук, доцент
электронная почта: ruzanna.hakobyan@mail.ru

Статья посвящена сравнительно-правовому анализу принятых в сентябре 2015 года Организацией Объединенных Наций (ООН) Целей устойчивого развития и соответствующих положений Конституции Республики Армения, измененных конституционным референдумом в декабре 2015 года.

Авторы цитируют семнадцать целей ООН, принятых во всём мире как глобальные цели, и анализируют соответствующие положения Конституции РА. Делается вывод о том, что часть целей устойчивого развития Организации Объединенных Наций отражена в Конституции, в основном выражена в нормах-целях или предполагается в соответствующих статьях, но механизмы их реализации отсутствуют или неэффективны.

Несмотря на то, что изучаемые цели направлены на обеспечение устойчивого развития человечества, построение надежного будущего, однако результаты их действий в течение этих лет не ощутимы, а устойчивое развитие не гарантируется, взамен мир сотрясают войны и терроризм, рост социальной, экономической, политической, идеологической напряженности, гуманитарный кризис, нарушаются права людей, в частности, имеет место грубое, морально и юридически недопустимое нарушение основных прав и свобод 120 000 жителей Республики Арцах.

Поэтому необходимо серьезно пересмотреть и реформировать систему безопасности ООН, создать новые внутригосударственные и международно-правовые гарантии для реальной реализации целей мирного и устойчивого развития.

Ключевые слова: *Организация Объединенных Наций (ООН), цель, устойчивое развитие, Цели устойчивого развития, Республика Армения, Конституция, конституционные нормы, принципы, гарантии, механизмы.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.12.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.12.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԲԱՔՎԻ ԱՂՋԿԱ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՈՒՐՋ

ՀՏԴ 904
DOI: 10.56246/18294480-2023.14-33

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ khachatryan08@mail.ru

Գոյություն ունեն բազմաթիվ հրապարակումներ Բաքվի Աղջկա աշտարակի մասին, որոնցում ադրբեջանցի պատմաբանները, կեղծելով փաստերը, ապարդյուն փորձում են հիմնավորել, որ այդ աշտարակը կառուցել են իրենց թյուրքական նախնիները մ.թ. ա. 12-րդ կամ մ. թ. ա. 8-7-րդ դարերում: Հոդվածում հերքվում են ադրբեջանցի «պատմաբանների» կողմից շրջանառվող «փաստերը», ցույց է տրվում, որ Բաքվի աշտարակը չէր կարող կառուցվել սկյութների, թյուրքական ժողովուրդների, պարսիկների, ինչպես նաև այլ ժողովուրդների և ցեղերի կողմից: Այն տիպիկ հայկական ճարտարապետության հուշարձան է, ինչպիսին Կաբիրի զրադաշտական տաճարն է, որը կառուցվել է Վանա լճի ափին մ.թ. ա. 1-ին դարում Հայաստանի թագավոր Արտաշես IV-ի (Արշակունի) կողմից: Նման աշտարակ-տաճարներ, նույնիսկ ավելի հին, գոյություն են ունեցել նաև Հայաստանի այլ շրջաններում: Դրանք նվիրված էին զրադաշտական գլխավոր աստվածությանը՝ Արամազդին, և նրա վեց համշասպանդներին: Բաքվի աշտարակն այդպես է կոչվել՝ ի պատիվ Անահիտ աստվածուհու՝ Արամազդի դստեր և կնոջ, կարևոր դեր է խաղացել Կաբիրի ծեսերի մեջ, ուստի աստվածուհու արձանը տեղադրվել է աշտարակի գագաթին:

Բանալի բառեր՝ *Հայաստան, Փոքր Հայք, Ադրբեջան, Աղվանք, սկյութներ, կիմմերներ, թյուրքեր, Ափշերոն, Բաքու, Աղջկա աշտարակ, կաբիրներ, Գաբառու, լեգենդ:*

20-րդ դարի սկզբին կազմավորվեց արհեստածին Ադրբեջանական ԽՍՀ-ն և մտավ ԽՍՀՄ կազմի մեջ, իսկ կովկասյան շիա թուրքերը, որոնք պաշտոնապես կոչվում էին կովկասյան թաթարներ, վերանվանվեցին

ադրբեջանցիներ: Եվ անմիջապես պետականորեն կազմակերպվեց տարածաշրջանում պետականություն ունենալու պատմական և մշակութային հիմքեր «ստեղծելու», կեղծ պատմագրություն հորինելու գործընթացը: Դրան աջակցում և խրախուսում էին ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները՝ իրենց կողմից ստեղծած այդ կեղծ պետության գոյությունն արդարացնելու համար: Ադրբեջանական նորաթուխ պատմաբանների կողմից ադրբեջանցիների պատմական տարածքներ հռչակվեցին ինչպես այդ հանրապետության, այնպես էլ պատմական Աղվանքի կամ կովկասյան Ալբանիայի, Իրանի հյուսիսարևմտյան, պատմական Հայաստանի տարածքները, իսկ այդ տարածքներում եղած կրոնական-մշակութային հուշարձաններն էլ համարվեցին ադրբեջանական:

Տարածաշրջանի բոլոր ճարտարապետական հուշարձանների կառուցումը վերագրվել է կիմերական, սկյութական ցեղերին, աղվաններին, միդիացիներին, որոնք, չգիտես՝ ինչ հրաշքով, հռչակվել են ադրբեջանական ժողովրդի թյուրքական նախնիներ: Սակայն այնպիսի ցեղային միություններ, ինչպիսիք եղել են կիմերները և սկյութները, կամ էլ այնպիսի պրոտոպետություն-չիֆդոմ[1], ինչպիսին եղել է Աղվանքը՝ կովկասյան Ալբանիան, որևէ մշակութային առաջընթացի դրսևորումներով երբեք աչքի չեն ընկել: Մինչդեռ մշակույթ, քաղաքակրթություն ի վիճակի է ստեղծել միայն էլիտա ձևավորած զարգացած ժողովուրդը և ոչ թե ցեղը, որի ստեղծածը կարող է առավելապես պրիմիտիվ դրսևորում ունենալ[2]: Աղվանական ցեղերի կողմից կառուցած որևէ ճարտարապետական հուշարձան հայտնի չէ: Ավելացնենք նաև, որ վերը նշված ցեղերից և ոչ մեկը թյուրքական ռասային չի պատկանել: Ինչ վերաբերում է Միդիային կամ Մարաստանին, որը նույնպես հայտարարվում է թուրքերի նախահայրենիք, ապա դա նույնպես ճիշտ չէ: Մարերը եղել են արիացիներ, իսկ Միդիան կամ Մարաստանն էլ՝ որպես պետություն, ծագել և հզորացել է մ.թ.ա. 7-րդ դարում, սակայն մի քանի տասնյակ տարի հետո այն նվաճվել է Պարսկաստանի կողմից, դարձել նրա նահանգներից մեկը: Մարերն էլ ժամանակի ընթացքում տարրալուծվել են ռասայական տեսակետից հարազատ արիական հարևան ժողովուրդների՝

[1] **Омельченко О. А.,** Всеобщая история государства и права. Учебник. Т. 1, М., «Эксмо», 2007, с. 43-47.

[2] **Тойнби А. Дж.,** ***Цивилизация перед судом истории,*** М., «Айрис-Пресс», 2003, с. 82-126.

հայերի ու պարսիկների մեջ, և դուրս մղվել պատմության թատերաբեմից՝ առանց որևէ մշակութային նշանակալից հետքեր թողնելու[3]:

Համարվում է, որ ադրբեջանական կեղծ պատմագրությունը հիմնադրվել է Զ. Բունիաթովի, Ֆ. Մամեդովայի, Ֆ. Ալիևայի, Թ. Մամեդովի, Ս. Կասումովայի, և այլոց կողմից[4], սակայն դրա սկիզբը դրվել է Ադրբեջան քվազիպետության հիմնադրման առաջին իսկ տարիներին՝ որպես տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանները յուրացնելու միջոց: Ադրբեջանական կեղծ պատմագրության ակունքներում կանգնած են ինչպես ադրբեջանցի, այնպես էլ այդ նպատակով հանրապետություն հրավիրված կամ էլ սովետական կենտրոնական մարմինների կողմից գործուղված այնպիսի այլազգի պատմաբաններ ու մշակութաբաններ, ինչպիսիք են Ե. Պախոմովը, Ա. Ֆիտունին, Ի. Շչեբլիկինը, Լ. Բրետանիցկին, Վ. Մինորսկին, Լ. Վեյմարնը, Վ. Զումմերը և այլք[5]: Հենց նրանք էլ, նախորդելով Ս.

---

[3] **Рагозина З. А.,** История Мидии, второго Вавилонского царства и возникновения Персидской державы**, Изд.:** А. Ф. Маркса**,** СПБ, 1903; **Струве В. В.,** История Древнего Востока «Госполитиздат", 1941 гл 31-с-365-388; **Дандамаев М. А.,** История Мидии**,** М.-Л., 1956; **Дьяконов И. М.,** История Мидии, М.-Л., 1956; **Играр Алиев,** История Мидии. Баку, 1960; **Ямпольский З. И.,** Древняя Албания в III-I вв. до н. э.- Баку: АН Аз. ССР, 1962; **Он же:** Древнейшие сведения о тюрках в зоне Азербайджана.- Уч. зап. АГУ им. С. М. Кирова, сер. яз. и лит., 1966, N 2, с. 62-64; **Он же:** Древняя Албания в III-I вв. до н. э.- Баку: АН Аз. ССР, 1962; **Он же:** Древнейшие сведения о тюрках в зоне Азербайджана. Уч. зап. АГУ им. С. М. Кирова, сер. яз. и лит., 1966, N 2, с. 62-64.

[4] **Буниатов З.** М.**,** Азербайджан в VII - IX вв. - Баку, 1965; **Он же:** Избранные сочинения в 3-х томах. Баку, 1999; **Мамедова Ф.,** „История албан" Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании. Баку, «ЭЛМ», 1977; **Она же:** Кавказская Албания и албаны. Центр исследований Кавказской Албании, Баку, 2005; **Мамедов Т. Х.,** Албания и Атропатена по армянским источникам**,** Баку, 1992; **Касумова С. Ю.,** Азербайджан в III-VII вв. Этно-культурная и социально-экономическая история Баку. Баку, «Элм», 1993; **Алиева Ф. К.,** Культура Античного Азербайджана, Мидийской Атропатены и Кавказской Албании (IV в. до н.э. - III в. н.э.). Баку, 2007; **Алиев И.,** История Мидии. Баку, 1960; **Он же:** Очерки истории Атропатены. Баку, 1989; **Он же:** Нагорный Карабах. История. Факты. События. Баку, 1989; **Меликов Р. С.,** Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н. э.) Баку, 2003 և այլն:

[5] **Пахомов Е. А.,** Девичья башня и ее легенда. Изв. Азербайджанского Археологического комитета, вып. I, Баку, 1925, с. 33-38; **Зуммер В. М.,** Художественные памятники Азербайджана. Баку, 1926; **Фитуни А. П.,** Бакинская Девичья башня//Известия «Азкомстарис», вып. 3, Баку, 1927, с. 140-154; **Щеблыкин И. П.,** Памятники азербайджанского зодчества эпохи Низами (материалы). Баку, «АзФАН», 1943; **Александрович-Насыфи Дж.,** Девичья башня в Баку//Известия «Азкомстарис», вып. 3, Баку, 1927, с. 140-154, 155-163, 163-167; **Дадашев С. А,, Усейнов М. А.** Архитектура азербайджана /III-XIX века/. М., 1948**; Минорский В. Ф.,** История Ширвана и Дербенда. М., 1963; **Бретаницкий Л. С.,** Баку. Издание 2-е, дополненное.

Աշուրբեյլիին, Ս. Վելիևին, Դ. Ախունդովին և այլոց, ստեղծել են Բաքվի Աղջկա աշտարակի և այլ պատմական հուշարձանների մասին կեղծ պատմագիտական տեսություններ[6]: Աղջկա աշտարակին բացառիկ ուշադրություն է ցուցաբերվել, քանի որ այն գտնվում է Բաքվում՝ Կասպից ծովի եզրին, հանդիսանում է այդ քաղաքի խորհրդանիշը: Նրանց այդ հավակնությունները հայ պատմաբանների ու ճարտարապետների կողմից հասցեական և արժանի հակահարված չեն ստացել, Ափշերոնի և հարակից տարածքների, Դերբենդի հայկականության հարցերը չեն վիճարկվել: Նրանց գծած Մեծ Հայքի քարտեզները Ափշերոնը և Դերբենդը չեն ներառում Մեծ Հայքի տարածքի մեջ, իսկ Աղջկա աշտարակի, դրա պատկանելության հարցը չի քննարկվել, դրան որևէ նշանակություն չի տրվել[7]:

Ադրբեջանցի հեղինակներն իրենց աշխատանքներում, առանց բացառության, նկարագրում են Աղջկա աշտարակը և փորձում դրա ադրբեջանական լինելու ապացույցներ գտնել (ավելի շուտ՝ ստեղծել), սակայն նրանց «ձեռքբերումներն» այդ ուղղությամբ հորինված են և բնականաբար գիտականորեն չեն կարող հիմնավորվել: Նրանց նկարագրություններից պարզվում է, որ այդ աշտարակը բաղկացած է 8 հարկից, ունի 28 մետր բարձրություն, պատերի հաստությունը ներքևում՝ 5, վերին մասում՝ 4,7 մետր է, իսկ տրամագիծը ներսից՝ 6,5 մետր: Այն բաղկացած է երկու մասից: Վերին մասը՝ կառուցված տեղի սպիտակ ավազաքարով և կրաշաղախով, 12-րդ դարի

Ленинград-Москва, «Искусство», 1970; **Бретаницкий Л. С.**, **Веймарн Б. В.,** «Искусство», 1976, և այլն:

[6] **Велиев С. С.,** Древний, древний Азербайджан: Ист.-геогр. очерки. Баку, «Гянджлик», 1983; **Мамед-заде К. М.,** Строительное искусство Азербайджана (с древнейших времен до XIX в.). Баку, «Элм», 1983; **Мамедова Г.,** Зодчество Кавказской Албании. Баку, "Чашоглу", 2004; **Ашурбейли С.,** История города Баку период средневековья**,** Баку, «Азернешир» 1992; **Она же:** О датировке и назначении Гыз-Галасы в крепости Баку // Изв. АН АзССР. История, философия и право. 1974. № 3. с. 46-51; **Она же:** Государство Ширваншахов (VI – XVI вв.), Баку, «Элм», 1983; **Она же:** Предположение о строительстве Девичьей Башни в первые века н.э. Баку, 1989; **Мамедова Г.,** Зодчество Кавказской Албании**,** Баку, "Чашоглу", 2004; **Ахундов Д. А.,** Архитектура древнего и раннесредневекового Азербайджана**,** Баку, Аз. гос. изд-во, 1996; **Гасанов Г. А.,** «Девичья башня», Баку, «Гашиоглу», 2014 և այլն:

[7] **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության...), Երևան, 1963, **Պետրոսյան Գ. Բ.,** «Աշխարհացույցի» հեղինակի առեղծվածը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1971, № 10, էջ 54-60, **Հարությունյան Բ.,** Փայտակարան քաղաքը և նրա տեղագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 12, էջ 61-76 և այլն:

է, իսկ ներքին՝ գլաքարերով և անտաշ քարերով մասը կառուցվել է վերին մասից շուրջ 100 տարի առաջ՝ 11-րդ դարում: Նրանցից ոմանք ենթադրում են, որ աշտարակն ունեցել է գմբեթ, որը հետո քանդվել է: Քանի որ 11-12-րդ դարերում մուսուլման արաբների կամ Շիրվանշահերի տիրապետության պայմաններում կրոնական բնույթի նման շինություն կառուցելն անհնար էր, ուստի ենթադրվում է, որ այն ունեցել է պաշտպանական նշանակություն: Որոշ դեպքերում էլ դրա կառուցումը և անվանումն արհեստականորեն կապվում են ինչ-որ մուսուլման տեղական խանի ու նրա աղջկա մասին պատմող ավանդազրույցի հետ: Նրանց բոլորի կողմից անխտիր բերվում և քննարկվում է այդ լեգենդը, որը փաստորեն միակ «ապացույցն» է այդ աշտարակի մուսուլմանական-թուրքական լինելու, դրա կառուցման պատճառների և այդպիսի անվանում ունենալու մասին: Ըստ այդ ավանդազրույցի՝ ինչ-որ տեղի իշխանավոր սեռական նկրտումներ է ունեցել իր սեփական աղջկա նկատմամբ: Հորից պաշտպանվելու համար և որպես հոր հետ ամուսնանալու պայման՝ առաքինի կույս աղջիկը պահանջել է կառուցել բարձրաբերձ աշտարակ: Եվ երբ հայրն այն կառուցել է, առաքինի աղջիկը բարձրացել է դրա գագաթը, այնտեղից նետվել Կասպից ծով և մահացել: Անպայման շեշտվում է, որ այդ լեգենդը պահպանվել է տեղաբնիկների, այսինքն՝ շիա թուրքերի հիշողության մեջ: Հասկանալի է, որ նրանք բոլորովին էլ տեղաբնիկ չեն: Աշտարակի հնության և ադրբեջանական լինելու այլ ապացույց փաստորեն չկա:

Այդ լեգենդի գոյության մասին առաջին անգամ հիշատակում է ռուս ճանապարհորդ Ի. Բերեզինը: Նա գրում է, որ երբ ինքը 1842թ. այցելել է Բաքու, տեղի փոքրաթիվ բնակիչներից իմացել է, որ հին ժամանակներում Բաքվի մի տիրակալ ցանկացել է ամուսնանալ իր դստեր հետ: Դուստրը համաձայն չի եղել և ամուսնությունը ձգձգելու համար առաջարկել է կառուցել աշտարակ: Երևի հույս է ունեցել, որ հայրը չի կառուցի նման աշտարակ, բայց նա կառուցել է: Եվ երբ աշտարակն արդեն պատրաստ է եղել, աղջիկը մտել և փակվել է դրա մեջ[8] և ոչ թե նետվել Կասպից ծով: Ծովը նետվելու վարկածը հնարել են ադրբեջանցի պատմաբանները: Բերեզինը նաև վկայում է, որ Բաքվի տարածաշրջանում այդ ժամանակ թուրքեր համարյա չեն եղել: Նա գրում է. «Բաքվի պրովինցիայի բնակչությունը մեծ մասամբ մուսուլման է: Սակայն միայն վեց գյուղ է զբաղեցված թյուրքական ցեղի կող-

[8] **Березин И.,** Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1850, ч. 3, с. 18-19.

մից: Մնացածը պարսիկներ են»: Նշվում է նաև, որ Բաքվում կար 200 հայ ընտանիք, բայց «առաջ շրջակա գյուղերը բնակեցված են եղել հայերով...: Իսկ այժմ դրանք լքված կամ զբաղեցված են մուսուլմանների կողմից կամ էլ ծածկված են ավազով»: Օրինակ է բերվում Բաքվի մոտակայքում գտնվող Բազոնյա գյուղը: Այն բնակեցված է մուսուլմաններով, սակայն «դրանում գտնվում են հայկական սրբերի՝ Իլիայի և Անդրեյի գերեզմանները»[9]: Պետք է նշել նաև, որ Բաքվում ու նրա մերձակայքում շրջելիս նրա ուղեկիցները եղել են հայեր՝ վաճառական Այվազովը և ոմն Կարապետ, այնպես որ Աղջկա աշտարակի լեգենդը նա կարող էր լսել հայերից և ոչ թե մուսուլմաններից, հատկապես փոքրաթիվ թյուրքերից (որոնք հետագայում հռչակվելու են ադրբեջանցիներ), որոնց հետ նա չի շփվել: Իսկ դա նշանակում է, որ նշված լեգենդը պահպանվել է ոչ թե թուրքերի, այլ տեղաբնակ հայերի մեջ, որոնք էլ պարսիկների հետ եղել են տարածքի հիմնական բնակիչները: Բերեզինը նաև ենթադրում է, որ Աղջկա աշտարակը կարող է լինել Սասանյանների ժամանակ կառուցված և կրոնական բնույթի կառույց է:

Ադրբեջանական հին և միջնադարյան ճարտարապետության «գիտակներից» է Դ. Ախունդովը: Նա գրել է «Հին և վաղմիջնադարյան ադրբեջանական ճարտարապետություն» կեղծագիրը[10]: Վերնագրից արդեն իսկ պարզ է դառնում, որ նա ադրբեջանական ժողովրդի ու նրա կուլտուրայի պատմությունը տարել է դարերի խորքը, նրանց համարել տեղացի, ավտոխտոն ժողովուրդ: Նա պնդում է, որ ներկայիս Ադրբեջանում և դրան հարակից տարածքներում դեռևս մ.թ.ա. 7-րդ դարից գոյություն են ունեցել առանձնահատուկ և ինքնատիպ ալբանա-միդիական-ատրպատականյան պետություն և քաղաքակրթություն, դրա բնակիչներն ու կրողները եղել են թյուրքեր, իսկ այդ տարածքներում առկա բոլոր քաղաքները, ամրոցները, պատմամշակութային այլ կոթողները թուրք-ադրբեջանական են: Համառորեն հայերի ու Հայաստանի մասին որևէ հիշատակում չանելով՝ այս «ճարտարապետը» անցում է կատարում Աղջկա աշտարակին: Այն համարում է մ.թ.ա. 7-րդ դարից մնացած ադրբեջանական ժողովրդի հնագույն ճարտարապետության **միակ պահպանված հուշարձանը**[11]: Թե ինչպես է որոշվել, որ այն մ.թ.ա.

---

[9] **Березин И.,** Путешествие по Дагестану и Закавказью**,** Казань, 1850, ч. 3, с. 39, 41:

[10] **Ахундов Д. А.,** Архитектура древнего и раннесредневекового Азербайджана**,** Баку, Аз. гос. изд-во, 1996.

[11] **Ахундов Д. А.,** նշվ. աշխ., էջ 54.

7-րդ դարի է, և ինչու է ադրբեջանական-թյուրքական, չի պարզաբանվում: Չի մոռացվում նաև այնպիսի կարևոր «ապացույց», ինչպիսին է լեգենդը առաքինի աղջկա և նրա ցանկասեր ծնողի մասին, որը շահարկվում է բոլոր ադրբեջանցի «աշտարակագետների» կողմից,: Բերվում են նաև ադրբեջանցի պատմաբանների կողմից հորինված այլ զրույցներ, որոնք նույնպես այս «ճարտարապետի» երկում կատարում են «Աղջկա աշտարակ»-ի ադրբեջանական-թուրքական լինելը վկայող ապացույցների դեր: Գիտակցելով «ապացույցի» պակասավոր լինելը՝ նա փորձում է գտնել որևէ այլ փաստ, և այն «գտնում է» Նիզամի Գյանջևիի «Իսկանդեր-Նամե» պոեմում: Դրա գլուխներից մեկում, որը կոչվում է «Իսկանդերն ավերում է կրակի կռատները: Հրաշագեղ Հազար Հումայունի (Հմայողի – Ս.Խ.) դյութանքը», Նիզամին հայտնում է, որ Իսկանդերը (Ալեքսանդր Մակեդոնացին), զորքով մտնելով **Ազուրբադագան,** այն է՝ Ատրպատական, հրամայել է ավերել այնտեղ գտնվող բոլոր կռատները: Այնտեղ եղել է «...ինչ-որ կրակ (կրակատուն)՝ հրաբորբոք, իսկ դրա շուրջբոլոր՝ քարեր, ժողովրդի մեջ Խուդի-Սուզ կոչվող: Ոսկյա ապարանջաններով զարդարված 100 հերպետներ պաշտում էին այն: Անհավատների կողմից գնահատված էր նա: Տիրակալը, ում փայլով պատած էր ամբողջ աշխարհը, կարգադրեց այդ կրակը հանգցնել: Այնտեղից նա սլացավ դեպի Սպահան»[12]: Այս տողերի հիման վրա նա եզրակացնում է, որ այդ **Ազուրբադագանը** ներկայիս ադրբեջանական հանրապետության տարածքն է, իսկ այնտեղ գտնվող և Խուդի Սուզ կոչվող կրակատունը, որը նշանակում է «ինքն իրեն վառվող», Բաքվի Աղջկա աշտարակը[13]: Եվ իբր իր կառուցման ոճով այն պատկանում է հին ադրբեջանական **միդիական-ապշերոնյան** ճարտարապետության տիպին: Թե ինչու է այն պատկանել այդ առասպելական ճարտարապետության դպրոցին և ոչ թե մեկ այլ, ինչպիսիք առկա են ադրբեջանական այլ ճարտարապետ-պատմաբանների երևակայության մեջ, չի պարզաբանվում: Ինչ վերաբերում է Ա. Մակեդոնացուն, ապա նա եղել է Ատրպատականի տարածքում, և, ըստ երևույթին, նրա հրամանով այնտեղ ավերվել է Ատր-Գուշնասպ կրակատունը: Ներկայիս Ադրբեջանի տարածքում նա երբեք չի եղել: Նա մոռանում է հիշատակել կամ չգիտի, որ գոյություն է ունեցել հայկական Ատրպատականի նախարարություն՝

[12] **Низами.,** Пять поэм, М., изд-во худ. лит., 1968, с. 597-600; **Ахундов Д. А.,** նշվ. աշխ., էջ 54.

[13] **Ахундов Д. А.,** նշվ. աշխ., էջ 54.

տեղ զբաղեցնող «Գահնամակ»-ում (46-րդը)[14], իսկ այդ Խուդի Սուզ կոչված տաճարը հայոց Ատրպատականի մայրաքաղաքի մոտ գտնվող Ատր-Գուշնասպ կոչվողն է:

Շարունակելով զարգացնել իր հորինած անհեթեթ վարկածն Աղջկա աշտարակի մասին՝ Ախունդովը շարունակում է պնդել, որ Բաքվի Աղջկա աշտարակը, «հավանաբար կառուցված լինելով մ.թ.ա. 7-րդ դարում», հետագայում, ինչպես դա ակնհայտ է դառնում Նիզամու նշված պոեմից, վերածված է եղել զրադաշտական տաճարի՝ նվիրված **Ահուր Մազդին և նրա վեց համշասպանդներին** կամ հիպոստասներին կամ էլ գուցե Միհր աստծուն: Նշվում է նաև, որ մ.թ.ա. 7-6-րդ դարերում կառուցված լինելով որպես զրադաշտական կրակատուն, իսլամի դարաշրջանում այն վերածվել է աստղադիտարանի, փարոսի, խաղացել պաշտպանական կառույցի դեր: Հիշատակվում է նաև, որ Բաքվի նախնական անուններից է եղել նաև Բագավանը, բայց թե որտեղից է այդ վկայությունը վերցված, չի բացատրվում, դրա մասին որևէ աղբյուր չի նշվում: Հայկական գրավոր աղբյուրների ու ճարտարապետական հուշարձանների մասին չի էլ հիշատակվում, իսկ եթե հիշատակվում է, ապա դրանք հայտարարվում են աղվանական, և այս հանգամանքն ավելի է շեշտում այս պատմաբանի գրվածքի կեղծ լինելու չափը[15]:

Հետխորհրդային շրջանում հանդես եկած ադրբեջանական-ալբանամիդիական «մեծ» ժողովրդի «ճարտարապետական ժառանգության» մասին գիտության ամենառադիկալ առաջամարտիկներից է ոմն պատմաբան և դիվանագետ Հ. Հասանով: Այդ ուղղությամբ նրա «Աղջկա աշտարակը» երկում ձևակերպված «հայտնագործությունները» ուղղակի ցնցող են[16]: Դրանում հայտարարվում է, որ Աղջկա աշտարակը կիմերասկյութական կրակարան-սրբատեղի է, կառուցվել է ի պատիվ աստվածուհի աղջկա» մ.թ.ա. 8-րդ դարում[17]: Եվ որ կիմերները և սկյութները եղել են թյուրքական ցեղեր, իսկ Ադրբեջանի և հարակից տարածքների բոլոր հնագույն հուշարձանները՝ կիկլոպյան ամրոցներ, սրբատեղիներ և այլն (բոլորը՝ հայկական), այդ թվում՝ Աղջկա աշտարակը, կառուցվել են նրանց կողմից: Հետևաբար դրանք ադրբեջանական-թուրքական ժողովրդի ժառանգություն են:

---

[14] **Գահնամակ,** Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, 1976, էջ 662-664:

[15] **Ахундов Д. А.,** նշվ. աշխ., էջ 54-60:

[16] **Гасанов Г. А.,** «Девичья башня», Баку, «Гашиоглу», 2014.

[17] **Гасанов Г. А.,** «Девичья башня», Баку, «Гашиоглу», 2014, էջ 31-46:

Այսպիսով, եթե մինչ նա Աղջկա աշտարակի կառուցումը սովորաբար կապում են աղվան-ալբանացիների, միդիացիների և թյուրքական ծագում ունեցող հոների զարմանալի խառնուրդի հետ, և այն համարում 12-րդ դարում տարածաշրջան ներխուժած թուրքերի հանճարի ճիչ, իսկ Դ. Ախունդովը՝ մ.թ.ա. 7-րդ դարում անհիշելի ժամանակներից տեղում բնակվող թյուրքերի կողմից կառուցված, ապա սրա կողմից առաջադրված տեսակետը դրա կառուցման և անվանակոչման մասին ուղղակի ֆանտաստիկ է: Հայտարարվում է, որ կիմերասկյութական ցեղերը (որոնք համարվում են նույնություն), տարածաշրջանում հաստատվել են մ.թ.ա. 14-13 դարերում, իսկ մ.թ.ա. 8-րդ դարում էլ սկսել են ստեղծագործել և կառուցել ճարտարապետական հուշարձաններ, որոնց թվում է նաև Աղջկա աշտարակը: Դրա թյուրքական-սկյութակիմերական լինելու ապացույց է համարվում այն հանգամանքը, որ նման աշտարակներ կառուցված են եղել թյուրքական-սկյութական աշխարհի այլ հատվածներում ևս: Ումն հնագետ Թունջեր Բայքար իբր հայտնաբերել և նկարագրել է 100-ից ավելի թյուրքական Աղջկա աշտարակներ, որոնցից 10-ը՝ Ադրբեջանում: Ալթայում նույնիսկ գտնվել է մի Աղջկա աշտարակ, որը նույնպես ունի ութ հարկաբաժին (յարուս), ինչպիսին է Բաքվինը: Ադրբեջանի տարածքում աղջկա աշտարակներ են հայտնաբերվել նաև Շամախիում, Ջաբրաիլում, Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Հարավային Ադրբեջանում (Ատրպատական կամ Միդիա) և Արևմտյան Ադրբեջանում (Հայաստանում):

Աղջկա աշտարակի ադրբեջանական լինելու և դրա հնության ապացույց է հայտարարվում նաև Նախիջևան քաղաքի մոտ գտնվող, մ.թ.ա. 8-6-րդ դարերում կառուցված Օղլան-կալա, Վայխիր Գյավուր, Գյանջայի (հայոց Գանձակ քաղաքի) մոտ, ինչպես նաև Ափշերոնյան թերակղզում գտնվող, այդ նույն ժամանակին պատկանող և կլոր աշտարակներ ունեցող կառույցներ: Հայտարարվում է, որ մ.թ.ա. 8-րդ դարի Վանի ամրոցի ժայռերի վրայի մի արձանագրության համաձայն՝ Ադրբեջանում (?) եղել են շուրջ 120 քաղաքներ[18]: Վկայակոչվում են նաև Աղջկա աշտարակի մոտերքում, ծովում հայտնաբերված ձկան բրոզե արձանիկ և ցլի գլուխ, որոնք մ.թ.ա. 2-1-ին դարի են և կարող էին նվիրաբերված լինել աշտարակի խորհրդանիշ հանդիսացող սրբին[19]:

---

[18] **Гасанов Г. А.,** «Девичья башня», Баку, «Гашиоглу», 2014, էջ 43-53:

[19] **Гасанов Г.А.,** նշվ. աշխ., էջ 42-43; **Алиев В., Керимов В.** Исследование Оглангалы//Археологические открытия 1975 года. М., «Наука», 1976, с. 497-498.

Այնուհետև նրա կողմից հերքվում է Ախունդովի կարծիքն այն մասին, որ Աղջկա աշտարակը եղել է զրադաշտական կառույց: Զորոաստրիզմը հին պատմական Ադրբեջանում տարածում չի գտել, թեև պարսիկները քանիցս փորձել են նրանց ստիպել ընդունել այն: Եվ դա այն պատճառով, որ հին Ալբանիայի, Միդիայի թուրք բնակիչները եղել են **չափազանց առաքինի** և չէին կարող ընդունել այնպիսի անբարոյականություն, ինչպիսին է զորաստրիզմի սրբագործած մերձամուսնությունը: Ավեստայում նույնպես վկայված է հին իրանցիների ու տուրերի (թյուրքերի) դիմակայության մասին, որի պատճառը հենց ինցեստն է[20]: Բերվում է նաև ամենափրկիչ լեգենդը առաքինի աղջկա և նրա անբարոյական հոր մասին, քննարկվում դրա և Աղջկա աշտարակի առնչության հարցը, և այն ռեկոնստրուկցիայի է ենթարկվում: Զրադաշտական աղջիկը, ըստ օրենքի, պարտավոր է եղել ամուսնանալ սեփական հոր հետ, իսկ այս դեպքում դա այդպես չէ: Իրականում այն հին թյուրքական-սկյութական է՝ կապված նրանց բարոյական ինքնագիտակցության հետ: Անանուն առաքինի աղջիկն իրականում եղել է սկյութաթուրքական կուսության ու կրակի աստվածուհի Տաբիթին: Նրան նվիրված տաճար և արձան է գտնվել մերձսևծովյան սկյութական Խերսոն քաղաքում: Նրա արձանիկներ են գտնվել շատ սկյութական կուրգաններում, դոլմեններում, այդ թվում՝ Ադրբեջանի տարածքում գտնվող:

Ինչ վերաբերում է Աշտարակի ութհարկանի լինելուն, ապա այդ առթիվ նշվում է, որ ութ թիվը սկյութների մոտ ունեցել է սրբազան նշանակություն: Սկյութական պանթեոնում եղել են ութ աստվածներ, և սկյութական հասարակական ու պետական ատրիբուտիկան ներկայացված է ութթևանի աստղով: Հերոդոտոսը հաստատում է այդ փաստը և բերում այդ աստվածների անունները՝ դրանք թվարկելով հունական աստվածների հետ համեմատության մեջ: Ինքն էլ (Հ. Հասանովը) այդ աստվածներին համեմատել է թյուրքական ժողովուրդների, այդ թվում՝ հոների պանթեոնի աստվածների հետ և պարզել, որ դրանք նույնություն են և իրենց բոլոր բնութագիրներով լիովին համընկնում են: Բերվում են այդ համեմատության արդյունքները: Դրանից հետևություն է կատարվում, որ Աղջկա աշտարակի ութհարկանի լինելը պայմանավորված է եղել սկյութական ութ աստվածների գոյության հանգամանքով, և ամեն մի հարկաբաժին նվիրված է եղել նրանից մեկին: Նրանցից ամեն մեկն աշտարակում ունեցել է իր կրակարան-որմնախորշը: իսկ աշտա-

[20] **Гасанов Г. А.,** նշվ. աշխ., էջ 75-76:

րակի գագաթին կանգնեցված է եղել Տաբիթիի արձանը: Այսպիսով, պարզված է համարվում նաև այն հանգամանքը, թե ինչու է աշտարակը եղել ութհարկանի[21]:

Կիմերական և սկյութական ցեղերին Հ. Հասանովը ներկայացնում է որպես մեկ ռասայական-թյուրքական միասնություն, որը նույնպես այս գիտնական-դիվանագետի հիվանդագին երևակայության արդյունք է և հերքվում է լեզվական և հնագիտական նյութերով: Վերոնշյալ ցեղերը, համենայնդեպս սկյութները, եղել են ոչ թե թյուրքեր, այլ հնդեվրոպացիներ կամ արիացիներ: Եվ անկախ ռասայական պատկանելությունից՝ նրանք առանձնահատուկ մշակույթով աչքի չեն ընկել և չէին կարող ընկնել[22]: Կիմերների ու սկյութների միջև որևէ հարազատական կապ և միասնության փաստ նույնպես գրանցված չէ: Նրանք տարածաշրջան են ներխուժել ոչ թե մ. թ. ա. 14-13-րդ, այլ 8-րդ դարում: Հայկական տարածաշրջան ներթափանցելուց անմիջապես հետո էլ նրանք բախման մեջ են մտել միմյանց հետ: Նրանք միասին կամ առանձին որևէ մշակութային կամ քաղաքական միջոցառում չեն ձեռնարկել ոչ մ. թ. ա. 8-րդ, ոչ էլ հետագա դարերում, ինչպես երևակայում է Հ. Հասանովը: Ընդհակառակը, նրանք միշտ պատերազմել են միմյանց դեմ: Երբեմն Երեմյանը կամ Ի. Դյակոնովը հիշատակում են Հայաստանում կամ հարևան տարածաշրջաններում կիմերների կամ սկյութների ստեղծած թագավորությունների մասին[23], սակայն դա անհավանական է: Խոսք կարող է

---

[21] **Мамедова Г.,** Зодчество Кавказской Албании. Баку, "Чашоглу", 2004. **Ахундов Д. А.,** նշվ. աշխ.:

[22] **Тамара Райс.,** Скифы, строители степных пирамид**,** М., ЗАО «Центрполиграф», 2021; **Латышев В. В.,** Известия древных писателей греческих и латынских о Скифии и Кавказе. Т. 1. Греческие писатели. СПб., 1890; **նույնի՝** Извесиия древных писателей греческих и латынских о Скифии и Кавказе. Т.1 и т. 2. Латынские писатели. СПб., 1890: **Երեմեան U. S.,** *Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ.* ՊԲՀ, (1968) № 2, էջ 89-116, **Զահուկյան Գ. Բ.,** *Կիմերների և կիմերերենի պրոբլեմը արդի գիտության մեջ.* ՊԲՀ, 1977, № 4, էջ 73-82: **Дитмар А. Б.,** От Скифии до Элефантины. Жизнь и путешествия Геродота. М., 1961; **Смирнов А. П.,** Скифы. М., «Наука», 1966; **Ельницкий Л. А.,** Скифия евразийских степей. Новосибирск, «Наука», 1977; **Граков Б. Н.,** Скифы. Научно-популярный очерк. М., Изд-во МГУ, 1971; **Бонгард-Левин Г.М., Грантовский Э. А.,** От Скифии до Индии: Загадки истории древних ариев. М., "Мысль". 1974; **Моммзен Т.,** История Рима. Том 4, Ростов на Дону, «Феникс», 1997, с. 262, 266-267; **Тер-Мартиросов Ф. И.** *Скифское царство в Передней Азии и исторические основы предания о Паруйре Скайорди как царе Армении.* ՊԲՀ, 1994, № 1-2, էջ 67-84:

[23] **Երեմյան U. S.** Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները...: **Дьяконов И. М.,** История Мидии. Книга I. Баку, "Нагыл Еви", 2012, с. 246-252, 254.

գնալ միայն նրանց կազմակերպած ցեղային միության կամ պրոտոպետության մասին, ընդ որում ժամանակավոր բնույթ կրող և ոչ համատեղ: Նաև «Աղջկա աշտարակ» կառուցելու որևէ պատճառ, պայման ու հնարավորություն այդ քոչվոր ցեղերը չեն ունեցել: Եվ ոչ մի աղջկա պաշտամունք վայրի ասպնջական ցեղերին չէր կարող մղել նման աշտարակ կառուցելու: Նրանք զբաղված են եղել իրենց ամենօրյա նյութական կարիքները հոգալով և նման բարձրաբերձ աշտարակ՝ նվիրված աստվածներին, այն էլ քոչի ճանապարհին, նրանք չէին կարող կառուցել: Ալթայից մինչև սևծովյան տափաստաններում երբեմնի կառուցված կուրգանները գուցե և կառուցվել են սկյութների կողմից, սակայն նրանցից և ոչ մեկը նման չէ Աղջկա աշտարակին: Եվ այն, ինչպես նաև Ադրբեջանի ու դրա շրջակա տարածքներում գտնվող այլ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձաններից և ոչ մեկը, այդ թվում՝ մուսուլմանական, կապված չեն ադրբեջանցի կոչվող ժողովրդի հետ և չեն կառուցվել նրա ներկայացուցիչների կողմից:

Ինչ վերաբերում է **Աղջկա աշտարակին**, ապա այն հայկական է: Դրա հայկականության առաջին ապացույցը գտնվում է Մ. Խորենացու «Աշխարհացույց»-ում[24], որը երբեմն վերագրվում է շուրջ 2 դար նրանից հետո հանդես եկած Անանիա Շիրակացուն: Սակայն այդ հանգամանքը տվյալ դեպքում որևէ նշանակություն չունի: Ավելին, դրանով էլ ավելի է հիմնավոր դառնում այն հանգամանքը, որ Մեծ Հայքի աշխարհագրությունը Շիրակացու դարում ևս, այն է՝ Խորենացուց շուրջ 200 տարի հետո, էական փոփոխությունների ենթարկված չի եղել[25] և որ Մեծ Հայքի ներքին կառուցվածքի և աշխարհագրության հարցերը ակտուալ նշանակություն են ստացած եղել

---

[24] **Մովսես Խորենացի,** Աշխարհացույց//Մատենագիրք հայոց, հ.2, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2123-2193:

[25] **Անանիա Շիրակացի,** Աշխարհացույց // Մատենագիտություն, Թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները **Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի**, Երևան, 1979: **Патканов К. П.**, Армянская география 7-ого века. СПб., Типографія императорской академии наук, 1877, **Պետրոսյան Գ. Բ.,** «Աշխարհացույցի» հեղինակի առեղծվածը, Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1971, № 10, էջ 54-60, **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության...), Եր., 1963, **Անանուն է դարի**, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր **Ա. Յակոբեանի**, – Հանդէս ամսօրեայ, Ա, ՃԻԷ տարի, Վիեննա – Եր., 2013, **Հակոբյան Թ. Խ.,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 232-233, **Հարությունյան Բ.,** Փայտակարան քաղաքը և նրա տեղագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 12, էջ 61-76:

[25] **Gutschmid A.,** Kleine Schriften, B. III, Leipzig, 1892, S. 278:

նաև Շիրակացու կողմից: Այդ հանգամանքը կարևոր է նաև այն պատճառով, որ վերջինիս ապրած ժամանակաշրջանում, ըստ «Աշխարհացույց»-ի, Փայտակարանը, Բաղասականը, Պարսպատունիքը և Մեծ Հայքի այլ հյուսիսարևելյան տարածաշրջաններ շարունակել են համարվել հայկական, թեև դրանք 387 թվականից արդեն անջատված են եղել Մեծ Հայքից:

«Աշխարհացույց»-ում սկյութների, մասքութների, հոների, և խազարների բնակության շրջաններ են նշվում Կովկասյան լեռներից հյուսիս ընկած տարածքները[26]: Հիշատակվում են նաև դեպի Հյուսիսային Կովկաս տանող Ալանաց, Ծեքան և Դարբանդ (Դերբենդ) կոչվող դռները որպես հայերի կողմից պաշտպանվող: Պարզ է դառնում նաև, որ Դարբանդի պարսպից հարավ ընկած տարածքներում սկյութական, սարմատական կամ հոնական (թյուրքական) որևէ ցեղային կամ պետական կազմավորում չի եղել[27]:

Վրաստանի գավառների թվարկումից և նկարագրությունից հետո «Աշխարհացույց»-ում անցում է կատարվում Աղվանքին: Նշվում է, որ Կովկասյան լեռների կողմից այն սահմանակից է Սարմատիային, տարածվում է մինչև Կուր գետը, «մինչև Կուր գետի մոտով, **թեպետև այստեղից (Կովկասյան լեռներից –Ս. Խ.) մինչև Կուր գետը վերցված է Մեծ Հայաստանից»:** Դա նշանակում է, որ Աղվանքը մինչև Կասպից ծով տարածված երկիր չի եղել: Բուն Աղվանքի գավառները թվարկելուց հետո նշվում են 20 հայկական գավառներ, որոնք պարսիկ թագավորների՝ Շապուհ Երկրորդի, մասամբ էլ Հազկերտ Երկրորդի կողմից հանվել են Մեծ Հայքի կազմից և մտցվել Աղվանքի մարզպանության մեջ: Դրանց թվում են Շակաշենը, Գարդմանը, Արցախը և այլ գավառներ: Նկարագրվում է նաև Մեծ Հայքի նահանգներից 11-րդը՝ Փայտակարանը՝ Ուտիքի շրջանից դեպի արևելք և հյուսիս, Երասխի վրա և Կասպից ծովի ափին, մինչև Դերբենդ գտնվող իր 12 գավառներով հանդերձ: Նշվում է, որ այդ նահանգը և դրա գավառները նույնպես հանվել են Մեծ Հայքի կազմից (387թ.) «և այժմ Ատրպատականի մեջ են մտնում»: Դրանք են **Հրաքոտ-Պերոժը, Վարդանակերտը, Յոթնփորակյան բագին-**

---

[26] **Մովսես Խորենացի,** Աշխարհացույց, էջ 2170:

[27] **Անանիա Շիրակացի,** Աշխարհացույց, էջ 268-290, **Հարությունյան Բ. Հ.,** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, ԵՊՀ հրատ., 2001, **Գրիգորյան Վ.,** *Հայաստանի ճարտարապետության պատմության հիմնովին վերանայման խնդիրը,* ՊԲՀ., 2014, № 1, էջ 16-21:

քը, Ռոտ-ի Բաղան, Բաղանռոտը, Առոս-Պիճանը, Հանին, Աթլին, Բագավանը, Սպանդարան-Պերոժը, Որմիզդ-Պերոժը և Ուտին[28]:

Ակնհայտ է, որ **Յոթնփորակյան բագինք** կոչվածը հենց Աղջկա աշտարակն է: Ներսից 7 որմնախորշեր ունեցող ուրիշ որևէ «յոթնափորակյան բագինք» որևէ այլ վայրում, բացի Փայտակարանից, տեղորոշված չէ: Հենց այդ կառույցն է ունեցել և այժմ ունի 7 որմնախորշեր, և դրանցից ամեն մեկում կարող էր դրված լինել որևէ բագին, այն է՝ աստծո արձան: Իսկ դա նշանակում է, որ Ափշերոնյան թերակղզին, որի վրա գտնվում է այն, ինչպես նաև դրանից դեպի հյուսիս ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Դարբանդը կամ Դերբենդը նույնպես եղել է հայկական: Այդպես նաև դրա հետ միասին հիշատակվող **Բագավան** քրմական քաղաքը, որն ապագա Բաքուն է, և որի մոտերքում էլ գտնվել է **Յոթնփորակյան բագինքը**: Դրա անվանումից իսկ երևում է, որ այն ունեցել է կրոնական և ոչ թե ռազմական նշանակություն: Այն չի եղել և չէր կարող լինել պարսկական տաճար: Հերոդոտոսը վկայում է, որ Իրանում չեն եղել զրադաշտական տաճարներ: Նա գրում է, որ պարսիկները աստվածների պատվին արձաններ և զոհասեղաններ չեն կանգնեցրել: «Նման կերպ վարվողներին նրանք համարել են հիմարներ...: Նրանք նաև զոհեր են մատուցում արևին, լուսնին, կրակին, ջրին և քամիներին...»[29]: Նրանից շուրջ 500 տարի հետո նույնը վկայում է Ստրաբոնը[30], իսկ վերջինից շուրջ 500 տարի հետո՝ Եղիշեն: Պատմելով 451թ. զրադաշտական Իրանի դեմ հայերի մղած պատերազմի մասին՝ Եղիշեն նկարագրում է հավատափոխության համար հայոց երկիր ուղարկված զրադաշտական մոգերի կատարած զանազան հակաքրիստոնեական ակցիաները, այդ թվում՝ բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիների փակման գործողությունները, սակայն ոչ մի փաստ չի ներկայացնում դրանք զրադաշտական կրակարանների վերածելու մասին[31]: Բացի դրանից՝ պարսկական ոչ մի աղբյուրում այդ հուշարձանը չի հիշատակվում որպես նրանց կողմից կառուցված:

Մյուս ապացույցն այն բանի, որ Աղջկա աշտարակը հայկական է, առկա է Քսենոֆոնի «Անաբասիս» երկում: Նա գրում է, որ երբ հունական 10000-

---

[28] **Մովսես Խորենացի,** Աշխարհացույց, էջ 2172, **Անանիա Շիրակացի,** Աշխարհացույց, էջ 295-296:

[29] **Геродот,** История, В 9-ти кн. Пер. с греч. Л., «Наука», 1972, с. 54.

[30] **Страбон,** География в 17 книгах, Под общей ред. проф. С. Л. Утченко, «Наука», М., 1964, с. 680-681:

[31] **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, «Հայաստան», 1994:

անոց զորքի կազմում անցնելիս է եղել Հայաստանով, նկատել է, որ «հայկական տների մեծագույն մասի վրա կան աշտարակներ»: «Աշտարակ է ունեցել նաև սատրապի ապարանքը» (գիրք 4-րդ, գլ. 4.2)[32]: Եթե այդպիսի կլոր կամ գլանաձև աշտարակներ լինեին Փոքր Ասիայի ու Պարսկաստանի տարածքներում, որոնցում նույնպես եղել է այս մեծ զորավարը, ապա հայկական շինությունների գլանաձև, յուրահատուկ տեսքը նրա վրա տպավորություն չէր գործի, և դրա վրա նա ուշադրություն չէր դարձնի: Ուստի դա նույնպես ապացույց է այն բանի, որ Բաքվի Աղջկա աշտարակը իսկապես հայկական է: Հասկանալի է, որ Քսենոֆոնի ժամանակ Հայաստանում սկյութներ կամ կիմերներ չեն բնակվել: Քսենոֆոնը սկյութների որոշ մնացորդների հանդիպել է միայն Խաղտիքի լեռներում:

Որ Բաքվի Աղջկա աշտարակը, ինչպես նաև Ափշերոնյան թերակղզին և ընդհանրապես Մեծ Հայքի Փայտակարան նահանգի տարածքում գտնվող ճարտարապետական հուշարձանները հայկական են, հիմնավորում է նաև այն փաստով, որ Դերբենդը կամ Դարբանդը, որի մասին հիշատակվում է նաև «Աշխարհացույց»-ում, եղել է հայկական: Եվ եթե մինչև Մեծ Հայքի թագավորության անկումը (387թ.) այն եղել է հայկական, Հյուսիսային Կովկասի ռազմաշունչ ցեղերից պաշտպանվել և սպասարկվել է հայկական զորքերի կողմից, ապա դա նշանակում է, որ Դերբենդից հարավ ընկած երկրամասերը, դրանց հետ նաև Ափշերոնյան թերակղզին, դրա վրա գտնվող Աղջկա աշտարակը նույնպես հայկական է, այն չէր կարող կառուցվել որևէ այլ ժողովրդի կողմից: Աղվանական ցեղերը ուժ, հնարավորություն և ստեղծագործական էլիտա չեն ունեցել այն կառուցելու, պաշտպամելու և սպասարկելու համար: Նման տեղեկություններ չեն պահպանվել: Դերբենդը չի եղել նաև Հյուսիսային Կովկասի ցեղերի՝ ալանների, մասքուտների, հոների, խազարների կամ էլ Հյուսիսային Կովկասի այլ ցեղերի իշխանության ու տիրապետության տակ: Նման դեպքում այդ պաշտպանական գծի ու ամրությունների դերն անիմաստ կդառնար: Բայց երբեմն կարծիքներ են հայտնվում, որ այդ ամրությունները կառուցել են ալբանական կամ հյուսիսկովկասյան և տեղացի կոչվող ինչ-որ ցեղեր՝ հայերից ու պարսիկներից պաշտպանվելու համար[33]: Նման տեսակետը պարզապես անիմաստ է:

---

[32] **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 93, Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 469:

[33] **Ханмагомедов С. О.,** Дербент. М., 1958; **Минорский В. Ф.**, История Ширвана и Дербенда X-XI вв. М., 1963, с. 15; **Ризванов З.**, **Ризванов Р.**, История Лезгин: Краткий научно истори-

Դերբենդի հայկական լինելը ապացուցվում է հետևյալով. Գոբուստանում (Բոյուք Դաղ) հայտնաբերված քարարձանագրությունից հայտնի է դառնում, որ այնտեղ մ. թ. առաջին դարի վերջին կանգնած է եղել հռոմեական «Կայծակնային» կոչվող լեգեոնը՝ զորավար Լուկիոս Հուլիոս Մաքսիմոսի հրամանատարությամբ: Դրանում հիշատակվում է իմպերատոր Դոմետիանոս Գերմանիկոս Ֆլավիոսը (մ.թ. 81-96թթ.): Բ. Ջոնսի կողմից հաստատվում է, որ այդ արձանագրությունը փորագրվել է 83թ. հետո և մինչև 92թ.[34]: Նա հայտնում է նաև, որ նշված լեգեոնը այնտեղ է գտնվել Դերբենդի լեռնանցքը հյուսիսկովկասյան ցեղերի ներխուժումներից պաշտպանելու, ինչպես նաև Հայաստանը հսկողության տակ պահելու համար, որը, սկսած Ներոնի ժամանակներից և Հռանդեայի պայմանագրով, հարկատու էր նաև Հռոմին: Այդ փաստը հաստատվում է նաև Խորենացու կողմից (գլ. ԾԴ)[35]: Դրանով նույնպես ապացուցվում է, որ նշված ժամանակ և նպատակներով Հայաստանի Փայտակարան նահանգի վերոնշված հատվածում գտնվելիս են եղել հռոմեական զորքեր: Բ. Ջոնսը սխալմամբ ենթադրում է, որ Դերբենդը և Գոբուստանը գտնվելիս են եղել Ալբանիա կոչվող պետության տարածքում[36], սակայն դա թյուրիմացություն է, որի մասին կխոսենք ստորև:

Դերբենդի, հետևաբար նաև Ափշերոնյան թերակղզու հայկական լինելը՝ նրա վրա գտնվող պատմական հուշարձաններով հանդերձ, ինչպես նաև Փայտակարան նահանգի մեջ մտած լինելու հանգամանքը ապացուցվում է նաև հետևյալով. «Աշխարհացույց»-ում Դերբենդը (Դարբանդ) ուղղակիորեն նշված է որպես հայերին պատկանող ամրոց և պաշտպանական կառույց[37]: Այն որպես հայկական ամրոց է ներկայացված հայոց պատմիչների երկերում, ոչ ուղղակիորեն՝ հռոմեական աղբյուրներում: Մ. Խորենացին հայտնում է, որ հայոց թագավոր Վաղարշակ Առաջին Արշակունին (մ.թ.ա. 3-րդ դարի վերջ), պատերազմելով Կովկասն անցած հյուսիսականների դեմ, նրանց դուրս է քշել Հայաստանից, որից հետո անցել Կովկասից այն կողմ,

---

ческий очерк. Махачкала, 1990, с. 8-9; **Абдурагимов** Г. А., Кавказская Албания - Лезгистан. История и современность. СПб., 1995. с. 67-70; **Касумов Н. К.,** Дербент - ворота Кавказа. Дербент, 2007; **Кудрявцев А. А.**, Город, не подвластный векам. Махачкала, 1976; **Он же:** Древний Дербент. М., 1982.

[34] **Jones Brian W.** The Emperor Domitian. London: Routledge, 1992, P. 155-157.

[35] **Մովսես Խորենացի,** նշվ. աշխ., էջ 220-221:

[36] **Jones Brian W.** The Emperor Domitian. London: Routledge, 1992, P. 157;

[37] **Մովսես Խորենացի,** Աշխարհացույց // Մատենագիրք հայոց, հ. 2, էջ 2149-251, 2153, 2170

հավաքել պարտված վայրի ցեղերի առաջնորդներին, խրատել, որ նրանք այլևս Հայաստանի վրա չարշավեն[38]: Հասկանալի է, որ նա դա արել է՝ անցնելով Դերբենդը կամ մեկ այլ կովկասյան դուռ, սակայն դա տվյալ դեպքում որևէ նշանակություն չունի: Կովկասյան լեռներն ամբողջապես կազմել են Հայաստանի հյուսիսային սահմանը:

Հայտնի է նաև, որ Տրդատ Առաջին-Սանատրուկի թագավորման տարիներին հյուսիսկովկասցիներն անցել են Դերբենդը և մ.թ. 72թ. ու 75թ. ներխուժել Հայաստան: Նրանց դեմ ճակատամարտում հայոց այդ թագավորը հազիվ փրկվել է գերի ընկնելուց, բայց նրան հաջողվել է թշնամուն հետ մղել[39]: Դիոն Կասիոսը պատմում է, որ երբ Կարակալլային փոխարինած իմպերատոր Մակրինոսը 217թ. հայոց թագավոր է ճանաչել Տրդատ Երկրորդին և նրան շնորհել թագ, ապա վերջինս հույս է ունեցել «ամեն կերպ հասնել հռոմեացիներից ամենամյա վճարումների վերականգնմանը»[40]: Հ. Մարկվարտի կարծիքով՝ այդ նպաստը տրվել է Դերբենդը հյուսիսկովկասցիներից պաշտպանելու համար[41]:

Խորենացին պատմում է նաև (գիրք 2, գլ. ԿԵ, ՀԵ), որ հայոց թագավոր Տիգրան-Սոյեմոսի որդի Վաղարշ Երրորդը «Ճորա դռնից», այն է՝ Դերբենդից ներխուժած և Կուր գետն անցած խազիրների ու բասիլների ցեղերի դեմ տեղի ունեցած ճակատամարտերում հաղթել և նրանց քշել է «Ճորա կապան»-ից այն կողմ: «Այն կողմում» տեղի ունեցած ճակատամարտում հայկական զորքը նորից հաղթել է, բայց հայոց թագավորը «կորովի աղեղնավորների» ձեռքով սպանվել է[42]: Եթե Դերբենդը հայերի ամրություն և քաղաք չլիներ, ապա ինչու՞ նրանք պետք է վայրի ցեղերին դուրս մղեին դրանից այն կողմ: Եվ ի՞նչ իմաստ ուներ նրանց Դերբենդից այն կողմ քշել, եթե այդ ամրությունները չպատկանեին Հայաստանին:

---

[38] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 120-121:

[39] **Иосиф Флавий,** Иудейская война. С прим. К. А. Ревяко, В. А. Федосика**,** Минск,1991, с. 283; **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, «Հայպետհրատ», 1957, էջ 9-12, 57-58:

[40] **Кассий Дион,** Римская история, кн. VXIV-LXXX. Перевод с древнегреческого. Под ред. А. В. Махлаюка; комментарий и статья А. И. Махлаюка**,** СПБ, “Нестор-история”, 2001, LXXVIII, 27.4, с. 331. **Marquart J.,** Eranschahr, Berlin, 1901, էջ 102.

[41] **Marquart J.,** Eranschahr, Berlin, 1901, էջ 102.

[42] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 240-243:
Кассий Дион, նշվ. աշխ., էջ 331, **Marquart J.,** Eranschahr, Berlin, 1901, էջ 102.

Խորենացին նույն տեղում վկայում է նաև, որ Վաղարշ Երրորդ-Սանատրուկի որդի **Խոսրով Առաջինը**, իր ծնողի վրեժն առնելու համար, նույնպես «անցել է մեծ լեռը (Կովկասը), հաղթել այնտեղի «հզոր ազգերին», նրանցից պատանդներ վերցրել (հարյուրից մեկին) «և իբրև իր տերության նշան՝ հուներեն գրով մի արձան է կանգնեցնում, «որպէս զի հայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել հռոմայեցւոց»[43]**:** Այս վկայությունից պարզվում է, որ Կովկասի լեռնանցքները, այդ թվում՝ Դերբենդը, եղել է հայոց զորքերի հսկողության տակ: Այդ մասին վստահորեն նշում են Հ. Մանանդյանը և Գ. Խալաթյանցը՝ հղում անելով Թ. Մոմզենին[44]:

Ձենոբ Գլակի վկայությամբ նույնպես 4-րդ դարի սկզբին Դերբենդը և կովկասյան մյուս լեռնանցքները եղել են հայկական զորքերի հսկողության տակ[45]: «Դաշնաց թղթում» ևս վկայված է, որ Կոնստանտին Մեծը հայոց թագավոր Տրդատ Երրորդին և Գրիգոր Լուսավորչին 325թ. Հռոմ հրավիրելուց և նրանց հետ դաշինք կնքելուց հետո դրամական օգնություն է ցույց տվել՝ Դերբենդը հոներից և այլ հյուսիսականներից պաշտպանելու համար[46]: Դերբենդը Իրանին է անցել միայն 387թ. հետո՝ Հայաստանը Իրանի ու Բյուզանդիայի միջև բաժանելուց հետո: Այդ ժամանակվանից էլ Փայտակարանն ընդմիշտ անջատվել է Հայաստանից, մտցվել Իրանի կազմի մեջ և պաշտպանվել նրանց կողմից:

Պատմիչ Եղիշեի վկայությամբ Դերբենդը, որը նա կոչում է Դուռ, Հոնաց գունդ, Պահակ, Հոնաց պահակ՝ 5-րդ դարում արդեն եղել է իրանական ամրոց: Հոներն էլ բնակվելիս են եղել Դերբենդից հյուսիս և ոչ թե դրանից հարավ ընկած տարածքներում: Նշվում է նաև, որ Վարդան Մամիկոնյանը 451թ. պատերազմի նախօրյակին հարձակվել է Դերբենդի վրա և այն ավերել, որպեսզի հոները, որոնց հետ նա Իրանի դեմ դաշինք էր կնքել, կարողանան անարգել անցնել լեռնանցքը և հասնել հայոց զորքերին օգնության[47]: Պատմիչ Մ. Կաղանկատվացին ևս վկայում է, որ Տրդատ Երրորդ

---

[43] **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 242-243:

[44] **Մանանդյան Հ.,** քննական տեսություն..., հ.2, էջ 54, 59: **Халатянц Г.,** Очерк истории Армении**,** М., 1910, с. 319.

[45] **Յովհան Մամիկոնյան** (**և Ձենոբ Գլակ**), Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 46, 50, 53-54, 57-59:

[46] **Շահնազարյան Կարապետ,** Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ, 1862, էջ 71, 94:

[47] **Եղիշե,** Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, էջ 156, 260, 286:

հայոց թագավորը, Գարգարացիների դաշտում պարտության մատնելով հոներին, «նրանց քշել է մինչև հոների երկիրը»: Դա հոների դեմ պատերազմի նույն դրվագն է՝ նկարագրված Զենոբ Գլակի կողմից: Հասկանալի է դառնում, որ հոները քշվել են Դերբենդից այն կողմ[48]:

Հաջորդ ապացույցը, որ Դերբենդը, հետևաբար Ափշերոնյան թերակղզին ու նրա վրա գտնվող Աղջկա աշտարակը հայկական է, առկա է Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում: 842-րդ պարբերությունում նա հայտնում է, որ Գրիգոր Լուսավորիչը քարոզի միջոցով հայոց երկիրը «ծայրից ծայր», սկսած «Սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիր, Կղարջքի մոտ, ապա ընդհուպ մինչև Մազքուտների սահմանները, մինչև **Ալանաց դռները, Կասպից սահմանները և հայոց թագավորության Փայտակարան քաղաքը»,** հետո նաև այլ մարզեր, դրանց թվում Մարաց աշխարհը և Ատրպատականը, որոնք այդ ժամանակ մտնում էին Մեծ Հայքի մեջ, լիովին քրիստոնեացրել է[49]: Դերբենդի անունը չի տրվում, բայց հայոց հյուսիսային սահմանը՝ Ալանաց դռնով հանդերձ, որի ուղղությամբ է գտնվել նաև Դերբենդը, ներկայացված է լիարժեքորեն: «Գահնամակ»-ում հիշատակվում է **Դարբանդյաններ** կոչվող նախարարական տոհմը, որն այնտեղ 60-րդն է[50]: Հենց նրանք էլ եղել են Դերբենդ քաղաքի ու պաշտպանական կառույցների տերերը: Ոչ մի այլ ժողովուրդ չունի նման նախարարական տոհմ: Այսպիսով, եթե Դերբենդ ամրոցը, որը գտնվել է Մեծ Հայքի 11-րդ՝ Փայտակարան նահանգի հյուսիսում, եղել է հայկական, ապա դրանից հարավ ընկած տարածքները, այդ թվում Ափշերոնյան թերակղզին՝ իր պատմական հուշարձաններով հանդերձ, որոնցից է նաև Աղջկա աշտարակը, նույնպես եղել են հայկական:

Հանգամանքը, որ Ափշերոնի վրա և դրա շրջակայքում գտնվող սրբավայրերը, Աղջկա աշտարակը եղել են հայկական, և որ նման աշտարակներ եղել են նաև Հայաստանի այլ մասերում, հիմնավորվում է 9-10-րդ դարերի պատմիչ Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» երկի Զ (6-րդ) գլխի տվյալներով: Նա հայտնում է, որ հայոց Եդեսիայի մ.թ. 1-ին դարի թագավոր Անանունը Մեծ Հայքի Սանատրուկ (Տրդատ Առաջին – Ս. Խ.) թագավորի դեմ (մ.թ. 51-78թթ.) պատերազմելու ընթացքում սկսել է կառուցել մի

---

[48] **Մովսես Կաղանկատվացի,** Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, «Հայաստան», 1969, էջ 85:

[49] **Ագաթանգեղոս**, նշվ. աշխ., էջ 468-469:

[50] **Գահնամակ,** Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, 1976, էջ 663:

աշտարակ, որն ավարտին չհասած փլվել և տակովն է արել նրան: Փաստորեն, Անանունը կառուցելիս է եղել ոչ թե պաշտպանական նշանակություն ունեցող աշտարակ, այլ Աղջկա աշտարակի նման մի առանձին կառույց[51]: Արդյո՞ք այն փլվել է կառուցողների ոչ վարպետ լինելու պատճառով՝ հայտնի չէ, սակայն հենց դա կարող է լինել փլվելու հավանական վարկածը: Հարց է առաջանում, որ եթե մ.թ. 1-ին դարում, երբ ծաղկում էր զրադաշտական և հռոմեական ճարտարապետությունը, և երբ կառուցվում էին ամբողջ քաղաքներ ու ամրոցներ, օրինակ՝ Մծուրնը, իսկ Անանունի կողմից կառուցվող աշտարակը փլվել է, ապա ինչպե՞ս կարող էին սկյութները մ.թ.ա 8-րդ դարում կառուցել Աղջկա աշտարակը՝ կանգուն մինչև օրս: Ինչպիսի հիմարություն է պնդում Հ. Հասանովը: Հարց է առաջանում, թե ինչու պիտի Անանուն թագավորը կառուցեր Աղջկա աշտարակի նման տարօրինակ կառույց: Հարց, որը տրամաբանական է և ունի պատասխան, որ տրվելու է ստորև:

Թ. Արծրունին իր նշված երկի Ը գլխում գրում է, որ Վանա ծովակի ափին՝ Մասիք (Սիփան) լեռան դիմաց ընկած մի վայրում, հայոց Արտաշես Չորրորդ թագավորը՝ Տրդատ Առաջին-Սանատրուկի որդին, կառուցել է քաղաք, «որի վերևում աղբյուրն էր ցայտում: Ջրի պահպանության համար դարձյալ ամուր պարսպեց Մարգարիտ կոչվող քարաբլուրը, այն պատեց պատերազմողների համար ամուր, անմատչելի պարիսպներով: Հաճելի լինելու ու ապահովության համար **ծովի խորության մեջ գցեց պարիսպներ**: Իսկ երեք մասի ճյուղավորված փոքր ու գոգաձև հովտում, որ սկսվում է երեք բլուրներից, «**չինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն** (արձանը – Ս.Խ.) և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կռոցն. Կարգէ և յօրինէ ի նմա փողոցն վաճառոց ամենալիցս և բաւականս. Գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէն աղբիւր սակաւաբուղխ, որոյ ջրմուղ կազմեալ ածեալ հասուցանէ ի մեջ հովտին»: Այնտեղ, «ի բավականութիւն աչքաց», և ծովեզրին նա պարսպապատել է գոգավոր տարածություն, տնկել ծառաշատ ու վայելչատես այգիներ, կառուցել քաղաք, որը կոչել է **Արտամատ**, դրա մոտ կառուցեց նաև մի ամրոց, որը կոչեց «Զարդ, այսինքն՝ պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն…»[52]:

---

[51] **Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան, ԵՊՀ հրատ., Երևան, 1985, էջ 80-81:

[52] **Թովմա Արծրունի և Անանուն,** նշվ. աշխ., էջ 86-89, **Մարգարյան Հ.,** Արտաշես Ա. Արքայի Արտամատ քաղաքը՝ ըստ Թ. Արծրունու «Արծրունյաց տան պատմության», Լրաբեր հասարա-

Հասկանալի է, որ Արտաշես Չորրորդ Արշակունին եղել է զրադաշտական: Դա ակնհայտ է դառնում նաև Թ. Արծրունու երկի վերոնշված հատվածից: Պարզ է դառնում նաև, որ Վանա ծովակի ափին նա կառուցել է «**աշտարակ բարձրաբերձ՝ փորուածոյ միջոցաւ**», դրա կողքին՝ Արտամատ անունով քաղաքը և ամրոց, որը կոչվել է Զարդ: Դրանց շուրջ տնկվել են այգիներ և ծառաստան-պուրակ: Դրա նկարագրությունից պարզ է դառնում, որ 1. աշտարակը եղել է բարձրաբերձ, որը դրա գլխավոր հատկանիշներից է: 2. Բարձրաբերձ լինելու համար այն պետք է ունենար հաստ պատեր: Եվ, անկասկած, դրա պատերը եղել են հաստ: 3. Աշտարակի կողքին կամ մեջ եղել է աղբյուր, որը նույնպես նման աշտարակներին բնորոշ հատկանիշ է: 4. Այն եղել է «**փորուածոյ միջոցաւ**», այն է՝ սնամեջ, ինչպես Բաքվի Աղջկա աշտարակը: Անկասկած, դրա պատերի մեջ եղել են փորվածքներ կամ որմնախորշեր: 5. Աշտարակը եղել է տաճար և ոչ թե ռազմական օբյեկտ, աստղադիտարան, դիտակետ, թեև անհրաժեշտության դեպքում կարող էր նաև նման դերակատարություն ունենալ: 6. Այն սպասարկել են ինչպես քրմուհիներ, այնպես էլ քրմեր, որոնց բնակության համար մոտերքում կառուցված են եղել օթևաններ, ինչպես նաև «գանձատուն՝ կուռքերին հովանավորելու համար»: Իսկ գանձատունը ոչ միայն քրմական քաղաքի, այլև ընդհանրապես հայկական (և հունական) քաղաքի գլխավոր հատկանիշներից է: Դա նշանակում է, որ այն ունեցել է հաշվապահություն, դրամական և այլ միջոցների ելքի ու մուտքի հաշվառում, ծիսակարգերի, արարողությունների, հանդիսադիր խաղերի, տոների, գուսանական բեմադրությունների, ասմունքների, թվելյաց երգերի, թատերականացված ցուցքերի անցկացման ծրագիր, դրանց պատասխանատուներ, իսկ հանդիսատեսները կամ ուխտավորները վճարել են՝ դրանց ականատես կամ մասնակից լինելու համար, կամ էլ միջոցներ նվիրաբերել տաճարին: 7. Աշտարակից որոշ հեռավորության վրա կառուցված են եղել նաև շուկա և իջևանատուն, որոնք, ինչպես աշտարակը, եղել են քաղաք ձևավորող հիմնական օբյեկտները: Դա նշանակում է, որ այս աշտարակը ծառայել է նաև որպես ուխտատեղի, կառուցվել որոշակի տոների այնտեղ ուխտավորների ընդունելու և նրանց կարիքները բավարարելու համար: 8. Աշտարակ-տաճարի գլխին, ինչպես Բաքվի

կական գիտությունների, 2018, № 1, էջ 285-300: Այս հեղինակը ոչ միայն շփոթել է Արտաշես Չորրորդին Արտաշես Առաջինի հետ, այլև Վանա ծովակի ափին նրա կառուցած աշտարակի մասին պատկերացում իսկ չունի:

Աղջկա աշտարակի դեպքում է, կանգնեցված է եղել Անահիտ (Աստղիկ) դիցուհու արձանը: Եվ «Հելլենիստական դարաշրջանում «Աստղիկ» անունն արտացոլել է Անահիտ գերագույն աստվածուհու հատկանիշներից մեկը»[53]: 9. Աշտարակը կառուցված է եղել քարաբլուրի վրա՝ հովտի կենտրոնում, որը նույնպես դրա սրբության նշան է: Այն չի եղել հողի վրա կառուցված, քանզի հողը, ըստ զրադաշտական հավատալիքների, համարվել է սրբազան տարերք, և այդ տարածքը ոտքերով կոխկռտել չէր կարելի: 10. Հայկական-զրադաշտական բոլոր սրբավայրերը, ինչպես և սա, կառուցված են եղել սրբազան գետերի՝ Եփրատ-Արածանու, Արաքսի, դրանց վտակների և այլ գետերի վրա, ինչպես նաև ծովերի ու լճերի ափերին: Այդ կանոնը սահմանված և այդ մասին վկայված է Ավեստայի Անահիտ դիցուհուն նվիրված «Արդվի-Սուր Աբան-Յաշտ»-ի 101-102-րդ և այլ տներում[54]: 11. Ինչպես Բաքվի, այնպես էլ այս Աղջկա աշտարակի մոտ՝ Վանա ծովակի մեջ, կառուցվել են պարիսպներ:

Թ. Արծրունին նույն այդ Ը գլխում հիշատակում է այն մասին, որ Արտաշես թագավորը Զարդ ամրոցի կամ նշված աշտարակի մոտ տնկել է տվել «ծառաշատ, բազմապիսի ծաղիկների անուշ բուրմունքով լցված ծաղկավետ բուրաստան, որը ոչ միայն ախորժելի է աչքին և հաճելի հոտոտելիքին, այլև դեղեր ստեղծելու համար՝ համաձայն **Ասկլեպիոսի բժշկական հնարիմաց** վարդապետության»[55]: Թովմա Արծրունու կողմից նկարագրված Արտամատ քաղաքի անվանումը, ըստ որոշ աղբյուրների, Անահիտ աստվածուհու անվան տարատեսակներից է: Բացի դրանից՝ նշված քաղաքի և աշտարակի ավերակները մինչև վերջերս գտնվելիս են եղել Վանա լճի ափի այն հատվածում, որտեղ, ըստ Թ. Արծրունու, դրանք կառուցված են եղել[56]:

Համաձայն Ե. Բլավատսկայայի «Թեոսոֆիական բառարան»-ի՝ **Ասկլեպիոսը** եղել է կաբիրական գաղտնի ուխտի հովանավոր աստվածներից, իսկ բժիշկ Հիպոկրատը՝ կաբիր կամ կաբիրական: Նշվում է նաև, որ կաբիրների գաղտնի կազմակերպության անդամները եղել են ոչ միայն զանա-

---

[53] **Մարգարյան Հ.,** նշվ. հոդվածը, էջ 296:

[54] Авеста в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Санкт Петербург, 1998, с. 239; **Дадаян Х.,** Армяне и Баку (1850-ые гг. – 1920г.) Ереван, 2007.

[55] **Թովմա Արծրունի և Անանուն,** նշվ. աշխ., էջ 86-87:

[56] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4 հատորից, հ. 1, Երևան, 1986, էջ 490:

զան գաղտնի ծեսերով զբաղվող և անառակության տրված քրմեր ու քրմուհիներ, այլև կանխագուշակներ, աստղագետներ, գիտնականներ, ուսուցիչներ, բժիշկներ, դասավանդել զանազան գիտություններ[57]: Անկասկած է նաև, որ Թ. Արծրունին իմացել է կաբիրների ուխտի, Անանունի ու Արտաշեսի կառուցած աշտարակների նշանակության, ինչպես նաև այն մասին, որ Ասկլեպիոսը եղել է ինչպես բժիշկների ու կանխագուշակների, այնպես էլ կաբիրական ուխտի (միաբանության, օրդենի) հովանավոր աստվածներից: Այս ամենը հուշում է, որ ինչպես Եդեսիայի Անանուն թագավորի կառուցած, այնպես էլ Վանա ծովակի ափին գտնվող այս և Կասպից ծովի ափին գտնվող Բաքվի Աղջկա աշտարակները նվիրված են եղել Արամազդին, նրա վեց համշասպանդներին ու Անահիտին, եղել զրադաշտական-կաբիրական տաճարներ: Դրա մասին է վկայում նաև այն, որ Անանունը եղել է քրիստոնեահալած, իսկ Արտաշես Չորրորդը՝ ռեֆորմատոր, ինչպիսիք եղել են կաբիրները: Այսպիսով, այս և Բաքվի Աղջկա աշտարակների միջև ակնառու ընդհանրություններ կան: Իսկ կաբիրների մասին անդրադարձ է կատարվելու ստորև:

Հաջորդ ծանրակշիռ ապացույցը՝ վկայող այն մասին, որ Ափշերոնի թերակղզում գտնվող Աղջկա աշտարակը հայկական է, առկա է Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկի 22-րդ պարբերության մեջ: Համաձայն դրա, երբ հայոց Խոսրով (Խոսրով Երրորդ Մեծ Արշակունի) թագավորը վերադարձել է Իրանի դեմ Միջագետքում կատարած հերթական արշավանքից, ապա նա հրաման է տվել «...ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել հրովարտակս առնել, **յօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման:** Սպիտակ **ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորւովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք,** ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ մետաքսիւքն և ոսկուք պսակօք և **արծաթի զոհարանօք,** յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդիս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր: Նա և հինգերորդ ևս հանէր յամենեայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր: Իսկ զորքցն որ զիւրեաւն էին, ետ պարգևս և արձակեաց

[57] **Блаватская Е. П.,** Теософский словарь**,** Изд. 2-е. М., «Сфера»,1994, Электронный вариант, с. 13-14, 130, 251-252.

յիւրմէ»[58]: Այսպիսով, վերադառնալով պարսկական արշավանքից (մ.թ. 3-րդ դարի կեսեր), հայոց այս թագավորը երկրի բոլոր կողմերը հրովարտակներ է հղել՝ կարգադրելով ուխտագնացություն կատարել դեպի յոթ բագիններ ունեցող մեհյան և պաշտամունք կատարել դրանում գտնվող յոթ դիցերի կուռքերին, նրանց պատկերներին:

Պատմաբան Ս. Պետրոսյանը, հետևելով Ս. Երեմյանին, Ագաթանգեղոսի երկի տվյալ հատվածում առկա «յոթ բագիններ»-ի մասին այս հաղորդումից եզրահանգում է կատարում, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Գաբառու Բագինք կոչված կրակապաշտական սրբավայրին, որը գտնվելիս է եղել կամ տեղադրելի է սովետահիրանական (այժմ՝ ադրբեջանահիրանական) սահմանի մոտ գտնվող Кабирры (Գաբառու) կոչվող կուրգանի մոտերքում: Եվ որն էլ իր հերթին գտնվելիս է եղել Փայտակարանի կողմնակալություն (պետք է նշել, որ այս հեղինակը Փայտակարանի տեղորոշման հարցում լիովին սխալվում է)[59]: Ի՞նչ է նշանակում և ինչու՞ է այն կոչվում «Кабирры-Գաբառու կուրգան», ինչու «Գաբառու» կամ կաբիր՝ նա չգիտի: Նրան պարզ է միայն, որ այն եղել է զրադաշտական տաճար: Ագաթանգեղոսի նշածն էլ կարող էր լինել ոչ թե և ոչ միայն Արաքսի և Կասպից ծովի ափին գտնվող «Գաբառու» կամ «կաբիր» տաճարը, ինչպես որ կարծում է Ս. Պետրոսյանը, այլ նաև Փայտակարանի Ափշերոնյան թերակղզում գտնվող Յոթնփորակյան բագինքը կամ Աղջկա աշտարակը, Աշտիշատի, Վանա ծովի մոտ և այլուր գտնվող տաճար-աշտարակները:

Հարց է նաև, թե արդյոք Ագաթանգեղոսի երկի տվյալ հատվածում խոսքը վերաբերում է մեկ յոթնփորակյան Բագինք-մեհյանի՝ նվիրված յոթ կուռքերի, թե յոթ մեհյանների՝ նույնպես նվիրված յոթ կուռքերի, որոնցից ամեն մեկն ունեցել է յոթ բագիններ (արձաններ) տեղադրելու որմնախորշեր և յոթ բագիններ, ինչպես որ է Բաքվի և Վանա ծովակի ափին գտնվող «Աղջկա աշտարակ»-ների դեպքում: Եվ դրանից ամեն մեկի գագաթին կանգնեցված է եղել Անահիտի արձանը (բագինը): Հայտնի է, որ զրադաշտական աստվածների ու աստվածուհիների թիվը ոչ թե 7-ն է, այլ 28-ը, և նրանցից ամեն

---

[58] **Ագաթանգեղոս,** Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 26, 28, **Агатангелос,** История Армении. Перевод с древнеармянского на русский язык, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна**,** Ереван, 2004, с. 30-31.

[59] **Պետրոսյան Ս. Գ.,** Փայտակարանը և Պարսպատունիքը մ. թ. I դարի երրորդ քառորդում, ՊԲՀ, 1975, № 2, էջ 178, **Երեմյան Ս. Տ.,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 51:

մեկին Հայաստանում նվիրված են եղել բազմաթիվ մեհյաններ ու բագիններ: Իսկ այստեղ խոսքը «**յօթն բագինս մեհենիցն**» կամ յոթը յոթնփորակյան (կաբիրական) բագինների մասին է՝ նվիրված աստվածահայր Արամազդին, նրա վեց համշասպանդներին (Ամեշա-Սպենտաներին) ու Անահիտ դիցուհուն: Դրանք են՝ Բաքվի Աղջկա աշտարակը, Վանա ծովակի ափին Արտաշես Չորրորդ թագավորի կառուցածը, Արաքսի գետաբերանի մոտ և Կասպից ծովի ափին գտնվող Կաբիրի-Գաբառուն, Դարբնած քարը, որն իր նկարագրությամբ լիովին նման է կաբիրական տաճար-աշտարակներին, Հայոց Ատրպատականի Ատր-Գուշնասպ, Աշտիշատում գտնվող և Անահիտի անունով հայտնի մեհյանը՝ հար և նման Բաքվի աշտարակին, Անի Կամախում գտնվածը: Կարելի է նաև կարծել, որ Բաքվի Աղջկա աշտարակը երևի դրանցից ամենահինը և ամենասրբազանն է, քանզի գտնվելիս է եղել անմար կրակների մոտ: Գուցե այն, ինչպես նաև Սեբաստիայի մոտ գտնվողը, Ատր-Գուշնասպը, Աշտիշատինը և Կաբիրի-Գաբառուն կառուցված են եղել մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերին: Այդ հարցը կարելի է լուծել միայն փորձաքննությամբ: Սակայն այս զուգահեռները ապացույց են այն բանի, որ Բաքվի Աղջկա աշտարակը հայկական է: Եվ չի կարող թուրքական լինել:

Որ Բաքվի Աղջկա աշտարակը հայկական է, հիմնավորվում է նաև հետևյալով. Ագաթանգեղոսն իր երկի 809-813-րդ պարբերություններում հայտնում է, որ երբ Գրիգոր Լուսավորիչը հետ է դարձել «հունաց կողմերից» (Կեսարիա քաղաքից, որտեղ **եպիսկոպոս** էր օծվել) և հասել Տարոն, ապա լսել է, որ Արածանի գետի ափին՝ Քարքե լեռան գագաթին գտնվող «յաճախաշատ պաշտաման տեղում»՝ Աշտիշատում՝ ծառայող նաև «յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց», դեռևս շեն են մնացած եղել գանձերով լի «երեք բագինք»: Դրանցից մեկը կոչվել է Վահագնի անվամբ, երկրորդը՝ «Ոսկեմօր, Ոսկեծին դից, և բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից, և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, սենեակ Վահագնի կարդացեալ…»: Այս պարբերության իմաստն աղարտված է: Մեհյան և բագին հասկացությունների շփոթմունք և նույնացում կա: Պարզ չէ նաև, թե ինչու է Անահիտ դիցուհու անվան **մեհյանը** կոչվում **«Ոսկեմօր, Ոսկեծին դից»,** որից հետո էլ հիշատակվում է նրա բագինը՝ արդեն կոչվող **«Ոսկեհատ Ոսկեմօր դից»:** Այդ հանգամանքից կարելի է գալ հետևության, որ Անահիտի մեհյան կոչվածն իրականում եղել է ոչ թե Անահիտի, այլ կաբիրական աշտարակ՝ նվիրված Արամազդին ու նրա վեց համշասպանդներին: Անահիտի բագինն (արձան) էլ կանգնեցված է եղել այդ աշտարակ-մեհյանի

գագաթին, ինչպես որ եղել է Վանա ծովակի և Բաքվի աշտարակների դեպքում: Եվ Աշտիշատի աշտարակ-մեհյանը Անահիտի անունով է կոչվել, քանզի դրա գագաթին կանգնեցված է եղել Անահիտ դիցուհու բագինը: Այդպիսի շփոթմունք առկա է Բաքվի Աղջկա աշտարակի անվան դեպքում:

Ակնհայտ է նաև, որ եթե Աշտիշատում չգտնվեր Արամազդ աստվածահոր և նրա վեց համշասպանդների աշտարակ-մեհյանը, ապա ինչպե՞ս կարող էր այդ տաճարական քաղաքը դիտվել որպես «պաշտամունքի ութերորդ հռչակավոր վայր», Մեծ Հայքի թագավորների զոհեր մատուցելու տեղ, ինչպես որ կոչվում է Ագաթանգեղոսի երկում: Որ այնտեղ գտնվող Անահիտի արձանով մեհյանը իրականում եղել է կաբիրական աշտարակ-մեհյան՝ նվիրված Արամազդին ու նրա վեց համշասպանդներին (նաև Անահիտին), ապացուցվում է նաև հետևյալով. Ագաթանգեղոսը գրում է, որ Գրիգոր Լուսավորիչը, հասնելով Աշտիշատ, «հրաման է տվել զորականին ու իր հետ եղած իշխաններին՝ ելնել (բարձունք – Ս.Խ.) և մուրճերով տապալել **բագինների շինվածքը**: Նրանք ելնելով շատ ջանացին, բայց չկարողացան բագինների դռները գտնել, որ ներս մտնեն, քանի որ դևերը նրանցից ծածկեցին (դրանք): Դրսից ջանացին, սակայն երկաթը չներգործեց այնտեղ...»: Այնուհետև Գրիգորն առել է տերունական խաչը, «և ելեալ ի ձորակէն եկեաց յանդիման **բարձրաբերձ տեղացն շինուածոցն** և ասէ. «Հրեշտակ քո, Տէր, հալածեսցէ զնոսա»: Նրա խաչից հողմ է բարձրացել, որի ուժով «ընկէց **զամենայն շինուածսն բագնացն**»[60]: Այսպիսով, այնտեղ գտնվող բագինների շինվածքներից մեկը՝ բարձրաբերձ տեղում կառուցված, կարող էր և եղել է Արամազդին ու նրա վեց համշասպանդներին նվիրված աշտարակ, որն էլ իր պատերի հաստության, բարձրության և կրաշաղախով ու քարով կառուցված լինելու պատճառով հնարավոր չի եղել կործանել: Եվ դա այն դեպքում, երբ կործանողները եղել են տեխնիկական միջոցներով զինված, երևի սակրավորներ: Եվ միայն հրաշքով է այն կործանվել: Դրանից կարելի է մտահանգել, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Արամազդին ու նրա վեց համշասպանդներին նվիրված կաբիրական մեհյան-աշտարակին, որի գագաթին կանգնեցված է եղել նման շինության համար պարտադիր Անահիտի արձանը: Եվ չէր կարող նման նշանավոր տաճարական քաղաքում Արամազդին նվիրված մեհյան-աշտարակ չլինել: Հինվորներին էլ չի հաջողվել դրան վնաս տալ, և դա ոչ միայն այն պատճառով, որ այն եղել է դժվարա-

[60] **Ագաթանգեղոս**, նշվ. աշխ., էջ 454-455:

մատույց, այլև դրա պատերը եղել են հաստ, այն եղել է բարձրաբերձ և կառուցված քարով ու կրաշաղախով: Դրա դռներն անգամ նրանք չեն կարողացել գտնել, որ մտնեն և ներսից քանդեն: Իսկ դա նույնպես վկայում է, որ այն եղել է սնամեջ: Այդ ամենը ևս առանձնահատկություններ են, որոնցով այն նմանվում է Բաքվի Աղջկա աշտարակին, պատկանում ճարտարապետության նույն ոճին:

Որ Աշտիշատի նշված մեհյանը եղել է կաբիրական աշտարակ՝ միաժամանակ նվիրված նաև Անահիտ դիցուհուն, հաստատվում է Փ. Բուզանդի երկի երրորդ դպրության ԺԹ գլխի տվյալներով: Դրանում ասված է. «Այլ որդիքն Յուսկանն, Պապն և Աթանագենէս, զաստուածատեցութեանն զկեանս իւրեանց վարէին. յանօրենութեան և **յամբարշտութեան** շրջէին: Եւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ի մեծի **յանդգնութեան** էին, և ոչ երկեւղ աստուծոյ առաջի աչաց նոցա. և **ի բազում անառակութեան** և ի **գիջութեան** գնային, և զկարգն աստուծոյ արհամարհեալ այպանէին»[61]: Ինչպես տեսնում ենք, այս երիտասարդներին Բուզանդը համարում է անօրեն և ամբարիշտ և ոչ քրիստոնյա, այլ զրադաշտական: Այնուհետև նա պատմում է, որ Պապն ու Աթանագինեսը եկել են Աշտիշատ նախկին տաճարական քաղաք, և այնտեղ գտնվող եկեղեցու եպիսկոպոսանոցում, բազում անգամներ տրվելով «արբշռության» (շվայտության, զեխության, հարբեցողության), գինի են խմել և խնջույք-օրգիաներ կազմակերպել «բոզերի, վարձակների, գուսանների և ծաղրածուների հետ»: Եվ օրեր շարունակ տրվել «բազում անառակության» ու գիջության: Անառակության առթիվ պետք է նշել, որ այդ բառով «Հաճախապատում ճառք»-ում լայն իմաստով արտահայտված են «սովորական» սեռական բնույթի բոլոր հանցագործությունները՝ պոռնկությունը, բոզությունը, շնությունը, արյունապղծությունը, այն է՝ մոր, քրոջ, թոռնուհու, քրմուհիների, ուխտավոր կանանց հետ լինելը, որոնք ուղեկցվում էին ծիսական պարերով, երգերով ու աղոթքներով, երաժշտականացված թատերական տեսարաններով ու ցուցքերով: Մեր համապատասխան աշխատության մեջ բացահայտվել է նաև գիջության իմաստը: Այն ծիսական ձեռնաշարժություն է՝ նվիրված կրքոտ Անահիտ դիցուհուն: Սերմնահեղուկը հեղվել է նրա պատվին[62]: Պատահական չէ նաև, որ նրանք խնջույքներ են կատարել Աշտիշա-

[61] **Փավստոս Բուզանդ,** Հայոց Պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 76-77:

[62] **Խաչատրյան Ս. Ա.,** Գիջությունը որպես հին հայկական զրադաշտական և քրիստոնեական իրավունքի նորմ, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, № 1, 2015, էջ 495-519:

տում՝ նախկին զրադաշտական սրբավայրում: Իսկ նրանց կատարածը փաստորեն եղել է կաբիրական ծես, որում կանայք՝ վարձակ-պարուհիներ, երգչուհիներ, ցուցքեր կատարողներ, ուխտավոր ազնվական և ոչ ազնվական կանայք, նրանց նաժիշտները, հանդես են եկել Անահիտ աստվածուհու, նրա քրմուհիների դերերում, իսկ տղամարդիկ՝ Արամազդի, նրա համշասպանդների, Արամազդի ու Անահիտի որդի-աստվածների՝ Վահագնի, Միհրի, Ռաշնի, Սրոշի և այլոց դերերում, կատարել հատուկ պարեր, որի համար էլ կոչվում են ծաղրածուներ, իսկ նրանց կատարած պարաշարժումները՝ ծաղրածուներին վայել: Չպետք է մոռանալ, որ Հուսիկ կաթողիկոսի որդիներ Պապն ու Աթանագենեսը եղել են զինվորականներ, և կարելի է ենթադրել, որ նրանք և նրանց ուղեկիցները օրգիաներին ներկայացել են զինված, ինչպես պահանջվում է կաբիրական ծեսերի ժամանակ: Դա հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ նրանց ուղեկիցները կոչվում են «տաճարակիցք», «ուրախակիցք» և «բազմականակիցք»: Այդպես Բուզանդը շեշտում է նրանց ոչ միայն զրադաշտական, այլև կաբիրական ուխտի անդամ լինելու հանգամանքը: «Ուրախակիցքներ» են կոչվել զրադաշտական, հատկապես կաբիրական համայնքին պատկանողների համակեցությունը, ինչպես նաև զրադաշտական երկնային թագավորությունում գտնվող առաքինի զրադաշտականների հոգիների հասարակությունը: «Բազմականակիցք» բառի տակ էլ կարելի է ենթադրել, որ խնջույքի ու ծեսերի կատարման համար հավաքված է եղել բավականին մեծ, երկսեռ բազմություն: Եվ նրանց այդ հավաքը փաստորեն եղել է Աշտիշատում կատարվող կաբիրական ծես:

Բուզանդը նշում է, որ նրանք այնտեղ խնջույքներ են կատարել շարունակաբար («բազում հատեալ յարբշռութիւն»)՝ այդ ընթացքում տրվելով սեռական որոշակի հաճույքների և հարբեցողության, այդ թվում՝ գիջության: Դրա հասցեատերը եղել է Անահիտ դիցուհին: Սերմնահեղուկն էլ հեղվել է նրա պատվին: Իսկ դա նոր նրբագիծ է կաբիրագիտության մեջ: Այս ամենն էլ նորից վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում խոսքը ոչ թե սոսկ զրադաշտականների, այլ կաբիրականների միաբանության անդամների կողմից կաբիրական ծեսեր կատարելու մասին է: Այս ամենով նույնպես ապացուցվում է, որ Աշտիշատում նույնպես եղել է «Աղջկա աշտարակ», այսինքն՝ տաճար՝ նվիրված Արամազդին և նրա վեց համշասպանդներին, իսկ նրա գագաթին կանգնեցված է եղել Անահիտի արձանը: Անահիտի կապն էլ կաբիրական աշտարակի հետ լրացուցիչ կերպով ապացուցվում է նաև Փ. Բու-

զանդի երկի վերոնշված ԺԹ գլխի տվյալներով: Այս ամենն էլ նույնպես ապացույց է այն բանի, որ Բաքվի Աղջկա աշտարակը նույնպես հայկական է:

Հերոդոտոսի հայտնի երկում քանիցս հիշատակվում է «կաբիր» անվանումը և կաբիրական ուխտը: Նրա երկի հայերեն թարգմանության մեջ այն կոչվում է «կաբեյր»: Նա համարում է, որ կաբիրական ծեսերը պելասգներից ընդօրինակվել և դեռևս կատարվում են սամոթրակիացի կղզիաբնակների կողմից: **Նրանք նաև Հերմես աստծուն են պաշտել, որը պատկերված է եղել ձգված առնանդամով:** Աթենացիները նրանցից են ընդօրինակել Հերմեսի արձանի այդ ձևը: Պելասգցիներին էլ այդ կաբիրական ծեսերը և աստվածների կողմից շատ անուններ ունենալը **պատվիրել է բարբարոսներից փոխառել** Դոդոնեում գտնվող Զևսի (Հայաստանում՝ Արամազդի – Ս. Խ.) տաճարի պատգամախոսը, որը հնագույնն է Հունաստանում: Եվ որում պատգամախոսել են քրմեր և քրմուհիներ[63]: **Այսպիսով, փաստվում է, որ կաբիրական ծեսերը ընդօրինակված են բարբարոսներից**: Հաջորդ էջերում Հերոդոտոսը նկարագրում է կաբիրական-ծիսական զանգվածային տոնախմբություններ՝ կատարվող եգիպտական քաղաքներում, որոնց ընթացքում կանայք նաև բարձրացրել են իրենց զգեստների փեշերը, որից հետո կատարվել են սեռական բնույթի խառնակություններ (գլ. 64)[64], ինչպիսիք փաստորեն կատարվել են նաև Աշտիշատում: Այսպիսով, հիմնավորվում է, որ այնտեղ կատարվող խնջույքները, գիջությունը և այլն, իսկապես էլ եղել են կաբիրական ծեսեր:

Ստրաբոնը նույնպես քանիցս հիշատակում է կաբիրներին, նրանց աշտարակներն ու ծեսերը: Իր հայտնի երկի 7-րդ գրքի պատառիկներից մեկի 50-րդ ենթագլխում նա հիշատակում է կաբիրներին՝ նշելով, որ «աստվածներին՝ պաշտվող Սամոթրակիայում, շատերը նույնացնում են կաբիրների հետ, բայց դրա հետ միասին չեն կարողանում բացատրել, թե ովքեր են նրանք՝ կաբիրները, ինչպես նաև կիրիբանտները և կորիբանտները. ինչպես նաև՝ կուրետները և Իդեյական դակտիլները, նույնացվող նրանց հետ»[65]: Այնուհետև նա նույն երկի 11-րդ գրքի 3-րդ գլխում, հիշատակելով կաբիրների կրոնական համայնքի ու նրանց ծեսերի մասին, **հայտնում է, որ կաբիրա-**

---

[63] **Геродот,** История. В 9-ти кн. Пер. с греч. Л., «Наука», 1972, с. 96-97, **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 109:

[64] **Геродот,** История, В 9-ти кн., էջ 100:

[65] **Страбон,** նշվ. աշխ., էջ 310-311:

կան համայնքներ կամ միաբանություններ եղել են և կան նաև Փոքր Հայաստանի, Կապադովկիայի և Պոնտոսի տարածքներում: Նա հայտնում է նաև (նույն 3-րդ գլխի 7-րդ ենթագլխում), որ Փռյուգիայում և Կիպրոսում եղել են ինչ-որ կուրետական (կաբիրական – Ս.Խ.) սրբազան ծեսերի հետևորդներ՝ կատարող սատիրների, վակխերի և տիտիրների նման ծիսական պարեր և մասնակցող օրգիաների՝ կապված դեռահաս **Զևսի ծննդյան, դաստիարակության հետ և ի պատիվ աստվածների մոր**...: Նրանք ներկայանում են որպես մարդիկ՝ աստծուց ներշնչված և վակխական խելահեղությամբ խոցված: Աստվածությանը ծառայողների կերպարանքով սրբազան ծեսերի կատարման ժամանակ նրանք սարսափեցնում են մարդկանց **ռազմական պարերով՝ կատարվող լիակատար զինված վիճակում և ուղեկցվող ծնծղաների աղմուկով... ու աղաղակներով**: Եվ որ...աստվածային ծառայողներն այդ տեղերում կոչվում են նույն (աստվածների) անուններով»[66]:

Նույն գրքի 15-րդ գլխում Ստրաբոնը նկարագրվում է կաբիրների կրոնական ծեսը՝ «ուղեկցվող ֆլեյտաների, ծնծղաների, թմբուկների **խրախուսող և հրճվանք արտահայտող աղաղակներով և ոտքերի դոփկյուններով, զանազան անուններ հնչեցնելու հետ**»: Անուններ, որոնցով նրանք ոգեկոչել են աստվածներին (Արամազդին, նրա վեց հիպոստասներին, նրանց ուղեկից հրեշտակներին, Անահիտ դիցուհուն ու նրա շքախմբի կանանց, Աստղիկ, Նանե դիցուհիներին), երգչախմբի անդամներին և սրբազան ծես կատարողներին՝ Կաբիրներին, կարիբանտներին, պաներին, սատիրներին և տիտիրներին: Նրանք աստված են կոչել Վակխին, Ռեային՝ Կիբելա Կիբեբոային և Դինդիմինային՝ ըստ նրանց պաշտամունքի վայրերի»[67]: Նույն տեղում Ստրաբոնը հնարավոր է համարվում, որ կաբիրական ծեսերը հույներին են անցել **ասիական ժողովուրդներից, որի համար հիմնավորումներ են բերվում:** Հայտնվում է նաև, որ կաբիրական տոները նման են Դիոնիսիոսի միստերիաներին և տարածված են եղել Ասիայից մինչև Հնդկաստան: Եվ որ «այդ դևերի **բազմատեսակ անուններից** կարելի է հետևցնել, որ նրանք կոչվել են ոչ միայն աստվածներին ծառայողներ, այլև իրենք իրենց են համարել աստվածներ: Նրա այս հիշատակումից կարելի է հանգել հետևության, որ այդ «դիվական պաշտամունք»-ը, որն իրականում կաբիրական-զրադաշտական է, նվիրված է եղել Արամազդին: Այդ նա է

[66] **Страбон.** նշվ. աշխ., էջ 443.
[67] **Страбон**, նշվ. աշխ., էջ 447:

ունեցել բազմաթիվ անուններ: Ըստ Ավեստայի «Օրմազդ-յաշտ»-ի՝ նրա անունները 72-ն են, այլ տվյալներով՝ ավելի շատ[68]: Նրա օրինակով բազմաթիվ անուններ են տրված եղել նաև Անահիտին, նրա զավակներին, սրբության աստիճանի հասած նրա քրմերին: Հետևելով այդ տրադիցիային՝ Գրիգոր Լուսավորիչն իր «Հաճախապատում ճառք»-ի առաջին երկու ճառերում Քրիստոսին տալիս է շուրջ 70 անուններ[69]:

Հաստատվում է նաև, որ Փոքր Հայաստանում և դրան հարող հռոմեական մարզերում՝ բնակեցված **հայերով, եղել են կաբիրական համայքներ, որոնց անդամները՝ կաբիրներ կամ գաբարներ և կաբիրուհիներ, կատարել են յուրահատուկ ծեսեր, ծիսական պարեր և օրգիաներ՝** նվիրված Զևսի (Արամազդի) ծննդյան օրվան, ներկայացրել տեսարաններ նրա դաստիարակության պրոցեսների, էպիզոդների մասին և ի պատիվ աստվածների մոր՝ Անահիտի: Ստրաբոնը նույն երկի 21-րդ գլխում հայտնում է նաև, որ Կաբիրները, կուրետները և կորիբանտները նույնություն են, նրանք «եղել են երիտասարդ մարդիկ և պատանիներ, որոնց հրավիրել են ռազմական պարեր կատարելու՝ **աստվածների Մոր պատվին կատարվող տոներին**»: … Եվ որ նրանք «պարային մաներայով քայլել են և **գլխով հարու տվել**»[70]: Ստրաբոնը չի նշում, թե երբ են դրանք կատարվել, բայց համեմատելով Ագաթանգեղոսի երկի 22-րդ պարբերության հետ՝ կարելի է գալ հետևության, որ դա կատարվել է հունվարի սկզբին, երբ զորքը վերադարձած է եղել հաղթական արշավանքից, և որ դրա տղամարդ մասնակիցները եղել են զինվորականներ, որոնք կատարել են ռազմական պարեր (օրինակ՝ քոչարի) և դրա ընթացքում աղաղակել:

Ստրաբոնը նաև հայտնում է (գիրք 12-րդ, գլ. 30-31-րդ), որ Պոնտոսում, այն է՝ Հայկական Խաղտիքում և Փոքր Հայքում, կան տեղանք և տաճարական համալիր՝ կոչվող «Կաբիրներ»: «Կաբիրները գտնվում են Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտում: Կաբիրներում է գտնվել Միհրդատի պալատը»[71]: Սա բացառիկ նշանակություն ունեցող տեղեկություն է և նշանակում է, որ հռոմեացիների դեմ անզիջում և պերմանենտ կերպով պատերազմ մղող Փոքր Հայքի և Խաղտիքի թագավոր Միհրդատ Վեցերորդ Եվպատորը իր

---

[68] Авеста в русских переводах (1861-1996). Санкт Петербург, 1998, էջ 162-172.

[69] Հաճախապատում ճառք//Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 7-17:

[70] **Страбон**, նշվ. աշխ., էջ 450:

[71] **Страбон,** նշվ. աշխ., էջ 443.

երկրում գտնվող և գործող կաբիրական տաճարների մոտակայքում ունեցել է պալատ: Իսկ դա կապ է այս թագավորի ու կաբիրական քրմական ուխտի (օրդեն), նրանց ռազմական և այլ բնույթի ծեսերի հետ: Դա նշանակում է նաև, որ այդ ծեսերը եղել են հայկական թագավորական պաշտոնական ծեսեր՝ կապված թշնամու դեմ տարած հաղթանակների և հաղթական Արամազդ աստծու ծննդյան օրվա, նրա վեց հիպոստասների և նրա դուստր ու կին Անահիտի հետ: Եվ հայոց Խոսրով Երրորդ թագավորի կոչը՝ ուխտի գնալ և տոներ կատարել յոթնփորակյան բագիններում, առաջին հերթին Ափշերոնի տարածքում գտնվող և հետագայում «Աղջկա աշտարակ» կոչված բագինքում այն տոնելու, այս նույն կաբիրական ռազմական տոների կապակցությամբ է եղել: Դրանով հաստատվում է նաև, որ Խոսրով Երրորդ Մեծը զինվորականներին հրավիրել է կաբիրական ծեսերի մասնակցելու:

Նույն երկի 12-րդ գրքի 1-ին գլխի 29-րդ ենթագլխում Ստրաբոնը հայտնում է նաև, որ Փոքր Հայաստանի շրջաններից մեկում՝ Ֆանարեայում, գտնվող Պարիադրես (Պարխար) լեռների լանջերին, Հայաստանից հոսող Լիկոս, ինչպես նաև Ամասիա քաղաքի կիրճից հոսող Իրիդ (Իրիս) գետերի միախառնման տեղում կա մի քաղաք, որը կառուցել և իր անունով Եվպատորիա է կոչել Միհրդատ Եվպատորը[72]: Հասկանալի է, որ քաղաքը եղել է զրադաշտական-հայկական, քանզի կառուցվել է հայոց թագավորներից մեկի կողմից, գտնվել Փոքր Հայաստանում՝ երկու գետերի միախառնման տեղում[73]: Ըստ Ավեստայի («Արդվի-Սուր Անահիտ» յաշտ, 101-104, 108, 112 տներ)՝ փաստորեն հայոց բոլոր սրբազան քաղաքներն ու տաճարները, ինչպես սա, կառուցված են եղել սրբազան գետերի՝ Եփրատի, նրա վտակ Արա-

---

[72] Երբեմն Միհրդատ Եվպատորը ներկայացվում է որպես ինչ-որ անորոշ ազգության, առավելապես հույների և վերջիններիս պատկանող երկրի՝ Պոնտոսի, թագավոր: Դա խորապես հակասում է պատմական ճշմարտությանը: Նա եղել է պարթև և Արշակունի, հայերի ու նրանց երկրի թագավոր, իսկ նրա զորքի զինվորները եղել են հայեր: Այլ որևէ ժողովրդից սերած թագավորը և զինվորները, հատկապես հույները, այդքան համառ և երկարատև պատերազմ չէին մղի հռոմեացիների դեմ: Նման փաստ որևէ տեղում և ժամանակ չի գրանցվել: Փոքր Հայքում և հայոց Խաղտիքում ապրել են նաև հույներ, բայց նրանք եղել են եկվորներ: Պետք է նաև նշել, որ Ստրաբոնն ամեն կերպ ձգտում է Կապադովկիան և Պոնտոսն առավելապես հունա-հռոմեական ներկայացնել և ոչ թե հայկական:

[73] Ըստ Երեմյանի գծած քարտեզի՝ «Կաբիրիա» քաղաքը գտնվում է ոչ թե Լիկոս և որևէ այլ գետի խառնման տեղում, այլ մինչև Լիկոսի կամ Գայլի մեկ այլ գետի հետ խառնվելը, դրա մի ոլորանի վրա: Տե՛ս «С.Т. Еремян. Атлас к книге «История Армянского народа». Ереван, Айпетрат, 1952»:

ծանիի (Արդվի-Սուր), Արաքսի, Հրազդանի, և այլ գետերի ոլորանների վրա, դրանց միախառնման տեղերում, ծովերի ու լճերի ափերին[74]: Հետագայում Եվպատորիան Պոմպեոսի կողմից վերանվանվել է **Մագնոպոլիսի**: Հայտնվում է նաև, որ «Այդ քաղաքը (Մագնոպոլիսը – Ս.Խ.) գտնվում է հարթության մեջտեղում, իսկ **կաբիրները** (տաճարական համալիր և տարածք – Ս.Խ.)՝ Պարիադրես լեռների ստորոտում, Մագնոպոլիսից 150 ստադիա դեպի հարավ: Կաբիրներում կառուցված է եղել Միհրդատի պալատը, ջրաղաց, գազանանոց: Դրանց մոտ եղել են որսորդական տեղեր...»: Այնուհետև նշվում է, որ կաբիրական տեղանքից (տաճարական համալիրից – Ս. Խ.) մոտ 200 ստադիա հեռավորության վրա գտնվում է, «այսպես կոչված, **Կենոն Խորիոն** (ըստ ծանոթագրության «նոր տեղ») կառույցը: Այն (պարիսպներով – Ս.Խ.) ամրացված կախովի ժայռի վրա է, որի գլխին բխում է հորդառատ աղբյուր, իսկ դրա տակ հոսում է գետը՝ խոր անդունդով...: ժայռի բարձրությունը լեռնագագաթներից ահռելի բարձր է և անմատչելի: Այն **շրջապատված է զարմանալի պատով,** որի մի մասը քանդվել է հռոմեացիների կողմից»: Նշվում է նաև, որ այդ կառույցին ավելի մոտիկ, ոչ ավելի քան 120 ստադիայի չափով, հնարավոր չէ ճամբար խփել, քանի որ այն շրջապատված է անանցանելի անտառներով, քարոտ և ավազոտ տեղերով: Այսպիսով, բոլոր հատկանիշները կան հաստատելու, որ Կենոն Խորիոնը եղել է կաբիրական աշտարակ, ընդ որում՝ բարձրաբերձ, անմատչելի և սրբազան նշանակություն ունեցող, ինչպես նաև բնակավայրերից ու տաճարական քաղաքներից հեռու, որը դրա հատկանիշներից է: Ափշերոնյան թերակղզու և Վանա ծովակի ափին գտնվող ու արդեն նկարագրված աշտարակները նույնպես քաղաքներից որոշ հեռավորության վրա են գտնվել:

Հայտնվում է նաև, որ **Կենոն Խորիոնում** են պահվել նաև Միհրդատ արքայի ամենաթանկ գանձերը, որոնք «հափշտակել է Պոմպեոսը, և նվիրաբերել Կապիտոլիումին»: Քանի որ Հռոմի կապիտոլիում բլրի վրա է գտնվելիս եղել Յուպիտերի՝ հռոմեական պանթեոնի գլխավոր աստծու տաճարը և արձանը, ապա պարզ է, որ այդ գանձերը կողոպտվել, տարվել են Հռոմ և նվիրաբերվել Արամազդին համարժեք համարվող աստվածահայր Յուպիտերին: Իսկ դա ևս ապացույց է այն բանի, որ Պոմպեոսի ավերած և կողոպտած Կենոն Խորիոն աշտարակն իսկապես էլ նվիրաբերված է եղել Արամազդին, նրա հիպոստասներին, ինչպես նաև Անահիտին:

[74] Авеста в русских переводах (1861-1996), էջ 239-241:

Ե. Բլավատսկայան իր «Թեոսոֆիական բառարան»-ում բազմիցս հիշատակում է «կաբիրներ» կամ «կաբեյրներ» կոչվող կրանական խորհրդավոր համայնքները և դրա առաջաբանում նշում, որ նրանք եղել են **«հզոր պաշտողներ, Զեդեկ Արդարի որդիները. Աստվածների խումբ՝** պաշտվող Փյունիկիայում»: Նրանք այնտեղ կոչվել են «**ալետներ,** եղել նույնական **տիտանների, կարիբանտների,** կուրետների և տելխինների հետ»: Նշվում է նաև, որ կաբիրները կամ ալետները եղել են «Ագրուերի (Սատուրնի) էմանացիաները, և կապ ունեն կրակի, արևի ու կայծակի (մարութների) բոլոր աստվածների հետ»[75]: Այսպիսով, հաստատվում է, որ կաբիրները եղել են կրակապաշտներ, արևապաշտներ և կայծակնապաշտեր: Ընդ որում շեշտվում է այն հանգամանքը, որ կաբիրական համայնքները ստեղծվել են ոչ թե Հունաստանում, այլ այնտեղ գնացել են արևելքից, մասնավորապես՝ Փյունիկիայից: Նույն առաջաբանում բացահայտվում է եբրայերեն «գեբեր» կամ «գիբորում» բառի իմաստը: Պարզվում է, որ այն ունի նույն իմաստը, ինչ «**կաբիր**»-ը և նշանակում է «հզորագույն մարդիկ»: «Նրանք հզորագույն հրեշտակներ են երկնքում, իսկ երկրի վրա՝ հսկաներ՝ հիշատակվող «Ծննդոց» գրքում»[76]: Նրանց պաշտել են նաև հին հրեաները, նրանց կոչել կաբիրներ կամ կաբիրիմ: Եվ որ եբրայերեն լեզվով «գիբարիմ» նշանակում է «հզոր», իսկ երբևիցե բոլոր աստվածությունները կապված կրակի հետ, անկախ այն հանգամանքից, նրանք աստվածացված էին, դժոխային թե վուլկանական՝ կոչվել են կաբիրներ»: Մովսես մարգարեն եղել է կաբալա համայնքի հիմնադիրը, որը նույնպես կապ ունի կաբիր համայնքի ու գաղափարի հետ: Իսկ քրիստոնյաները նրանց համարել են դևեր, «թեև հրեշտակապետերը այդ կաբիրների անմիջական մետամորֆոզներն են»: Դրանց մասնակիցները հանդես են եկել որպես աստվածներ և ոչ մի պրոֆան իրավունք չի ունեցել արտասանել նրանց անունները, խոսել նրանց անունից և նրանց մասին: Հերոդոտոսը նրանց անվանում է կրակի աստվածներ և մատնացույց անում Վուլկանին՝ որպես նրանց հոր: Կաբիրները ղեկավարել են միստերիաներ և նրանց քանակը երբեք չի բացահայտվել, իսկ նրանց ծիսական նշանակությունը եղել է սրբազան» [77]: Դա նշանակում է, որ հայոց «Աղջկա աշտարակ»

---

[75] **Блаватская Е. П.,** Теософский словарь. Изд. 2-е. М., «Сфера»,1994, Электронный вариант, с. 13-14, 130.

[76] **Блаватская Е. П.,** Теософский словарь, էջ 115:

[77] **Блаватская Е. П.,** Теософский словарь, էջ 178:

կոչված կաբիրական շինություններում պաշտվել են հզորագույնները, հաղթական տիտանները և այդ համայնքները եղել են ռազմականացված:

Ե. Բլավատսկայան, հիշատակելով զանազան աղբյուրներ՝ հաստատում է, որ Կաբիրների կողմից, որոնք եղել են նաև ուսուցիչներ և դաստիարակներ, հասարակական դպրոցներում դասավանդվել են ֆիզիկայի, բժշկության, բանաստեղծության, երաժշտության օրենքների, իրավունքի և կանխագուշակության մասին գիտություններ: Նման մի դպրոց Պարսկաստանում նկարագրում է Քսենոֆոնը[78]: Մենք ապացուցել ենք, որ նման դպրոցներ եղել են նաև զրադաշտական, հետո նաև՝ քրիստոնեական Հայաստանում, օրինակ՝ Աշտիշատում, որտեղ մի զրադաշտական այդպիսի դպրոցում սովորել է նաև Մ. Մաշտոցը[79]: Հիպոկրատի երդումը եղել է ոչ թե ինչ որ այլ բան, այլ միստիկի, կաբիրի պարտականություն: Հիպոկրատը եղել է Ասկլեպիոսի քրմերից, և նրա որոշ ստեղծագործություններ պատահական են դարձել հանրամատչելի»: Եվ որ եղել են ասկլեպիոսական, վակխական միստերիաներ՝ նվիրված Դիոնիսիոս աստծուն, որոնք, ի վերջո, միավորվելով՝ կոչվել են էլեֆսինյան միստերիաներ: «...Հին տաճարներում դրանք կատարվել են հիերոֆանտների կողմից՝ թեկնածուների (քրմության թեկնածուների – Ս. Խ.) օգուտի և նրանց ուսուցման համար»: Այս առթիվ պետք է նշել Թովմա Արծրունու կողմից Վանա ծովակի մոտ գտնվող բարձրաբերձ աշտարակի մոտ գտնվող Ասկլեպիոսական բուժիչ խոտերի աճեցման փաստը: Սրանով ևս հաստատվում է, որ Արտաշես Չորրորդի կառուցած այդ աշտարակն իսկապես էլ եղել է կաբիրական:

Ըստ Բլավատսկայայի՝ կաբիրական ծեսերը եղել են գաղտնի, խորհրդավոր, կատարվել հանդիսավոր կերպով, և ամեն մի սիմվոլ՝ կապված դրանց հետ, ունեցել է սրբազան նշանակություն: Իսկ փոները եղել են հանդիսադիր, բազմության ներկայությամբ: «Պլատոնը և այլ իմաստուններ վկայում են, որ միստերիաները՝ որպես էթիկայի դպրոցներ, ունեցել են բարձր կրոնական, բարոյական նշանակություն և թողել բարեբեր ազդեցություն»: Նշվում է, որ դրանք կատարվել են նաև Եգիպտոսում, Նեղոսի կղզիների վրա, նվիրված են եղել արևային աստվածությանը: Արևի աստվածը զրադաշտության մեջ Արամազդն է: Եվ այդ հանգամանքը, ինչպես նաև

---

[78] **Ксенофонт**. Киропедия // М., «Наука», 1976.

[79] **Khachatryan A. Samvel,** Ghildren, Yoats, Aults and Elders in Zoroastrian and earli Christian Armenia. European Journal of Humanities and Social sciences, № 3, Vienna, 2018, p. 156-165.

սրբազան գետի ափին լինելը նույնպես ապացույց է այն բանի, որ կաբիրական պաշտամունքը եղել է հայկական: Նշվում է նաև, որ միստերիաներն ամեն մի երկրում ունեցել են առանձնահատկություններ, եղել դրամատիզացված ներկայացումներ՝ նվիրված կոսմոգոնիային և բնությանն ընդհանրապես, աստվածներին, որոնք մարմնավորվել են քրմերի և նեոֆիտների (նորադարձների – Ս. Խ.) կողմից: Նրանք կատարել են զանազան աստվածների ու աստվածուհիների դերեր՝ կրկնելով ենթադրվող հատվածներ (ալեգորիաներ) նրանց կյանքից: Դրանց գաղտնի նշանակությունը թեկնածուներին բացատրվում էր իրենց ուսմունքին հաղորդակից դարձնելիս և մարմնավորվում փիլիսոփայական դոկտրինաների մեջ»[80]:

Այսպիսով, կարելի է գալ հետևության, որ Վանա ծովակի ափին, Սեբաստիայի Գայլ կամ Լիկոս գետի ափին, ինչպես նաև Ափշերոնյան թերակղզում, Դարբնաց քարում և այլուր գտնվող բարձրաբերձ աշտարակները եղել են հայկական, նվիրված են եղել Արամազդին ու նրա վեց համշասպանդներին: Կարելի է նաև գալ հետևության, որ ինչպես Արամազդի զավակ-աստվածներին, այնպես էլ Արամազդի վեց համշասպանդ-հիպոստասներին ծնունդ է տվել Անահիտ աստվածուհին իր հայր և ամուսին Արամազդի հետ կենակցելու միջոցով: Դրա համար էլ կաբիրական ծեսերում՝ կատավող համապատասխան շինությունների մոտ և մեջ՝ հետագայում ստացած «Աղջկա աշտարակ» անվանումը, միշտ մասնակցություն է բերել նաև Անահիտը, իսկ նրա արձանը կանգնեցվել է աշտարակի գագաթին՝ որպես մայրության, վերածննդի, փարթամության ու կրքոտության խորհրդանիշ: Այդ պատճառով էլ կաբիրական տոներին մասնակցել և դերակատարություն են ունեցել նաև քրմուհիներ և ուխտավոր կանայք: Այդ ծեսերում զինվորականների հագուստ ու զրահներ հագած քրմերի, քրմուհիների ու ուխտավոր կանանց կողմից կատարվել են նաև պարեր, ցուցքեր և գովերգեր՝ նվիրված Ինչպես Արամազդին ու նրա կին և դուստր Անահիտին, այնպես էլ Արամազդի մյուս դուստրեր Աստղիկին և Նանեին: Հենց Արամազդի ու Անահիտի, Վահագնի ու Աստղիկի, Միհրի ու Նանեի օրինակով էլ ուխտավոր աղջիկները կատարել են կուսության զոհաբերություններ, զբաղվել սրբազան պոռնկությամբ՝ տրվելով ուխտավոր հերոս զինվորականներին: Ուխտագնացության և տոների ընթացքում քրմուհիները հաղթական զինվորներին ու քրմերին մատուցել են սեռական ծառայություններ:

---

[80] **Блаватская Е. П.,** Теософский словарь, էջ 251-252:

Ծեսերը և զոհաբերությունները կաբիրները կատարել են սպառազինված վիճակում, կրել պղնձե վահաններ, պարել ռազմական պարեր և երգել աստվածահայրերի ծննդյան, նրանց մայրերի (հայերի մոտ՝ Անահիտի) պատվին գովերգեր: Պարերի ժամանակ էլ նրանք ցուլերի նման իրար պոզահարել, հարու են տվել, ըմբշմարտել են՝ ներկայացնելով պայքար հանուն կանանց սրտերի նվաճման: Դրան են նվիրված եղել հանդիսադիր խաղերը: Այդ մասին է վկայում նաև Բաքվի Աղջկա աշտարակի մոտ գտնված ցլի գլուխը: Որ այդ աշտարակները նվիրված են եղել Արամազդին և զինվորականների կողմից ծեսեր կատարելուն, հաստատվում է նաև այն փաստով, որ Ագաթանգեղոսը Արամազդին անվանում է Արի Արամազդ[81]: Այդ ուխտագնացությունը և տոները կարող էին կատարվել՝ սկսած Դեկտեմբերի 25-ից, որը Միհր աստծու ծննդյան օրն է, և ավարտվել հունվարի առաջին տասնօրյակում, երբ տոնվել է Արամազդի ծննդյան օրը[82]: Ընդ որում, այդ ծեսերը կատարվել են ոչ միայն Ափշերոնյան թերակղզու Աղջկա աշտարակում, այլև դրա մոտ գտնվող տաճարական քաղաքում կամ քաղաքներում:

Կաբիրական բարձրաբերձ աշտարակները եղել են Արամազդի մեծության ու հզորության խորհրդանիշներ: Դրանք եղել են ռազմականացված, ուխտեր կամ միաբանությունների պաշտամունքային շինություն՝ կոչված սպասարկելու պատերազմ գնացող ու վերադարձող զինվորականներին, նրանց անպարտելիության վկայարան: Նրանց գագաթին կանգնեցված է եղել Անահիտի՝ Մեծ Մոր մայրությունը, վերածնունդը, բարեբերությունը, առատությունը, անմահությունը և հաջողությունը խորհրդանշող արձանը: Առանց նրա Արամազդի և նրա համշասպանդների, ու մարդկանց կյանքն ու ֆունկցիոնավորումն անհնար է պատկերացնել: Դրա համար էլ այդ աշտարակների գագաթին եղել է Անահիտի (Աստղիկի) արձանը, որպես այդ համշասպանդների ու աստվածների կյանքի խորհրդանիշ, զինվորականներին հաջողություն տվողը և դրանից զրկողը: Այդ հանգամանքով էլ պայմանավորված է նշված աշտարակների Աղջկա աշտարակ անվանումը:

Կաբիրական համայնքը փաստորեն եղել է ռազմականացված օրդեն, ուխտ՝ իր յուրահատուկ կանոնադրությամբ, երդումների համակարգով, ծեսերով, տոներով: Ընդհանրապես համարվում է, որ քրմուհիները և ուխտա-

[81] **Ագաթանգեղոս,** նշվ. աշխ., էջ 80-81:

[82] **Ալիշան Ղ.,** Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 248-254, **Պետրոսյան Ա.,** Արամազդ, Երևան, «Վան Արյան», 2006, էջ 8:

վոր կանայք, հատկապես կույսերը զրադաշտական տաճարներում տղամարդկանց հետ շահադիտական նպատակով են սեռական հարաբերության մեջ մտել՝ օժիտ հավաքելու նպատակով: Այն երբեմն ծիսական պոռնկություն է կոչվում: Սակայն կարելի է ենթադրել, որ նրանք ծիսական սեռական ակտ են կատարել կաբիրական աշտարակ-տաճարներում, դրանց կից իջևանատներում՝ հանդես գալով Անահիտի, Աստղիկի և Նանեի, նրանց նաժիշտների ու սպասուհիների դերերում՝ իրենց մարմնով պարգևատրելով այն ռազմիկներին, ովքեր վերադարձած են եղել հաղթական պատերազմից:

Ինչ վերաբերում է հայկական-կաբիրական ճարտարապետական դպրոցին և աշտարակաշինության արվեստին, ապա կարելի է գալ եզրակացության, որ այն անմիջական կապ ունի Բաբելոնի Աշտարակի հետ, որպես այդպիսին՝ հիմնվել է Բաբելոնից Հայաստան նահանջած Հայկ Նահապետի կողմից մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջում: Այդ ճարտարապետական արվեստն իր լիակատար զարգացումն է ստացել զրադաշտական քաղաքակրթության արշալույսին՝ մ.թ.ա 7-րդ դարում: Կարելի է նաև ենթադրել, որ Բաքվի **Աղջկա աշտարակը** կառուցվել է հենց այդ ժամանակ, նրա իմաստը և նշանակությունը վերաիմաստավորվել, այն նվիրվել է աստվածահայր Արամազդին ու նրա վեց համշասպանդներին, մասամբ էլ՝ Անահիտ դիցուհուն:

Այսպիսով, կարելի է գալ հետևության, որ կաբիրական տաճար-աշտարակները, այդ թվում՝ Բաքվի, նվիրված են եղել Արամազդին, նրա վեց համշասպանդներին, նրա դուստր և ամուսին, Մեծ Տիկին Անահիտին: Վերջինս եղել է զրադաշտական պանթեոնի աստվածների մայրը, մայրության, փարթամության, որդեծնության, ընտանիքի հովանավորը, արիական հերոսներին ու զինվորականներին հաջողություն տվողը և հաջողության հասնելու դեպքում կանանց՝ նրանց տրվելուն, այդ թվում՝ կույսերին, խրախուսողը: Կաբիրական տոնախմբություններում և ծեսերում փառաբանվել են Արամազդի, նրա համշասպանդների հետևորդ, Անահիտ ասվածուհուց հաջողություն խնդրած և պատերազմում հաղթած զինվորական հերոսները, նրանց տղամարդկային առնականությունը: Քրմուհիները և ուխտավոր կանայք, Անահիտ աստվածուհու և նրա նաժիշտների դերերը կատարող պարուհիները և երգչուհիները, ցուցքեր կատարողները նրանց պատվին կատարել են ծիսական գովասանական երգեր, հիմներ, պարեր և ցուցքեր: Զինվորականները և քրմերը ներկայացել են ռազմական զենքով ու զրահներով, մասնակցել ծիսական ռազմական պարերին, ցուցադրել իրենց առնանդամները, կա-

նայք և քրմուհիները բարձրացրել են իրենց փեշերը և այլն, որից հետո սկսվել են սեռական բնույթի օրգիաներ, կատարվել է գիշություն, հերոսներին մատուցվել են սեռական ծառայություններ: Նման ծեսերից ու զոհաբերություններից հետո կատարվել են նաև հանդիսադիր խաղեր, մրցություններ, գուսանական և թատերական բեմադրություններ, որսորդություն և այլն: Հենց այդպիսի կաբիրական տոնախմբության էլ պարսկական արշավանքից վերադարձած իր զինվորականներին կոչ է արել մասնակցել Խոսրով Երրորդ Մեծ թագավորը, որի մասին վկայում է Ագաթանգեղոսը: Եվ այդպիսի տոնախմբության վայր, առաջին հերթին, եղել է Բաքվի կաբիրական յոթնփորակյան բագինքը, որն էլ գագաթին կանգնեցրած Անահիտ դիցուհու բագինի պատճառով կոչվել է **Աղջկա աշտարակ**:

Այսպիսով, հերքվում են ադրբեջանցի պատմաբանների մերկապարանոց պնդումներն այն մասին, որ Բաքվի **Աղջկա աշտարակը** կառուցվել է ներկայիս ադրբեջանցիների նախնիների կամ էլ սկյութների, պարսիկների, որևէ այլ ժողովուրդների ու ցեղերի ներկայացուցիչների կողմից մ.թ.ա. 8-7-րդ կամ էլ մ.թ. 11-12-րդ դարերում: Բերվում են բազմաթիվ ապացույցներ և հիմնավորվում է, որ այն հայկական-կաբիրական ճարտարապետական ֆենոմենալ դպրոցի կառույցներից է՝ դրան համապատասխան ձև և ոճ ունեցող: Այն հավանաբար կառուցվել է մ.թ.ա. 7-րդ դարում՝ զրադաշտության արշալույսին: Հայերից էլ հին հույները, փյունիկեցիները և եգիպտացիները ընդօրինակել են կաբիրական ծեսերը և աշտարակաշինության արվեստը: Բաքվի **Աղջկա աշտարակը** դրա ամենավառ և միակ կանգուն օրինակն է, զուտ հայկական երևույթ, որը գտնվում է պատմական Հայաստանի տարածքում: Ճիշտ այդպիսի աշտարակ-տաճար է կառուցած եղել նաև հայոց Արտաշես Չորրորդ Արշակունի թագավորը Վանա ծովակի ափին: Դրա կառուցման ձևը և ոճը փոխանցվել է հայոց քրիստոնեական եկեղեցաշինությանը, արտահայտվել դրա այնպիսի դրսևորումներում, ինչպիսին է 6-րդ դարի Զվարթնոց տաճարը, Անի մայրաքաղաքի որոշ եկեղեցիներ և այլն: **Աղջկա աշտարակը** կամ որևէ այլ նման աշտարակ չեն կառուցել և չէին կարող դա անել կիմերական, սկյութական, աղվանական կամ հյուսիսկովկասյան, թուրքական ցեղերը: Նրանք պարզապես ի վիճակի չեն եղել դա անել՝ կապված իրենց զարգացման աստիճանի ցածրության, համապատասխան էլիտայի բացակայության հետ: **Աղջկա աշտարակը հայկական երևույթ է և ոչ թե թուրք-ադրբեջանական:** Չի եղել ոչ մի ադրբեջանական ափշերոնյան, կեդաբեկյան, միդիական կամ նախիջևանյան ճարտարապետական

դպրոց և չէր կարող լինել: Պարսիկներն էլ այն չեն կառուցել՝ պայմանավորված նրանց զրադաշտական հավատի տարբերակի որոշ պահանջներով, որոնցով արգելված է եղել տաճարների կառուցումը: Այն ոչ մի կապ չունի հայոց պատմական Փայտակարան, Բաղասական և այլ աշխարհների տարածքները ներկայումս զբաղեցնող և այնտեղ ոչ վաղ անցյալում պետություն կազմավորած ադրբեջանական-թուրքական ժողովրդի հետ: Դրա մասին ադրբեջանական պատմագետները ոչ մի ապացույց չեն կարողացել ներկայացնել:

ABOUT THE BAKU "MAIDEN TOWER"

KHACHATRYAN SAMVEL
PhD in Law, Associate Professor, GSU Lecturer
e-mail: khachatryan08@mail.ru

There are many publications about the Baku "Maiden Tower", in which Azerbaijani historians, manipulating and falsifying the facts, vainly try to substantiate that the Baku Maiden Tower was built by their Turkic ancestors, either in the 12th, or in the 8th-7th centuries BC. Their unfounded allegations are rebutted in this work. Evidence is provided and substantiated that the Baku Maiden Tower could not have been built by the Scythians, Turkic peoples, Persians, as well as other peoples and tribes. It is a monument of Armenian architecture, a Zoroastrian Kabir temple, identical to other Armenian temple-towers such as the one built by King of Armenia Artashes IV Arsacid (Arshakuni) on the shores of Lake Van in the 1st century AD. Similar tower-temples, although more ancient, also existed in other regions of Armenia. They were dedicated to the main Zoroastrian deity Aramazd and his six hypostases. The Baku Tower was called "Maiden" in honor of the goddess Anahit, the daughter and wife of Aramazd. She played an important role in the Kabir rituals, and her statue was placed on the top of the tower.

Key words: *Armenia, Lesser Armenia, Azerbaijan, Aghvank, Scythians, Cimmerians, Turkic peoples, Absheron, Baku, Maiden Tower, Kabeiri, Gabaru, legend.*

О БАКИНСКОЙ ДЕВИЧЬЕЙ БАШНЕ

ХАЧАТРЯН САМВЕЛ
Кандидат юридических наук, доцент
Преподаватель ГГУ
электронная почта: khachatryan08@mail.ru

Существует множество публикаций о Бакинской Девичьей башне, в которых азербайджанские историки, подтасовывая и фальсифицируя факты, тщетно пытаются доказать, что Бакинская Девичья башня была построена их предками-тюрками, то ли в 11-12-ом, то ли в 8-7 вв. до н.э. Их голословные утверждения опровергаются в данной работе. Приводятся убедительные доказательства того, что Бакинская Девичья башня не могла быть построена также скифами, тюрками, персами, равно как и другими народами и племенами. Она является памятником армянского зодчества, зороастрийским кабирским храмом, идентична другим армянскими башням-храмам, например, такой же башне, построенной в 1-ом веке н.э. царем Армении Арташесом Четвертым Аршакидом, на берегу озера Ван. Подобные башни-храмы, но более древние, сушествовали и в других регионах Армении. Они были посвящены главному зороастрийскому божеству Арамазду и его шести ипостасям. А название «Девичья», Бакинская башня получило в честь богини Анахит, дочери и жены Арамазда, которая играла важную роль в кабирских обрядах и статуя которой стояла на вершине башни.

Ключевые слова: *Армения, Малая Армения, Азербайджан, Албания, скифы, кимеры, тюрки, Апшерон, Баку, Девичья башня, кабиры, Габару, легенда.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.08.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 15.08.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՏԴ 342
DOI: 10.56246/18294480-2023.14-34

ԱՄԻՐՅԱՆ ԱՆԻ
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ a.amiryan@gsu.am

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի սահմանադրաիրավական լիազորություններին՝ կապված դատական իշխանության անկախության ապահովման հետ:

Հայաստանի Հանրապետության առջև ծառացած կարևորագույն մարտահրավերներից է դատական իշխանության անկախության ապահովումը: Դատական իշխանության անկախության հարցը մշտապես եղել է արդիական՝ ներառելով տարբեր բաղադրատարրեր, մասնավորապես այդ համակարգի ներսում ինքնակառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը, դատավորների նշանակման և վերջիններիս նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմնահարցերը:

Ժամանակակից պետությունների սահմանադրական համակարգերում դատական իշխանության անկախության սկզբունքը հենվում է իշխանությունների բաժանման հայեցակարգի հիման վրա: Այս սկզբունքի համաձայն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կազմում են կառավարման համակարգի երեք առանձին ճյուղերը, որոնց միջև գործում են փոխադարձ զսպումների և հակակշիռների կառուցակարգեր: Վերջինս հնարավոր է դառնում, երբ երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը, և առկա են իրավական ժողովրդավարություն, ինչպես նաև սահմանադրական, քաղաքական ու պառլամենտական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ:

Նշված ենթատեքստում հոդվածում ուսումնասիրվում է անկախ սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի դերը դատական իշխանության անկախության ապահովման ոլորտում՝ հիմք ընդունելով ՀՀ

օրենսդրության, Վենետիկի հանձնաժողովի, Բորդոյի հռչակագրի իրավակարգավորումները:

ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Իսկ դատարանի անկախությունն առաջին հերթին պայմանավորված է դատավորի անկախությամբ:

Հոդվածում ներկայացվում են ոլորտում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, առաջարկներ են արվում՝ վերաբերելի իրավական նորմերի կատարելագործման ուղղությամբ:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, Բարձրագույն դատական խորհուրդ, դատարան, դատավոր, անկախություն, իշխանությունների բաժանում:*

Դատական իշխանության անկախության հիմնական երաշխիքը դատավորների բարձր կարգավիճակի որակական ապահովումն է, և որպես այդ նպատակին հասնելու միջոց՝ դատավորների ընտրության և նշանակման, նրանց լիազորությունների դադարեցման, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում տարբեր պետական մարմինների միջև լիազորությունների այնպիսի տարանջատումը, որն առավելագույնս կնպաստի այդ մարմինների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգերի արդյունավետությանը:

Դատավորի ընտրությունը և նշանակումը պետք է իրականացվի օբյեկտիվության և արդարության չափանիշներին համապատասխան՝ հիմնված թեկնածուների մասնագիտական որակների վրա: Իսկ դատավորի առաջխաղացումը պետք է բացառապես հիմնված լինի օբյեկտիվ գնահատման արդյունքում հաստատված դատական պարտականությունների կատարման որակների և արժանիքների վրա:

Դատական իշխանության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման գործում կարևոր նշանակություն ունի Բարձրագույն դատական խորհրդի գործունեության օրենսդրական ամրագրումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածը սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) լիազորությունները.

Խորհրդարանական կառավարման մոդելի անցմամբ պայմանավորված՝ Սահմանադրության 175–րդ հոդվածի 1-ին մասի մի քանի կետերով Բարձրագույն դատական խորհրդին փոխանցվեցին մի շարք լիազորություններ, որոնք կիսանախագահական կառավարման համակարգում վերապահված էին Հանրապետության Նախագահին: Այդ լիազորություններն են՝ դատավորների թեկնածուների՝ ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների հաստատումը, ինչպես նաև դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ որոշում կայացնելու, դատավորի լիազորությունների դադարեցման հարցերի լուծումը: Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվեցին դատավորների, դատարանների նախագահների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման (ընտրության) տարբեր ընթացակարգեր:

Կարծում ենք, որ Սահմանադրությունն ապահովեց օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռված մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին:

Մեր կարծիքով՝ պետք է դրական գնահատել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացման գործընթացում առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվեցին դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները: Ընդ որում Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և առաջին ատյանի ու վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուների համար սահմանվեցին տարբերակված պահանջներ:

Սահմանադրական դատարանի դատավորների և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները նույնական են. այդ դատարանների դատավոր կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Ներկայացվող պահանջների տարբերությունը միայն այն է, որ Սահմանադրական դատարանի դատավոր ընտրվելու համար պահանջվում է առնվազն տասնհինգ տարվա փորձառություն, իսկ Վճռաբեկ դատարանի դատավոր կարող է

նշանակվել մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող անձը[1]:

Առաջին ատյանի դատավորների թեկնածուներին և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջներն ամրագրված են Սահմանադրության 165-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ այդ դատարանների դատավոր կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

Կարծում ենք, որ Սահմանադրությամբ պետք է ամրագրել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների թեկնածուների համար տարիքային ցենզ կամ մասնագիտական աշխատանքի նվազագույն ստաժ:

Սահմանադրությամբ սահմանվել է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին և նախագահներին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է ՀՀ նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանվել է Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության մրցութային կարգ: Բարձրագույն դատական խորհուրդը մրցույթի արդյունքներով Ազգային ժողովին է ներկայացնում Վճռաբեկ դատարանի դատավորների երեք թեկնածու՝ յուրաքանչյուր տեղի համար: Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընտրված թեկնածուին պաշտոնի է նշանակում Հանրապետության նախագահը: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Սահմանադրությամբ ամրագրվել է նաև այն, որ Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից՝ վեց տարի ժամկետով[2]:

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., հոդված 165-րդ//www.arlis.am:

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., հոդված 166-րդ//www.arlis.am:

Այսինքն՝ 2015թ.-ի սահմանադրական կարգավորումների համաձայն՝ Ազգային ժողովն է ընտրում թե՛ Վճռաբեկ դատարանի դատավոր առաջարկվող թեկնածուին՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար, Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից, և թե՛ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ դարձյալ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած Վճռաբեկ դատարանի թեկնածուների նշանակման գործընթացում, ըստ էության, Հանրապետության նախագահին որևէ գործառույթ վերապահված չէ, և Հայաստանի Հանրապետության նախագահին վերապահված այս լիազորությունը կարող ենք որակել որպես ձևական ընթացակարգ:

Ազգային ժողովի կողմից դատավորների ընտրության ընթացակարգի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովն արտահայտել է հետևյալ տեսակետը. «Թվում է, թե այն առավել ժողովրդավարական մեխանիզմ է, բայց կարող է նաև դատավորներին ներգրավել քաղաքական գործունեության մեջ և հանգեցնել գործընթացի քաղաքականացմանը»[3]:

Խորհրդարանական հանրապետություններում իշխանության համակարգի առանցքում խորհրդարանն է: Միայն խորհրդարանն է ձևավորվում համընդհանուր ընտրությունների միջոցով: Պետական իշխանության բոլոր մյուս ինստիտուտները ձևավորվում են խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ: Սակայն խորհրդարանի վճռորոշ ազդեցությունը պետական իշխանության ողջ համակարգի կազմավորման և գործառնության ընթացակարգերի վրա ամենևին չի նշանակում, որ գործում է զսպումների և հակակշիռների մեխանիզմը:

Խորհրդարանի կողմից դատավորների ընտրությունը հայեցողական ակտ է, հետևաբար եթե անգամ թեկնածություններն առաջարկվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից, չի բացառվում, որ խորհրդարանը կարող է ձեռնպահ մնալ առաջարկն ընդունելուց:

Մեր կարծիքով՝ խորհրդարանն առավել քան ներքաշված է քաղաքական գործընթացների մեջ, և դատավորների ընտրությունը խորհրդարանում կարող է հանգեցնել քաղաքական գործարքների: Պառլամենտի յուրաքանչյուր անդամ կարող է ձգտել ունենալու իր «սեփական» դատավորը:

---

[3] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի թիվ 403/2006 (CDL-AD(2007)028) կարծիքը, 9-10-րդ պարբերություններ//https://www.venice.coe.int:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է Հանրապետության նախագահին օրենսդրորեն վերապահել Բարձրագույն դատական խորհրդի կողմից յուրաքանչյուր տեղի համար ներկայացված երեք թեկնածուներից մեկին ընտրելու և նշանակելու լիազորություն: Վերջին դեպքում էականորեն կսահմանափակվի քաղաքական մարմնի բազմանձյա ներգործության հնարավորությունը Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման գործընթացի վրա, և որպես հետևանք՝ կնվազի դատավորների քաղաքականացման վտանգը:

Վճռաբեկ դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման ընթացակարգը նույն մեխանիզմով է իրականացվում, այն է՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդով՝ Բարձրագույն դատական խորհրդի եզրակացության հիման վրա:

Գտնում ենք, որ այն պարագայում, երբ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների լիազորությունների դադարեցման հիմքի, ինչպես նաև նշանակման կարգի վերաբերյալ, չպետք է լինի քաղաքական մարմնի որոշում: Քաղաքական մարմինների ներգրավվածությունը դատավորների նշանակման գործընթացում, ինչպես նշվեց, մեկնաբանվում է նրանով, որ անհրաժեշտ է ապահովել որոշակի ժողովրդավարական լեգիտիմություն դատական իշխանության համար:

Պառլամենտական կառավարման համակարգում Հանրապետության նախագահի կարգավիճակը ամրագրվել է Սահմանադրությամբ, որի համաձայն Հանրապետության նախագահը պետության գլուխն է, ինչպես նաև Հանրապետության նախագահն հետևում է Սահմանադրության պահպանմանը:

Սահմանադրության պահպանման երաշխավորի գործառույթով պայմանավորված՝ Սահմանադրությամբ Հանրապետության նախագահին իրավունք է վերապահում միայն Բարձրագույն դատական խորհրդի ստացված առաջարկությունը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել Բարձրագույն դատական խորհուրդ[4]:

Հանրապետության նախագահի առարկությունները Խորհրդի համար պարտադիր չեն, և եթե այն չընդունի այդ առարկությունը, ապա Նախագահին մնում է կա՛մ ստորագրել դատավորի նշանակման ակտը, կա՛մ դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության խախտման հիմքով:

[4] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ., 139-րդ հոդված, 2-րդ կետ//www.arlis.am:

Հանրապետության նախագահին մասնակցությունը դատական իշխանության ձևավորման համակարգում Ազգային ժողովի հետ իրական հակակշիռ չի ապահովում:

Սահմանադրական փոփոխություններում առկա է նաև մեկ այլ թերություն: Այսպես, Խորհրդի գործունեության ժամկետը սահմանվել է 5 տարի, ինչը համընկնում է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի հետ: Սա ստեղծում է ռիսկ Խորհրդի անկախության համար, քանի որ փաստացի ստացվում է, որ իշխանության երեք ճյուղերը գործում են հավասար ժամկետով: Ճիշտ կլիներ Խորհրդի համար վեց տարի սահմանելը, ինչպես այլ մեխանիզմների դեպքում:

Պետք է նաև նշել, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրական դատարանի ձևավորման հարցում դերակատարություն է վերապահվե նաև Դատավորների ընդհանուր ժողովին: Սահմանադրական դատարանի 9 անդամներից 3-ին առաջադրում է Դատավորների ընդհանուր ժողովը, որոնց քվեարկությամբ պետք է հաստատի Ազգային ժողովը:

Բարձրագույն դատական խորհրդի կարևոր լիազորություններից մեկը առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուներին ցուցակներում ընդգրկելն է: ՄԱԿ-ի 1985 թվականի «Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներ»-ի 13-րդ ենթագլխում սահմանվում է, որ դատավորների առաջխաղացումը, եթե այդպիսին առկա է, պետք է իրականացվի ակնհայտ չափանիշների հիման վրա, ինչպիսիք են՝ մասնագիտական իրազեկումը, բարեխղճությունը, փորձը: Բարձրագույն դատական խորհուրդը կազմում և հաստատում, ինչպես նաև լրացնում և փոփոխում է առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները:

Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակներն են՝

1) վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը՝ քրեական, քաղաքացիական, վարչական մասնագիտացման բաժիններով.

